

ՎԱՐԴԶԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՏՄԱԹԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՈՐՈՒՄԵՆԱԿԵՐԹՅԱՆ ՀԻՄՆԱԾՐԱՍ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

YARDZK
DUTY OF SOUL

N 11

2016



Սանվել Կարապետյան
**ԱՆՑԱՆԿԱԼԻ ԱՆՁ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ.
ԻՆՉՈՒ**

էջ 1

Արմեն Տեր-Սեփիանյան
**ՎԻՍԱԳՐԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ՋԵՌԱԳՐԵՐՈՒՄ**

էջ 3

Հայկ Աճեմեան
ՀԱՅՐԵՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

էջ 46

Հովհաննես Գյուլյան
ԱՂՋԱԳՈՒՆԵՅՑԻՆԵՐԻ ՄԱՅԵՐԹԸ



էջ 56

Սանվել Կարապետյան
**ՄՐԵՆԻ ԱՐՋԱՅԱԿԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ**



էջ 67

ՀՃՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

էջ 71

ՏՓՐԻՍԱԳԵՏ ՍԱՐԳԻՍ ԴԱՐՉԻՆՅԱՆ.
ԱՈՈՆՏ ԹԱՆԿԱԳԻՆ ՈՒ ՆՎԻՐՅԱԼ ԸՆԿԵՐՈՋ

էջ 72



N 11

2016

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՍԱՄԿԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Editor-in-chief

SAMVEL KARAPETIAN

ԽՄԲԱԳՐԱԿԱԾՄ
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԽՄԲԱԳԻՐ

Editor

EMMA ABRAHAMIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՄԲԱԳԻՐ-ՄՐԱԳՐԻՓ

Proof-reader (Armenian text)

HASMİK HOVHANNISSIAN

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԻՓ

Translator

GAYANE MOVSISSIAN

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՔԱՅԻՆ ՓԵՎԱԿՈՐՈՂ

Designer

ARMEN GEVORGIAN

ԼՐԱՑԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՏԱՏՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE FOUNDATION

Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03U089223

ՏՐՎԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223

Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՍԱՄԿԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Responsible for this issue

SAMVEL KARAPETIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱԴՐԱՄՅԱՆ 24Գ

Baghramian 24g, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

✉ raayer@sci.am

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

© Research on Armenian Architecture

ԱՆՑԱՆԿԱԼԻ ԱՆՁ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ. ԻՆՉՈՒ՞Ց

Սամվել Կարապետյան

2015 թ. հոկտեմբերի 18-ին հայկական պատմական հուշարձանների ուսումնասիրության նպատակով հերթական այցս Վրաստանի Հանրապետություն խափանվեց Սադախլուի անցակետում, որտեղ առանց որևէ պարզաբանման Վրաստան մուտք գործելու իրավունքս մերժվեց, իսկ մեր խմբի մնացած անդամները, անցակետից սկսած, հայտնվեցին նրանց անվտանգության աշխատակիցների հսկողության ներքո, որոնք ուղիղ 10 օր քողարկված կամ բացահայտ, կարելի է ասել կրնկակոխ հետևել էին մեր խմբին:

Արդ, ինչո՞ւ են ես հայտնվել Վրաստանի համար անցանկալի անձի կարգավիճակում, և ինչո՞ւ են մեր կողմից իրականացվող աշխատանքներն այդչափ վտանգավոր համարվում վրացական իշխանությունների աչքին:

1978 թ.-ից իմ, իսկ 1998 թ.-ից ի վեր պետական գրանցում ստացած և նախագահությամբս գործող Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող (RAA) հիմնադրամի հայաստանյան գրասենյակի նպատակը (հիմնադիր-նախագահ՝ դ. պ. Արմեն Հախնազարյան) եղել է և կա հնարավորինս համակողմանի ուսումնասիրել հատկապես ՀՀ սահմաններից դուրս գտնվող հայկական պատմական հուշարձանները, ընդ որում, նախ Հայրենիքում, ապա նաև գաղթավայրերում պահպանվածները:

Մեր գործունեության մեջ մշտապես կարևոր տեղ է զբաղեցրել նաև նյութական մշակույթի հայկական հուշարձաններով չափազանց հարուստ Վրաստանը, որտեղ, հատկապես սկսած 1989-1990 թթ.-ից, դրսևորվում է ընդգծված խտրական և անհանդուրժող վերաբերմունք: Արդյունքում՝ անցած քառորդ դարի ընթացքում արդեն իսկ իսպառ քանդվել կամ ձևափոխությունների միջոցով յուրացվել-սեփականացվել են պաշտամունքային բազմաթիվ կառույցներ, անհետացվել՝ հայկական գերեզմանոցներ, միջնադարյան խաչքարեր (մի մասը կոծկվել է բետոնի սվաղով), հայերեն վիմագիր հարյուրավոր արձանագրություններ, քերվել են մեծաթիվ որմնանկարներ և այլն:

Հենց 1990-ական թվականների սկզբներից ավելի ու ավելի ծավալվող վանդալական այս գործողությունները մերկացնելու նպատակով (հուսալով, որ այս պարագայում վանդալները գոնե այդուհետ ձեռնպահ կմնային նման ոտնձգություններից) հրատարակեցի բազմաթիվ հոդվածներ և մի գիրք («Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները», Երևան, 1998 թ.): Ժամանակի՝ հատկապես այս գրքին անդրադարձած վրաց մամուլը, լռելով լուսա-

նկարներով և ականատեսների վկայություններով ներկայացված հարյուրից ավելի վանդալական ակտերի մասին, վրդովմունք էր հայտնել հատկապես վերնագրի կապակցությամբ, քանի որ երևույթը որակել էի պետական: Մինչդեռ գրքում տեղ գտած թեկուզ միայն մեկ լուսանկարը, որը ներկայացնում էր Խոջիվանքի գերեզմանատան տեղում կառուցվելիք վրաց նոր եկեղեցու՝ 1995 թ. կատարված հիմնօրհների արարողությունը Էդ. Շևարդնաձեի մասնակցությամբ, կարծում եմ, փակում է խնդիրը, քանի որ, էթե ո՛չ երկրի նախագահը, ապա է՛լ ո՞վ է ներկայացնում պետությունը:

Հուշարձանների ոչնչացման փաստերը որպես ահագանգ հնչեցված հրատարակություններից զատ՝ ստեղծել ենք (կամ մասնակցել ստեղծմանը) նաև խնդիրը լուսաբանող վավերագրական ֆիլմեր (օրինակ՝ «Լուսություն», «Մի օր Կախետում», որոնք գետեղված են Youtube-ի՝ ra.armenia կայքում): Ցարդ հրատարակել ենք նաև Վրաստանի տարածաշրջանին առնչվող զուտ ուսումնասիրական մի շարք այլ աշխատություններ, ինչպիսիք են՝ «Թիֆլիսի քաղաքագլուխները»¹. 2003, «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն». 2004, «Հայերը Կախետում». 2004, «Ձափախք». 2006, «Ախալցխա». 2008, փորձել հայ և օտար հանրությանը ներկայացնել Վրաստանում առկա նյութական մշակույթի հայկական ժառանգությունը և պատմության ընթացքում հայերի նշանակալի ներդրումն այդ երկրում:

Վերոնշյալից բացի՝ փորձել ենք սատարել Վրաստանում հայ առաքելական եկեղեցու թեմին նրանց առջև վրացական կողմի հարուցած արհեստածին խնդիրները լուծելու ճանապարհին: Մասնավորապես՝ թեմին վերադարձնելու պահանջ ներկայացված եկեղեցիների առնչությամբ (դրանց մեծագույն մասի ազգային պատկանելությունը վրացական կողմը հայտարարել է վիճելի և, ըստ այդմ էլ՝ հայկական կողմի պա-

1 Ի դեպ, Ազգային գրադարանում կայացած այս գրքի շնորհանդեսի ժամանակ տիկին Նինո Ակցիաուրին (ՀՀ-ում ՎՀ դեսպանի կցորդը մշակույթի գծով) վրդովմունք արտահայտեց գրքում տեղ գտած փաստերի առթիվ շեշտելով, որ Հայուն ու Քարթլուր եղբայրներ են եղել և, ըստ այդմ, չէր կարելի նման նյութեր հրապարակել: Մեկը հարցնող լինի. որ եղբայրներ էին, ապա ինչո՞ւ են քարթլուցիները ոչնչացրել հայոցիների գերեզմանները, և ընդհանրապես աշխարհում այդ որտե՞ղ է, որ եղբայրը եղբոր գերեզմանը ցրիվ անի (հիշեցման կարգով մշեմ, որ գրքում ներկայացված 47 քաղաքագլուխներից վրացագրի երկուսի գերեզմաններն անխաբար պահպանվում են, իսկ Տփղիսում ամփոփված հայագրի 45 քաղաքագլուխներից և ոչ մեկինը գոյություն չունի):

հանջն իբր անհիմն) պատրաստել ենք տարբեր եկեղեցիներին վերաբերող պատմական տեղեկանքներ, որոնք լույս են տեսել «Նորաշեն» հանդեսի զամազան համարներում, իսկ Սք. Նշան եկեղեցու նկատմամբ վրացական կողմի հավակնություններին վերջ դնելու նպատակով հրատարակեցինք մի գիրք (հայերենից զատ՝ նաև ռուսերեն և անգլերեն)՝ նվիրված այդ եկեղեցու պատմական ողջ անցյալին (ի դեպ, գրքի լույսը նծայումից հետո վրացական կողմից այլևս որևէ հավակնություններ չեն հնչեցվել)²:

«Վրացական ճակատում» մեր վերջին աշխատանքը (գրախոսություն) վերաբերում է հայկական մշակութային նյութական արժեքների յուրացման ասպարեզում հեռահար նպատակներ հետապնդող և, ըստ էության, առաջ քաշված նորահնար մի թեզին նվիրված գրքին, որը լույս է տեսել 2009 թ. Վրաստանի ԳԱ հայագետ պրոֆեսոր Զազա Ալեքսիձեի և պատմ. գիտ. դ. պ. Դմիտրի Թումանիշվիլու խմբագրությամբ, Գիորգի Գագոշիձեի և հայագետ Նաթիա Չանթլաձեի համահեղինակությամբ³:

Գիտական այս բավական պատկառելի անձնակազմով հրատարակված «Վրաստանի մոնոֆիզիտ հուշարձանները» վերնագրով գրքում ներկայացվել են Սոմխիթում⁴ պահպանված հայկական տասնյակ եկեղեցիներ, որոնք, ըստ հեղինակների, կառուցվել են ոչ թե հայերի, այլ իբրև հայերի ճնշումների հետևանքով միաբնակ դավանանքի (ասել կուզի՝ հայ առաքելական) հետևորդ դարձած վրացիների կողմից, որի արդյունքում դրանք ոչ թե հայկական են, այլ իբր վրացա-

կան: Նույն գրքում ներկայացվել են նաև հայերեն բազմաթիվ արձանագրությունների վերծանություններ, որոնց հեղինակներն իբր նույն հայադավան վրացիներն են եղել: Բայց սրանք դեռ բոլորը չեն. օրինակ՝ 961 թ. իշխանաց իշխան Սմբատի անվամբ կերտված Սամվիլդեի հանրահայտ կոթողը ներկայացվել է իբրև 1621 թ. հուշարձան, իսկ Բովնիսի շրջանի Դարպաս գյուղի Սք. Սարգիս եկեղեցու՝ 1237 թ. շինարարական արձանագրությունն էլ՝ 1857 թ. ստեղծված վիմագիր և այլն:

Անշուշտ, նույնիսկ նման գիտական պատկառելի խմբագրակազմ ունենալու պարագայում էլ թերևս կարելի է նման սխալները վերագրել պարզ տգիտության, բայց, ըստ իս, առկա է հայոց հին հիշատակները սեփականելուն զուգահեռ նաև դրանց գոնե մի մասն իբրև ավելի նոր ժամանակներին վերագրելը, որոնք վրացի հեղինակների թեթև ձեռքով մի դեպքում 10-րդ դարից հանգրվանել են 17-րդ, մյուսում՝ 13-րդից՝ 19-րդ դար և այլն..., իսկ Գորել քաղաքատեղիի հայկական եկեղեցիներից մեկի 1615 թ. արձանագրությունն էլ գրքի հեղինակները որակել են իբրև կեղծ ու երևի այդ իսկ պատճառով անհետացրել⁵:

Եվ այսպես, ընտրաձև մասնագիտության սահմաններում մշտապես պարտքս են համարել ուսումնասիրություններին զուգահեռ մեր նյութական մշակույթի հուշարձանները հնարավորինս պաշտպանել տարատեսակ ոտնձգություններից:

Ահա այս գործունեությամբ Վրաստանի համար այսօր ակամա դարձել են անցանկալի անձ և այլևս զրկված են հայկական հուշարձանների հետ առնչվող ուսումնասիրություններս տեղում իրականացնելու հնարավորությունից: Ելնելով սրանից՝ ակամա մտածում են. այդ ինչպե՞ս է լինում, որ ճշմարիտ գիտությանը նպաստ բերելիս իբրև արևմտյան արժեքների ջատագով հարևան երկիրը կարող է մուտքդ արգելքի տակ դնել⁶, իսկ պատմության զեղծումներով և հայկական հուշարձանների յուրացումներով զբաղվող վրացի «գիտնականները»՝ ազատորեն մուտք գործել մեր երկիր:

Չէ՞ որ, եթե իմ գիտական աշխատանքը վտանգավոր է Վրաստանի Հանրապետության համար, ապա կեղծիքներով, միտումներով լի և ըստ այդմ՝ հակազիտական հրատարակությունների՝ վրացի մի շարք հեղինակներն էլ առավել անցանկալի, մինչև իսկ վտանգավոր են մեր երկրի համար...

2 Ի դեպ, դեռևս 1995 թ. հրատարակել էինք Վրաստանում գտնվող շուրջ 650 հայկական եկեղեցիների ամենահամառոտ տվյալներով (նշել էինք միայն ամուրը, վայրը, կառուցման կամ նորոգությունների թվականները կամ դարաշրջանը, վիճակը) ծալովի մի բրոշյուր, որը, դատելով վրացական կողմի բոտն արձագանքներից, բավականաչափ վրդովեցրել էր զանազան հողվածագիրների, այդ թվում հայագետ հեղինակներին: Վերջիններիցս, օրինակ, պ. Բոնդո Արվելաձեն բրոշյուրում առկա տեղեկությունները հերքելու նպատակով հանդես էր եկել առանձին գրքով “Армянские” или грузинские церкви в Грузии?” (Թբիլիսի, 1996): Անշուշտ, ամենասահմանափակ տեղեկություններով մեր բրոշյուրը գիտական աշխատանք համարվել չէր կարող, սակայն որչա՞փ փաստալից ու հիմնավոր էին գրեթե յուրաքանչյուր պաշտամունքային կառույցին անդրադարձ կատարած պ. Արվելաձեի «հերքումները», կարող եք դատել թեկուզ Թբիլիսիի Սք. Նշան եկեղեցու մասով (նշվ. աշխ., էջ 14-15), որի հայկական լինելը հետագայում առիթ ունեցանք ներկայացնել վերոնշյալ գրքով (Թբիլիսիի Սք. Նշան Սք. Նիկողայոսի եկեղեցին, Երևան, 2012):

3 Գրքի մեր գրախոսությունը տե՛ս «Վարձք» հանդեսի 8-րդ համարում (Երևան, 2013, էջ 45-64):

4 Հենց վրացական աղբյուրներում երկրամասին դարեր շարունակ տրված այս միակ տեղանունը, որի բարգձմությունն է Հայաստան, հեղինակները շրջանառությունից իսպառ դուրս են մղել և փոխարինել Բվեմո Զարթի նորահնար տեղանունով: Ի դեպ, այս երևույթի զուգահեռն առկա է Թուրքիայի պարագայում, որտեղ էլ Արևմտյան Հայաստանին հենց թուրքական աղբյուրներում վկայված Էրմանիստան անվանումը Մեծ եղեռնից հետո մտացածին կերպով շրջանառությունից իսպառ դուրս է մղվել և փոխարինվել Արևելյան Անատոլիա հորինված աշխարհագրական տերմինով:

5 Երևույթն ակամա հիշեցնում է Ադրբեջանի պարագան, որտեղ հայկական հուշարձանները նախ պիտակվում են իբրև աղվանական, ապա ոչնչացվում (օրինակ՝ զամազան հրատարակություններում աղվանական ներկայացված Հին Ջուղայի աշխարհառեչակ գերեզմանոցը կամ Նախիջևանի երկրամասում գտնվող բազում վանքերն ու եկեղեցիներն անկախությունից ի վեր արդեն իսպառ անհետացվել են):

6 Ի դեպ, հայ-վրացական սահմանից ետ դառնալուն պես տեղի ունեցածի առնչությամբ պարզաբանման ակնկալիքով մի նամակ հղեցի Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան պ. Շարվանաշվիլուն, որից այդպես էլ որևէ պատասխան չստացա:

ՎԻՍԱԳՐԵՐԸ ՍԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՉԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Արմեն Տեր-Ստեփանյան

Սկիզբը՝ «Վարձք» № 8-ում

ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏ

Ա «Չախակողմնան դասի խաչաքարի պատճեն».

Ես՝ խօջայ Մարխաս, եւ գորդին իմ զՎրդանէս եւ զՄինոր²¹⁹ կանգնեցի սուրբ խաչս յիշատակ հոգեւոր հօրն իմոյ Աւետիս վարդապետին, բարեխօս առ աստուած, թվին ՌՃԲ (1653):

Հիմք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52ա:

Բ «Կտուց անապատի տաճարի դրան վերայի արձանագրի պատճեն».

Շնորհօք ամենակալին եւ ամենագօր աջովն անեղին շինեցաւ սուրբ տաճարս, որ յանուն Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին եւ Սուրբ Ստեփաննոսի եւ ի թվին հայոց ՌՃԿԱ (1712) եւ ի հայրապետութեան տեստն Աղէքսանդրի եւ առաջնորդութեան Միսէօս արհի եպիսկոպոսի, որ Ծ (50) ամ ծառայեաց սուրբ անապատիս եւ կարողութեամբ աստուծոյ շինեաց սուրբ տաճարս, որ մէկ քար Բ (2) ոսկի եղև եւ Է (7) ամ ի հալածանս կացեալ վասն յահէ պարտատիրաց եւ եկեալ աստ վախճանեցաւ, զոր տէր աստուած զնա ընդ Յովհաննո Ոսկերերանին դասեսցէ, մանաւանդ եւ ի սմայ մասն²²⁰:

Հիմք. ՄՄ 6273, էջ 362ա: ՄՄ 9027, էջ 51բ:

«Կից սմին անփորագիր, թիւ չունէր».

Գ արձեալ ծաղկեցաւ սուրբ տառս յոյժ զարմանալի, գեղեցկայարմար ծաղկօք, գովելի կարողութեամբ սրբոյն Կարապետի, նկարեալ ձեռամբ Մարտիրոս վարդապետի:

Հիմք. ՄՄ 6273, էջ 362ա:

Դ «Ի հարաւ կոյս յեզր արեւ. որմոյն ի վերայ միոյ մարմարիննի գրեալ».

Շնորհօք եւ ողորմութեամբ աստուծոյ եւ սրբոյ օգնականութեամբ Յովհաննո եւ մեք միաբան մեծ եւ փոքր կամեցաք զսուրբ Կոտուցու անապատն նորոգել: Ես՝ Երեմիա վարդապետս, եկի ի մայրաքաղաքն Բաղէշ, լաւ սիրով հարկիք արին. Մեսրոպ, Ներսէս, Արրահամ, // Մանուէլ արքեպիսկոպոսք. Աստուած զԴ (4) վանքն, զԴ (4) եկեղեցին հաստատ պահէ. զվարդապետքն, զքահանայքն, զժողովուրդքն, զհարուստքն եւ զաղքատքն, զկանայքն, զմեծն եւ զփոքրն եւ զոր ինչ ողորմութիւն ի ձեռս մեր հատուցիք, թէ վարպետք, թէ ուստայք, թէ իրդաղի

219 «Գուցէ Մինաս»:

220 «Ի 1868 յուլիս 20 ի Լիւմ, առ Թոփուզեան արհիին»:

ողորկեցիք ի սուրբ անապատն: Սկիզբն շինութեան դուք արիք²²¹ սիրելի բաղէշեցիք, ձեր գրոցն փոխարէն սուրբ Կուսի եւ սուրբ Կարապետի, սուրբ Լուսատրչի բարեխօսութեամբ խարագնագեաց Միմոն վարդապետի եւ կրօնաւորաց նոցին սուրբ աղօթիք տէրն Քրիստոս վճարէ ի ձեր հոգին: Բաղիշեցի մահտեսի Խօշխաբարն²²² զկազմողս յիշեցէք ի Քրիստոս, թվին ՌՃԿԲ (1713)²²³:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 362բ-363ա: Չեռ. 9027, էջ 52բ:

Ե «Լուսամտի ձախ կողմն դէպի հարաւ».

Խաչս բարեխօս է առ աստուած վասն խոջայ Մաղաքին, ծնողաց Ֆռանգուլին, խոճայ Միրզուլին, խոճայ Չանգուլին²²⁴, մահտեսի Յարութիւնին, Պարոնին, Գուլամիրին, խոճայ Միրին, Յաւանէսին, Ֆռանգուլին եւ նոցա ծնողաց Չարիֆին եւ իւրեանց կողակցոց Վանի, թվին ՌՃԿԲ (1713)²²⁵:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 362բ: Չեռ. 9027, էջ 52բ:

Զ «Կտուցայ եկեղեցոյ լուսամտի յաջ կողմն, հիւսիս դեհից».

Յիշատակ է խաչս բարեխօս առ աստուած կրօնաւոր, որ է Աստրաբօյցի Պարսումին եւ իւր ծնողաց հանդերձ ննջեցելովք, ամէն:

Թվին ՌՃԿԲ (1713):

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 362բ: Չեռ. 9027, էջ 52բ:

Շ «Եկեղեցոյ շինութեան արձանագրութենէն, որ կայ ի Կտուց».

Յիշեցէք ի Քրիստոս Բաղիշեցի վարպետ զմահտեսի Խոշխաբարն, որ եկն ի սուրբ անապատս, շինեաց զեկեղեցին զուրբերով, բնաւ հախ չառաւ, բաշխեց Սուրբ Կարապետու յիշատակ իւր հոգւոյն և ծնողացն Յովանէսին (և մօրն) Չմրութին, Մանուկին և Սահակին: Թվին ՌՃԿԲ (1713)²²⁶:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 363ա: 6332, էջ 3ա:

Ը «Կտուցայ եկեղեցոյ դուրսի կողմանէ քարէ որմի լուսամտի վերայի արձանագրութիւն».

Խաչս յիշատակ է Ղասարցի վերակացու մահտեսի Կարապետին, որ բազում աշխատանք կրեաց

221 [9027-ում՝ «Արարիք»]:

222 «Էր սա եղբայր մեծին Վարդանայ աստուածաբան վարդապետին, որ էր հայր հոգեւոր եւ նշանաւոր դաստիարակ Գրիգոր Եղբայակիրի եւ Յովհաննո Կոլտի հատընտիր պատրիարկացն հայոց»:

223 «68 ի Լիւմ, առ Թօփուզեան արհիին»:

224 [Հնարավոր է կարդալ նաև Չանգուլ, որ հավանական չէ]:

225 «Ի Լիւմ, առ Թօփուզեան»:

226 «1868 յուլ. 7 ի Կտուց»:

ի սուրբ անապատս ի շինումն Սուրբ Կարապետին: Անձին բարեխօս տէր աստուած, լուսաորեա իւր հոգին եւ զիւր ծնողաց, թվին ՌՃԿԲ (1713)²²⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 362բ: Ձեռ. 9027, էջ 52ա-բ: «Նոյն լուսամտի յաջակողմն հիւսիս դիւից»:

Յիշատակ է խաչս բարեխօս առ աստուած կրօնաւոր, որ է Աստղրարօյցի Պարսումին եւ իւր ծնողաց հանդերձ ննջեցելովք, ամէն, թվին ՌՃԿԲ (1713)²²⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 362բ:

Ը Մարմարեայ խաչ.

Ես՝ Բաղիշեցի Բաղդասար կաթողիկոս Աղթամարայ, կառուցի սուրբ խաչս բարեխօս հոգւոյս եւ իմոցս ամենայն հաւատացելոց քրիստոնէից. որք երկրպագանէք, ասացէք աստուած ողորմիդ: Թուիմ հայոց ՌՃՉԴ (1735):

Հիւր. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3ա:

Թ «Կտուցայ տանեաց յարեւմ. հար. դեհեմ կաթողիկէի շրջանակի գիրն է. թիւ չունի»:

Բարեխօս է սուրբ խաչերս առ աստուած վասն Կոստանդնուպօլսոյ պատրիարգացն Յովհաննու եւ Յակոբայ, ՌՃՂ (1741)²²⁹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 365բ:

Ժ «Եկեղեցոյ ձախակողմեան խորանի հարաւային պատին»:

Տէր աստուած իմ Յիսուս Քրիստոս, ողորմութեամբ քով յիշեա զհոգի Բաղիշեցի տէր Բարսեղ անուն // վարդապետին եւ իւր ծնողաց Սիրզին եւ Մարիամին եւ ամենայն մերձատրաց, որ սեղանի սուրբ խաչն օծել ետ թվին ՌՃՂԵ (1746) ամին: Ես՝ տրուպ Բարսեղս, աղաչեմ, որք ընթեռնուք եւ մեզ յիշէք, դուք ի Քրիստոս յիշեալ լիջիք²³⁰:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 366բ: Ձեռ. 9027, էջ 51բ-52ա:

ԺԱ «Կտուցայ Կաթողիկէի արեւմ. շրջանակի գիրն է»:

Նորոգեցաւ վերստին Կաթողիկէս Սուրբ Կարապետին ձեռամբ Կարապետ վարդապետին: ՌՄԸ (1759)²³¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367ա: Ձեռ. ՄՄ 9027, էջ 52բ:

ԺԲ «Կտուց[այ] Սուրբ Կարապետի շիրմիք յիշատակողէն»:

Յիշատակ է Քօթահեացի մահտեսի Աստուածատուրի որդոցն մահտեսի Ստեփաննին, Յարութիւնին եւ Յակոբի հոգւոցն, ի դռն սուրբ անապատին Կտուցու, ի թվին ՌՄԹ (1760)²³²:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367ա:

«Կից 62 թիւ [սույն] արձանագրութեան»:

Աստուած ողորմի ասացէք, որ հանդիպիք Ակնեցի Աստուածատուր վարդապետին եւ իւր ծնօղացն, որ սեղանի սուրբ խաչն օծել ետ: ՌՄԺԳ (1764)²³³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367բ:

ԺԲ-ա «Գասար վարդապետի տապանագրի օրինակ»:

Խաչս բարեխօս է առ աստուած վասն Գազարա վարդապետին²³⁴, թվին ՌՄԼԸ (1789):

Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52բ:

ԺԳ «Կտուցայ դարպասի եւ զանգակատան նորոգութեան յիշա.»:

Շնորհիւ սրբոյ Կարապետին, Եղեւ շինեալ դարպաս տորին, Չանգակատամբ ի միասին, Չեռօք ջանիւք տեսչի տորին, Տէր Կարապետ ճգնազգեցին Եւ լծակցաւ երկրորդ դիտին, Տէր Սիմէօն սրբասիրին, Աշխատողացն ի միասին, Եւ տէր Պետրոս վարդապետին, Տէր Յովհաննէս բարեբերին, Ընդ Ղազարու ճգնակրին, Արդեամբք ընչից հայոց ազգին, Յոր աղօթէք տուք զողորմին: ՌՄԾԱ (1802)²³⁵:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 371բ:

ԺԴ «Կտուցայ ձախակողման Սուրբ Սինասայ խորանի արձանագիրն է»:

Սուրբ խորանս Սրբոյն²³⁶ Սինասայ է յիշատակ տեառն Գրիգորի բազմերախտ վարդապետին, հօրն Մովսէսին²³⁷ եւ իւր ծնողին եւ Յակոբ աշակերտին, ՌՄԾԲ (1803):

Հիւր. ՄՄ, ձեռ. ՄՄ 6273, էջ 391ա: Ձեռ. 9027, էջ 52ա:

ԺԵ «Կտուցայ զանգակատան նպաստողի յիշա.»:

Յիշատակ է զանգակատունս յանուն սրբոյ Կարապետի, որ է տաճար եւ ուր տեղի անմահ եւ սուրբ պատարագի. Ակնա գիւղ... Ափու[չեխ]ցի Արփիարեանց ազնիւ զարմի Փիլիպպոսի բարեպաշտի եւ մեծահամբաւ ամիրայի: Յանկալի զանգակատուն յիշատակ է որդոյ նորա Ալփիարի. ով ընթերցողք, քոլոր սրտի տուք զողորմի, ինքն զարմօք զաւակօք օրհնեալ լինի, թվ. ՌՄԾԸ (1803)²³⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 371բ:

ԺԶ «Յիշեալ Կտուցայ զանգակատան սեանց վերայի արձանա.»:

227 «1868 յուլ. 20, ի Լիւմ, առ Թօփուզեան»:

228 «Առ նոյն հանգուցեալ արիին»:

229 «Յուլ. 8 ի Կտուց»:

230 «1868 յուլ. 20 ի Լիւմ, առ Թօփուզեան»:

231 «Ի Կտուց, յուլիս 8.68»:

232 «1868 յուլ. 8 ի Կտուց կղզին ի Վան»:

233 «1868 առ Թօփուզեան»:

234 «Սա առաջնորդ ի Կտուց եւ տէր Յօհան Վանանդեցոյ վարժապետ»:

235 «1868 յուլ. 5 ի Կտուց կղզին»:

236 [6273-ը սրբոյն-ը չունի]:

237 [9027-ում՝ «Մօսէսին»]:

238 «1868 սեպ. ի Կտուց»:

(Սուրբ խաչքն) են բարեխոս վասն Սիմէօն ճգնակիր եւ մեծաջան վարդապետին²³⁹ եւ ծնողաց սորին ու որդոյ նորա Կարապետին, ՌՄԾԳ (1804):

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 372ա:
«Կից սմին».

Խաչս բարեխոս է առ աստուած վասն փրկութեան Յովհաննէս վարդապետին եւ իւր ծնողացն՝ հորն՝ Կարապետին, եւ մօրն՝ Կազվուն, եւ եղբարց՝ Նազարին եւ Աւէտին, ՌՄԾԳ (1804)²⁴⁰:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 372ա:
«Յաջ սեան վերայ».

(Սուրբ խաչքս) են բարեխոս վասն Պետրոս եւ Գաբրիէլ բազմերախտ միաբանաց անապատիս եւ ամենայն ննջեցելոց եւ ծնողաց սոցին²⁴¹:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 372ա:

ԺԷ «Կտուցայ աջակողման դասու խաչկալի արձանագրութիւն» (ՄՄ, 6273).

«Գաւիթի աջակողման խաչկալի արձ. պատճեն» (ՄՄ 9027).

Յիշատակ է սուրբ խորանս²⁴² լուսոյ,

Սուրբ Յակոբայ կոչեցելոյ,

Յատուկ առն ընտրելոյ,

Յարգի Խըտըր Կեսարացոյ,

Յակոբայ, Աբրահամու երկուց որդոց սիրեցելոյ,

Սուրբ երամի տիրահաճոյ,

Վասն սոցին մարմնոյ, հոգւոյ,

Աղօթեցէք անփորձ կելոյ:

ՌՄԾԳ (1805)²⁴³:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 372բ: Ձեռ. 9027, էջ 52ա:

ԺԸ «Կտուցայ յեկեղեցոյ միջին դարպասի դռան ճակատի գրոյ պատճեն է».

Յիշատակ է այս դարպաս եւ միջի դօշամէն Թովխաթցի Յօհան վարդապետին, թվին ՌՄԾԶ (1807)²⁴⁴:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 373ա: ՄՄ 9027, էջ 52ա:

ԺԹ «Կտուցայ աւանդատան հիւսիսային որմի արձանագրութիւն».

Թուին²⁴⁵ ՌՄԾԷ (1808), շնորհիւ ամենակարող Հոգւոյն զօրութեան եւ ձեռնտութեամբ սուրբ աստուածութեան նորին շինեցաւ աւանդատունս ձեռամբ սրբոյ անապատիս առաջնորդ Կարապետ վարդապետին եւ քեռորդոց նորին Գալուստ եւ Սիմէօն վարդապետացն:

ՄՄ 6273, էջ 373ա: 9027, էջ 52ա:

Ի «Գեորգ վարդապետի խաչվէմ».

Խաչս բարեխոս է առ աստուած վասն հանգուցեալ Գեորգ վարդապետին, թվ. ՌՄԿԱ (1812)²⁴⁶:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 335ա:

ԻԱ «Սիմէօն եպիսկոպոսի ընկողմեալ տապանավէմի պատճեն».

Այս է տապան Սիմէօն արհի եպիսկոպոսին, որ նահատակեցաւ ի սոյն անապատին ի հազար վաթսուն եւ եօթ թուականին, ՌՄԿԷ (1818), ձեռամբ ի Ռըշտունիս նստող չար Շէխ քէկին:

Հիմք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 53ա:

ԻԲ «Կարապետ վարդապետի խաչվէմ».

Խաչս բարեխոս է առ աստուած վասն Կարապետ վարդապետին, հորն Աթանասին, մօրն Թանամին: Թվ. ՌՄՀԸ (1829)²⁴⁷:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 341ա:

ԻԳ «Աբրահամ վարդապետի խաչվէմ».

Խաչս է բարեխոս առ աստուած վասն փրկութեան հոգւոյն Աբրահամ վարդապետին. որ կու հանդիպիք, տուք զողորմին: Թվ. ՌՄՁԳ (1835)²⁴⁸:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ ք:

ԻԳ-ա

Խաչս բարեխոս է վասն Գաբրիէլ վարդապետին եւ իւր ծնողացն, հորն՝ Չաքարին, մօրն՝ Թուրօյին: Թվին ՌՄՁԷ (1838):

Հիմք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 35ա:

ԻԴ «Մարտիրոս վարդապետի մահարձան».

Այս է տապան Մարտիրոս վարդապետին: Թվ. ՌՅԶ [1857]²⁴⁹:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 2ա:

ԻԵ «Կտուցայ Յարութիւն եպիսկոպոսի խաչվէմ».

Այս է տապան Յարութիւն եպիսկոպոսին: ՌՅԶ [1857]²⁵⁰:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 2ա:

ԻԶ «Համբարձում սարկաւագի խաչվէմ».

Խաչս բարեխոս է առ աստուած վասն փրկութեան հոգւոյն Համբարձում սարկաւագին Վանեցոյ: Թվ. ՌՅԷ (1858)²⁵¹:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 3ա:

ԻԷ «Տփիսիսեցի Յարութիւն վարդապետի խաչվէմ».

Այս է տապան Թիվիսեցի Յարութիւն ծ. վարդապետին. տէր լուսաւորեսցէ զհոգի սորին: Թվ. ՌՅԸ [1859]²⁵²:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 3բ:

239 «Այս այն Սիմէոն վարդապետն է, որ յետոյ եղև եպիսկոպոս եւ ապա նահատակեցաւ յամի 1814 եւ թուին հայոց ՌՄԿԷ յանօրէն Շէխի պէլ բռնաւորէն ի կողոպտման Կտուց անապատի»:

240 «1868 յուլ. 5 ի Կտուց»:

241 «1868 յուլ. ի Կտուց կղզին»:

242 [9027-ը՝ Խաչս]:

243 «68 յուլիս ի Կտուց»:

244 «68 յուլիս 5 ի Կտուց»:

245 [«Թուին»-ը 9027-ը չունին]:

246 «1868, Կտուց»:

247 «1868 յունվ. 8 ի Կտուց»:

248 «1868 յուլ. 8 ի Կտուց»:

249 «1868 յուլ. 7 ի Կտուց»:

250 «1868 յուլ. 7 ի Կտուց»:

251 «1868 յուլ 7 վարդապետի կիրակին ի Կտուց»:

252 «1868 յուլ. 7 ի Կտուց կղզին»:

ԻԸ «Սկրտիչ վարդապետի խաչվեմ».
*Սկրտիչ րաբուն*²⁵³ այլօք ծաղկեալին,
 Խաչս յայտնեալ կայ դամբարանին,
 Որք հանդիպեսցիք տաջիք զողորմին,
 Որ խնդրէ ի ձեզն ճմին արժանին,
 Հանգեալ ի տէր ի թուին Փրկչին
 1860 ամին²⁵⁴։
 Հիւմ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 4բ։

ԻԹ *Աստուած ողորմի ասացէք, որ հանդիպիք
 Անկնցի Աստուածատուր վարդապետին եւ իւր ծնո-
 դացն, որ սեղանի սուրբ խաչն օժեղ ետ։*
 Հիւմ. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52ա։

Լ *Դարձեալ ծաղկեցաւ սուրբ դուռս յոյժ զար-
 մանալի գեղեցկայարմար ծաղկօք գովելի, կարո-
 դութեամբ սրբոյն Կարապետի նկարեալ ձեռամբ
 Մարտիրոս վարդապետի։*
 Հիւմ. ՄՄ, ձեռ. 9027, էջ 51բ։

ԼԱ «Փորանի հիսախ. յորմն».
*Ես՝ Բաղիշեցի Կարապետ վարդապետ, սեղանի
 սուրբ խաչն օժեցի, յիշատակ ծնողաց իմոց Մխի-
 թարին եւ Խամբիկին։*
 Հիւմ. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52ա։

ԼԲ «Ի մէջ արեւելից եւ ի հիսսիսոյ խաչի մի ներքեւի արձա-
 նագիրն».
*Խաչս բարեխօս է առ աստուած վասն Արմա-
 տանցի Աստուածատուր վարդապետին եւ հօրն՝ Ա-
 նաքելին, եւ մօրն՝ Կիլիկի վարդին²⁵⁵։*
 Հիւմ. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52բ։

ԼԳ «Պետրոս եպիսկոպոսին».
*Խաչս բարեխօս է վասն Պետրոս վարդապե-
 տին²⁵⁶ եւ իւր ծնողացն, հօրն՝ Ղազարին²⁵⁷։*
 Հիւմ. ՄՄ, ձեռ. 9027, էջ 53ա։

ԼԴ *Յովհաննու եւ Յակոբայ²⁵⁸ բարեխօս է սուրբ
 խաչերս առ աստուած վասն Կոստանդնուպօլսի
 պատրիարքաց։*
 Հիւմ. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52բ։

Արդ, *Բշվեցի²⁵⁹ Գրիգոր վարդապետ, Գորեցի
 Գէորգ վարդապետ, Թամլալյեցի տէր Կարապետ,
 Մարսնոց տէր Գրիգոր, Քանթերցի²⁶⁰ տէր Հայրա-
 պետ, Դեւէիցի Կիրակոսին սուրբ խաչն օժեղ
 տվինք։*
 Հիւմ. ՄՄ 9027, էջ 52ա։

253 «Էր սա հայր Յակոբ վարդապետի Վարդապետեան»։
 254 «1868 յուլ. 7 ի Կտուց»։
 255 «Կիւրվարդին»։
 256 «Եպիսկոպոսին»։
 257 «1868 20 յուլ. Լիւն, Թօփուզեանի ձեռագրէն»։
 258 [Խոսքը վերաբերում է Հովհաննես Կոլոտ եւ Հակոբ Նալյան
 պատրիարքներին]։
 259 «Բաշվեցի»։
 260 «Գուրե Քանաքեղցի»։

ՀԱՃԻ ԳԻՒԴ

«Եաղուպեան Սեխբետրոս աղայի մահարձան».
*Ընդ այս վիմով ամփոփանի
 Մարմին ուրումն մեծ իշխանի,
 Սեղրոս աղուն պերճարանի,
 Երջանկազարդ այր անուանի,
 Մինչ ի կանցադս էր կենդանի,
 Ազգիս բազմօք յոյժ պիտանի,
 Իսկ յայլազգեաց չար ընդանի,
 Մի ոմն առ այս (էր) թշնամի,
 Նախ հուր ձգեալ բնակարանի,
 Պնդեալ յոչ թողուլ ի կենի,
 Խեղդեալ ի պահ գիշերայնի,
 Յանգէտս գայ յամենայնի,
 Ով վերժանողք գրոյս տապանի,
 Եւ ուշառոյք տոյնոյ բանի,
 Հանցուք զողորմ Հայր մեր երկնի,
 Յիշեսցէ բնաս յոյսն ամենի։
 Հանգեալ յամի տեսառն 1854 յուլ. 20²⁶¹։
 Հիւմ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 1ա։*

ՄԱՆԻՍԱ

Ա «Մալղարացի Յարութիւն նահատակի արձանագրի
 պատճեն».
*Տեսառն զօրութեամբ արիացեալ,
 Սուրբ նահատակս, որ աստ գանձեալ,
 Մալղարայոյ յերկրին ծնեալ,
 Եւ Յարութիւն անուն կոչեալ,
 Որոյ չարի ինչ հանդիպեալ,
 Չհաւատ իւր այլափոխեալ,
 Քսան ամեայ ի տիսն հասեալ,
 Ի Կոստանդնուպօլիս զնացեալ,
 Իրր զՊետրոս անդ զղացեալ,
 Մրտի մտօք առ տէր դարձեալ,
 Գլորեալ անձն անդրէն կանգնեալ,
 Եւ վերստին խոստովանեալ,
 Ի նոյն վիմին անշարժ կացեալ,
 ՉԱստուածորդին տէր դաւանեալ,
 Ի Մանիսայ քաղաքս եկեալ,
 Եւ յումեմնէ աստ ծանուցեալ,
 Յանօրինաց ձեռսն մատնեալ,
 Յարգելանոց չորս օր բանդեալ,
 Չարչարանօք յոյժ վշտացեալ,
 Յետոյ սրով գլխափառեալ,
 Լոյսն ի յերկնից վկայ իջեալ,
 Թէ ի տեսառնէ իւր պսակն առեալ,
 Որ յաստուծոյ զայս էր խնդրեալ,
 Եւ խնդիրքն հաճոյացեալ։ //
 Թէ յախտ ջերման որ հանդիպեալ,
 Եւ ուխտիք զսա առ տէր յիշեալ,
 Լիցի տէրամբ փոյթ բժշկեալ,*

261 «Յօրինող մահարձանի գրոյն էր Բարսեղ վարժապետ Հաճի
 գիւղացի։ 1864 դեկ. 1 ի Հաճի գիւղ»։

*Եւ յամենից շարաշ զերծեալ:
ԹՎին ՌՄԳ (1755)-իմ²⁶²:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 509ա-բ:*

Բ «Մանիսայի Սուրբ Սիոն եկեղեցոյ նորոգութեան արձանագրի պատճէն»:

*Պճնիմ Սուրբ Սիոն արդ հարսնանման,
Չիմ որդոց լնու զբաղձ բազմամեան,
Յերկուցն վեհից պատրիարգութեան,
Սրբոյն Սաղիմայ եւ տան Կոստանդեան,
Տեառն Գաբրիէլի վեհին սրբազան,
Որ արդ ի Չմիւռնոյ դէտ բարձրաստիճան,
Եւ Կարապետի արհույն բարեջան,
Տեսլին Հայազանցս ի մարզս Օսմանեան,
Պերճ վառօղակետ Սիմոն ամիրայն,
Չիմ շինման հոգաց զարքունի հրաման,
Հոգեռանդն ըղձիւ ի խնդրոյ հայցեան,
Բազմամեայ բաղձանք մեր ահա լցան,
Արդիւնք եւ վաստակք իմ ժողովրդեան,
Նաեւ որք հաղորդ նպաստից գտան,
Ճոխս պասկեցին զիս վայելջարան,
Նորաքանչ շինուած տուն տէրունական,
Տացէ տէր վայելս յաւեր անսասան,
Եւ աշխատողաց վարձս անանցական:
Յամի տեառն 1831 սայրիլ Յ²⁶³:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 513բ:*

ՍԱՐՁՈՒԱՆ

Ա «Մարգուանի Սուրբ Աստուածածին եկեղեցոյ նորոգութեան արձանագիրն է»:

*Ողորմութեամբն աստուծոյ նորոգեցաւ սուրբ եկեղեցիս ի թուին ՌՃԻԱ (1672), (յաւորս)²⁶⁴ առաջնորդ Պօղոս վարդապետի ձեռամբ մէյմար Ասլան ղալֆայի²⁶⁵:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 361ա:*

Բ «Մարգուանի եկեղ. պարսպի շինումն»:
*Կանգնեցաւ սուրբ խաչս վասն ամենայն հաւատացելոց, մանաւանդ առ ի յիշատակ հոգոյ հանգուցեալ Ապուշեխի Ազատենց մահտեսի Նիկողայոսի որդի Աբրահամ աղային, որ էր սառաֆ յայսմիկ ամի բռնատրի քաղաքիս. թեւ եւ թիկունք եղեւ մեզ ի շինութեան շրջապատ պարսպիս սուրբ եկեղեցոյս, ՌՄԼ (1781)²⁶⁶:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 369ա:*

Գ «Մարգուանու Չարխափան Սուրբ Աստուածածին վանոց նորոգութեան յիշ.»:

*Չարխափան վանքս Աստուածածնի,
Նախահիմնեալն Անդրէի,
Յաւազակաց այրեալ քակի,
Մնայ յիսուն ամ ամայի:
Ի Լինուպնտեայ գաւառի,
ՅԱմասիոյ հուպ նահանգի,
Ի Վեռուոյ արձակ դաշտի,
Եւ ի գեղջըն, որ Լիճ ասի:
Ի տեսչութեան արհույ դիտի,
Տեառն Յօհաննու վարդապետի,
Երբեմն Պօլսոյ պատրիարգի,
Պաղտատցի Մակ անուանօղի:
Այն որ գթածն է ողորմի,
Շինման սորին հրաման լինի,
Չգուշութեամբ ըսկսանի,
Ի հիմանէ նոր նորոգի:
Քաջ ծերունեաց վերակացուի,
Յիշատակ մեծ յետ թողանի,
Առատ տրուվք իւր վիճակի,
Յորով ջանիք Հայկայ սեռի:
Ի մեր հայոց թուականի,
Ի չորրորդումն աւարտի: ՌՄԽԳ (1795)²⁶⁷:
Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալեմեան**, Նշխարք պատմութեան հայոց (վիմագրեր), ՄՄ, ձեռ. 6273, էջ 370բ:
Հրատ. **Պալեան Տրդատ եպիսկոպոս**, Հայ վանորայք, Էջմիածին, 2008, էջ 111:*

Գ-ա «Տէր Գասարի խաչվէմ»:
*Տէր Գասար երանաշնորհ քահանայ
Կնքեաց զօրհասն իւր ի յաստեաց,
Ուղետր լեալ ի կեանս անանց,
Մին ի բարեկրօն յառաքինեաց,
Մերձ ի յալիս եւ ի կենաց,
Խա հայր ընտիր գորովապանձ,
Երկուց արուաց եւ ըստ դատերաց,
Եթող զայնս ընդ այլս ի լաց,
Իբր ընդ կորուստ զանձուց մեծաց,
Չամենայն զիրարն վաճառեաց,
Չմարգարիտն զայն մեծ զնեաց,
Ուստի դասուց երանելեաց
Համաժառանգ գտաւ փառաց,
Յամի տեառն 1817 եւ մերոյս ՌՄԿԶ²⁶⁸:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 335բ:*

Դ «Մարգուանու Սուրբ Աստուածածին եկեղ. նորոգութեան արձանագրութեան պատճէն, որ կայ եկեղեցոյ դրան ճակատն»:

*Սկսեալ յամի տեառն 1833 եւ հայոց ՌՄՁԲ օգոս. ԻԱ:
Հարսն իմ անեղին,
Տաճար մօր քանին,
Գեղ զուարճալի,
Երիս տեսանին:*

262 «1885 մայիս 12 ի Մանիսայ»: [Այլ առիթով Փիրղալեմյանը գրում է. «Տէր Բարաղամ քահանայն... Մալղարացի սուրբ Յարութիւն նահատակի շիրմի մարմարիոն պարթեւ վէմն նորոգ շինեալ է 1833 ամի ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ նոյն սուրբ վկային, որ ի 1755 ամի նահատակեալ է անդ (6273, էջ 513բ)]:
263 «1885 ի մայ. 14 ի Մանիսայ, ի Սուրբ Սիոն եկեղ.»:
264 [Հավելումը Փիրղալեմյանինն է]:
265 «1864 դեկ. 2 չորեքշաբթի ի Մարգուան»:
266 «1864 դեկ. 2 չորեքշաբթի ի Մարգուան»:

267 «1864 դեկտեմբեր 12 շաբաթ ի վանս Մարգուանու Չարխափան Սուրբ Աստուածածնի»:
268 «1864 դեկ. 2 ի Մարգուանի եկեղ. խաչարակ»:

*Չոյգ ընդ գոյգ դրունք
Սատրունք չորեքին,
Գեղապանձ յօրինէն
Չիմ ձեւ գլխովին:
Եւ խնջ ջանք երկանց
Յակոբայ դիտին,
Տուրք եւ աշխատանք
Տեղոյս հայ ազգին:
Չայս յարգ մեծածախ
Վերականգնեցին,
Որոց յերկուս կեանս
Բարիս հատուցին:*

Եւ ասարտն լեալ է 18 եւ հայոց ՌՄՉԳ (1835) սեպ. 8²⁶⁹:

Հիմք. Ղևոնդ եպիս. Փիրղալեմեան, Նշխարք պատմութեան հայոց (վիմագրեր), ՍՄ, ձեռ. 6273, էջ 377բ:

Հրատ. Պալեան Տրդատ եպիսկոպոս, Հայ վանորայք, Էջմիածին, 2008, էջ 117:

Ե «Մարգուանու Սուրբ Կարապետ մատուռի շինութեան յիշ.»:

*Ընդ այս դուռն անցեալ յոգի մկրտին,
Ի յսկզբնական մեղաց ազատին,
Բիրատոր զաւակ ծննդեամբ կրկին,
Աւասիկ ինեւ քեզ մօրդ ընծային:
ՌՄՉԳ (1835)²⁷⁰:*

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 378ա:

ՄԵԾՈՓԱՅ ՎԱՆՔ

Ա «Մեծոփայ վանոց արձանագրութեան պատճեն»:

*ՊԾԸ (1409) բուին ես՝ Յովհաննէս վարդապետս,
վերջինս եկեղեցոյ եւ առաջնորդ աստուածարնակ
սուրբ ուխտիս Մեծոփայ, միաբանութեամբ ամե-
նայն եղբարցս ապաստան եղեալ ի նոյն, որ գօրա-
ցոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ շինեցաք
զսուրբ տաճարս Մարիամայ Աստուածածնին յի-
շատակ հոգոյ իմոյ մեղապարտի եւ ծնողացն
կրկնակի եւ որք մասն ինչ տրոց նուիրեալ են ի
սուրբ եկեղեցիս:*

*Արդ, յերես անկեալ պա//ղատիմ մանկանցդ
Սուրբ Միոնի, որք ընծայէք զսուրբ հացն կենաց, յի-
շեսջիբ զմեզ առաջի անմահ Գառին Յիսուսի Քրիս-
տոսի, զի եւ ձեզ յիշողացդ եւ մեզ յուսացողացս եւ
համօրէն միաբանիցս առհասարակ աշխատաւո-
րացս ողորմեսցի Քրիստոս: Ի կաթողիկոսութեան
տէր Յակոբին, ի վարդապետութեան քաջ հռետո-
րին Գրիգորի Տաբեւացոյն, յորմէ ազատեցաք ի
կապանաց եւ անիծիցն Աղթամարայ: Ի բռնակա-
լութեան Լան Թամուրին հիմնարկեցաւ, եւ ի պարո-
նութեան Ուսուֆին ասարտեցաւ ձեռամբ ուսթայ
Ֆարաճին, Ատոմին, Միրունին, Գաւթին, Տիրա-
տրուն, Սկրտչին, Յովաննէսին, Յովսէփին, Գազա-*

*րին, Ատոմին, Մարտիրոսին, Շաքարեկին, Կիրա-
կոսին եւ այլ ամենայն աշակերտաց նոցին²⁷¹:*

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 8բ-9ա:

*Բ ՉԹումայ²⁷² եւ զՍկրտիչ վարդապետք եւ Յով-
հաննէս եպիսկոպոս եւ զմիաբանքս սուրբ ուխ-
տիս²⁷³ եւ զՄարտիրոս քահանայ շինող սուրբ գե-
րեզմանիս²⁷⁴ յիշեցէք ի Քրիստոս: Ի բուին ՊԿԱ
(1432)²⁷⁵:*

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 454բ:

*Գ Խաչս կանգնեցաւ ի բարեխօսութիւն Թումաս
մեծի բարունապետի ամենայն հայոց²⁷⁶, որ գնաց ի
նորոգումն սուրբ Էջմիածնի եւ փոխեցաւ առ աս-
տուած²⁷⁷:*

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 460ա:

*Դ ՌԺՎ. ՋԻԲ (1473) Ստեփաննոս վարդապետ:
Կանգնեցաւ Խաչս բարեխօսութիւն առ աստուած
Ստեփաննոս վարդապետին²⁷⁸, որ արեան սս
հեղմամբ կատարեցաւ յանօրէն ազգէն նետողաց²⁷⁹
տարածամ հասակաւ փոխեալ յանանց կեանս²⁸⁰:*

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 465ա:

*Ե Ես՝ Թումա կրօնաւորս, կանգնեցի զխաչս ի
փրկութիւն հոգոյ իմոյ: Յիշեցէք ի Քրիստոս: ԹՎին
ՋԳԲ (1543)²⁸¹:*

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 474բ:

Չ «Մեծոփայ վանաւոր Միքայէլ վարդապետի խաչվէն,
կանգնեալ ի կենդանութեան»:

*Այս է հանգիստ Միքայէլ վարդապետին,
Սուրբ խաչս փրկութեան վասն հոգոյ նորին,
Առաջնորդեաց քառասուն երկու տարին,
Ի դռան Մեծոփայ Սուրբ Աստուածածնին:
Թուին հայոց ՌՅԸ [1859]²⁸²:*

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 3բ:

ՍՈՒՇ

Ա «Մշոյ Սուրբ Կարապետի նորոգութեան արձանագրու-
թիւն»:

*Այս թագ պարծանաց է հայոց ազգի,
Պայծառ փողփողի ի Մուշ գաւառի,
Յանուն Յովհաննոս բանին ճրագի,*

271 «1860 հոկտ. օրինակոցի յԱրճէշ, ի վան Մեծոփայ»:

272 «Մեծոփեցին է»:

273 «Մեծոփայ»:

274 «Մեռելյարոյց Աստուածատուր վարդապետի՝ որդոյ Աղբեր-
կայ»:

275 «Ի 1866 հոկ. 7 ուրբաք ի Մեծոփ»:

276 «Պատմիչ Մեծոփեցոյն ասէ»:

277 «Մի քանի բառ անվերծանելի մնաց հնութենէն: 1860 հոկ. ի
Մեծոփ»:

278 «Ի Մեծոփայ վանս»:

279 «Մնայ ինձ անծանօթ առ այժմ վարք սորին»:

280 «1860 հոկ. 14 ի Մեծոփ»:

281 «1860 հոկ. ի վան Մեծոփայ»:

282 «1860 հոկ. յԱրճէշ, ի վան Մեծոփայ»:

269 «1864 դեկ. 2 ի Մարգուան»:

270 «1864 դեկ. 2 ի Մարգուան, յատուր առաջնորդութեան Գեորգ
արքեպիսկոպոսի»:

Որ նախ հիմնեցաւ ի Լուսաւորչէն,
Իսկ նորոգ շինեալ շքեղ գեղգեղի
Կամար առ կամար գօրէն եթերի,
Խնդամիտ առնէ ըզսիրտ տեսողաց,
Ի վեր առաքել փառքս Սիածնի,
Այս եղև յաւորս արոտոյս դիտի
Յարութիւն արհի եպիսկոպոսի, //
Որ էր ծննդեամբ բոյն Եղեսացի,
Խոհական ջանիւք այր երանելի,
Տուրք ազգիս հայոց եղէն օգնական,
Շինուածոյս ծախսոց սատար բաւական,
Աստուած օրհնեսցէ զազգըս մեր համայն,
Տացէ փոխարէն երկնից օթարան,
Այս վերնայարկիս տիրին սքանչելի,
Եղև բողբոջալ ի թիւ յիսունի,
Հազար ութ հարիւր երեսուն ութի,
Յամսեան երեքի ի սեպտեմբերի:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 379ա-բ:

Բ «Մի այլ արձանագրութիւն ես».
Հասին իսկ ի մեզ խնամք Յիսուսի,
Բացան մեզ դրունք երկնից կամարի,
Յորմէ գթութեան կաթուածք շողշողեալ,
Բարեխօսութեամբ մեծի Սկրտչի,
Նորոգ ի հիմանց կանգնեալ պարսպի,
Հանդերձ սենեկօք եւ վերնայարկի,
Յառաջնորդութեան տեսուն Յարութեան
Սրբազան արհի եպիսկոպոսի,
Բազմաշխատ երկօք նորին յաջորդի,
Տէր Չաքարիա հայր վարդապետի,
Եւ համայն ուխտիս միաբանութեան,
Որք աշխատեցան այս իսկ գործ բարի:
Ի փառս աստուծոյ եւ յօգուտ ազգի,
Տրօք եւ արդեամբք Հայկազեան սեռի,
Ի պատիւ մեծի սրբոյն Յովհաննու,
Հազար ութ հարիւր երեսուն ութի
Ի յամի Փրկչին, ի յօգոստոսի²⁸³:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 379բ:

ՅԱՅՆԿՈՒՄՆԵՐ

Ա «Յայնկուսներ եկեղ. նորոգութիւն».
Կամօք Քրիստոսի նորոգեցաւ եկեղեցիս. էր
թիւն ՌՄԺԱ (1762):
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 367ա:

Բ «Յայնկուսներ եկեղ. նորոգութիւն».
Նշանս այս տեսուն աստուծոյ,
Էակցին Հօր Փրկչին մերոյ,
Որոյ շնորհիւ նորոգելոյ,
Եղև հրաման անցեալ տարւոյ:
Արդեամբ օրհնեալ ազգին մերոյ,
Արանց կանանց օժանդակելոյ,

283 «1865 յուլ. 9 ուրբաք ի վանս Գլակայ, յաւորս վանահայրու-
թեան Խրիմեան Սկրտիչ բարունոյ ծ. վարդապետի. սա
յետոյ եղև եպիսկոպոս ի սուրբ Էջմիածին եւ պատրիարք ի Կ.
Պօլիս քաղաքի»:

Որոյ սերն Երանուհոյ
Ետուն ընծայս միրն աստուծոյ:
ԹՎ. ՌՄԾԲ (1803)²⁸⁴:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 371բ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԻՒՂ

Ա «Արձանագրութիւն շինութեան Արճիշոյ Սուրբ Յարութիւն
եկեղեցոյ, որ կայ Յարութիւն գիւղ».
Փառք փառաց փրկողին տիեզերաց Քրիստոսի
աստուծոյ յուսոյն մերոյ:

Ի ժամանակս տէրութեան Ուլաուն դանին, ես՝
ժառայ ծառայիցն աստուծոյ տէր Արրահամ, տե-
սուչ զաւառիս Քաջբերունոյ, տվաւ ինձ տեղիս այս
տեսունէ տորին Սահմաղին կոչեցեալ եւ շինեցի զե-
կեղեցիքս նախ Սուրբ զԱստուածածինս, իսկ ի թա-
գաւորութեան Արդուն դանին, ի հայրապետութեան
տեսուն Ստեփաննոսի²⁸⁵ զՍուրբ Յարութիւնս ի
Կորթոյ շինեցի եւ զամենայն շինուածս նորոգեցի:

Արդ, աղաչեմ զամենեսին յիշեսջիք ի Քրիստոս
զպարոն Սահմաղին նախնեօք իւր եւ հարազատօք
եւ զհոգեւոր հայրն իմ՝ զմէլիք Ստեփաննոս, եւ զքե-
ռայրն իմ՝ զԽաչիկն, քերքն իմով եւ զաւակաց իւ-
րեանց, զի բազում նպաստ եղեն տեղոյս շինու-
թեան: Եւ զձնողսն իմ եւ զեղբայրս եւ զազգա-
տոհմսն իմ եւ զաշխատօղսն եւ զձեռնատուքս տե-
ղոյս յիշեսջիք ի տէր: Եւս եւ զաւանդատուքս եկեղե-
ցեացս զպարոն Սահմատինն տանուտիօքն Ասպ-
սինկայ, զի սեփական աւանդսն, որ կարգեալ էր յա-
ռաջնոցն նախքան զաւերն ի խորագմէն²⁸⁶ դար-
ձեալ հաստատեցին տեղոյս: Ի մարգէն Ծ [50] բար-
դի տեղ եւ Բ [2] արտեն ԺԲ [12] մոթոյ տեղի²⁸⁷ եւ
միւս Ժ [10]: Եւ ի Սեւակն Ի [20] // բարդ խոտատե-
ղի եւ զջուրն Վրիանեց յամէն շաքաք զտիւ եւ զգի-
շերն եւ ետ պարոն Սահմաղին զգեղն Սեծովի²⁸⁸ իւր
մզրայիւքն եւ խարհաքն եւ քրտագեղերովն, ետ մե-
լիք Ստեփան տանուտէրօքն Աղոյի խոտէն Ի [20]
բարդի տեղ եւ Լվարերի տանուտէրքն Ի [20] բարդի
տեղ: Ետ Խաչիկն զայգին ի կոստիսն: Ի [20] տակ
ետ պարոն Փռանգն արտ մի ի քաղաքն: Ե [5] մոթոյ
տեղ զնեցի արտ մին եւս ոչ հեռի այն արտէն, Ժ [10]
մոթոյ տեղ եւ տվի եկեղեցեացս եւ տվին ի քաղաքն
Արճէշ տներ եւ երկու կողպակ եւ սոքա են աւանդ
եկեղեցեացս աւանդատուքն յիշեալ եւ օրհնեալ յի-
ցին ի տեսունէ. եւ պակասեցուցանողք պակասին ի
թուոց արդարոցն, ամէն, եղիցի: Եւ շինեցաւ Սուրբ
Յարութիւն ի թուին ՉԽ [1291], ի փառս Քրիստո-
սի²⁸⁹:

Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 387բ-388ա:

284 «1865 ի վան»:
285 «Աղբամարայ է»:
286 «Ի քաթարաց»:
287 «Մոթ քոռ ասել է»:
288 «ՉԽ թուին Սեծովի գիւղ լեալ է եւ ոչ վանք, որպէս տեսանի ի
սմին արձանագրութեան»:
289 «1860 հոկ. ի Յարութիւն գիւղ յԱրճէշ»:

Բ «Այս է յարկ տապանի Յովհաննէս²⁹⁰ վարդապետի: Ի թուին ՉՀԶ (1327)²⁹¹:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 424բ:

ՅՈՊՊԷ

«Յոպպէի վանոց նորոգութեան արձանագրի պատճեն».

Ի պատրիարքութեան Գաբրիէլի արքեպիսկոպոսին, ի վայելումն եւ յիշատակ ազգիս հայոց Յոպպէի Սուրբ Նիկողայոսի վանքն նորոգեցաւ ի դրանէ մինչ ցվեր գեղեցիկ սենեկօք ձեռամբ եւ աշխատութեամբ Տիգրանակերտցի Մեսրոբ վարդապետ ռէիզին, յամի տեառն 1840²⁹²:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 380ա:

ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔ

Ա «Նարեկայ դարպաս շինողի արձանագրութիւն».

(Խաչս բարեխօս է) Բարսեղ վարդապետին, որ շինեաց դարպաս, թուին ՌՄԼԶ (1787)²⁹³:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 391ա:

Բ «Նարեկայ զանգակատան արձանագրութիւն».

Չքնաղ գմբէքս քաղցրագոյն,
Կերտեալ նորոգ հաստատուն,
Եւ դէտ նորին Յարութիւն,
Ստօք բարի եւ արթուն,
Բնիկ յերկրէն Տարօնուն,
Ծառայ սրբոյ յԱմլորդոյն,
ԹՎ. ՌՄԿԱ (1812):
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 391ա-բ:

ՆԻԿՈՍԻՊԵՍ

Ա «Նիկոմիդիոյ Սուրբ Աստուածածին եկեղեցոյ նորոգութեան արձանագրութեան պատճեն է յետագայն».

Դուռն եմ մտից եւ Քրիստոսի եւ ճանապարհ յոյս կենաց,

Եմ հրաշակերտ մատանց հոգւոյն յարկ եւ տաճար սուրբ շնորհաց,

Ի սեղանոյ իմմէ բաշխի արիւն մարմին կենարար,
Որ արդարոց թոշակ կենաց մեղատրաց փրկարար:
Առաքելոց, մարգարէից շինեալ հիմնամք անասան,
Եւ զինգուորեալ վարդապետօք դրանց դժոխց անյաղթ կամ

Նորոգեցայ ի հնութենէ եւ եմ նորոգ ի Քրիստոս,
Եւ շնորհք հոգւոյն աղբերաբար ի ծոց իմում մշտահոս:

Ի հովութեան գերերջանկի պատրիարգի սրբազան,

Ստեփաննոսի դիտապետի եւ քաղաքիս բարեխնամ,

Էր փոխանորդ տեառն Յակոբ եւ վարդապետ սրբազան,

Որ եւ որբոց եւ աղքատաց ողորմելոց բազմաջան:

Էր տեղապահ տեառն Կարապետ եւ վարդապետ յարթուն,

Իշխանութեան անդրոյ ոգւով յոյժ աշխատեալ առ մերոյն,

Լեալ զօրավիզ հզօր ձեռամբ պարոն Մելքոն Գասբարեան,

Ամէն հասակ ժողովրդոցս գործովք որովք օգնական, յամի տեառն 1836 յօգոս. 30²⁹⁴:

Հիւք. ՄՄ 9027, էջ 52ա: ՄՄ 6273, էջ 377ա-բ:

Բ «Պրոսացի Ստեփաննոս պատրիարգի մահարձան».

Տեառն Ստեփաննոսի սրբազան արքեպիսկոպոսի Չաքարեան Պրոսացոյ.

Քաջ հովութեան նմանող բարի,
Հօտի բանեղէն դիտապետ արհի,
Ուխտին Չմիտնոյ եւ Պանտրմայիոյ,
Կարգեալ նախ տեսուչ եւ վեհ խրատատու:

Քսան եւ ուք ամ դէտ կացեալ, ապա Մեծի վիճակիս այս Նիկոմիդեայ,
Ի յարքայանիստն Կոստանդնուպօլիս,
Երկիցս բազմեալ պատրիարք ազգիս:

Եկաց ի գահուն ամս ուք եւ կէս,
Բարոտք տեսչութեան տարեալ զհանդէս,
Հօտին Քրիստոսի հովիւ անեպեր,
Վարեաց հանապազ կեանս անընչաւեր:

Եօթնեկի տասամբք եւ եօթամբ ամօք,
Չընթացսն լցեալ մաքրափայլ կենօք,
Արդեամբ լիովի հովտէ կենցաղոյս,
Առ անձկալին իւր դիմէ առ Յիսուս:

Յամի Կենալարին մերոյ Յիսուսի 1853 եւ ապրիլ 6²⁹⁵:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 1ա:

Գ «Հանգիստ մաքրակրօն տէր Աստուածատուր աւագ երիցոյ Տէր-Աստուածատուրեան».

Մօր մահացուի հարսին կուսի յառագաստ,
Երիւք տասամբ դիոց սրբի քահանայ,
Եւ զերիցու առեալ ծնողին կարգ զզգաստ,
Տանի զսպաս Էին փառաց գերակայ:

Քառուք նուազ յամաց վաթսուն պաշտամամբ,
Ծաղկեալ որդովք գործովք բարեաց բարգաւաճ,
Յալեւոյթ խոր ննջէ ի տէր յերկրէ աստ,
Յաւիտենից դիմել յափունս ուս ի խաչ:

Ութսուն եւ վեց փոխեալ ի տիս բարերաստ,
Յանստոյգ կենաց ի ստոյգս ի վայր հաւաստեալ,
Չի մահացու աւուրց վախճան այս ըմբոն,
Սոյն եւ բաժակ կենաց մարդկան բազմաղէմ:

Այլ հայրասէր գթոյն ի յուշ յանմահ կօն,
Վեր ճեմելոյն յուսով յազատն ի Սաղիմ,
Չմահարձանս կանգնեն յաւերժ իւր ժառանգք:
1855 դեկ. 15²⁹⁶:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 1բ:

290 «Ոսպնակեր»:

291 «1860 հոկ. 12 ի Յարութիւն գեղն Արճիշու»:

292 «1861 յապրիլ 21 ի Յոպպէ քաղաք»:

293 «1866 դեկ. 10 ի Նարեկ»:

294 «1861 յունիս 12»:

295 «1861 յունիս 12 ի Նիկոմիդիոյ եկեղեցոյ բակ»:

296 «Հեղինակ դամբանականիս է Նիկոմիդացի Ազարիկ վարժապետ Գեորգեան եւ զօրինակն ետ ինձ նորին աշակերտ պ. Խոսրով Թագուրեան: 1861 յունիս 12 ի Նիկոմիդեայ»:

ՇԱՀՊԱՐ ԳԻՒՂ

«Շահպարի գիւղի Սուրբ Ստեփաննոս եկեղ. խաչկալի յիշա.»

*Շնորհօք ամենագօրին աստուծոյ շինեցաւ խաչկալս հրամանաւ Յակոբ աղին՝ որդի մահտեսի Թումայեան: Յիշեցէք ի բարին: ՌՄԿԴ (1815)²⁹⁷:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 391բ:*

ՉԱՂԱՐ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ

*Ա Շինեցաւ սուրբ տաճարս յաջողութեամբն աստուծոյ ի հայրապետութեան Ախրամարայ Թումայի կաթողիկոսի Ջալումիեան պարոն Աւտալ պէկին, Ոստանայ պարոն Բայրամ բէկ: Առաջնորդ անարժան տէր Վարդան, թվ. ՌՄ (1751):
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6332, էջ 292բ:*

*Բ Ի Հայկազեան մեծ թուականիս հազար հարիւր եւ տաս ընդ ամին եղև շինում տաճարիս ձեռամբ տէր Վարդանի, հօրն Սահակին եւ եղբօրն Յովհաննէսին:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6332, էջ 292բ:*

ՊԱՏՐԿԻ ՎԱՆՔ

«Պատրկայ վանուց Բ նորոգութեան յիշ.»
*Ի Հայկազեան մեծ թուականիս ՌճԺԸ (1669) վերստին եղև շինումն տաճարիս ձեռամբ տէր Վարդանին եւ հօրն Սահակին:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 390ա:*

ՋՈՒՂԱ (ՀԻՆ)

*Սուրբ Խաչս բարեխօս է առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ խոջայ Խաչիկին, որ ի ՌԾԳ (1604) թուականիս հանգեաւ ի Քրիստոս²⁹⁸:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 4515, էջ 369:*

ՈՌԴՈՍՏՈ

Ա «Քեմախցի Գրիգոր վարդապետի արձանագրի պատճեն»
*Այս է տապան հանգստեան Քեմախցի Գրիգոր աւագ վարդապետին. սա ծերացեալ լի աուորքք հանգեաւ ՌՂԲ (1643), յամսոյն սեպտեմբեր:
Ձեռամբ տորին բեւեռ փայտի Փրկչական, Ածաւ յայս վայր աղբիւր բուժիչ մաքրական, Ըր եւ նախորդ հովիւ կարգի քաջարթուն, Հովվել զգաղթեալ զիւր հօտ նորեկ բարեմոյն:
«Նոյն մահարձանի վերայ երեք տող վարէն սա եւս կայր»
Այս է տապան հանգստեան Ջէ[յ]թունցի Յակոբ վարդապետին, (որ) փոխեցաւ առ Քրիստոս ի յոյսն ամենեցուն:
1907²⁹⁹ ի Սուրբ Փրկիչ եկեղ.:*

Բ «Սուրբ Ստեփաննոս նահատակի արձանագրի պատճեն»

*Ստեփաննոս էր անուն սրբոյս:
Այրս այս էր սքանչելի,
Բարեպաշտ ծնողաց որդի,
Միշտ ընթերցօղ սուրբ մատենի,
Լեալ ամաց երեսներեքի,
Ի յազումանէ դիւի չարի,
Վասն հաւատոյ ի բանտ մտնի,
Վիզն ի շղթայս, ոտքն ի կոճղի,
Տասն եւ եօթն օր յոյժ չարչարի,
Ի փառս Քրիստոսի գլխատի,
Երիցս զիշեր լոյս մեծ ծագի,
Յետոյ բարձեալ աստ դնի:
Թվին ՌճԽԸ (1699) յունիս 27-ին:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 401ա:*

Գ «Գերեզմանի թաղի աղբիւրի արձանագրի պատճեն»
*Աստուծով կանգնեցաւ աղբիւրս յիշատակ Սուրբ Յովհաննէս եկեղեցոյն վերակացութեամբ Քէրէզ օղի մահտեսի Մարտիրոսին: Թվին ՌճԶԲ (1733)-ին:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 401բ:*

Դ «Մի ջրշէղճի շինութեան յիշա.»³⁰⁰
*Յիշատակ է Շահէնին, կողակց Երրիսիմին, Աւաքին, Նուրիյին, Դուրին Սուրբ Թագաւորին, Յարուպին[ին], կողակցին:
Թվին ՌՄԺԵ (1766)³⁰¹:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 367բ:*

Ե «Թէքիրտաղու Սուրբ Թագաւոր եկեղ. աղբեր շինութեան յիշա.»
*Կառուցաւ աղբիւրս արդեամբք արքունի տպարանի վերակացու Չմիւռնացի մահտեսի Հայրապետ պատուարժան ամիրայի Յովհաննէսեան եւ նոյն տպարանի դրոշմապետ Ստեփան ամիրայի Խաչատուրեան եւ նորին աներձագ լուսահոգի մահտեսի Յովհաննո Մալխասեան, նաեւ պասմաճի ուստայ Աւագի Մալխասեան, ի գովացումն այնոցիկ, որք ի հրաշանումն վանս հանդիպին Սուրբ Թագաւորի եւ ի հոգեւորապէս զմայլումն // նոցին կառուցանողացն, յամի տեսուն ՌՄԾԱ (1802) յօգոս. 11³⁰²:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 371ա-բ, 400բ:
«Կից սմին»
Եւ այժմ փոխեցաւ ի ձեւ չքնաղ յառաջնորդութեան վեհապանձ տեսուն Թաղէտի արքեպիսկոպոսի արդեամբք բարեջան դպրաց սուրբ եկեղեցոյս, որոց տէր լիցի վարձահատոյց: 1854 օգոս. 14:
Հիւնք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 400բ:*

297 «1866 հոկ. 23 ի Շահպարի»:
298 «Էր սա նահապետ տոհմին Լազարեանց եւ շիրիմս է ի գերեզմանատան Հին Ջուղայո»:
299 [Այն, որ այստեղ վրիպակ կա, պարզ է. Փիրղալեմյանը չէր կարող 1907 գրել: Գուցե թվերի ետուտաջութուն կա, և պիտի լինէր 1709]:

300 [401ա-ում՝ «Ջրամբարի բերանի քարի վերայի արձանագրի պատճեն»]:
301 «1870 օգ. 18 ի Թէքիրտաղու եկեղ.»:
302 «1870 յօգ. 19 անդ»:

Չ «Թեքիրտաղու Սուրբ Թագաւոր եկեղեցոյ շինութեան արձանագիր յարեմտեան դրան ճակատի վերայ».

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, եւ զերկիր պագոս անուանդ քում պահեա ի խաղաղութիւն:

«Ի ներքոյ տրին».

*Յառաջնորդութեան արթուն քաջ հովուին Յակոբայ արիւոյն*³⁰³ *վեհ սրբազանին ձեռամբ Մինասայ ազնիւ աղային, արքունի գործոց ճարտարապետին, իսկ իշխանի տեղոյս եւ այլք գլխովին, որ մեծաւ ջանիւք զայս յառաջ ածին: ՌՄԿԳ (1816):*

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 400ա:

Է «Յակոբ եպիսկոպոսի տապանագրի պատճեն»³⁰⁴.

*Տապան խաչակիր մեծ առաջնորդի, Յակոբու արհի եպիսկոպոսի, Քաջընտիր հովիւ հօտին Քրիստոսի, Որբոց եւ այրեաց տածիչ տնտեսի, Ի Հայկազնեայ թիւ ծնեալ է որդի, Ետոկիացի տէր Յօհաննէսի, Ի Բիզանդ վարժեալ աշակերտ յարգի, Տեառն Յակոբայ վեհ պատրիարգի, Յորմէ կարգեցաւ դէտ Թեքիրտաղի, Հարիւր եւ մի ամ վարեալ կենցաղի, Արդ հոգին ի լոյս, մարմինն աստ թաղի, Կարօտեալ յիշման բարեաց ներքողի: Յամի տեառն 1817 (ՌՄԿԶ)*³⁰⁵:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 3ա, 402ա:

Ը «Թեքիրտաղի Գրիգոր վարդապետի արձանագիրն».

Ամփոփեալ կայ յայսմ շիրմի, Մարմին Գրիգոր վարդապետի, Վաթսուն եւ մէկ ամաց կենի, Աստէն առ տէր վերափոխի, Ի քաղաքէս Թեքիրտաղի, Որդի առն բարեպաշտի, Որ եւ դերձակ Նիկողոսի, Որք հանդիպիք յայսմ շիրմի, Յիշել միոյ Հայր մեղայի: Ի ՌՄԿԹ (1820) թվականի Եւ ի 23 յուլիսի:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 401բ:

Թ «Գեորգ վարդապետի խաչվեմ».

*Ամփոփեալ կայ յայս շիրմի, Մարմին ճգնաւոր Գեորգ վարդապետի, Նուիրակ եկեալ սրբոց անապատի, Ի քաղաքէն Իզնիմիտցի*³⁰⁶, *Աստէն առ տէր վերակոչի, Որք հանդիպիք յայսմ շիրմի,*

*Յիշել միոյ Հայր մեղայի, Ի ՌՄՉ (1831) թուականի*³⁰⁷:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 342ա, 401բ:

Ժ «Առաքել արքեպիսկոպոսի մահարձանի պատճեն».

*Շիրիմ յոզնապանծ տէր Առաքելի, Արքեպիսկոպոս եւ քաջ ըսքունի, Ծնեալ Պայազիտ բարեյից երկրի, Մնեալ եւ վարժեալ սուրբ Էջմիածնի, Երթայ ի վանքս Սուրբ Թաղէոսի, Մեծ առաքելոյ Փրկչին Յիսուսի, Անտի նուիրակ գայ ի մեծ Պօլի, Եւ լեալ փոխանորդ վեհ պատրիարգի, Յորմէ կարգեցաւ դէտ Թեքիրտաղի, Ի վեշտասան ամ քարոզող բանի, Ի յիսուն երեք ի հասակ ամի, Քոյեռեան ախտի կենաց զըրաւի, Որք հանդիպիք ի սոյն տապանի, Հայր մերի միով տեսէք արժանի: Յամի տեառն 1831 յուլիս 16*³⁰⁸:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 342ա, 401բ:

ԺԱ «Սուրբ Ստեփաննոս պատարանի դրան վերայի արձանագրի պատճեն».

Եւ եղիցիս պսակ վայելչութեան ի ձեռին տեառն եւ թագ արքայութեան ի ձեռին աստուծոյ քո:

*Յամի տեառն հազար ութ հարիւր թուին, Քառասուն մէկ է մինչ երեք նորին (1843), Յօգոստոսի եօթն հաշուահամարին, Մեծաւ հանդիսի օծումն արարին*³⁰⁹:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 381ա, նաեւ՝ անդ, էջ 400բ:

ԺԲ «Սուրբ Խաչ եկեղեցոյ նորոգութեան արձանագրի պատճեն».

Յամի Փրկչին Յիսուսի 1847, ի յապրիլ 23, ի պատրիարգութեան Մատթէոս արիւոյն վեհ սրբազանին եւ յառաջնորդութեան տեառն Թաղէի՝ արթուն քաջ հովիւին, կառուցաւ տաճարս յանուն Սուրբ Խաչի Փրկչին Յիսուսի մեծ ճարտարութեամբ վեհ ազնիւ անձին Մինաս աղային եւ առատ պարգեւօք մեծ աշխատութեամբ տեղոյս հայ ազգին:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 402ա:

ԺԳ «Եկեղեցոյ քարուկիր փանկալի շինութեան յիշատակարան».

Արդեամբք կենսատու սուրբ բեւեռին Քրիստոսի կառուցաւ բանկալս յառաջնորդութեան տեառն Թաղէոսի սրբազան արքեպիսկոպոսի, յաւուրս եկեղեցապանութեան մահտեսի Յովհաննէսի Պիլպիլճեան: 1854 դեկ. 7:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 383ա-բ, 400բ:

303 «Վախճան սոյն Յակոբ արիւոյ լեալ է ՌՄԿԶ (1817) ամի»:

304 [335ա-ում՝ «Թեքիրտաղու տէր Յակոբ արքեպիսկոպոսի մահարձան»]:

305 «1870 յօգոս. 20 ի Սուրբ Խաչ եկեղ.»:

306 «Նիկոմիտեայ»:

307 «70 ի Թեքիրտաղ»:

308 «Թեքիրտաղ 1870 յօգոս. 19»:

309 «1870 օգոս. 18 ի Թեքիրտաղ, ի Սուրբ Թագաւոր, յաւուրս տեսչութեան վիճակին Թաղէոս արքեպիսկոպոսի»:

ԺԴ «Թեքիրտաղու Սուրբ Թագաւոր եկեղեցոյ աղբեր նորոգութեան յիշա.» [Կից է նախորդ արձանագրութեան].

Եւ այժմ փոխեցաւ ի ձեռն չքնաղ յառաջնորդութեան վեհապանձ տեսոն Թաղէտսի արքեպիսկոպոսի, արդեամբ բարեջան դպրաց սուրբ եկեղեցոյս, որոց տէր լիցի վարձահատոյց: 1854 օգոս. 14: Հիմբ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 383ա:

ԺԵ «Թեքիրտաղի Սուրբ Թագաւոր եկեղ. ներկողի արձանագրութիւն».

Երկնանման սուրբ տաճարս ներկեցաւ բարեյօժար տիօք մեծապատիւ Սպարթալեան մահտեսի Ետրուպ աղայի Չմիտնացոյ, գորոյ զանուն ի վերայ տանեաց հնչեցուցանէ զանգակ սրբոյ տանս յանմահ յիշատակ հոգեւոյս ննջեցելոց իւրոց, գորոց զհոգիս լուսաւորեսցէ տէր ընդ հանգուցեալ հիմնարկուացն սրբոյ եկեղեցոյս եւ զկենդանիսն ընդ կենդանի հիմնարկուացն ընդ հովանեալ խնամոց Աջոյն իւրոյ պահելով, յամի տեսոն 1864 սեպ. 15³¹⁰:

Հիմբ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 385բ:

ԺԶ «Թեքիրտաղի Սուրբ Յարութեան պահարանի դրան արձանագրութիւն».

Ես իսկ եմ Յարութիւն եւ Կեանք:
Կանգնեալ կառուցաւ այս յարկ Հօր բանին,
Չքնաղ պանծանօք մման երկնային,
Յանուն բեւեռի Յիսուսի Փրկչին,
Սուրբ Թագաւոր է անուն իսկ նորին:
Հիմբ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 381ա, նաեւ՝ անդ, էջ 400բ:

ԺԷ «Թեքիրտաղու Սուրբ Թագաւոր եկեղեցոյ շինութեան արձանագիր յարեւմտեան դրան ճակատ».

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա եւ զերկիր պագոս անուանո՞ք քում պահեա ի յաղաղութեան:

«Ի ներքոյ սորին».
Յառաջնորդութեան արթուն քաջ հովուին,
Յակորոյ արհույն վեհ սրբազանին,
Չեռամբ Սինասայ ազնիւ աղային,
Արքունի գործոց ճարտարապետին,
Իսկ իշխանք տեղոյս եւ այլք գլխովին,
Որ մեծաւ ջանիւք զայս յառաջ ածին³¹¹:
Հիմբ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 391բ:

ԺԸ «Թեքիրտաղու Սուրբ Խաչ եկեղեցոյ ի մի մարմարինոն քարի գրութեան պատճեն է».

Այս դուռն տեսոն է եւ արդարք մտանեն ընդ սա:
Ի պատրիարքութեան երկից վեհազնին,
Արքեպիսկոպոս հարանց սրբազնին,

Յակորոս նախնին, Ստեփաննոս միջին,
Եւ Աստուածատուր պատճառից վերջին:
1841³¹²:

Հիմբ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 392բ, 402բ:

ԺԹ «Թեքիրտաղու Սուրբ Խաչ եկեղեցոյ նորոգութեան արձանագրի պատճեն է».

Ի պատրիարքութեան Սատթէոս արհույն վեհ սրբազանին,

Եւ յառաջնորդութեան տեսոն Թաղէտս արթուն քաջ հովուին,

Կառուցաւ տաճարս յանուն Սուրբ Խաչի Փրկչին Յիսուսի,

Մեծ ճարտարութեամբ վեհ, ազնիւ անձին Սինասա աղայի,

Եւ առատ պարգեւօք մեծ աշխատութեամբ տեղոյս հայ ազգին,

Յամի Փրկչին Յիսուսի 1843 յայր. 23³¹³:

Հիմբ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 393ա:

ՍԱԼՆԱՊԱՏ

Ա «Շինումն Սալնապատայ Սուրբ Կարապետ եկեղեցոյ տաճարին».

Թվին ՉԹ³¹⁴ (1260)³¹⁵:

Հիմբ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 387ա:

Բ Թուին ՋԿԵ (1516) գԹումայ կրօնաւորն յիշեցէք ի Բրիստոս³¹⁶:

Հիմբ. ՄՄ, ձեռ. 6273, էջ 471ա:

Գ «Սալնապատի Սուրբ Գրիգոր վանքի գմբէթ».

Ի թուականութեանս Հայկազնեան տումարիս Ռեւ Ը (1559), ի դառն ժամանակիս, ես՝ մէլիք Ղուլիճանս, եւ կողակիցս իմ՝ խաթուն Խանաղէս, եւ սիրասնունդ որդիքս իմ՝ Էնեաթս եւ խոճա Աւետս, որ բազում աշխատութեամբ³¹⁷ եւ շինեցաք զտաճարս Սուրբ Աստուածածնին³¹⁸ յիշատակ հոգոյ մեր՝³¹⁹ եւ ծնողաց իմոց, հօրն իմոյ՝ Բախտիարին, եւ մօրն իմոյ՝ Խոնչայ³²⁰-Խաթունին, եւ պարսպեցինք զներքին Վարսազ³²¹ եւ տուինք ռիսֆ Չուրանդանից³²² ջաղացն, զՎերին Վարսազ շինեցինք³²³ եւ գԳուսնե-

310 «1870 յօգոս. 19»: [401ա-ում՝ «Վերոյգրեալս օրինակեցի յամի տեսոն 1870 օգոս. 18 ի Սուրբ Թագաւոր եկեղ.»]:
311 «1870 յօգոս. 19 ի Թեքիրտաղ: Որչափ որ սոյն վերոյիշեալ արձանագրութիւն թուական չունի, բայց Յակոր եպիսկոպոսի առաջնորդութեան միջոցին շինեալ գոլով ժամանակ հաւանական հաշտով յայտնի լինի, որովհետեւ Յակոր եպիսկոպոսի վախճան դիպեալ է յամի 1817-ին ըստ իւր իսկ արձանագրութեան, որոյ օրինակն ունիմ առ իս»:

312 «1870 յօգոս. 20 ի Թեքիրտաղու Սուրբ Խաչ եկեղեցին»:
313 «1870 յօգոս. 20 ի Թեքիրտաղ, ի Սուրբ Խաչ եկեղեցին»:
314 «Սոյն թուական կայ խաչոր փորագրութեամբ յարեւմտեան կողմանէ ի վերայ սրբատաջ որմոյ եկեղեցոյն, գոր ի շինութեան անդ ճարտարապետն տաշելով զվեճն ի դուրս բերեալ է եւ այսու յայտ արար կացուցեալ է տարւոյն այնորիկ զայն մինչ շինէին նոյն տաճարն»:
315 «1866 յունիս 10 ի Սուրբ Գրիգոր»:
316 «Շիրիմս է ի վանս Սալնապատայ»:
317 [6273-ում՝ աշխատոցաք]:
318 «Սալնապատայ վանից, որ այժմ Սուրբ Գրիգոր կոչի»:
319 [6273-ում՝ հոգոց մերոց]:
320 [6273-ում ծանոթագրված է՝ «ըստ Հայոց՝ կոկոն»]:
321 «Առաջնորդանիստ արթուն Վասպուրական աշխարհի»:
322 «Այժմ գիւղս այս է ի ձեռս տաճկաց եւ մի ժամու չափ հազիւ կայ բացակայ յովսէփ Սալնապատայ: Չուրանդանց ձեռն բերես կոչեցաւ յանուն միոյ իին նահապետի ուրուք»:
323 «Այժմ է աւերակ. Ի մանկութեանս տեսի ծերունիս զոմանս, որք շէն եւ կանգուն տեսեալ էին զՎերին Վարսազն»:

նից³²⁴ ջաղացն զկեսն յխֆ Սուրբ Աստուածածնիս տուհինք եւ զկեսն Վերին Վարագայ. շինեցինք զՄարմնտու կամուրջ եւ զսալայատակս քաղաքիս³²⁵, եւ շինեցաւ եկեղեցիս քսան եւ մէկ ժամատունս:

Արդ, որք հանդիպիք եւ երկիր պագէք, յիշել ի տէր աղաչեմք: Յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Ստեփաննոս³²⁶ եպիսկոպոսին³²⁷:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3բ: 6273, էջ 389ա-բ, 476բ-477բ:

Դ «Շինումն Սալմապատայ Սուրբ Կարապետ եկեղեցոյ տաճարին»:

ԹՎին ՉԹ (1260)³²⁸:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 387ա:

ՍԱՍՍՈՆ

Ա «Սամսոնի եկեղեցոյ դրան վերայի արձանագրութիւն»:

Ողորմութեամբն աստուծոյ նոր ի նորոյ կառուցաւ եկեղեցիս յանուն Սրբոյն Նիկողայոսի սքանչելագործ հայրապետի ի պատրիարգութեան եւ յառաջնորդութեան Յակոբայ արքեպիսկոպոսի ջանիւք եւ աշխատութեամբ Տրապիզոնցի Չաքարեան Սարգիս աղայի, արդեամբք եւ տրօք ողորմութեան Սամսոնի բնակչաց եւ ազգիս հայոց, յամի տեառն 1849 սեպտեմբեր 1-ին³²⁹:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 379ա:

Բ «Ապուշեխի Ծոռեան Դաթի խաչվէմ»:
Ոսկերտոյ Դաթի Սարգիսեան,
Ապուշեխցոյ տոհմին Ծոռեան,
Աստ ամփոփեալ ի դամբարան,
Խնդրէ մաղթանս հոգւոյն օճան,
Հանգչիլ յուսով յերկնին խորան:
18 յօգոս. 20³³⁰:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 349բ:

Գ «Տիգրան մանկան մահարձան»:
Վէմ անբարբառ ոյր յիշատակ,
Տաս հարցողաց ի քոյղ քանդակ,
Աւանդապահ Տիգրանայ եմ,
Չաճիւն մանկան յուսով պահեմ: //

324 «85 տամբ կայ շէնս կանգուն ի Գնունիս գաւառի, որ այժմ կոչի Թիմուր»:

325 «Վանայ»:

326 [6273-ում ծանոթագրված է՝ «մականուամբ Գօզալն է»]:

327 «1866 յունիս 10 ուրբաք ի Վան, ի վան Սալմապատայ, յարտաքուստ կողմանէ յորմն տաճարին, ի վանահայրութեան Եղիշէ վարդապետի Արծրունոյ՝ եղբօր պարոն Ոստանկի Տէր-Սարգարեան, որ իբրեւ ծաղիկ ծաղկեցաւ... եւ վաղամեռիկ մահուամբ թառամեցաւ 1874 յամի, յամսեան մայիսի, ի Փարիզ մայրաքաղաքի»:

328 «Սոյն թուական կայ խոշոր փորագրութեամբ յարեմտեան կողմանէ ի վերայ սրբատաշ որմոյ եկեղեցոյն, գոր ի շինութեան անդ ճարտարապետն տաշելով զվէմն ի դուրս բերեալ է եւ այսու յայտ արար կացուցեալ է տարւոյն այնորիկ զայն մինչ շինէին նոյն տաճարն»: Փիրղալեմյանը գրում է. «1866 յունիս 10 ի Սուրբ Գրիգոր»:

329 «1864 նոյեմ. 12 հինգշաբթի ի Սամսոն»:

330 «1864 նոյ. 6 ի Սամսոնի եկեղեցին»:

Ընդ սգաւոր ծնողաց սրտին
Աստուածաւեր Ղալպճեան տոհմին,
Մովսէս, Բրաբիոն գիատոր սրտից,
Գրասական յանձնեցին ինձ:
1854 դեկ. 12³³¹:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 1ա-բ:

Դ «Ակնցի Էլմաս երիցկնոջ մահարձան»:
Իմ անուն բուն Էլմաս կոչի,
Որ եմ Ակնայ քաղաքացի,
Եմ կողակից տէր Մատթէի,
Բերկրեալ տէրամբ որդուվք բարի,
Մայր Փափազեան եմ նազելի,
Գրիգոր աղա բարեպաշտի,
Դիմեալ Ակնայ Սամսոն եկի,
Առ իմ ազնիւ միակ որդի,
Աստ կնքեցի զկեսանս իմ յի,
Ի վաթսունութ ամ հասակի,
Մեզ արդ գոչեմ Փրկիչ բարի,
Յիշեալ զիս յօրն աներեկի:
1855 սեպ. 15³³²:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 1բ:

Ե «Սամսոնի Սուրբ Նիկողայոս եկեղ. խաչկալի յաջակողմ. դրան պատկերի յիշ.»:

Յիշատակ է պատկերս (Յովհաննու Սկրտչին)
Ակնայ Կարմրկապցի Ալթունեան հանգուցեալ
մահտեսի Կարապետի եւ կողակցին՝ Հոնիսիմէին,
եւ որդւոց՝ տիրացու Ղազարոսին, Պետրոսին, մահտեսի Մարտիրոսին եւ Գեորգին, ի դուռն Սամսոնի Սուրբ Նիկողայոս եկեղեցոյ: 1856:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 384ա:

Զ «Ձախակողման դրան պատկերի յիշա.»:

Յիշատակ է պատկերս³³³ Տրապիզոնցի Սարգիս աղային եւ հանգուցեալ հօրն Չաքարիա աղային եւ Յակոբ աղային, ի դուռն Սամսոնու Սուրբ Նիկողայոս եկեղեցոյն: 1856³³⁴:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 384ա:

Է «Եւրոկիացի Տէր-Առաքելեան մահտեսի Մարտիրոս աղայի մահարձան»:

Փախստեան չիք տեղի ի վճռոյն տէրունի,
Թէ մահու հող դարձցի հողածինն այս երկրի,
Մա գործուվք գովելի գայ առ քեզ ի բարի,
Եւ զարմօք սիրելի ուրախ էր ի սրտի:
Սուր մահուան երկսայրի արկ կործան ի յերկրի,
Քառասուն հինգ ամի յառոյգ իւր հասակի,
Ծածկեցաւ ի վիմի այս անձուկ տապանի,
Արդ Փրկիչ աշխարհի ծառայիս զհոգի

331 «1864 նոյեմ. 6 ի Սամսոնի Սուրբ Նիկողայոս եկեղ. գերեզմանատուն»:

332 «1864 նոյ. 6 ի Սամսոն քաղաքի գերեզմանատուն»:

333 «Ձաքարիա քահանայապետին՝ հօրն Յովհաննու Սկրտչին»:

334 «1864 նոյ. 15 ի Սամսոն քաղաք»:

Արասցես արժանի վերին քում խորանի:
1859 փետ. 28³³⁵:
Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 3բ:

ՍԵՔԱՍՏԻԱ

Ը «Սեբաստիոյ Սուրբ Նշանի վանոց նորոգութեան արձանագիրն է»:

Ողորմութեամբ աստուծոյ վերստին նորոգեցաւ Սուրբ Նշանի Կաթողիկէն, վերնատուն եւ ժամատուն եւ Սուրբ Աստուածածնի տաճարն եւ ժամատունն եւ Սուրբ Կարապետու տաճարն եւ զայլ ուխտատեղիքս եւ շրջապատ պարիսպն եւ խցերն ի ժամանակս Աղնցի Առաքել վարդապետին, թուին ՌՃՀԶ (1727)³³⁶:

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 364բ:

Բ «Սեբաստիոյ վանոց դուրսի բակի աղբեր յիշա.»:
Շինեցաւ աղբիւրս օգնութեամբ Փրկչին,
Հազար երկերիւր վաթսուն եւ վեցին (1817),
Յաւուրս Յօհաննու արհի դիտողին,
Կարապետ ըստն քաջ տեղապահին.
Եւ տուաւ պէգազ, դերջակ էսնաֆին
Ամ յամէ հոգայ ըզձայս սորին³³⁷:

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 373բ:

Գ «Սեբաստիոյ Սուրբ Նշան ուխտի միաբանաց բակի աղբեր յիշա.»:

Ջանիւր Յօհաննու արհի քաջ տեսչիս,
Կարապետ ըստն ետեղակալիս,
Մշտանոս եղև աղբիւր պարտիզիս,
Հազար երկերիւր վաթսունութ [1819] թուիս,
Սակս հոգալոյ ըզսորին կարիս,
Իսկ տուաւ կորուակ սմա արուեստիս³³⁸:

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 373ա:

Դ «Սեբաստիոյ Սուրբ Նշանի կրկին նորոգութեան յիշա.»:

Անհաս պարզեւօք եւ ողորմութեամբ ամենագօրին շնորհակիր հայցմամբ ընենդկալ յաղթող Սրբոյ Նշանին չքնադանշմար շքեղ շինեցան տաճարքս երեքին եւ նորոգեցան յարկք մենաստանիս ի հիմանց կրկին ջանակրու ճգամբ Յօհաննու արհի վերադիտողին, թեակոխութեամբ Կարապետ ըստն նի տեղակալին, նպաստիւր ջանից նիզամ Յարութիւն պերճ ամիրային... արդեանց Սեբաստեան խմբից Արամեան ազգին, թվին ՌՄՀԷ (1828)³³⁹:

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 376բ:

Ե «Պատմագիր Սեբաստացի Յօհաննէս արքեպիսկոպոսի մահարձան»³⁴⁰:

Արփի լուսափայլ պարծանք Սեբաստեան,
Ահա մթագնի սեւ³⁴¹ ամպով մահուան,
Հոգւոյն պատգամաց փող ազդողական,
Կոչի³⁴² յերկնային փողիլ հարսնարան,
Հովին արթուն հօտին բանական,
Այժմ ի քուն մահու ննջէ յայս տապան,
Վեհիս³⁴³ Յովհաննէս³⁴⁴ մտօք խոհական,
Ի մանուկ տիոց տենչացօղ ուսման,
Տեսն Յակոբայ յերկրէն³⁴⁵ Արմտան,
Որ էր³⁴⁶ սուրբ ուխտիս տեսուչ ընտրական,
Նմա աշակերտ եղև գիտնական,
Ապա եւ յաջորդ նորին տեսչութեան,
Տուեալ զանձն իւր անխոնջ տքնութեան,
Յօրինեաց բազում հոգելից մատեան³⁴⁷,
Նորոգեալ հիմանց զայս սուրբ մենաստան,
Գերագանց ցուցաւ³⁴⁸ վարուք սրբութեան,
Կացեալ առաջնորդ քսաներեք ամ:
Փոխեցեալ³⁴⁹ առ տէր արդեամբ բարութեան,
1830 ամի³⁵⁰:

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 341բ: ՍՄ, 10185, էջ 255բ-256ա:

Զ «Եօզիաբքի Փափագեան Յօհաննէս ամիրայի խաչվեմ»:

Մեծարու հզօր պերճ ամիրայի,
Արի օգնական Հայկազեան ազգի,
Բախճանի տոհմիւր Փափագեան կոչի,
Տենջալի որդոյ Գասբար աղայի,
Ի մեծապատիւ Եօզղաթ քաղաքի,
Բախարար ազնիւ Յովհաննէս բարի,
Ուստի փոխեցաւ ի տիս քառասնի,
Ստորին քաղեալ սոյն դամբարանի:
Գոհունակ փութայր սուրբ մենաստանի,
Բէնկալ ուխտիս սրբոյ Նշանի,
Իսկոյն հայցեցէք ի տէր ողորմեսցի,
Չելանէ արտաքս աստուծոյ սոյն հաճելի:
1838 յուլ. 25³⁵¹:

Հիմք. ՍՄ, ձեռ. 6273, էջ 344բ:

Է «Սահակ վարդապետի տապանաքար»:
Ի տապանի աստ ամփոփեալ դնի
Մարմին տէր Սահակ քաջ վարդապետի,
Որ էր միաբան սրբոյ Նշանի,
Յոյժ սաղմոսասաց եւ առաքինի,
Եւ էր ձեռնաստուն Յօհաննէս դիտի,
Տոհմի Թափիչ, որդի Գէորգի,
Ի ներ երեսուն եւ երեք ամի,
Որ վախճանն եհաս ի հոկտեմբերի,

341 [10185-ում՝ «սեա»]:
342 [10185-ում՝ «կոչել»]:
343 [10185-ում՝ «վեհա»]:
344 [10185-ում՝ «Յօհաննէս»]:
345 [10185-ում՝ «երկրին»]:
346 [10185-ում՝ «տիրել» փխ «որ էր»]:
347 [6273-ը այս տողը չունի]:
348 [10185-ում՝ «ցուցեալ»]:
349 [10185-ում՝ «փոխեցաւ»]:
350 «1865 փետ. 27 ի Սեբաստիա»:
351 «1865 փետ. 27 ի Սեբաստիոյ Սուրբ Նշան»:

335 «1864 նոյ. 6 ի Սամսոնի եկեղ.»:
336 «1865 փետ. 27 շաբաթ ի Սուրբ Նշան Սեբ[աստիոյ]»:
337 «1865 փետ. 27 ի Սուրբ Նշան Սեբ.»:
338 «1865 փետրվար 27 ի Սուրբ Նշանի վանս Սեբաստիոյ»:
339 «1865 փետ. 27 շաբաթ ի Սեբաստիոյ Սուրբ Նշան»:
340 [Տե՛ս նաև ՍՄ 10185, էջ 255բ-256ա: Խորագիրն այստեղ՝ «Տապանագիր Յօհաննու արքեպիսկոպոսի, որ հանգեաւ ի տէր 1829-ին, նոյեմբեր 26»]:

*Իսկ յորժամ դիպիր ի սմին շիրմի,
Ասացէք հոգւոյն աստուած ողորմի:
1838 հոկ.³⁵²:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 344բ:*

Ը «Սեբաստիոյ Մայր դպրոցի շինութեան յիշատակարան».
*Հրճուիցէք մանկտի յայս յարկ գիտութեան,
Յերգ առեալ զձեր մեծ իշխանացս յար,
Մայրտեսի³⁵³ Յովսէփ, մահտեսի Գէորգ,
Երկոքին եղբարցս վեհին բարերար:
Երախտիք որոց մատամբ արարչին,
Գրեալ կան յերկինս յաստեղաց կամար,
Որ ձեզ կառուցին զայս Մայր վարժարան,
Ինքեանց արգասեօք յոյժ բարեյարդար:
Յանուն քարզմանչաց ազգիս Հայկազանց
Մատուցին ի ձօն կամովին յօժար,
Եւ ընդ սմին կից Սրբոյն Յակոբայ
Նորոգեալ լայնեալ զանգակ հին տաճար:
Նաեւ առ շինմամբ Մայր եկեղեցւոյն
Բաշխեցին դրամ յողովագումար,
Վեհազնեայ իշխանքս զարմ Օտապաշեան,
Կեցցեն եւ յիցին ազգիս մխիթար: //
Եղբօր որդուվք Կարապետ, Սերօք,
Պօղոս մահտեսեօք ընծիւղօք դալար,
Փոքր Յօհաննէս քոռամբն իրեանց,
Եւ ամէն տոհմիք յամս անհամար:
Հանգուցեալ ծնողք իշխանապետաց,
Մահտեսի Կարապետ, տիկին Աննայ մայր,
Որդիքն որոց Յակոբ եւ Յօհան,
Թոռունք ազնիւ Մեսիայն, Գրիգոր:
Այց արա սոցա տէր բարեխնամ,
Անբաւ գթութեամբդ արարեալ արդար,
Այս դպրատան ի թիւ Փրկչական (1851)
Աւարտ շինութեան եղեւ անվթար³⁵⁴:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 382բ-383ա:*

Թ «Սեբաստացի Դավիթ վարդապետի խաչվեմ».
*Ի յայսմ շիրմի ամփոփեալ դնի
Մարմին հանճարեղ րաբուն տէր Դաւթի,
Բնիկ միաբան էր Սուրբ Նշանի,
Կարգեալ վանահայր Անապատ վան[ք]ի:
Եւ յորժամ դիպիր այս դամբարանի,
Յիշեցէք առ տէր մաղթանօք ձայնի,
Ասացէք հոգւոյն տէր ողորմեսցի:
Թուին Ռ-Յ (1851)³⁵⁵:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 349բ:*

Ժ «Արիստակէս վարդապետի խաչվեմ».
*Յայսմիկ տապանի ամփոփեալ դնի
Մարմին Արիստակէսի րաբունոյ մեծի,*

352 «1865 ի սուրբ Նշանն Սեբաստիոյ»:
353 [Գուցե մահտեսի]:
354 «1865 փետ. ի Սեբաստիայ: Սոյն ոտանատրի հեղինակն է Տէր Եփրեմեան ա. Սիքայէն, որ այժմ կայ ի վիճակի յետին աղքատութեան»:
355 «1865 փետ. 27 ի Սեբաստիոյ Սուրբ Նշան»:

*Որ էր միաբան սրբոյ Նշանի,
Եւ յետ վանահայր սուրբ Հրեշտակապետի,
Հանդիպողք շիրմի տուք զմի ողորմի:
1854³⁵⁶:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 1բ:*

ԺԱ «Սեբաստիոյ Սուրբ Աստուածածին Մայր եկեղեցւոյ դրան ճակատի արձանագրութիւն»³⁵⁷.
*Օտապաշեանց մեծ իշխանին,
Վասն հոգւոց իւր ծնողի³⁵⁸,
Աւագ դուռն սրբոյ տաճարին,
Է յիշատակ մահտեսի Յակոբի³⁵⁹,
Մահտեսի Աստուածատրոյն եւ Մարթային,
Եւ եղբօրն իսկ Ներսէսին,
Կողակցւոյն³⁶⁰ մահտեսի Շուշանին,
Եւ համայնից զարմից նորին:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 384ա: ՄՄ, 10185, էջ 214բ:*

ԺԲ «Սոյն տողից քիչ մի վեր այսպէս գրեալ կայր»³⁶¹.
*Արեւ փառաց Փրկչին խնամոց պայծառ փայլի,
Թագ պարծանաց ազգիս հայոց արձան կանգնի,
Չքնաղ տաճար յանուն սրբոյ Աստուածածնի,
Որպէս փիւնիկ նոր ի նորոյ հաստատ հիմնի,
Սքանչելեօք ձեռաց³⁶² նիւթից զօրէն երկնի,
Աղօտ³⁶³ մտաց սուրբ հաւատոց աստ նշմարի,
Ի դիտողութեան արթուն հովուի Կարապետի,
Էվերեկցի արիաջան վարդապետի,
Սատարութեամբ փութայ գոյից հոգեծնից,
Մեծ իշխանաց եւ էսնաֆից գլխաորի,
Սեբաստիոյ արանց կանանց եկաց եւ բնակի,
Փոխան վարձուց պարգեւեսցի անհուն բարի:
1856 (Ռ-ՅԵ)³⁶⁴:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 384ա: ՄՄ, 10185, էջ 214բ:*

ԺԳ «Ղասապպաշի մահտեսի Յակոբ աղայի մահարձան».
*Առաքինասէր այրս անգուգական,
Ղասապպաշի մահտեսի Յակոբ աղայն,
Աղբիր մի ջրոյ ծարաւեաց արբման,
Եւ դուռն տան տեսնն մտից սրբութեան:
Արար յիշատակ գոյիք յատկական,
Գործեաց զայլ բազում գործ վեհանձնական,
Ի չնաշխարհիկն իւր կենդանութեան,
Հաւերժ յիշատակ անմահ իւր անուան:
Յինիսուն եւ հինգ ամբս հասակի,
Թոճեալ ի կաճառս զուարթնոցն գնտի,*

356 «1865 փետր. 27 ի Սուրբ Նշան Սեբաստիոյ»:
357 [Այս երկու արձանագրութիւններն առանց խորագրի տե՛ս նաև 10185 ձեռագրում (էջ 214բ): Կարևոր տարբերությունները բերում ենք ստորև]:
358 [Առաջին երկու տողերը 10185-ում բացակայում են]:
359 [10185-ում հաջորդում է ևս երկու տող «Ղասապաշեան մեծ իշխանին, / Վասն հոգւոց իւր ծնողին»]:
360 [10185-ում՝ «Եւ կողակցւոյն»]:
361 [10185-ում կրկին խորագիր չունի]:
362 [10185-ում՝ «ձեռոց»]:
363 [10185-ում՝ «Աչօվ»]:
364 «1865 փետ. 27 ի Սեբաստիայ»: [10185-ում թվականը բացակայում է]:

*Չազգս ողջոյն նա եւ զընդանիս համայն,
 Համակեալ ի թուխս ի սուզն անպայման:
 Չարժանի ժառանգս իշխանիս անուան,
 Աստուած բարերար պահեա անասան:
 1864 մայիս 2³⁶⁵:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 4բ:*

ԺԳ «Սեբաստիոյ Սուրբ Աստուածածին եկեղեցոյ պարսպի հիսխային աղբեր արձանագրութիւն».

*Ջրոյս աղբիր առատ հոսման,
 Բեր յիշատակ Ղասապաշեան,
 Մահտեսի Յակոբ այր պատուական,
 Մաքրել աղտից անջինջ արցան,
 Տալ զողորմիս որք զովանան,
 Չարմից անցեալ եւ դեռ ողջ կան,
 Հաստիչն հանուրց վարձ բարութեան,
 Պարզեւեսցէ ի յախտեան³⁶⁶:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 381ա:*

ՍՐԽՈՒ ՎԱՆՔ

*Շինեցաւ աղբիրս ձեռամբ խոճայ Բարայեց ի յիշատակ որդոյ իւրոյ՝ պարոն Աղաջանին, և մարն՝ Թամարին, և կնոջն՝ Գուլադին, և որդոյն՝ Աղաջանին, և եղբորդի Գրիգորին և զորդին իւր Աւետիս և մարն՝ Բէկտուլթան խաթունին, և զՍրխու վանից միաբան զտէր Ղաջախոյ տիրացոյ յիշեցէք ի Քրիստոս, քվին ՌԻԸ (1579):
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3ա:*

ՎԱՆ

*Ա Կանգնեցաւ խաչս բարեխօս առ աստուած վասն պարոն Յովանէսին՝ Թաղրի Վերմիշի որդուն, որ ԾԵ (55) ամեայ փոխեցաւ ի Քրիստոս, քվին ՋԼԳ (1484)³⁶⁷:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 467բ:*

Բ «Ի մի խաչվիմէ».

*ՉԹումայ կրօնատրն յիշեցէք ի Քրիստոս, քվ. ՋԿԵ (1516)³⁶⁸:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 495բ:*

Գ «Վանայ Սուրբ Ծիրանատր եկեղեցոյ շինութեան արձանագիրն է».

Շինեցաւ Սուրբ Աստուածածինն³⁶⁹ ձեռամբ տէր Մովսէս քահանային եւ ութայ Միքայելին եւ Կիրակոսին, որ բազում ջանս կրեցին ի յանօրինաց, ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Վարազայ Մարգարայ արհի եպիսկոպոսին, որ եւ սա երախտիք ունի ի վերայ Սուրբ Աստուածածնին. եւ ի տեղապահութեան³⁷⁰ Խոսրով փաշային, որ զպարիսպ քաղաքին

*նորոգեաց քարի, ի թուականին հայոց ՌԺԸ (1569) ամին³⁷¹:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 9բ, 481բ:*

*Դ Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխօս, թուին ՋԾԲ (1603)³⁷²:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 469բ:*

Ե «Ի մի խաչվիմէ».

ԹՎ. ՌՂԴ (1625): Տէր Ստեփաննոս յիշեցէք ի Քս: Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 499ա:

Չ «Դարձեալ ի մի այլ խաչվիմէ».

*ՉՅովասափ եպիսկոպոս յիշեցէք ի Քրիստոս: ԹՎ. ՌՂԷ (1628)³⁷³:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 499ա:*

Ը «Վանայ Սուրբ Պօղոս եկեղ. տաճարի մի խաչարձանէն».

*Խաչս բարեխօս է խոջայ Տիւանին, որ կանգնեցաւ ի վրդովումն // զմբէթին, որ շինել ետուր թուին ՌՂԲ (1646). շարժն որ ելաւ բազում վնաս արար զումբէթուն³⁷⁴:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 360ա-բ:*

Ը «Վանայ Սուրբ Ստեփաննոս եկեղ. արձանագրութիւն».

ԹՎին ՌԾ (1651) ամին նորոգեցաւ սուրբ տաճարս կրկին ձեռամբ խոջայ Եարջանին, հօրն՝ Միրզին, մօրն՝ Թաթարին: Յիշեցէք եւ աստուած ողորմի [ասացէք]:

«Կից նմին անթուական».

*Յիշեցէք ի Քրիստոս խոջայ Աշխան, կողակից Մարգարիտ եւ զորդին Մարուխան, կողակից զԱդուբն եւ զորդիքն՝ խոջայ Ամիրխան եւ զխոջայ Մարխան, որ վերստին նորոգեցին սուրբ տաճարս յիշատակ հոգոց իրեանց եւ ծնողաց³⁷⁵:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 360բ:*

Թ «Վանայ Սուրբ Վարդանայ տաճարի շինութեան արձանագիրն է».

*Շինեցաւ տաճարս յանուն սրբոյն Վարդանայ զօրավա//րին եւ Շուշանայ ձեռամբ մաքրամիտ եւ հեզահողի երկու եղբարց՝ խոջայ Ամիրին եւ Միրամիրին, անջինջ յիշատակ հօրն, կողակցուն՝ Մարգարտին, որդոյն՝ տէր Յովաննին եւ հարսներաց Ոսկիհատին, որդոցն Սարգսին, Լալիխանին, որդոցն Գրիգորին, Խաթունբէկին, որդոյն՝ Շահրաբին, Մարտիրոսին, Սկրտչին, Խաչատուրին, Յակոբին: Ի թուին ՌԾԸ (1659), աթոռակալութեան Էջմիածնի Յակոբ կաթողիկոսի ձեռամբ³⁷⁶:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 360բ-361ա: ՄՄ, 9027, էջ 45ա:*

365 «1865 փետրվար 27 ի Սեբաստիայ, ի Սուրբ Աստուածածին եկեղ.»:

366 «1865 ի Սեբաստիա քաղաք, յաուրս առաջնորդութեան Կարապետի արքեպիսկոպոսի Կեսարացի Էվերեկ գիւղացոյ եւ փոխանորդութեան Պետրոս վարդապետի Թեմիզդեան Սեբաստացոյ. այժմ է եպիսկոպոս եւ տեսուչ վիճակին»:

367 «1866 հոկ. 16 կիրակի ի Վան, ի Գործոք»:

368 «1886 յունիս 8 ի Վան, ի Սուրբ Գրիգոր»:

369 «Ծիրանատր»:

370 «Վանայ»:

371 «1868 սեպ 5 ի Վան. ընդօրինակեցի ի ձեռագրէն արձանա- յիշատակ Յակոբ եպիսկոպոսի Թօփուզեան»:

372 «Սոյն խաչն կանգնեալ կայ յորմի անդ Վանայ Թաւրիզու դուռն անուն ներքին դրան եւ թուի ինձ թէ մի մեծ դիպուածի սակս լեալ է, որ ժամանակն զլանալով չհասոյց մեզ զայն»:

373 «1886 յունիս 8 կիրակի ի Վան, ի Սուրբ Գրիգոր»: [Հղումը վերաբերում է նաև նախորդ արձանագրութեանը]:

374 «1865 ի Վան, ի Սուրբ Պօղոս»:

375 «68 ի Վան, յօրինակէն Թօփուզեանի»:

376 «68 յուլ. 16 ի Լիւն, առ Թօփուզեան»:

Ժ «Վանայ Սուրբ Պետրոս եկեղ. շինութեան արձանագրի պատճեն».

Շնորհօք եւ ողորմութեամբ ամենագօրին աստուծոյ շինեցաւ Սուրբ Պետրոս առաքելոյ եկեղեցիս ի թուարեւորութեանս հայոց ՌճԾԳ (1705) ամին, ի հայրապետութեան տեսոն Աղեքսանդրի եւ ի յառաջնորդութեան Վա//րագայ տէր Ստեփաննոս ճգնագգեաց վարդապետի, աշխատանօք եւ հոգաբարձութեամբ տէր Իգնատիոս քահանային, որ պատճառ եւ մասնակից եղել շինութեան սորին եւ քազում չարչարանս եւ նեղութիւնս կրեաց ազգի ազգի տանջանօք օգնականութեամբ քաղաքիս քահանայից եւ ամենայն ղօլվաթավորացն եւ հաւասար ժողովրդեանն: Յիշեցէք եւ աստուած ողորմի սասցէք եւ տէր ձեզ ողորմեսցի, ամէն³⁷⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 361բ:

ԺԱ «Սուրբ Ստեփաննոսի տաճարի կրկին նորոգութիւն».
ԹՎին ՌճԾԹ (1710) ամին նորոգեցաւ սուրբ տաճարս ձեռամբ մահողասի Վարդանայ դպրի եւ Երեմիայ ի վայելումն միարան ժողովրդեան, ամէն³⁷⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 362ա:

ԺԲ «Վանայ Սուրբ Պետրոս եկեղ. տաճարի դրան արձաւ».
Կանգնեցաւ դռուն Սրբոյն Պետրոսի գլխատր եւ սրբազանի առաքելոյն ի թուականիս հայոց ՌճԿԶ (1717) ամին ի փառս աստուծոյ, յիշատակ է Վանայ քաղաքի հաւասար ժողովրդեան աշխատանօք³⁷⁹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 363բ:

ԺԳ «Վանի ալրուած Սուրբ Յակոբայ եկեղեցու պատին».
Խաչս է բարձող մեր փրկողին,
Ներկեալ հոսմամբ արեամբ կողին,
Կանգնեալ հայցէ յորդոյ կուսին,
Բարեխօսէ տեսոն Յիսուսին,
Աղօթէ թիօքըն գոր ի սին,
Վասն փրկութեան Երանոսին,
Խոհեմ, գորեղ քարահատին,
Ուշիմ, ճարտար մեծ վարպետին,
Հօրն իւր մահտեսի Հոշխաբարին,
Թուին ճԱՆԱՉԷ (100+1+400+1+700+7+551=1760):
Հիւր. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3ա:

ԺԴ «Սի սենեկի շինութիւն».
Շինեցաւ սենեակս³⁸⁰ ի վայելումն Ալամ աղին³⁸¹, թվին ՌՄԹ (1760)-ին³⁸²:

Հիւր. ՄՄ 6273, էջ 509բ:

ԺԵ «Սուրբ Վարդան եկեղ. աւագանի արձաւ».
Յիշատակ է Մխիթարեանց Մեքրոնի որդի մահտեսի Մինասին, մահտեսի Գասարին, թվ. ՌՄԺԲ (1763)³⁸³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367ա:

ԺԶ «Վանայ Սուրբ Խաչի աղբիւր շինողի յիշ».
Թուին ՌՄԺԳ (1765) շինեցաւ աւագան եւ դրսի կամար սորին ձեռամբ Դիարբաքրցի Սկրտիչ վարդապետին³⁸⁴:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367բ:

ԺԷ «Վանայ Տիրամայր եկեղ. դարպասի նորոգութիւն»³⁸⁵.
Ողորմութեամբ տեսոն եւ շնորհիւ բարեխօսութեամբ երջանիկ Կուսին եղել նորոգումն այս սուրբ մատրանին գեղեցիկ, պայծառ քան զառաջին, ձեռնտուութեամբ մեծ իշխանին՝ յԱխիջան³⁸⁶ հեզա-հոգի աղային, զի էառ հրաման նորոգման սորին իւր հալալ արդեամբն, յիւրոց յիշատակ անձին, ի թազարտութեան սուրբան Ամիթին, որ նստի ի մեծ Պօլիս քաղաքին եւ տեղոյս խրոխտ քաղաքապետին՝ երկրորդի մեծի Թամուր փաշային եւ հայրապետութեան տեսոն Սիմէօնին, առաջնորդութեանն հայր Բարդասարին, վերակացութեամբ չնչին³⁸⁷ Ստեփաննոսին, աշխատութեամբ մեր տառապեալ ազգին, թուին ՌՄԻԳ (1775)³⁸⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 368ա: 9027, էջ 51ա-բ:

ԺԸ «Սի մասունքի տուփի յիշատակարան».
Յիշատակ է Սահմտանցի Աւետիս վարդապետին, որ է ի վիճակէն Սուրբ Հոգոց վանից, թվ. ՌՄԻԵ (1776)³⁸⁹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 510բ:

ԺԹ «Ի մի արձաբեայ խաչէ».
Յիշատակ է Աւետիս վարդապետին ի վիճակէն Հոգոց վանքին, թվ. ՌՄԻԵ (1776)³⁹⁰:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 510բ:

Ի «Սուրբ Սահակ եկեղ. գոգնոց շինողէն».
Շինեցաւ գոգնոց ձեռամբ Յովհաննէսի որդի խաչկալ շինող վարպետ Յակոբին, որ ետ յիշատակ ի դռուն Սուրբ Սահակայ, թվ. ՌՄԻԹ (1780)³⁹¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 368բ:

ԻԱ «Սուրբ Յակոբայ նորոգութիւն».
Եւ արդ, վերստին նորոգեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ մահտեսի Սահակ աղին, Վարդան աղին, Ալեքսան աղին եւ ծնողացն՝ հանգուցեալ մահտեսի

377 «1868 սեպ. 5 ի Վան, ի Թօփուզեանի յաշխատութենէն»:
378 «68 ի Վան, յօրինակէն Թօփուզեանի»:
379 «68 սեպ. 5 ի Վան, ի Թօփուզեանի յարձանագրութենէն»:
380 «Ի Վան»:
381 «Էր սա հայր տոհմական եւ գորովագութ Պարիկ աղա աղ-բատասեր հոշակատր իշխանին»:
382 «1884 ամի, ի տան նոցին գրեցի»:
383 «1868 սեպ. 5 ի Վան, ի Թօփուզեանէն»:

384 «1869 յուլ. 29 ի Սուրբ Խաչ»:
385 [9027-ում՝ «Վանայ Տիրամայր եկեղեցույ դրան վերայի ար-ձանագրի պատճեն»]:
386 «Կարասէբեբեան Ախիջան աղայն է»:
387 [Բնագրում եղել է «չինչ», Փիրղալեմյանն ուղղել է «չնչին»]:
388 «1887 յունիս 25 ի Վան, Տիրամայր»:
389 «1887 մարտ 10 ի Վան, ի Նորաշէն»:
390 «87 ի Նորաշէն»:
391 «1868 սեպ. 5 ի Վան, ի Թօփուզեան»:

Սաֆրաստ աղին, եւ իւր որդի Պարիկ աղին եւ որդոց սոցին եւ հասօրէն ժողովրդեան. որք հանդիպիք այսմ տառիս ի Քրիստոս, յիշեցէք եւ աստուած որդրմի ասացէք, ՌՄԻԹ (1780)³⁹²:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 368բ:

ԻԲ. «Սուրբ Վարդանայ դարպասի նորոգութիւն».

Շնորհիւ տեսռն գթառատի, միջնորդութեամբ սուրբ գօրականի եղև նորոգումն սուրբ դարպասի ի հայրապետութեան տեսռն Ղուկասի, նպաստութեամբ քաջ իշխանի, բարեպաշտօն Ախիջան աղի եւ պալազատ եղբօր Յարութիւն աղի, վերակացութեամբ տէր Սահակ, տէր Մինասի եւ Ստեփաննոս, տէր Յովհաննէսի օժտմամբ համակ ժողովրդի, ՌՄԼԱ (1782)³⁹³:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 369ա:

ԻԳ «Սուրբ Յակոբ եկեղ. խաչկալի դրանց ճակատի գիրն է».

Յիշատակ է խաչկալս մղտեսի Սաֆրաստ աղին, կողակցոյն՝ Թուրվանդա խաթունին, եւ որդւոյն՝ Պարիկ ա/ղին, եւ որ կարդայ, ասէ զողորմին:

«Ձախ դրան ճակատի գիրն է».

Եւ մղտեսի Սահակ աղին, Վարդան աղին, Ալամ աղին, Յակոբ աղին, Արութիւն աղին եւ ընդանեաց սոցին, թվին ՌՄԼԳ (1784), վայելումն ժողովրդեան:

«Փաչկալի դրանց ներքեւն յաջ դրան».

Յիշատակ է խաչկալս Ալամ աղին եւ ծնօղացն՝ մահտեսի Սաֆրաստ աղին, Թուրվանդա խաթունին, եւ եղբարցն՝ Շարամին աղին, մահտեսի Սահակ աղին, Վարդան աղին, Յակոբ աղին եւ կողակցեացն:

«Ձախ դրան».

Դուրդանա խաթունին, Մայրամ խաթունին, Կուրբաթ հաթունին, Հռումսիմա հաթունին եւ որդւոցն՝ մղտեսի Պապին, Մանուկին, Մարգարին, Գրիգորին. եւ որ կարդայ, ասէ զողորմին, ամէն, թվին ՌՄԼԳ (1784)³⁹⁴:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 369ա-բ:

ԻԴ «Վանայ Սուրբ Սահակ եկեղ. նորոգութեան յիշա».

Թվին ՌՄԾԶ (1807)-ին վերստին նորոգեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ Յակոբ աղային Ղարասէֆէ/րեան, ձեռամբ մահտեսի Մարկոսին, վերակացութեամբ մահտեսի Մուրատին³⁹⁵:

ԻԵ «Վանայ Տիրամայր եկեղեցու խաչկալաց շինութիւն».

Ողորմութեամբ տեսռն եղև այսմ ամի, զի շինեցաւ դոռս սուրբ տաճարիս չորս խաչկալաց սրբոց խորանիս մեծապատիւ Յակոբ ազնիւ աղին³⁹⁶ մեծի իշխանութեան Վասպուրականիս, զի հրաման ետ ծաղկել դարպասիս եւ արդեամբ համայն ժո-

ղովրդոց, վերակացութեամբ երկուցս հարազատաց մահտեսի Օվակիմ, մահտեսի Փանոս՝ որդիք Փիրկալէմեան³⁹⁷ թուին ՌՄԿԷ (1816), նկարակերտեալ ձեռամբ մահտեսի Մարտիրոսին³⁹⁸, պատճառ շինման տաճարիս մահտեսի Փանոս Փիրկալէմեան³⁹⁹:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6332, էջ 289ա:

ԻԶ «Սուրբ Վարդանայ խաչկալի շինութեան յիշա».

Արդ յիշեցէք հարք պատուական, Ադա Յակոբ մեծ ամիրան, Որ եւ արդեանց աստի համայն, Իսկ տէրն մեր Փրկիչն մարդկան, Յիշեցէ ձեզ իւր գալստեան: Ի ՌՄԿԸ (1819) թվոյս Հայկազան, Զեզ փրկողիդ փառս տացին, Որ գթացեալ ուխտիս մեծին, Սուրբ Վարդանայ քո վկային, Որ ետոր կար վարպետի յետին, Մահտեսի Մարտիրոս նուաստագին, Առ նկարել խաչկալս անգին:

«Դարձեալ».

Կերտեալ խաչկալս զանազան, Ոսկիած եւ պատուական, Սուրբ սեղանոյս զարդ իսկական, Որ է պատիւ տէրունական, Պատճառ եղև սորա շինման, Տէր եւ իշխան Յակոբ աղայն, Ի թուականիս մեր Հայկական ՌՄԿԸ (1819)-ին⁴⁰⁰:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 375ա:

ԻԷ «Բարսեղ վարդապետի խաչվէմ».

ԹՎ. ՌՄՉԲ (1833) սուրբ խաչս բարեխօս է վասն փրկութեան հոգւոյն Բարսեղ վարդապետին⁴⁰¹:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ ա:

397 «Մահտեսի Յովակիմ եւ մահտեսի Ստեփաննոս հարազատ // (289բ) հօրեղբարք էին ինձ. նուաստ Ղեւոնդ վարդապետի Փիրկալէմեան Տոսպեցոյ գործոյս հաւաքողի»:

398 «Մահտեսի Մարտիրոսն է նոյն իսկ երեւելի քանդակագործ եւ քաջ նկարիչ ճիտաչեան Վանեցի անհամեմատ արհեստագետն, որոյ գործք զմայլեցուցանեն զտեսողն»:

399 «1867 մայ. 10 ի Վան, ի Տիրամայր»:

400 «1868 սեպ. 5 ի Վան, առ Թօփուզեան: Ի սմին արձանագրութեան Յակոբ աղայն է հռչակաւոր եւ երեւելի ի մէջ իշխանաց Վասպուրական աշխարհին մերոյ տոհմական Յակոբ աղա Ղարասէֆէրեան, որ յոյժ հռչակեցաւ քաղաքական բացառիկ գործովք յատուր Տէյվրուշ փաշային Վանայ եւ ապա ձեռամբ յաջորդի նորին սարք Մահմուտայ եւ դրոմամբ հայ եւ տաճիկ ոսղիսաց իւրոց խեղդամահ մահուամբ կատարեցաւ: Իսկ նկարիչն խաչկալաց է նոյն իսկ նշանաւոր եւ բազմահմուտ վարպետ մահտեսի Մարտիրոս քաջ նկարիչ եւ պատկերահան եւ անհամեմատ փորագիր եւ նուրբ քանդակագործ, որ յոյժ հռչակեցաւ անուն նորին ընդ ամենայն աշխարհս Հայոց եւ ի բազում տեղեաց խնդրանս առաքելով կոչելին զնա ի պէտս շինութեան խաչկալաց եւ նուրբ պատկերաց, զսա տեսի ես ի մանկութեան. եւ վախճան նորին լեալ է ի վանս Գլակայ պատահական մահուամբ»:

401 [Վիմագրի վայրը հայտնի չէ: Փիրկալէմյանը գրում է. «Առ Թօփուզեան»: Քանի որ Թօփուզյանից վերցված արձանագրութիւնները կան Վանից են, կան Վարազա վանքից, ուստի պայմանականորեն դնում ենք այստեղ]:

392 «Առ Թօփուզեան»:

393 «Առ Թօփուզեան»:

394 «1868 սեպ. 5 ի Վան, առ Թօփուզեան»:

395 «1868 սեպ. 5 ի Վան, Սուրբ Սահակ»:

396 «Ղարասէֆէրեան»:

ԻԸ «Վանայ Նորաշէն Սուրբ Աստուածածին եկեղեցոյ շինութեան արձանագրութիւն».

Ես եմ կենաց ճանապարհին,
Դուռն նեղ՝ անձուկ երկնային,
Սանդուղք կանգնեալ յինէն յերկինս,
Յիսուս բազմեալ յակմբին:
Թէ որ ընդ իս մտցէ ելցէ,
Ճարակ գտցէ իր անձին,
Ապա թէ ոչ արտաքոյ իմ
Չիք փրկութիւն բնաւին:
Յերեսնեւվեց յովրելինի
Յերեսնեւինն ամ Փրկչին (1839),
Կացի Սիօն նորոյ ուխտիս
Արեանք գնեալ Յիսուսին⁴⁰²:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 392բ:

ԻԹ «Նորաշէն եկեղեցոյ աւագ խորանի խաչկալի շինութեան արձանագրութիւն. յաջակողման դրան ներքեւէն».

Դու տէր անկարօտ փառաց եւ գահի,
Քեզ են սերովբէք արքոք անմահի,
Չինչ յարմարեսցին ձեռք հողեղինի,
Չաթոռ ի յոսկոյ թէ ականց Վանի:
Որ պատկանեսցի քում տիրականի,
Թէ եւ անհնար զոլ մարդկան յազգի:
«Չախակողման դրան».
Բայց զի մի մնասցեն անմասն ի բարեաց,
Ժողովուրդս հայոց քում արդեամբ գնած,
Ընծայէ զայս գահ հաւատով սնած,
Տեսունդ Յիսուսի փրկողին ազանց:
Յիշատակ հոգոց ազգիս Հայկազանց,
Սարգիս, Նիկողոս կերտող տրին, ՌՄՂԴ (1845):
«Սեղանի գոզնոցի արձանագրութիւն».
Յիշատակ է գոզնոցս Պայիզի Գրիգորի կին
Փօրոզին եւ որդւոցն՝ Մարգարին, Գէորգին⁴⁰³:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 393ա:

Լ «Բարդուղիմէոս վարդապետի մահարձան».
Կարեկից անցորդ, դարձի՛ր յայս տ[ա]յական,
Չննեալ, թէ ո՞յր է այս դի անկենդան,
Հայր Բարդուղիմէոս՝ ուշիմ գիտնական,
Բնիկ Պօլսեցի ծնունդ պատուական,
Վարդապետ բարի լուսատրչական,
Եւ զայ հասանէ ի քաղաքքս Վան,
Չամս երեսուն զայս սուրբ մենաստան,
Շահեալ պաշտօնի վերատեսչական,
Հասեալ ցհասակ ալեաց ծերութեան,
Կնքեաց զկեանս իր գործովք բարութեան:
1862 դեկ. 8⁴⁰⁴:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 4բ:

ԼԱ «Վանայ Կարմրուրայ վանոց արտաքին շինութեանց արձանագրութեանց պատճեն».

Չքննող այս տաճար ի բարձր տոյն բլրի,
Գրաւէ զանուն Սուրբ Աստուածածնի,

402 «1887 յուլ. 8 չորեքշաբթի ի Վան, ի Նորաշէն»:
403 «1887 յուլ. 7 անդ»:
404 «1869 հոկ. 8 ի Վան, ի վանս Կարմրուրաց»:

Որոյ արտաքին բովանդակ շինած
Հիմնովին խախտու կացեալ յերերի:
Տէր Իգնատիոս արքեպիսկոպոս,
Դէտ Վասպուրականս կացեալ գաւառի,
Ի հիմանց քակեալ նորոգ նորոգեաց
Չարտաքին շինուածս եւ որ ի կարգի:
Յամի տեսուն 1866 ի մայիս 10⁴⁰⁵:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 385բ:

ԼԲ «Վանայ Նորաշէն Սուրբ Աստուածածին եկեղեցոյ նորոգութեան արձանագրի պատճեն է».

Ով մահացուդ ընդ անկայուն ալիս կենաց հողմաւար,
Քեզ ապաստան կրօնիս փարախ տրտմահովիտ մէծ աշխարհ,
Ամբարձ զսիրտ եւ զգլուխդ յերկինս ի վեր ակնդէտ,
Սիրէ՛, յուսա՛ եւ հաւատայ՛ աստուած, աստուած է յաւետ:
Մինչ ցօղ օրհնից ծաւալանայ եւ տարփողէ զանգահար,
Այգուն այգուն փութայ խնկել բոյն աղօթիցդ յայս տաճար:
Նորոգեցաւ 1884⁴⁰⁶:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 393ա-բ:

ՎԱՐԱԳ

Ա «Վարազայ մենաստանի բերդի եկեղեցոյ որմի վերայի արձանագիրն է».

ՆԼ (981) քվին ես՝ Խուշխուշ խաթունս՝ դուստր Գագկայ (արքայի)⁴⁰⁷, յազգէն Բագրատունեաց, կենակից Սենեքերիմ արքայի //⁴⁰⁸, սուրբ տաճարս այս. յիշեցէք ի մաքուր⁴⁰⁹ ...
Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 6ա:

Ա-ա «Պետրոս Գետադարձ կաթողիկոսի մահարձան».
ԹՎին ՆՀԱ (1022): Այս է հանգիստ տէր Պետրոս կաթողիկոսի, (որ) Տրապիզոն զգետն Ճորոխ արգելեաց առաջի արքային⁴¹⁰:
Հիւնք. ՄՄ, ձեռ. 4515, էջ 3:

Բ «Վարազայ սեղանի յաջ կողման քանդակագործ խաչքարի արձանագիրն է».

Չայս տիպ պանծալի գերահրաշ նշան սուրբ խաչիս, յորում անպարագրելին աստուած անմեղ մարմնովն կաս ահատր եւ Սուրբ հոգւոյն ի սմա պատարագեցաւ վասն փրկութեան աշխարհի, զոր կանգնեցի ես՝ Յովասափ կրօնաւօր, վասն փրկութեան հոգւոյ իմոյ. որք երկիր պագէք, յիշեցէք ի

405 «1869 հոկ. 8 ի Կարմրուր, մինչ էի վանահայր ի նմին միջոցի անդ»:
406 «1884 յուլ. 8 չորեքշաբթի ի Նորաշէն»:
407 [Փակագծերի հավելումները Փիրղալեմյանին են]:
408 «Մաշեալ էր»:
409 «1867 ք. մայիս 2 Վարազայ վանք»:
410 «Այս արձանագիրն կայ ի վանս Վարազայ ի Վան: Վերոյիշեալ ՆՀԱ 1022 թին Պետրոս կաթողիկոսի մահուան թուականը չէ, Գետարգելութեան թին է»:

Քրիստոս եւ աստուած զձեզ յիշեսցէ: Թուին հայոց ՉԾ (1288)⁴¹¹:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 358ա:

Գ «Վարազայ սեղանի յաջ կողման քանդակագարդ խաչ-բարի արձանագիրն է»:

Չայս տիպ պանծայի գերահրաշ նշան սուրբ Խաչիս, յորում անպարագելին աստուած անմեղ մարմնովն կաս ահաւոր եւ Սուրբ հոգւոյն ի սնա պատարագեցաւ վասն փրկութեան աշխարհի, զոր կանգնեցի ես՝ Յովասափ կրօնաւոր, վասն փրկութեան հոգւոյ իմոյ: Որք երկիր պագէք, յիշեցէք ի Քրիստոս եւ աստուած զձեզ յիշեսցէ, թուին հայոց ՉԾ (1301)⁴¹²:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 8ա:

Դ «Վարազայ սեղանի ձախակողման արձանագրութիւն է»:

Ես՝ բնայ Վարդանս, շինող Սուրբ Աստուածածնիս, կանգնեցի զխաչս ինձ եւ զաւակաց իմոց: Աղաչեմ յիշեսցիք ի Քրիստոս, թուին հայոց ՉԿԵ (1316):

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 358բ:

Ե Սարգիս եպիսկոպոս, որ գնաց մինչեւ ի մեծն Հռոմ, ի ՌԺԶ (1567) վախճանի ի Վարագ⁴¹³:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 481բ:

Զ «Վարազայ հիւսիսային պարսպի դրան մի արձանագիրն է»:

Ես՝ Սուրատս, եկի ի սուրբ ուխտս եւ կանգնեցի զպարիսպս յիշատակ ինձ եւ ծնողաց եւ զաւակաց իմոց, ամէն, թվին ՌՂԵ (1646), ձեռամբ տէր Յովհաննէսին, տէր Կիրակոսին: Սուրատս, որդի տէր⁴¹⁴ ...

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 360ա:

Է «Վարագա? դարպասի դրան ճակատի արձանագիրն է»:

Ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի կաթողիկոսին եւ Յարեթեան թուականին ՌՂԷ (1648) ամին եւ յոբելեանի Ի եւ մին եւ ԽԵ ընդ նմին: Կամօք տեառն բարերարին եւ զօրութեամբ սուրբ Նշանին զմբխայարկ խորանք սորին դարպասս եւ պարիսպ ընդ նմին, շինեալ հաստատին վերակացութեամբ տէր Կիրակոս վարդապետին եւ իշխանաշուք խոջայ Ամիրխանին եւ Սարուխանին, Ռոհջանին եւ Մարխասին եւ հաւասար ժողովրդեանն եւ մէյմար Տիրատուրին յիշեալ Քրիստոս յաւուրն ահեղին, ամէն⁴¹⁵:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 360բ:

«Ի ներքոյ 26 թիւ արձանագրին սա եւս կայր»⁴¹⁶:

Դարձեալ ի մեր հայոց թվին, Որ էր հասեալ մինչ ի ՇԻՄԻՆՆ (ՌՃԽ-1691) // Խոջա Սինաս Վանեցին,

Օրհնեալ որդիք եղբօր նորին, Առին զուրանն բոլորովին, Ետուն ի դուռն Սուրբ Նշանին, Որոց Քրիստոս ողորմեսցի Յաւուր մեծի դատաստանին, ամէն⁴¹⁸:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 361ա-բ:

Ը Մահտեսի Կարապետ վարդապետին⁴¹⁹: Թուին ՌՃԽԶ (1697)⁴²⁰:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 361բ:

Թ «Վարազայ վանոց դարպասի որմի յարձա. արտաքուստ»:

Ի հայրապետութեան տեառն Աստուածատուր կաթողիկոսի, շնորհօքն ամենագորին աստուծոյ եւ միջնորդութեամբ սուրբ Կուսին Մարիամո եւ՝ Վանցի, ի գիտէն Շուշանայ տէր պ. Բարդուղիմէոս վարդապետս, աշակերտ տեառն Կարապետ քաջ եւ անյաղք վարդապետի, որ մականուն Կալօյ ասի, գորով աշակերտ Ապարանցի Սիմէօնեանց վարդապետացն, տեսի զաւերումն Քրիստոսաշէն մայր վանօրէից սուրբ ուխտիս Վարազայ վասն ծովացեալ մեղաց մեղոց, զի կմբէթներն (եւ) սեղանքն սուրբ աւերեալ եւ եկեղեցւոյ ամենայն ինչ պակասեալ եւ իմ յուսալով աստուած վերստին հաստատեցի ամենայն զարդիք, թէ՛ եկեղեցական անօթս, թէ՛ խաչինք եւ արջառք եւ երկու կամարակապ⁴²¹ արդեամբ ամենայն ինչ կատարեալ եղի եւ միաբան եղբարքս իմ՝ տէր Մարկոս, Աւետիս վարդապետն, Յովսէփ վարդապետն, տէր Սարգիսն, տէր Յովհաննէսն, տէր Կարապետն: Այս եղի թվ. ՌՃՀԳ (1724) ամին, ի տեղապահութեան վեգիր Ատուլայ փաշային եւ օգնականութեամբ Վանայ քաղաքի եւ գիտօրէից օրհնեալ // ժողովրդեանն. եւ պարտ է տեսողաց վայելել եւ աստուած ողորմի ասել յամենայն ժամ, ամէն: Եւ զսուրբ Խաչայ վանքն նորոգեցի⁴²²:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 364ա-բ:

Ժ «Վարազայ դարբասի պատուհանի խաչի յիշա.»
Օրհնեալ ես դու՝ խաչ փրկութեան, Լեր բարեխօս առ տէր արքայն:

Ուրեքին սուրբ խաչերս բարեխօս Գանջեցի տէր Պետրոսին եւ իւր կնոջն՝ մահտեսի Հռիփսիմին, եւ վեցեկին հանգուցեալ որդոցն: ՌՄԳ (1754): Կանգնեցաւ ձեռամբ Բարսեղ վարդապետին⁴²³:

Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 366բ:

411 «1868 ի Լիւն, առ Յակոբ եպս. Թօփ[ուզեան]»:

412 «1868 ի Լիւն, առ Յակոբ եպս. Թօփ[ուզեան]»:

413 «Ի խաչվեմն նորին. 1866 ի Վարագ»:

414 «1869 յօգոս. 7, ի վանս Վարագայ»:

415 «1887 մայ. ի Վարագ»:

416 [Խոսքը վերաբերում է նախորդ արձանագրութեանը]:

417 [C-500 + Ի-20 + Մ-200 + Ի-20 + Ն-400 + 551 = 1691]:

418 «87 ի Վարագ»:

419 «Ի տոյն արձանագրի յիշատակեալ մահտեսի Կարապետ վարդապետն է նոյն իսկ նշանաւոր Կարապետ աստուածաբան բարունին, մականուամբ Կալօյ կոչեցեալ, որ էր յաշակերտաց Սիմէոն վարդապետի Ապարանցոյ եւ վանահայր ի վանս Վարագայ ի ՌՃԻԳ (1675) անաց հետէ եւ ի վերոյիշեալ ՌՃԽԶ (1697) թուականն զմահ նորին ցուցանէ, որ հանգեալ ի տէր ի նոյն իսկ ամբ»:

420 «87 ի Վարագ»:

421 «Այս փակագրեալ բառն ինձ թուի թէ զոյգ կամարակապին ասէ»:

422 «1869 յօգ. 7 ի Վարագ»:

423 «1867 մայիս 2 ի Վարագ»:

ԺԱ «Միս պատուհանի յիշ.»

Սուրբ նշանն տերունական Խաչին կանգնեցաւ անբարբառ բարեխօս առ Յիսուս // Միածինն վասն հոգւոյն Բարադամ վարդապետին⁴²⁴ եւ Յովսէփին, ձեռամբ Սեբրոն վարդապետին:

ԹՎ. ՌՄԳ (1754)⁴²⁵:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 366բ-367ա:

ԺԲ «Վարագայ միս պատուհանին».

Սուրբ Խաչս բարեխօս է առ աստուած վասն փրկութեան հոգւոյն առաջնորդ Գրիգոր վարդապետին, հոր՝ Խղաթին, մոր՝ Եղիսին, եղբոր՝ Յովսէփին: ԹՎ. ՌՄԺ (1761)⁴²⁶:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367ա:

ԺԳ Գրիգոր վարդապետին⁴²⁷, որ է առաջնորդ: ԹՎ. ՌՄԺԸ (1769)⁴²⁸:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367բ:

ԺԴ «Վարագայ տաճարի դուռն նորոգողի յիշ.»

Յիշատակ է Բաղդասար վարդապետին եւ ձեռնոց՝ Մեսրոբին եւ Սառային: ԹՎ. ՌՄԻԲ (1773)⁴²⁹:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 368ա:

ԺԵ «Վարագայ դարպասի ծաղկանկարողի յիշա.» //

Եւ ի շնորհօք սրբոյ խաչին, Եղև ծաղկեալ գաւիթ սորին, Եւ շրջապատըս պարսպին, Համանգամայն բոլորովին: Նորոգեցաւ ի գարդ ամին, Ի ՌՄԻԶ (1777) թուականին, Ի սեպտեմբեր ամսոյ մէկին, Ձեռամբ ուխտիս առաջնորդին: Էջմիածնի նուիրակին, Տեառն Պաղտասար վարդապետին, Ողորմութեամբ իշխանացս քաղաքին, Գերապատուացն ամենեւին⁴³⁰:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 368ա-բ:

ԺԶ «Վարագայ պարսպի նորոգութիւն».

ԹՎ. ՌՄԻԶ (1777) եղև նորոգումն այս պարսպին ձեռամբ տեառն Բաղդասար վարդապետին. տէր ողորմեսցի նմա յաւուր մեծի դատաստանին, ամէն⁴³¹:

Հիմք. ՄՄ 6273, էջ 368բ:

ԺԷ «Վարագայ պարսպի յարեմտեան պորճի վերայի արձանագիրն».

Շնորհիւ Սուրբ Հոգւոյն նորոգեցաւ մեծ պարիսպ ձեռամբ եւ արդեամբք առաջնորդ Ղազար վարդապետին, իշխանաց եւ ժողովրդոցն: ՌՄՁԲ (1833)⁴³²:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 392ա:

ՔՈՓՐՈՒ ՔԱՂԱՔ

«Քուփրու քաղաքի Սուրբ Գեորգ եկեղեցւոյ շինութեան յիշա.»

Շինեցաւ սուրբ տաճարս չքնաղ յօրինմամբ Յակոբայ արհույ անձնադիր ճգամբ բոլոր ժողովրդոց տրօք եւ արդեամբ. Աբրահամ, Աթանաս վարպետաց ձեռամբ, յամի տեառն 1832 եւ հայոց ՌՄՁԱ⁴³³:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 377ա:

ՔՕՉԱՆԻ ԳԻՒՂ

«Քօչանի գեղջ եկեղ. նորոգութեան յիշ.»

Ի թուարբերութեան Հայկազեան տօմարիս ՌՄԼԶ (1787), ի հայրապետութեան Ախթամարայ տեառն Կարապետին շինեցաւ եկեղեցիս օգնականութեամբ Ախիջան աղային եւ եղբոր՝ պարոն Գեորգին, եւ գեղի քահանայից եւ // իշխանաց՝ տէր Մխիթարին, տէր Վարդանին, մուշսի Ալավերտուն, ռէս Թաթոսին, Ներսէսին, Հօվանէսին, Մաիլին, եւ այլ գեղիս մեծի եւ փոքուն աստուած վարձս հասուցեալ⁴³⁴:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 369բ-370ա:

ԱՅԼ ՎԻՍԱԳՐԵՐ ԲԱՂՂԱԴ

Յակոբ արքեպիսկոպոսի տապանագիր.

«Վ վերայ շիրմին է գրեալ Հնդկաց նիբակ Յակոբ արքեպիսկոպոսի սրբոյ Էջմիածնայ, որ վախճանեալ է ի Բաղդադ քաղաքի 1810 հոկ. 21».

Տեառն Ղուկասուն, որ կաթուղիկոս, Որդի հոգեսուն, մեծն Յակոբբոս, Գերայիրաշ գիտուն արհի եպիսկոպոս, Աստ կայ անփոփուն տանս հայոց նոր լոյս, Էր սայ Սուրբ Հոգոյն գրիչ եւ նօտար, Քանօն ուղղութեան հոգիապատար, Սուրբ Էջմիածին գիտրհուրդ կիսակատար,

424 «Էր սա դէտ վիճակին Բայագիտու եւ վանահայր Բագրեանդայ ուխտին սրբոյն Յովհաննու Սկրտչին Իւչքիլիսայ առձայնելոյ»:

425 «67 ի Վարագ»:

426 «1867 մայիս 2 ի Վարագ»:

427 «Սոյն Գրիգոր դէտն է Դուռունկանց Գրիգոր արքեպիսկոպոսն, որ էր հայր Վարագայ եւ վերոյիշեալ թիւն իւր մահն ցուցանէ»:

428 «1877 մայ. ի Վարագ»:

429 «1867 մայ. 2 ի Վարագ»:

430 «Ի Վարագ»:

431 «1867 մայ. 2 ի Վարագ» [Վարագա վանքը նորոգվել է նաև 1817 թ.: Փիրղալեմյանն այդ արձանագրության բնագիրը չի

բերում, սակայն պատմում է նյութը. «Վարագայ Սուրբ Նշան եկեղ. նորոգութեան արձանագրի միտք. ԹՎին ՌՄԿԶ (1817): Վարագայ Սուրբ Նշան եկեղեցին նոր ի նորոյ շինեալ է Գալուստ եպս., ջանիւք Ղարասէֆեբեան Յակոբ աղային: Ի նոյն միջոցի Վարագայ վանոց մէջ ականատր վարդապետք հետեւեալքն էին, որք են Եփրեմ Մոկացին եւ Աբրահամ եղբորդի նորին՝ // այր նիրհուն աստուածաբան, զոր տեսեալ են ի տղայութեան աչօք իսկ իմովք. եւ Գալուստ, երեւի թէ սա ինքն է իսկ Գալուստ եպիսկոպոսն՝ առաջնորդն Վանայ եւ վանահայրն Վարագայ, որ վասն խոնարհութեան զանուն իւր գկնի ամենեցուն նշանակեալ է: 1867 մայ. 2 ի Վարագ]: - ՄՄ, 6273, էջ 373ա-բ:

432 «1868 յուլ. 21 ի Լիմ անապատ առ Թօփուզեան Յակոբ արհին»:

433 «1864 նոյեմ. 15 ի Վէգիր Քօփրու»:

434 «1868 յուլ. 22 ի Քօչանի գիւղ»:

Եթող եւ հանգեալ աստ երկիր օտար,
 Բարուն ճշմարիտ քարոզող բանի,
 Երգող սաղմոսաց հրեղինաց ձայնի,
 Արդ ցնծայ Բարէլ տյն դամբարանի,
 Եւ լայ Հնդկաց տուն ողջ Հայաստանի:
 Ասացեալ է ումեմն շինական քահանայէ միոյ,
 որ //⁴³⁵ է յանկարծ ի թաղմանն // Հնդկաց աշ-
 խարի:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9245, էջ 48բ:

ԵՐԵՒԱՆ

«Մովսէս կաթողիկոս Տաթևացոյ տապանագիր».
 Այս է տապան դամբարանի,
 Եղեալ շիրիմ ճգնատրի,
 Տեառն Մովսէս դիտապետի,
 Ամէն հայոց հայրապետի,
 Որ է տեղեալ Տաթևացի,
 Նորոգող սուրբ Էջմիածնի,
 Այլեւ շինող սուրբ կրմբէթին,
 ԹՎին ՌՉԸ (1633)-ին:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 737, էջ 181ա:

ԵՐՈՒՍԱԿԷՄ

«Տապանագիր գերեզմանի Սաղիմայ Գրիգոր պատրիարքի.
 Կամօք Փրկչին արթուն անունս յանց կացեալ,
 Չպակասութիւն վշտաց տրին ներ անցեալ,
 Չութն ճ (100)-ակ քսան պարտուց վճարեալ,
 Սուրբ Յակոբայ սիւն ամրութեան կառուցեալ,
 Վեհ աշակերտ մեծ վարժողին Վարդանայ,
 Հրեշտակական վարուք ճգնեալ անխնայ,
 Սրօքեավար քաղաքավար յարակայ,
 Յօրէնս Է-ին միշտ ակն ի բաց աներկբայ,
 Ութսուն ամօք միշտ կուսութեամբ պարապեալ,
 Մարմնոյն հանգիստ խուն մի երբէք ոչ տուեալ,
 Յասպարիզի մարտին յաղթող ներ գտեալ,
 Գնաց առնուլ անեղծ պսակն պատրաստեալ,
 Ննջէ մարմնով Գրիգորիտան որ արթուն,
 Հոգովն հսկէ առ միշտ բարին որ անհուն,
 Յորում եւ գործքն պսակէ զիր անուն,
 Չի հաւատով եւ սուրբ գործովն էր տրուն:
 [1749]⁴³⁶.
 Հիւք. ՄՄ, ձեռ. 2316, էջ 177բ:

ԷՋՄԻԱԾԻՆ

Ա «Արձանագիր տեառն Յակոբայ հայրապետին»⁴³⁷.
 Հանգստարանս այս հրաշափառ եւ պատուելի,
 Վայելչաղիւր յօրինուածովք ի հանդիսի,
 Ունի յաւանդ մաքուր զմարմին⁴³⁸ բազմերջանկի,
 Տեառն Յակոբայ Յայոց ընտրեալ հայրապետի,
 Որ փոխանորդ հօր մեր սրբոյ Լուսատրչի,

435 [Զի կարդացվում]:
 436 [Վիմագիրը թվական չունի: Դնում ենք մենք՝ ըստ այլ աղ-
 բյուրների՝ ժամանակագրական կարգը պահելու համար]:
 437 [Տապանագիրը տե՛ս նաև Շահխաթունեանց, Ստորագրու-
 թիւն, հտ. Ա, էջ 222-223]:
 438 737-ում՝ աւանդ զմաքուր մարմին]:

Կաթողիկոս օծեալ նորին օրհնեալ գահի,
 Եւ արդ տապան⁴³⁹ բուժիչ ախտից մարմնականի,
 Յուսով է⁴⁴⁰ սա դիմողացն⁴⁴¹ հրաշիւք յայտնի,
 Չկազմող տրին յիշել ի տէր զարմիւք հայցի,
 Չաքարիայն⁴⁴² նոր խալիֆայն հիւսնականի,
 Հազար հարիւր քսան եւ Թ (1680) հայոց թուի,
 Երկրորդ ատուր ամսոյն Հռոմայ օգոստոսի:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 482, էջ 44բ: ՄՄ, 737, էջ 180բ:

Բ «Սիմէոն կաթողիկոս Երեւանցոյ տապանագիր».
 Քրիստոս աստուածդ իմ տէր բարի,
 Լուր աղետից քոյս ծառայի,
 Դու կացուցեր զիս յայս կարգի,
 Ի մշակել զքո այգի:
 Իսկ ես անուամբ այս պաշտօնի,
 Գտայ ծառայ ամենայնի,
 Եւ որպէս թէ զպարտաւոր մի,
 Փոխատուաց զիս մատնեցի:
 Ոյց ետու եւ ծառայեցի,
 Վարձն իմ ըզսուգ եւ զցաւ առի,
 Այսու կենօք ողորմելի,
 Ժամանակս իմ վճարեցի,
 Այժմ ամօթով կամ առաջի,
 Չի ծառայել քեզ չկարացի,
 Արդ դու նսեաց դու քաղցրութեամբ,
 Թող զյանցանս իմ ներողութեամբ,
 Ուրախացոյ առ քեզ կոչմամբ,
 Եւ սփոփեալ քո սուրբ տեպեամբ:
 Վասն խաչիդ զոր պաշտեցի,
 Եւ սուրբ անունդ զոր կրեցի,
 Սիմէոն կաթողիկոս Երեւանցի:
 [Ի 1780]⁴⁴³ յուլիսի 2:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9245, էջ 47ա: Կաթողիկոսական դիվան, թղթ.
 6, վավ. 47գ (միայն առաջին ութ տողերը):

Գ «Պետրոս Բերդումեանի տապանագիր».
 Քաջաքախտիկ տյն դամբարան,
 Ունի յինքեան զայր պատուական,
 ՉՊետրոս յազգէ Աղամալեան,
 Չեպիսկոպոսն յոյժ գիտնական:
 Որոյ քաղաք Նախիջեան,
 Եւ սուրբ գահիս լեալ միաբան,
 Այժմ այս կենացս առեալ վախճան,
 Դեպեաց ի կեանս անանցական:
 Ի ՌՄԼՁ (1787) թուին (հայոց):
 Հիւք. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6,
 վավ. 6:

ԿԻԼԻԿԻԱ

Ահա մշտավատ ճրագ բազմալոյս,
 Տխուր սրգատր ազգիս խրրախոյս,

439 [737-ում՝ տապանս]:
 440 [737-ում ի փխ է]:
 441 [737-ում՝ դիմեցելոց]:
 442 [737-ում՝ Չաքարիայն]:
 443 [Թերթը ներքևից կտրված է]:

Ծածկեալ կայ մարմնով յայս տապան անլոյս,
 Հոգով զուարճացեալ յարփին գերալոյս:
 Շնորհագարդ Ներսէս հոտապետ արթուն,
 Սուլիչ քաղցրալուր հանճարեղ բարուն,
 Ըշգրիտ հաւատոց քարոզ գերարբուն,
 Բազմեալ յայս աթոռ անբարբառ համբուն:
 Չայնէ Մանուէլ պերճ արքայ յունաց,
 Ով խաղաղարարդ երկուց մեր ազգաց,
 Չիա՞րդ արարեր զանձն իմ սեւազգեաց,
 Թողեալ արարեր զանձն իմ սեւազգեաց:
 Երջանիկ ես դու՝ տապան գերապանծ,
 Ունելով ի քեզ գցանկալի գայս զանձ,
 Չրից պարգեաց բաշխողդ աննախասնձ,
 Ժատուեալդ իսկապէս ի գով գերապանծ:
 Հիւք. ՍՄ, ձեռ. 9245, էջ 53ա:

Ա «Կ. Պօլսի Շիշլիի գերեզմանատուն, Յակոբ պատրիարք Նալեանի տապանագիր»⁴⁴⁴.

Այս տապան է գերահռչակ առն իմաստնոյ,
 Չրիական շնորհաց հոգւոյն տան եւ տեղոյ,
 Տեառն Յակօրու⁴⁴⁵ աստուածաբան կոչեցելոյ,
 Եւ վեհափառ պատրիարգին Բիւզանդիոյ,
 Որ էր յաջորդ տեառն Յօհաննու Բաղիշեցոյ,
 Քաջաքարոզ պատրիարգին գեր յարգելոյ,
 Լեալ հեղինակ բազմաց⁴⁴⁶ գրեանց ազգիս մերոյ,
 Պայծառացաւ յոզն երախտիք այրս յարգոյ,
 Քսաներեք ամօք եկաց դէտ այս Պօլսոյ,
 Տեղեաւ գորով Չիմառացի բարեբարոյ,
 Այն որ ի կեանս էր ձայն կենաց իբր զփողոյ,
 Ննջէ լռիկ⁴⁴⁷ լեալ արժանի յիշման բարոյ,
 Հանգեաւ ի ՈՒՄԳ (1764)⁴⁴⁸ յուլիսի Ի (20):
 Հիւք. ՍՄ, ձեռ. 8216, էջ 262ա. հմմտ. Բամպուքճեան Գ., Յա-
 կոբ պատրիարք Նալեան, Ստամպուլ, 1981, էջ 26:

Բ «Տապանագիր մահտեսի Արիստակէս ամիրայի».
 Առ իս նշմար՝ քեզ բառական,
 Որ եղեալ կեանս յայսմ տապան,
 Յելս յերկրէս պանդխտական,
 Գնամ յերկիրն իմ սեփական,
 Ի քէն ինդրի պաղատական,
 Յիշել յաղօթս տէրունական,
 Արժան լիցիս եւ դու յիշման,
 Գալստեան տեառն միւս անգամ:
 Թիւն է Հայկազնէի բանի ...⁴⁴⁹:
 Հիւք. ՍՄ, ձեռ. 8216, էջ 262ա:

Գ «Տապանագիր».
 Դալար բարունակ ծաղիկ թերաբաց,
 Ով չքնադագեղ զաւակ գրկանաց,

Չիարդ թառամեալ ի ժանդ խորշակաց,
 Փոյթ ընդ փոյթ հասար յայս ժիր շրջանաց:
 Դու Կարապետ մեր վարդ հոտոտանաց,
 Տանն Փիշմիշեան յիշատակ կենաց,
 Լինել ունէիր պսակ պարծանաց,
 Արդ եղեր այժմուս թախիծ թախճանաց:
 Միքայէլ հայր քո ընդ այլ զաւակաց,
 Եւ մայր քո ...⁴⁵⁰ ի խորոց սրբտանց,
 Պար առեալ ընդ քեւ համակ սեւազգեաց,
 Երգէն ընդ Դաւթայ ողբ հառաչանաց՝
 Որդեակ մեր Կարապետ, Կարապետ մեր որ-
 դեակ:
 Հիւք. ՍՄ, ձեռ. 9821, էջ 96բ:

Դ «Տապանագիր».
 Ի յերկրէն Վասպուրական, ի զաւառէն Կարկա-
 ռու,
 Եւ ի գիւղէն Եղեգական Պարսամեան Յօհաննու,
 Աստ ամփոփի մարմին նորին ի մահուանէ գու-
 ժարկու,
 Բազում ցաւօք ախտակրեալ ի պանդխտութեան
 պահու:
 Դարձ յիւր զաւառ երիցս անգամ ի չորրորդին՝ ի
 Պօլիս,
 Շատ փայտ հասեալ օրհաս մահու՝ չեթող դառ-
 նալ ի հայրենիս,
 Պանդխտացեալ ներքեւ հողոյ թողեալ ի սուզ
 զընտանիս,
 Խնդրէ ի ձէնջ յիշեալ անգամ զմի Հայր մեր ար-
 ժանիս:
 Հիւք. ՍՄ, ձեռ. 9821, էջ 96բ:

Ե «Տապանագիր».
 Այս դարաստան հին տեսարան,
 Մարդակոտոր վայր տրտմութեան,
 Չեռամբ էած կենացս վախճան,
 Յեօթանասուն ամացս լըրման: //
 Մանգաղ տորս տէրունեան բան,
 Հնձեաց եւ զիս, կապեաց գորայն,
 Կասուլ կամեաց աստ ի մրթան,
 Ապա հոսիլ հեծանաւն:
 Յուսամ լինիլ մարուր ցորեան,
 Եւ ժողովիլ յըշտեմարան,
 Ուստի ինդրեմ ի ձէնջ օճան,
 Նոյնիսկ արդեամբ Փրկչին արեան:
 Հիւք. ՍՄ, ձեռ. 9821, էջ 96բ-97ա:

Զ «Տապանագիր».
 Դուստր եմ Յօհաննու ազնուականին,
 Հռիփսիմէ ձայնեալ Հովիւեան զարմին,
 Հարսն ընծայեցայ վեհ Մարտիրոսին,
 Մերունդ խոհական Նէվրուզեան տոհմին:
 Յեօթանասնամեայ ըստ քընարերգուին,
 Կատարել զընթացս ըստ Պօղոսի բանին,

444 8216 ձեռագրում՝ «Պատճէն տապանագրի տեառն Յակօրու աստուածիմաստ դիտի մեծի Պօլսոյ»:

445 Տպ. Յակօբայ:

446 Տպ.՝ բազում:

447 Տպ.՝ լռին:

448 Տպ.՝ թիւն յուլիսի:

449 Թվի տեղը զիծ է քաշված:

450 [Անվան տեղը բաց է թողնված]:

Եւ ես խառնեցայ յերանս սոցին,
Յուսով ննջելոց, որք աստ ի խորին:
Յիշեցէք զմեզ արդեամբ Միածնին,
Պարզերես զարթնուլ յաւորն վերջին,
Չի եւ դուք ընդ մեզ ըստ աւագակին,
Թռչիլ ի միասին յերերն վերին:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9821, էջ 97ա:

Է «Տապանագիր».
Բեկաւ լար կենացս ի յաւորս հրնձոց,
Չիս մայր հայրածին էառ յիւր ի ծոց,
Երբ ժամ էր բերկրիլ ի սնունդ որդոց,
Ժանտամահ ախտին դիպայ հարուածոց:
Բանաւորս տունկ բանական բուսոց,
Նմանեալ եղէ ցամաքեալ խոտոց, //
Յերամս խառնիլ դասուն արդարոց,
Նախքան զիմ զչուս վիճակի որդոց:
Որոց քախձագին սուգ անմխիթար,
Իջանէն ընդ իս յայս վերջին դադար,
Նողկանք յիրաւի են գործք այսր կենաց,
Չիք որ որ լիցի կրող բերկրանաց:
Իմ են այս քարոզ ի խորոց աստի,
Իբրեւ քաջափորձ անձամբ փորձողի,
Արդ յիշել առ տէր զձեզ աղաչեմ,
Գոլ հաղորդ մասին անանցանելի:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9821, էջ 97ա-բ:

Ը «Արձանագիր».
Տապան տեսառն Պօղոսի աստուածիմաստ ար-
բեպիսկոպոսի եւ առաջնորդի Նիկողիմեայ եւ
Պրուսայոյ եւ հիմնադրի Չարիսափան Սուրբ Կուսի
հրաշալի վանոց:
Էր հոգէտալիդ Յեսեսան հագներգուին եօթնա-
դի կիթառ,
Գումարէ աստէն Վերին Սիովնի գերկնախումբ
կաճառ,
Չի՞ դուք գեղադէշ հարսունք Եղեմայ ոգիք քա-
ջափառ,
Ծաղկասփիւռ պճնէք զայս տիրանուէր մեծա-
պանձ տաճար:
Էր՞ փայլատակեն զմահարձանաս ջահք լու-
սապատար,
Չէ՞ բորբին պսակք սարդենիք յոստ մշտադալար,
Դուք պարթեական դիւցազանց ստուերք փառք
երկնապարար,
Չի՞ թեւապարէք յՈղոմպեան բարձունս երկնա-
ծնաց ի պար:
Աղէ ասացէք թէ որ քաջագուն մարմին ոգե-
սպառ,
Ի չքնադակերտ դամբանիս ի ծոց շողշողէ ի
վառ,
Սա արհիսպանձ Պօղոս վարդապետ պետ
պերճապայծառ,
Անմահ շառափղ ի Խարախօճեանց փթթեալ
բարձրաձայր: //

Իւրն հայրենիք վեհ արքայապանձ Կեսարեան
գաւառ,
Սահմանք Ողոմպեայ հսկող հովուութեան գա-
հոյք եւ դադար,
Ամս քառասուն պատիւ պաշտաման վարեալ
անվրթար,
Չաղօտաճաճանչ զլոյս Թորգոմայ փայլեցոյց
իսպառ:
Կանգնեաց եօթնաթիւ աստուածաբնակ յարկ
գեղայարմար,
Եւ երեքտասան բարունիս մարզեաց յիմաստ ի
հանճար,
Յալիս ծերութեան դիպեալ կանխադէտ յօրհաս
անաչառ,
Ի խորոց շիրմիս ձոնէին զայս մաղթանաց բար-
բառ⁴⁵¹:
Ո սմենագօր եւ սմենիմաստ դէտ երեքսրդ-
բեան,
Առաքեալ յերկնից ինձ հոգեներոզ լոյս յաւերժա-
կան,
Չաստուածատեսիդ տուր ինձ ուղեցոյց զան-
քուն պահապան,
Չի սաւառնաթեւ խոյացոյց անդոյր ի սրբոյդ
խորան:
Թող վատթարեսցին մահառիթ վիրագք փա-
ղանգք տարտարեան,
Չի մի գրեցեն ոտք իմ յերկնաչու անձուկ պողո-
տայն:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9821, էջ 97բ-98ա:

Թ «Նուագ հարսներգական ձօնեալ ի նուէր քա-
ջատոհմիկ Յակոբ աղայի Մարտիրոսեան».
Չինչ այդ լուսասփիւռ աստղ բարեփառ յերես
փողփողեալ,
Եւ զուարթագեղ զեփիւռ հեշտալի գարտիւք
փարեալ, //
Չի՞նչ այդ հերատեայ քնար քաղցրախօս այսօր
գեղգեղեալ,
Եւ երկնահանդէս պար Ելիզոնայ ի Մասիս
խմբեալ,
Չի՞նչ այդ նոր զարուն ի ծոց ձմերան գունագեղ
վառեալ,
Եւ կարկաչահոս ալիք կաստաղեան ընդ Տիգրիս
խառնեալ,
Է՞ր չնաշխարհիկ յաւերժահարսունք ի կաքաւ
պարեալ,
Չաղօտաճաճանչ ջահ օխփեան մանկան
բոցարծարձ փայլեալ,
Է՞ր գերածիժաղ աստղիկ ծովածին յոսկի կառս
բազմեալ,

451 [Այս տողից հետո գրված է եղել Տապանագիր, որի վրա հետո գիծ է քաշված. ջնջված է: Այժմ դժվար է ստույգ ասել, թե՞ հա- ջորդ տողից սկսվողը նախորդի շարունակությունն է, թե՞ նոր արձանագրություն: Ավելի հավանական է, որ երկուսը մի ամ- բողջական տապանագիր են]:

Ծաղկասփիռ պճնէ գտուն Թորգոմայ վաղիւք
խուճապեալ,

Չի ահաւասիկ վարդավառն հիմէն յերկնից
վայր իջեալ,

Պնդէ օղակապ կրկին տարփածուաց սիրոյն
մաքրափայլ:

Ծագէ յառագաստ փեսային հարսին ջահ յաւեր-
ժաբար,

Ի վեր ընձիւղեալ Հայկեան դիցազանց սերունդ
քաջափառ,

Մի յայս վեհագունս ժանտն ատրոպէ մերձեսցի
իսպառ,

Եւ ոչ Մելպոմէն բերցէ առ սոսա նուագ վշտա-
հար,

Թող բարեբողբոջք իբրեւ ձիթենին կացցեն յամս
յամայր,

Եւ անմահասցին գոլով հայրենեաց պարծանք
անվթար:

Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 98ա-բ:

Ժ «Տապանագիր».

Չի դու անհանգիստ ափշեալ խորհրդով բերիս ի
խնդիր,

Յառեալ ընդ տեսիլ ահեղ շինուածոյս ամփո-
փեալ յայս դիր,

Չարմանք են մտացս, զիա՞րդ փլատակք ընդ
մահու գտաւ,

Չաչս իմ յոշոտեն թաղեալ ի ներքոյ անուն եւ
համբաւ:

Ահա այս պատկեր, գոր դու տեսանես, այդ գիր է
մահու,

Փորեալ ի վիմի անդարձ են վճիռք ի սիրտ քո
ազդու,

Հոյակապ շիրիմք մատնացոյց կոթողք զարդա-
րեալ փառօր,

Յաւեստ խոր տպեն զայն տեսիլ ձայնող մթին
ստուերօր:

Սակայն եւ այնպէս ըմբոստ են կարծիք՝ ոչ կա-
րեն տոկալ,

Ընդ դէպ տարադէպ մահու համբաւոյ յաղթա-
կան գտեալ, //

Թէ կեանք դիցազնոյն վաղ առնուն վախճան
գերթ սարդի ոստայն,

Յաջորդեն նմա փառք յաւերժական գալոց յա-
պագայն:

Չի նրբին օդոց առաձգական պատուաբան
գնդին,

Կրկնէ զարձագանգս ի խոռոչ լսողս իմոյս ան-
կելոյն,

Բողորեալ վարդիւք արկեալ ի գլուխ դարձեղէն
պսակ,

Ճեն առեալ գնայ ընդ գոգ կամարաց համբաւ եւ
հոշակ:

Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 98բ-99ա:

ԺԱ «Տապանագիր».

Ես եմ՝ մեծանուն Մանուկ Կարնեցի Աստուածա-
տուրեան,

Գործ մեծակառոյց վէմ յիշատակաց իմ է այս
տապան,

Ի մանուկ տիոց կրկին եղեն ինձ գրգիռ վաստա-
կոց,

Միովն եղէ ես վահան ի ձեռին ուղիղ հաւատոց:

Չվարս սրբոց երջանիկ դասուց եղի առաջի,

Ի ժողով ազգիս հրաւիրեցի զբերանն ոսկի,

Արդիւնք է համբաւ ճոխութիւն փառաց ստացայ
յանձին,

Որովք որոգայթք կրկին արտորման գլառաջ իմ
առին:

Առաջին յորդեաց ինձ շաւիղ ուղիղ խորան յերկ-
նածեմ,

Իսկ երկրորդն շինող զիմ գայս դամբարան մա-
հու ապաւէն,

Ժառանգ ինձ թողի զաւակք երկոքեան յելս իմ
յաշխարհէ,

Բարեացս հետեւիլ զինչս արհամարհեալ խորշիլ
ի չարէ:

Աշխարհ գոր ետ ինձ՝ էառ վերստին զիս կողոպ-
տելով,

Առաքինութիւն մնաց ինձ միայն յարութեան յու-
տով:

Ի հասակի ԿԷ ամաց ի Պէրայ:

Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 99ա:

ԺԲ «Տապանագիր».

Խորհիս ով դու քաջ մտօք բանական,

Եթէ յո՞՞ ձգիս եւ առ ինչ վախճան,

Չի՞՞ ափ ի բերան կաս ի զարմացման,

Ընդ այս հոյակապ քերումք դամբարան:

Քեզ հանուր փառացս քարոզ պատուաբան,

Մնաց միայն վէմ լռելեայս արձան,

Ես իսկ եմ Պօղոս՝ պարծանք Ափիկեան,

Սակայն ազգասէր է իմ զարդ անուան:

Փող գեղգեղածայն ի յազգս Արամեան, //

Հսկող դիցազոյն խորհրդոց թարգման, //

Գերանդի ձեռին յազարակ Հայկեան,

Հնձող որոմանց նախանձարկու ինցան:

Վէս թշնամութեան հզօր ախոյեան,

Մինչ շունչս յիս քաղէր, կայի յանկ պաշտպան,

Չնոյն օրինակ գեր սիրոյ սահման,

Յուցի անթերի յընտանի ինամ:

Չորդիս սնուցի ի գոգ հայրական,

Բայց առագաստն էր ինձ հեռի միայն,

Եղբարք իմ եւ քորք կաճառ բազմութեան,

Յաւերժ յիշատակ սերնդոց փոխան:

Լիք բովանդակ զաշխարհս ամենայն,

Յայս վայրս ամփոփիմ բուռն հարկի մահուան,

Յոյս ունիմ անմահ ի խորթագնութեան,

Նորիլ ի մոխրոյ փիւնիկ հրաշագան:

Խնդագին լսեալ զձայն տէրունեան,

Թռչիլ վերանալ յաստուած յաիտեան:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 99ա-բ:

ԺԳ «Տապանագիր».

*Ի մանկութենէ միշտ հետաքննին
 Գրոց աշակերտ խաղոց ասելին,
 Զգոյշ եւ խոհեմ ըստ բարեձեւին,
 Ինքնուս հմտութեանց եւ յոգունց լեզուին,
 Պարսից, հրէից եւ տաճկականին,
 Նոյն արաբացոց, յոյն եւ լատինին,
 Միշտ օրինակող ըստ անխոնջ գրչին
 Թարգմանիչ գրոց յունաց եւ տաճկին,
 Ի կենցաղութեանս ի խօսս ընկերին,
 Ախորժ եւ վարժից լսելեաց բանին,
 Ըստուգաբաներ ըստ բանասիրին,
 Եւ բանասիրէր ըստ լեզուագիտին,
 Միմիայն յազգիս ընդ հնասիրին,
 Ճանապարհորդող առ նախնեաց զնին,
 Զէր եկեալ առ մեօք որ նման սմին,
 Այսչափ հետամուտ գրոց ընտանին,
 Բայց այս ընտրեալ անձն պարծանք քաղաքին,
 Սակաւոց ծանօթ բազմաց արժանին,
 Ի կենդանութեան անտես է յազգին,
 Ի մահուն անյայտ եւ յապագային,
 Անշուշտ զարմանք այս առ օտար ազգին,
 Բայց այս բոյս բարոց առ մեր ազգին:*
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 99բ:

ԺԴ «Տապանագիր».

*Անկեղծ եւ կամատր ծառայ ձեր անպիտան,
 Եւ որդի հարագատ՝ Յօհաննէս Եզեկեան:
 Էր դառնահամբոյր ձայն եղերերգուաց,
 Պատէ տխրութեամբն զրաշտ դամբանաց, //
 Էր երկնահանգէտ մուգայք դպրութեանց,
 Հեծեն վշտահար յաւերակս Հայկեանց,
 Զի աղօտանայ պարծանք հայրենեաց,
 Եւ հետախաղաղ քաղի շուք նախնեաց,
 Ծաղկրնկէց թողնի բոյսն բարեզգեաց,
 Յոր ցահ հիմնին ազդել ոչ զօրեաց,
 Նոր հանդիսարան հին յիշատակաց,
 Շքեղ թանգարան բազմազան լեզուաց,
 Թարգմանիչ տառից երրայականաց,
 Նոյն արաբացոց, պարսից եւ յունաց,
 Այն, որ խոյսցաւ յեթեր լուսարծարծ,
 Եթող ի մթան զհոր կոյտ ոսկերաց,
 Այն, որ արժանի յաւերժ սարդենեաց,
 Ոչ գոյր ցարդ նորա հետք յիշատակաց,
 Մինչեւ բազմերախտ Յարութիւն Պէզճեանց
 Յանմահ յիշատակ գայս արձան կանգնեաց:*
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 99բ-100ա:

ԺԵ «Տապանագիր».

*Առ ընկալ ի քեզ նուագ պարծանաց սարրդ Վու-
 բորեան,
 Զի ի քեզ հանգչի լերին Գողգոթայ փառք քառա-
 թեւեան,*

*Ո՞ր դուք վարդագեղ անմահ զուարթունք ջոկք
 հրակերպեան,
 Շարժեցէ՛ք աստէն յակումբ գեղապար քնարեր-
 գակ ձայն:*

*Բոխեսցէ աստէն անթարշամ նոճի մաքրափայլ
 շուշան,*

*Խաղասցեն վտակք խառնեալ ընդ Եդեմ ալիք
 Բիրակնեան,*

*Զի սա բարեփառ հայրենասիրի շքեղ մահարձան,
 Որ նորոգ պճնէ զհին յիշատակ փառագանց
 Հայկեան:*

*Մա ի վեր համբարձ քառաթեւ խաչին տաճար
 սրբազան,*

*Սովաւ կանգնեցաւ գեղեցիկ վարժից նոր ուսում-
 նարան,*

*Մա ճոխ եկամուտ մթերեալ ի պէտս մանկանց
 Թորգոմեան,*

*Դիւրաքայլ գործեաց զգծուարակոխ զշաւիղ
 ուսման:*

*Եօթնակի տասամբ պսակեալ աստէն զհոր կա-
 մնաց շրջան,*

*Մյազաւ ի վեր ի թռիչս հոգոյ յանմահից խորան:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 100ա-բ, 108ա:*

ԺԶ «Տապանագիր».

*Ո դրժընդակ մանգաղ մահու սուր ի բերան,
 Զի՞ խայտալով զիս հնձեցեր յօր տարածան,
 Սրբոհի եմ՝ տունկ քաջուղէ՛ թովմաճանեան,
 Մայր բազմածին փթթեալ որդուվք Ղազարո-
 սեան:*

*Զիս՞ոյ անցար դու զարնայնոյ վարդ անթառան,
 Որ պճնէիր զիմս գլուխ կենդանութեան,
 Ծով ծիրանի հանդարտ ալեաց զուարթական,
 Ո՞ր ինձ ճեմել ի քոյր հովիտ ատուրս սերկեան:
 Աւաղ փառացս, աւաղ կենացս դիւրեղծական,
 Որ մինչ ծաղկին անդէն ի նոյն եւ չքանան,
 Յիս հայեցեալ առէք խրատ ըզգօնութեան,
 Եւ մի փարէք ըզսրնտեօք որք յաստիս կան:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 100բ:*

ԺԷ «Տապանագիր».

*Զիարդ մըթագնի ոսկեհեր արփույն լոյս ակնա-
 պարար,*

*Առ ի՞նչ կողոպտի տանըս Թորգոմայ պարծանք
 քաջափառ,*

*Զի՞ դու մարդախանձ վիրագ անյագուրդ օրհաս
 անաչառ,*

*Զի՞ դու ծաւքեցեր ժանեօք շանթահար զվեհս ի
 պայքար,*

*Մի՞թէ ոչ զիտես, զի սա հայրենեաց էր պետ եւ
 պատուար,*

*Ի սա յեցեալ կայր հայրենասիրաց յորս թերա-
 կատար,*

*Օն եկ ողբ առից ընդ քեզ տուն Տիգեանց ընդ
 քեզ վշտահար,*

Չի սա ոչ եհաս մօտալուտ մահուամբ այնմ գոր
ցանկայր,

Մի դու անցաւոր այր կանանցածին, մի դու զիս
ողբայր,

Թէպէտ ես մեռայ, այլ կամ կենդանի յորդիս իմ
պայծառ, //

Նոքա կանգեացին, նոքա ծաղկեացեն զԱթենեայ
տաճար,

Նոքին լիցին փառք, նոքին եւ պարծանք հայրե-
նեաց իսպառ,

Ոչ սա այն իցէ, որ զեղեկոնի զիմաստաճենմ
պար,

Հրաւիրէր ի գալ ի մեր կորոյացեալ Մասիս բարձ-
րածայր,

Ոչ սա այն իցէ որով պանծանայր Ոլոմպեան
կաճառ,

Նախանձէր սրփէ նորագիտ երգոց քաղցրա-
լուր քնար:

Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 100բ-101ա:

ԺԸ «Տապանագիր».

Արեւ գեղգեղեալ ճաճանչ լուսապար,

Չըծագի՞ս զլոյսդ յայս մթին փապար,

Թող մարմնոյս լիցի լոյս կամ խոր խաւար,

Հոգիս փայլեացէ յերկնային կամար:

Խաղ առնէր զինեւ իսաբուսիկ յաշխարհ,

Յեօթանասունհինգ տիոյ իմ վրճար,

Այլ հաւատք ուղիղ իմ հոգւոյ սատար,

Տացէ ինձ պարել յաղթողաց ըզպար:

Ժամ մահահրաւէր օրհաս անաչառ,

Չկենացս եհատ լար ատուրցս ետ վրճար,

Հրէշտակդ ուղեկից տար զիս յայն տաճար,

Ուր գառն անարատ լոյսն ակնապարար:

Ով էակդ էից մարդասէր անճառ,

Որ վասն իմ սիրոյ ի սպանդ վարեցար,

Գարձո յիս զքո աչո սիրապատար,

Ի դատել քո զիս՝ մի լիցիս արդար:

Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 101ա:

ԺԹ Հազներգութիւն մաղթողական ձոնեալ ի
նուէր տեառն աստուածապատիւ եւ գերիմաստ Պօ-
ղոսի արհի եպիսկոպոսի եւ բարեկարգ պատրիար-
գի Կոստանդնուպօլսոյ //

Ուր Թըրակացոյն քնար քաղցրախօս գովիչ
քաջազանց,

Գեղգեղել այսօր պանծալի վեհից դրուատ մե-
ծապանծ,

Ուր զերաշխարհիկ նախնոյն մեր Գողթայն ա-
կումբ հազներգուաց,

Վերերգել ընդ իս նորոյդ Եզրասայ տենչ զաս-
տուածազգեաց:

Թէ ի դիցամոլ Մեմփիս Մեմեսնեան անդրէն
գեղգեղեաց,

Երբ զուկիճաճանչ զիւր բոց ծաւալէր Փեքոս ի
բարձանց,

Իմ առ ի՞նչ արդեօք լռեսցէ լեզու յայս հանդէս
շնորհաց,

Որքան զՓեքոսին լոյս ակնապարար անդր
արշաւեաց:

Մի եւս պանծացին քերթողք Հռովմայ յիւրեանց
մեկենաս,

Չի քաջ եւս փայլէ ի ծոց Թորգոմայ պաշտպան
գիտութեանց,

Քեւ արդ փողփողէ յաւերակս Հայկայ նոր նշոյլ
յանկարծ,

Բուռն փարատիչ միզապատ ամպոց հոգւոց եւ
մտաց:

Քեւ գուարթաքայլ խուճապին այսօր մուգայքն ի
Պարնաս,

Չանկոխ առապարս երկնադէտ Մասեաց հան-
դերձեալ կայանս,

Քեւ իմաստայեց ալիք Կաստաղեան գան յոր-
դախադաց,

Փարիլ ոգեխառն զմեր Եփրատաւ ի սէր աննա-
խանձ:

Քեւ ձիւնախաղաղ բարձունք Կովկասու պճնին
ծաղկազգեաց,

Եւ յԱթենասայ փոխարկին այսօր տաճարք գի-
տութեանց,

Քեւ անդր խմբեալ հայրենասէր ջոկ ուսումնա-
սիրաց,

Կապէ ի գլուխ գերագահ վեհիդ պսակ սարդե-
նեացն:

Քեւ անդր եռանդ արծարծեալ յոգի ներհուն ու-
սուցչաց,

Սըրընթաց ճախրեն դիւրաքայլ թռիչք նորա-
վարժ մանկանց,

Քեւ բազմամանուած սխրալի մատեանք տա-
րասեռ ազանց,

Շրջին յԱրամայ ի չքնաղ բարբառ ի նոր թարգ-
մանչաց:

Քեւ անդ պերճախօս իմա պօլիմնիա գայ յառա-
ջընթաց,

Ուղերձէ վեհիդ գայս սիրանուէր դուզնաքեայ
քերթուած,

Մաղթէ փոխարէն հայրագութ խնամ եւ սէր բա-
րեզգեաց,

Առն ի նորոգել տիրագոր բազկաւ զիւր տուն
կործանած,

Կամ եւ շնորհաբաշխ օրհնութիւն յաւերժ տիրա-
գոր աջաց:

Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 101ա-բ:

Ի «Տապանագիր».

Մինչ նկարէր տեսիլ շքեղ յոյժնպական ի լե-
րանց,

Դիւցազնահոյլ պերճ վեհագինք համակ ի սուզ
սեւազգեաց,

Անդ մուգայից գեղանշմար սիրոյն խմբեակ
սրտմազգեաց,

Ոչ պճնէին տքա ի գեղ ծաղկանշմար պսակաց:
Հանդէս էր այս աշխարհալուր, բայց ոչ խրախ
գեղատոր,

Ժողովակոյտ վեհ դիցազանց պատկեր դիմաց
սգաւոր,

Տրտմահնչիկ քնար Ռոփեայ ձայներ անոյշ
նուագ նոր,

Հոմերական ի լուր բանից հնչէր զիր երգ ազդերոր:
Չի՞նչ այդ ժողով, զի՞նչ այդ հանդէս, հարցանեմ
ես զիմ մուգայն,

Դու միայն կաս,- ասէ նա ինձ՝ անգէտ վեհիս
յուղարկման,

Հանդէս է այս տխուր մահուան առն մեծի Չա-
տայեան,

Միմօն անուն վառօղակետ դիցազնագով վեհ
իշխան:

Միրելի էր նա արքայի՝ ի պերճ նշան վեհազանց,
Անմահ արքայն պճնեաց զնա՝ իր նշանօք գե-
ղապանծ,

Վայելչագարդ վարուց արդիւնք ճոխ էր յայս
այր գերապանծ,

Աստուածային ստոյգ նշան առաքինոյս յայս
անանց:

Վեհ դիցագինքդ եւ մեք համակ յաւերժական
հոյլ հարսանց,

Բերեմք զնա յայս մահարձան կանգնեալ ընդ
գեղ արձանաց,

Այր այսպիսի մեր չէր տեսեալ ի մէջ վեհից Հայ-
կազանց,

Արդեամբք շքեղ, վարուք ընտիր, գոյգ ընդ այս
վեհիցս քաջազանց:

Ընդ կոծ մահու ողբամբք տխուր սիրողաբար
մեք մուգայք,

Ընդ մահաստուէր հիսեմք նոճիւնս մրմունջ ազ-
դու ի նուագ,

Պահապան եմք վսեմ զանձուց թաղեալ յայս
յարկ ամրափակ,

Մի կորիցեն վեհ յիշատակք կացեալ անանց առ
յապայք:

Երիտասարդ թէ ալետոր, մինչ ակնարկէ յայս
տապան, //

Վեհիս արանց նա մատուցէ ձեր եւ յարզանք
գովութեան,

Չմարմնեղէն սիրտ իր կազմեալ հոգետալիդ
նուագարան,

Բոցով սիրոյն վառեալ անկեզ երգեսցէ երգս
օրհնութեան:

Որ գիտացեր հա ասասցէ արքայդ վերին զօրու-
թեանց,

Մեծահանդէս պատուել զայս այր ի յայդ երկիր
մահացունց,

Հանգիստ յաւերժ տացէս սմա ի յարկ վերին
կեանք անանց,

Մշտածաղիկ բոլորեսցես պսակ փառաց գեղա-
պանծ:

Հիւմբ. ՍՄ, ձեռ. 9821, էջ 102ա-բ:

ԻԱ «Տապանագիր».

Յերկնակամար անսին եթերս աստեղագարդ
գմբէթաց,

Ի սէգ արծուոյն յեցեալ ի յուս վեհն աստուածոց
Արամազդ,

Շանթէր ահեղ ընդ գոգ ամպոց երեքժանին բո-
ցատած,

Թող գիտասցեն երկինք երկիր՝ Ես եմ աս-
տուած, առնէր ազդ:

Դիմիդեան ձգեն նժոյգ զգիրկ կառացս աս-
տուածեան,

Աչս ածէ նա ընդ վայր յերկիր, յորժամ հնչէր ա-
հագին,

Որոտընդոստ հրազէն թնդիւնք յասպարիզէն
Պալլասեան,

Մարդակոտոր մինչ ցնդէին հրաբորբոք կայծք
շանթեան:

Չինչ այս բաբէ,- գոչէ խրոխտ յեթերական ի
հարկաց,

Չայլ ոմն աստուած պաշտէ երկիր վեհ աստուա-
ծոյս հակառակ,

Թող գիտացից կրկին ձայնէ մարդ որ իցէ, թէ
աստուած,

Որ յանդգնի հանդէպ վեհիս գոռալ, շանթել ինձ
կրկնեակ:

Մատչի Հեփեսոս ի պատասխան աստուածա-
կան հրամանին,

Մարդ ոմն, ասէ, անուն Սիմոն, տոհմ իր ձայնի
Չատայեանց,

Վառօղակետ է արքունի ի սիրելեաց արքային,
Նորագտակ բոցով հրոյն յանդգնի առ դիցա-
զանց:

Փախստական նա զիս արար ի Սիկիլեան դարբ-
նոցէս,

Ուսուցանէ մարդկան գոռալ իրրեւ զաստուած
ահաւոր:

Կայծակնացայտ ահեղ բոմբիւնք պատերազմիդ
զոր լսես,

Գործէ նորա որ յիմ դարբնոց միշտ արծարծէ
զբոց նոր:

Ժայթքէր լորձունք, գոչէր ահեղ որմզդական այն
աստուած, //

Տապաստ արկից եւ զայն ասէ յերեքժանին իմ
դիրեան,

Այնպէս ասաց, կոչէ առ իր զիշխանապետ մեր
կենաց,

Տարտարոսին բանան դրունք, ելանէ սա խնդա-
զին,

–Առ դու, ասէ, գերեքժանիս, զնա յաշխարհ ստորին,
Չերեւելին ի Չատայեանց տապաստ արա դու ի
մահ,

Չմեծ անուն վառօղակետ վեհ յիշխանաց ար-
քային,

Երկրածնունդ թող ծանիցեն զաստուածական
մեծ զիմ ահ:

Այսպէս բարձաւ յորժամ պճներ ազգ Հայկա-
զանց գեղատր,

Ի շուք վեհիս մինչ պերճանայր յարդիւնս ա-
նանց բարեփառ,

Տխուր քնար հոմերական զայս մահարձան ա-
հատր,

Նուագեցէ յերգ սգազգեաց մրմունջ ազդու ի
բարբառ,

Յելիսական թէպէտ գնաց մարմանդ ի զուարճ
աստուածեան,

Հոգով խրախս պճնեալ անդէն ի գարդ շքեղ վե-
հազանց,

Բայց իր որդիք հայրագորովք ի տրտմագգեաց
սուգ որբան,

Չնաշխարհիկ զայս այր պատուեալ յայս մա-
հարձան գերազանց:

Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 102բ-103ա:

ԻԲ «Տապանագիր».

Անցատր կենաց մարդկեղէն բնութեան,

Անանց յիշատակ է այս մահարձան,

Ոչ մռայլ մահու ծածկէ ի մթան,

Չջահս պայծառ ազգիս Արամեան:

Բիզանդեան քաղաք պանծայ առ յապայն,

Եղեալ հայրենի վեհիս ծննդեան,

Յովհաննէս⁴⁵² անուն պարգեւ տիրական,

Կոչեալ խորհրդով վերին տեսչութեան:

Մարմին իր ոչ ետ գիր ձիրս միայն,

Չհասակ առոյգ զգեղ պատուական,

Այլեւ հոգին ետ զմիտ խոհական,

Չկամք բարեսէր, զկիրք բանական⁴⁵³:

Տէր Չաքարիաս⁴⁵⁴ արհին ընտրական⁴⁵⁵,

Ազգասէր կոչեալ տեսուչ Բիզանդեան,

Լուեալ գտրայս համբաւ բարութեան,

Ընկալաւ սիրով աշակերտ ինքեան:

Հնտավարժ ցուցաւ ի հանդէս ուսման,

Կոչեցաւ տէրամբ ի կարգ սրբազան,

Քաջ ատենախօս իրր անգուզական,

Հոգւոյն պատգամաց փող ազրողական:

Կարգի պատարագ երկիցս անգամ,

Հովուէ զհօտ իր զամս երեքտասան,

Սա անքնչասէր, հեզ եւ քաղցրաբան,

Եղեւ սիրելի ազգաց ամենայն: //

Անկեալ բազմօրեայ ի ցաւ անդարման,

Հրաժեշտ յաթոռոյն տայ յոժարական⁴⁵⁶,

Եկաց ցաւագին այլ եւս չորս ամ,

Վաթսուն ամենի ել յերկնից խորան:

Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 103ա-բ: ՄՄ, 9820, էջ 69ա:

452 ՄՄ 9821-ում՝ Յօհաննէս:

453 ՄՄ 9820-ում՝ բնական:

454 ՄՄ 9820-ում՝ Չաքարիայ:

455 ՄՄ 9820-ում՝ ընտրաջան:

456 ՄՄ 9820-ում՝ յօժարական:

ԻԳ «Տապանագիր».

Նպատակ բարեաց այր բարեխնդիր,

Տէր Գեորգ անուն քահանայ ընտիր,

Երզրնկայ քաղաք իւր բնիկ երկիր,

Հայկազանց գիւղիս բժիշկ հոգեկիր,

Հաւատոյ յուսոյ սիրոյ անպատիր,

Չսիրտ իւր կազմեաց լսպտեր լուսալիր,

Թողեալ զաստեւոր զաշխարհս նանիր,

Երկրին կենդանեաց ել այժմ ի⁴⁵⁷ խնդիր,

Առ քեզ տէր կոչէ⁴⁵⁸, դու լեր ունկնդիր,

Յօղեալ ի շիրիմս զգթոյդ ըզձիր,

Հանգո ի վերին կամար լուսալիր,

Չհոգի սորին փառօք լիալիր:

Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 103բ: ՄՄ, 9820, էջ 69ա:

ԻԴ «Տապանագիր».

Ազնի տոհմական իշխան փառաւոր,

Ինքնավարժ ճարտար ի գիւտ նորանոր,

Սա եղեւ նախկին ի յազգէս հանուր

Մեծ վառօղապետ արքայից հօօր,

Երոպեան ազանց ճարտարք մտաւոր,

Ապշին ընդ սորայս վերնածիր շնորհ,

Չոր լուեալ ստեպ պարսից թագաւոր,

Խնդրէ յարքայէս յղել անդանօր:

Նա զի պերճացեալ ի գործս մաքուր,

Ազգօգուտ սիրով վառեր մտադիր,

Անկատար մնաց բաղձանք սրտի իւր,

Որ ցանկայր առնել մի զազգս բոլոր:

Քեզ ակնկալեալ արքայ երկնաւոր,

Եկաց բարեպէս ի կեանս աստեւոր,

Արա աղաչեմք ի կեանս հոգեւոր,

Անվախճան փառօք միշտ պսակաւոր:

Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 103բ: ՄՄ 9820, էջ 69ա-բ:

ԻԵ «Տապանագիր».

Ահա նաւէ նաւ շահաբեր ազգիս բարեաց,

Թողեալ զմեզ կարօտ բազմաց կարեւորաց,

Իշխան վսեմ ոստ քաջողէշ ազնիւ նախնեաց,

Յօգուտ ազգիս սիրով վառեալ ջահ լու-
սազգեաց:

Չհաւատ ուղիղ գոյոյս հաստատ սէր աննա-
խանձ,

Գործովք բարեաց կալաւ յանձին թոշակ կենաց,

Եհաս նմա եւ յաստուածուստ պարգեւ շնորհաց,

Իմաստութիւն, հանճար խորին առանց ու-
մանց:

Սքանչելի գիւտ նորանոր ուշիմ մտաց,

Չհեռաւորս, զմերձաւորս յապուշ կրթեաց,

Ուստի հօօր այս տէրութիւն տիրող ազանց,

Վառօղապետ յորդոց յորդիս զսա պատուեաց:

Արդ աղաչեմք հանգո ընդ սուրբս աստուած
գրած,

Ի յերկնային նաւահանգիստ քո անկասկած,

457 ՄՄ 9820-ում՝ չիք ի:

458 ՄՄ 9820-ում՝ գոչէ:

*Հորդիս նորա պահեա փառօք ընդ քո կամաց,
Ազգիս մերոյ մնալ պարծանք շքեղասպանծ:
Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 103բ:*

ԻԶ «Տապանագիր».

*Արմատոց բարեաց ընտիր բարունակ,
Ազնի ծնողաց պանծալի գաւակ,
Սարմնով վեհանձնեայ առիծ ուժեղակ,
Հոգովն խոնարհ, ողջամիտ տատրակ:
Ի քսան եւ ութ ամաց իր վիճակ,
Շնչեաց տարածամ մահաբեր խորշակ,
Վայելուչ ծաղկեալ առոյգ իր հասակ,
Հիծական ցաւով⁴⁵⁹ քարշամի երագ:
Յիսուս, իմ լոյս, իմ կեցուցիչ եւ կեանք,
Յոսկերս իմ ցօղեալ զարեան քո կայլակ,
Անդրէն ծաղկեցո գտունկս ցամաք,
Փառօք զարգացո յանդրանկաց քաղաք:
Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 104ա: ՄՄ, 9820, էջ 69բ:*

ԻԷ «Տապանագիր».

*Իշխան մեծարու, որ յաղթօղ կարեաց,
Յաղթի ի ցաւոց, զօրանայ յաստուած,
Թէ բազում ունէր մեծութիւն փառաց,
Բայց նուազ ցուցան առ հոգւոյն բարեաց:
Տեսլեամք վայելուչ ըստ⁴⁶⁰ իւրոց նախնեաց,
Այլ հոգւոյն իր գեղ բազմօք գերազանց,
Չերեզեան տոհմի սերունդ քաջ արանց,
Յակորջան աղայ բարերար բազմաց:
Յիսուն եւ չորս ամ աստ բարութք եկաց,
Այլ անդ շահեցաւ զվարձս անանց,
Թողոյ իր որդի պարծանք հայրենեաց,
Խաչատուր աղայ նպաստ տնանկաց:
Խնդրէ առ ի ձէնց զաղօթից հայցուած,
Հանգչիլ առ աստուած փառօք լուսազգեաց:
Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 104ա: ՄՄ, 9820, էջ 70ա:*

ԻԸ «Տապանագիր».

*Ազգիս բազմերախտ այս ազնի իշխան,
Տեսլեամք փառաւոր, մտօք խոհական,
Միրոյն աստուծոյ հոգին վառարան,
Միրոյ ընկերին սիրտ իր օթարան:
Ի ծով իմաստից գրոց գիտութեան,
Ազնի մարգարտոյ գտիչ բազմաջան,
Ճրագ լուսաւոր գործով⁴⁶¹ բարութեան,
Պսակ պարծանաց տոհմին իր համայն:
Մինչեւ էր հասեալ յայիս ծերութեան,
Շիջաւ ի հողմոց⁴⁶² յաստաշունչ մահուան,
Առ քեզ պաղատիմ աստուած գթութեան,
Արա ժառանգորդ բարեացդ անվախճան:
Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 104ա: ՄՄ, 9820, էջ 70ա:*

ԻԹ «Տապանագիր».

*Բարեբաղդ թուէր կենացս վիճակ,
Վայելուչ ծաղկէր զուարթ իմ հասակ,
Հարսնացայ փառօք յաշխարհիս ի կարգ,
Երկու ինձ ծնայ նազելի գաւակ:
Այր իմ ցանկալի էր գլխոյս պսակ,
Մէր սրտի նորա ինձ անոյշ բաժակ,
Անլոյծ կարծեցեալ սիրոյ մեր լծակ,
Պարարն մահու ելոյծ այժմ երագ: //
Խեթի հայեցար երկին վերնայարկ,
Յիս ցոլացուցեր զժանտախտ շանթառաք,
Շինուածոյ մարմնոյս փշրեալ զվանդակ,
Ի բաց թռուցեր զհոգւոյս տատրակ:
Չքեզ աղաչեմ փրկիչ իմ եւ կեանք,
Չհոգի աղախնոյս մոյծ յերկնից քաղաք:
Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 104աբ: ՄՄ, 9820, էջ 70ա:*

Լ «Տապանագիր».

*Կոյս վայելչագեղ Իսկուհի տուտու,
Պարկեշտ գնացիւք օրինակ բարւոյ,
Հարայ տարածամ ի ժանտախտ ցաւոյ,
Մինչ էի⁴⁶³ հասակաւ տասն եւ ութ տարւոյ:
Պաղտասար աղայ հայր իմ սիրարկու,
Ճանպագեան տոհմի ծնունդ էր յարգոյ,
Իսկ սա վարդագեղ ծաղիկ գարնայնոյ,
Պտուղ շնորհաբոյս բարեբեր տնկոյ:
Փողն կարմրագոյն հարսնութեան իւրոյ,
Մեւագոյն ներկաւ ստուերաւ մահու,
Փոխան հարսնութեան առն մսեղոյ,
Հարսն Յիսուսի եղեւ ըստ հոգւոյ:
Դու հոգի բարի, հոգի բարձրելոյ,
Փարատեա զուրգ եղբօրն ընտրելոյ,
Չհոգի աղախնոյն ընկալ եւ հանգո,
Ընդ սուրբ կուսանաց ի հարկն լուսոյ:
Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 104բ: ՄՄ, 9820, էջ 70ա-բ:*

ԼԱ «Տապանագիր».

*Մշտաշարժ անի կառաց աշխարհիս
Տանի ճեպրնթաց զանձինս բարիս,
Մա, որ զաղքատաց լնոյր զպարտիս,
Եթող անխնամ զնոցին կարիս:
Առն իր պսակ եղեւ մեծազգիս,
Գթով խնամէր զորդիս ընտանիս,
Ի վաթսրնամեայ ժամանեալ ի տիս,
Ել յաստի կենաց սուգ մեծ ետ տոհմիս:
Արդ մերով ձայնի գոչէ՝ տէր Յիսուս,
Ընկալ զհոգի Սուրբան աղախնոյս⁴⁶⁴:
Հիմք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 104բ: ՄՄ, 9820, էջ 70բ:*

ԼԲ «Տապանագիր».

*Հեռացաւ անդարձ սիրող⁴⁶⁵ ընկերին,
Հեռացաւ ի բաց քաջ առաքինին,*

459 ՄՄ 9820-ում՝ յուսով փիս ցաւով:

460 ՄՄ 9820-ում՝ ընդ:

461 ՄՄ 9820-ում՝ գործով:

462 ՄՄ 9820-ում՝ հողմոյ:

463 ՄՄ 9820-ում՝ էր:

464 ՄՄ 9820-ում՝ ծառայիս փիս աղախնոյս:

465 ՄՄ 9820-ում՝ սիրողն:

Հանճարեղ եւ ժիր յիրս դժուարին,
 Ջատագով, հզօր գրկեալ տկարին:
 Յաքսոր, տոյժ եւ մահ յօժար կամովին,
 Յօգուտ իւր ազգին արհեստաւորին,
 Ի բանս աներկիւղ ի մեծ դիւանին,
 Կորին առիծու ըստ իւր ծնողին:
 Առ բազում վշտաց կանխեալ օրհասին,
 Ննջէ ի յիսուն եւ եօթն ամին,
 Չքեզ ունի յոյս Յիսուս միածին,
 Հանգչիլ ի վշտաց ի յարկն վերին:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 104բ: ՄՄ, 9820, էջ 70բ:

ԼԳ «Տապանագիր».
 Պարոն Գարրիէլ շառաւիղ բարի,
 Այր հզօր բանիք ի հազարաց մի,
 Բամից գովելի հօր ազնիւ որդի,
 Որ յերկրէն Բալուայ, տէր Մանուէլի: //
 Նման ծնողի առիծ կորովի,
 Գործունեայ բարեաց խոհեմ եւ արի,
 Աստէն թողեալ իւր ութ զաւակ յարգի,
 Բառնի ի կենաց ի վաթսուն ամի:
 Բոտեալ աղաչէ զորս էք ի մարմնի,
 Իւր սակս մաղթել Յիսուսի Փրկչի,
 Է աստուած հանգո գտրին հոգի,
 Լուսյ⁴⁶⁶ տեսութեանդ արա արժանի:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 104բ-105ա: ՄՄ, 9820, էջ 70բ-71ա:

ԼԴ «Տապանագիր».
 Յաւօք հեծութեամբ մտի ես յաշխարհի,
 Յաւօք այժմ երթամ ի յերկիր օտար,
 Գարրիէլ կոչմամբ լեալ պատուամեծար,
 Եղէ մեծանուն բեհեզազաւանդ:
 Ի յերկրէն Բալուայ⁴⁶⁷ զայր քաջահանճար,
 Չտէր Մանուէլ ունէի ինձ հայր,
 Ուրն էր իմ զաւակ սրտիս մխիթար,
 Յիսուն եւ ութ ամ ապրեցայ յայս վայր:
 Թողեալ զամենայն, որ ինձ աստէն կայր,
 Չգործս իմ միայն տանիմ սրավար,
 Միրելի եղբարք, հայցեմ կամակար,
 Չաղօթից նուէր տալ զուղղոյս պաշար:
 Եւ դու՝ բարեգութ տէր անյիշաչար,
 Հանգոյ զհոգիս ի յերկնից կամար:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 105ա: ՄՄ, 9820, էջ 71ա:

ԼԵ «Տապանագիր».
 Յաւօք տրտմութեամբ ծնեալ յաշխարհի,
 Յաւօք դառնութեամբ յաշխարհէ փոխի,
 Թուրվանտա խաթուն՝ տիկին գովելի,
 Դուստր Հով Յակոբ մեծ ամիրայի:
 Մա⁴⁶⁸ ամուսնացաւ Չատայեան տոհմի
 Ընդ ծխավաճառ Ստեփան աղայի,
 Ի յառնէ իւրմէ մնացեալ այրի,

Երեքին որդոյ գտաւ մայր բարի:
 Քառասուն եւ հինգ յամի⁴⁶⁹ հասակի,
 Մահաբեր նետիւք ժանտախտին խոցի,
 Չքեզ աղաչեմք, միածին Որդի,
 Ընկալ եւ հանգո զաղախնոյդ հոգի:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 105ա: ՄՄ 9820, էջ 71ա:

ԼԶ «Տապանագիր».
 Մարիամ ամիրայ, որդի մահտեսի Սիմէոն ամիրայի.
 Իշխան փառաւոր խոնարհ, երկիւղած,
 Բազմաց բարերար առանց պարծանաց,
 Թէպէտ ճոխ գոյիւք կամքն անստացուած,
 Ի կենակցութեան անկեղծ, աննախանձ:
 Շառաւիղ բարի ազնիւ ծնողաց,
 Մարմնով վայելուչ, հոգով գեղապանձ,
 Ի ծայրն հասեալ կատարելութեանց,
 Որչափ է հնար մարդկային կարեաց:
 Յետ յիսուն ամի ընթացից կենաց,
 Չայս աստղ պայծառ ամպ մահու ծածկեաց,
 Հանգո աղաչեմք սուրբ հոգիդ աստուած,
 Չհոգի տրա ընդ քոց սիրելեաց:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 105ա:

ԼԷ «Տապանագիր».
 Մահման աշխարհի է այս մահարձան,
 Քաջ առաքինեաց բարեաց հանդերձան,
 Ի ճահ ստուգութեան յարգիս յանդիման,
 Որ ի կեանս գտաւ փառաւոր իշխան:
 Մեծարու ցուցաւ յաչս տէրութեան,
 Յանկալի բազմաց խօսից յընտրութեան,
 Ուռնացեալ որդուվք շքեղ պատուութեան,
 Յազգի մեր ծաղկեալ պերճ ազնուական:
 Նպար աղօթից հայցի նուիրան,
 Հոգւոյն հաւատով կալ ի լոյս խորան:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 105բ:

ԼԸ «Տապանագիր».
 Կողակից Սիմօն ամիրայի.
 Թագուհի տիկին՝ համեստ, երկիւղած,
 Այրեաց եւ որբոց գթած, ողորմած,
 Գորովագութ մայր վեցեակ զաւակաց,
 Ոսկեփունջ պսակ ցանկալի բազմաց:
 Հասեալ զկեանք իւր ի վաթսուն ամաց,
 Հոգին հաւատով եւ յուսով բարեաց,
 Ի սրտէ խնդրէ զաղօթս սիրելեաց:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 105բ:

ԼԹ «Տապանագիր».
 Ահա տեսարան դառն աղէտի,
 Ահա դամբարան որբոց արժանի,
 Սոյն Արուս տուտու դուստր նազելի՝
 Ճոխ պիլեզիկճի Յովսէփ աղայի:
 Վեշտասանամեայ եղև կին բարի,
 Յարգի Սրմաքէշ պարոն Գեորգի,

466 ՄՄ 9820-ում՝ Լոյս քո փիս Լուսյ:
 467 ՄՄ 9821-ում՝ Բալվայ:
 468 ՄՄ 9820-ում՝ Ու փիս Մա:

469 ՄՄ 9820-ում՝ ամաց:

Մինչ էր ութամսեայ որդեկաւ յղի,
Ախտանայ ցաւօք անբժշկելի,
Չորից զաւակաց մայր գորովալի,
Փոխի առ Քրիստոս երեսնամենի,
Աստ ցաւօք ծնեալ, ցաւօք մեռանի,
Անդ հանգո փրկիչ յերկնից խորանի:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 105բ:

Խ «Տապանագիր».

Ո՛վ անգութ աշխարհի, նետ քո թունալի
Խոցեցեր ի մահ զանձն իմ եղկելի,
Ես՝ Բենպէ տուտո՛ւ դուստր սիրելի,
Ճոխ պիլեզիկճի սարը Յովսէփի:
Ի չորեքտասըն ամաց հասակի,
Հարսնացայ փառօք ի կարգ աշխարհի,
Կին լեալ Սըրմաքէշ Յակոբ աղայի,
Կեցի ընդ նմին մի սիրտ, մի հոգի:
Ծնեալ լի ցաւօք ութամսեան որդի,
Դառնութեան մահու զբաժակն արբի,
Կարօտով ելի ի կենաց աստի,
Կարօտութիւնս իմ անդ լից, տէ՛ր երկնի:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 105բ:

ԽԱ «Տապանագիր».

Որ լեզու, որ բան բաւական լիցի,
Պատմել զցան իմ անհանդուրժելի:
Ես՝ Իսմի տուտո՛ւ՝ դուստր մեծագգի,
Ճոխ Պիլեզիկճի Յովսէփ աղայի:
Որ Ղազարոսեան պարոն Յովսէփի
Եղէ ամուսին փառօք պանծալի:
Ափսոս միամեայ հարսըն նազելի
Անկայ ի ժանիս մահաբեր ախտի:
Տասն եւ եօթն ամաց եղայ ի շիրմի,
Թողի համայնից կսկիծ ցաւալի:
Ընկալ տէր Յիսուս զաղախնոյս հոգի,
Եւ մոյժ յառագաստ քում հարսնարանի:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 106ա:

ԽԲ «Տապանագիր».

Քաջ առաքինոյ պատկեր իսկական,
Բարեաց ընտրութեան ճոխ հանդիսարան,
Սոյն Պիլեզիկճի Յովսէփ Գրիգորեան՝
Յազնիս սերնդոց իշխան տոհմական:
Անձամբ փառացի բարոք պատուական,
Բարի խորհրդով բազմաց օգնական,
Ծնող որդեսէր, մարգիչ բարեջան,
Հայելի կարգաց աստուածպաշտութեան:
Ի վաթսուն ամի կենացն լըրման
Փոխի յաշխարհէս արդեամբք բարութեան,
Աստուած մարդասէր, զՅովսէփ քո ծառայն
Արա արժանի քո սուրբ տեսութեան:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 106ա:

ԽԳ «Տապանագիր».

Սոյն սա դերձիկ անուամբ Միսաք այր գովելի,
Բարոք, վարոք փայլեալ պայծառ աստ յաշխարհի,

Սա ունէլով զսիրտ գոլով յամենայնի,
Հոգայր յաւերժ զխնամ սրբոյ եւ աղբատի:
Չուղիղ հաւատ եւ զոյս փառաց յիւրում հոգի,
Հաստատ պահէր եւ զսէր տեսն արծարծելի,
Ահա թողեալ եւ լքեալ աստ անխնամ յերկրի,
Չիւր սիրելիս եւ զընտանիս եւ զմիակ որդի:
Հատեալ զլար զհորոյ կենին ի վտանգի,
Մեղմեալ գոլով ի գելս խեթի դժնդակի,
Ելից զկեանս իւր ի քառասուն եւ չորս ամի,
Եւ փոխեցաւ առ տէր Յիսուս յոյսն ամենի:
Արդ Տէր փառաց եւ թագաւոր երկնի եւ երկրի,
Յոյսդ անսահման Յիսուս Քրիստոս աստուած-

որդի, //

Ջբարեպաշտօն գայս քո ծառայս զսիրելի,
Արժանացո անճառ փառացըն պսակի:
Սա որ աստէն դիպեալ մահու յոյժ ցաւալի,
Տուր ցանգ ցնծալ անմահ կենօք յանգրաւ կետի:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 106ա:

ԽԴ «Տապանագիր».

Հաւատով, յուսով տիկին մահտեսի
Փայլէր միշտ հոգով ի սէր Յիսուսի,
Բարեսէր բարոք յազգս գովանի,
Տալիթայ գթած՝ բազմաց պիտանի:
Կին բարեպաշտօն առն անուանի,
Հեզ Աբրահամու ճոխ ամիրայի,
Օրինութեամբ լցեալ տունկ արգասալի,
Որդուլք եւ թոռամբ ծաղկեալ ծերունի:
Օր աւուր վշտօք մարմինն մաշի,
Իւրայնոցն սիրտ ցաւօք միշտ հաշի,
Արիք սիրելիք, ահա պաղատի,
Աղօթս առնել հոգւոյն արժանի:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 106բ:

ԽԵ «Տապանագիր».

Կենդանի պատկեր ազգասէր հոգւոյ,
Յորդորիչ բազմաց բարբառով գործոյ,
Պաշտպան դպրատանց եռանդմամբ փութոյ,
Անշէջ վառարան ընկերին սիրոյ:
Յակոբ ամիրայ իշխան գերյարգոյ՝
ՅԱկնա քաղաքէն շառաւիղ բարոյ,
Տոհմին Մանանեան ծաղիկ զարնայնոյ,
Պատուի յարքունեաց արժանի պատուոյ:
Ի յիսուն յամի հասակի իւրոյ,
Վճարէ մահուամբ զաւուրս մարմնոյ,
Փրկիչ մեր եւ յոյս ընկալ եւ հանգո,
Չհոգի տրա ի յարկոյ լուսոյ:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 106բ:

ԽԶ «Տապանագիր».

Գերամեծար եւ աստուածասէր Աշնանեան
Սկրտիչ ամիրա.
Յանկալի նշան ազգասիրութեան,
Օրինակ բարի, գործովք բարութեան,
Պարծանք իսկաքանչ ազգիս Արամեան,
Ընտիր եւ խոհեմ փառաւոր իշխան:

Հաւատով, յուսով, սիրով տիրական,
 Վառեալ բորբոքեալ այր անգուգական,
 Հոգեւեր գթած աղքատաց պաշտպան,
 Սրբոց եւ այրեաց տարաւ միշտ խնամ:
 Գորովագութ հայր՝ որդոց Իննեքեան,
 Վաթսունամեան տիս եմուտ յայս տապան,
 Ըզկիհն եւ գորդիս իր ազնուական,
 Եթող լալագին յողբս դառնութեան:
 Յիսուս Սիածին, յոյս մեր փրկութեան,
 Բերկրեցո զսա ի քո սուրբ խորան,
 Տուր անմահ կենօք ցնծալ յաիտեան,
 Եւ մխիթարեա զաւակունս տրայն:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 106բ:

ԽԵ «Տապանագիր».
 Թաթեոս՝ որդի վառօղապետ Սիմօն ամիրայի.
 Ո՛վ անցատրք ճանապարհի կենցաղոյս,
 Եկայք ի տես ի տեսարան իմ հոգոյս,
 Այն, ինչ որդուք առոյգ տիօք խայտայի,
 Անդ ի խնդրելն զհամ բերանոյս կորուսի:
 Սուր տուտերի դառն մահուան ամուսնոյս,
 Խոցեաց զսիրտ ախտիս հիւծման իմ հոգոյս,
 Մինչչեւ հասեալ ի քսան եւ ութ ամ կենաց,
 Եհաս ինձ քուն աստուածայինըն կամաց:
 Յոյժ թախանձէ ըզսիրելիսդ իմ համակ,
 Աղերսաշունչ բարբառոյ իմ ոսկերաց,
 Նպաստել ինձ չարտասուելով խնդրելով,
 Յարուցանել զմեռելութիւնըս մարմնով:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 107ա:

ԽԸ «Տապանագիր»
 Արքունի վառօղապետ մահտեսի Առաքել ամիրայի.
 Բարձրացան զալիք սրբոյն եւ այրոյն,
 Չի բարձաւ յերկրէ իւրեանց այցելոյն,
 Մեծագգի տիկին Բերսաբէ խաթուն,
 Սարգիս աղայի էր դուստր սիրուն:
 Եղեւ կենակից առ իշխանագուն,
 Յարութիւն աղա բարի ամուսնոյն,
 Այն որ ի յԱկնա գողով ըստ նախնոյն,
 Ի Յարզըմանեան ազնիւ սերնդոյն,
 Չեւ լցեալ տիկնոյ ամք կենաց վաթսուն,
 Յերկիր անկանի մանգաղաւ մահուն,
 Հանգո տէր Յիսուս զհոգի տրուն,
 Ընդ սիրելիս քո յարքայութեան քում:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 107ա:

ԽԹ «Տապանագիր».
 Բարեսէր տիկին բարերար բազմաց,
 Առ հոգոյն իւր գեղ բազմօք գերագանց,
 Համեստ կողակից յարմատոց բարեաց,
 Ալեանախ Յովսէփ առն գերապանծ:
 Եօթանասուն ամ աստ բարոք եկաց,
 Բայց անդ ստացաւ զվարձս անանց,
 Իտաբեր տիկին նպաստ տնանկաց,

Եթող զիր որդիս պարծանք հայրենեաց:
 Չքեզ աղաչէ տէր աստուած գթած,
 Հանգչիլ ի յերկինս փառօք լուսազգեաց:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 107ա:

Ծ «Տապանագիր».
 Բրարիօն տիկին՝ պարկեշտ, գովելի,
 Կին էր Խըռլիսճեան Յօհան աղայի,
 Ծնանի գորդիս, կրթէ ի բարի,
 Եօթանասուն հինգ ամաց ապրի յաշխարհի:
 Այժմ հանգուցեալ ի հող տապանի,
 Անմռունչ ձայնի առ տէր պաղատի,
 Յիսուս, իմ յոյս, իմ ընկալ, զիմ հոգի,
 Քո սուրբ տեսութեանդ արա արժանի:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 107ա:

ԾԱ «Տապանագիր».
 Ամփոփեալ դնի յայս յարկ տապանի,
 Տոհմ Ումիրիճանեան Պօղոս աղայի,
 Մահտեսի Յակոբ որդի յարգելի,
 Էր ի քաղաքէն, որ Ակն անուանի:
 Որ մինչ զաւակօք նորոց բողբոջի,
 Հնձեցեր, ո՛վ մահ, սրով երկսայրի,
 Եւ որ հանդիպի յայս շիրիմ բարի,
 Յիշեսցիք զսա միով Հայր մերի:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 107բ:

ԾԲ «Տապանագիր».
 Իշխանատր բազմաց նպաստ,
 Մարմնով զուարթ, հոգով զգաստ,
 Հոգեւորաց դիւրապատրաստ,
 Բարեաց գործոց ծագեալ դարաստ:
 Չամս եօթանասուն յաշխարհի աստ,
 Յառս եւ տուրս էր բարեբաստ,
 Վճիռ մահու աստուածասաստ,
 Հասեալ ցաւօք արար տապաստ:
 Այժմ գուցէ հոգով նուաստ,
 Տէ՛ր իմ Յիսուս, արա ինձ ազդ,
 Թէ եկ ծառայ մուտ յառագաստ,
 Յերանելեաց հանգչիլ երաստ:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 107բ:

ԾԳ «Տապանագիր».
 Պտտոլ բարի յազնիւ տնկոյ,
 Ծաղիկ պայծառ յոստոց յարգոյ,
 Չուարթ տեսիլ անձին իւրոյ,
 Թարշամեցաւ յանգութ ցաւոյ:
 Չի մինչ ի տիս երկվեց տարւոյ,
 Հարաւ վիրօք դառն տապոյ,
 Յերկար կրեալ մեկնի հոգոյ,
 Բազմաց թողլով զկիրք ոգոյ:
 Ո՛վ տէր Յիսուս, աստուած գթած,
 Լէր մխիթար իւր ծնողաց,
 Հոգի տրա ի յարկ փառաց,
 Ընկալ հանգո ընդ սուրբ մանկանց:
 Հիւք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 107բ:

ԾԳ «Տապանագիր».

Վարդագոյն ծաղիկ տնկեալ յայս շիրիմ,
Քաղցրագեղ աչօք, որ կոչիմ Չեղիմ,
Միրովն աստուծոյ գրավարժ, ուշիմ,
Աւաղ տարածամ ի ձէնջ որոշիմ:
Այրս՝ Աստուածատուր, մայր իմ մտերիմ,
Ձի իմ չէր լցեալ քսան եւ մի ամ,
Դշխոյին նման ճէմէի փարթամ,
Մատնեցայ մահու դառն եւ անխնամ:
Գէորդ միանձնիս կարօտեալ մնամ,
Աղօթից ցանկամ փառացն անթառամ:
Հիւք. ՍՄ, ձեռ. 9821, էջ 107բ:

ԾԵ «Տապանագիր».

Ձի հրաման է արարչի,
Դառնալ անդրէն ի հող երկրի,
Մարիամս այս՝ դուստր նագելի,
Դեռաբողբոջ վարդ գովելի: //
Դուստր է սա յոյժ ազնուի,
Բեւեռագործ Մարտիրոսի,
Ի տեղոջէ Խանտիլլիի,
Եղաւ ի հող այս տապանի;
Որք հանդիպիք այսմ շիրմի,
Մաղթէ ի ձէնջ տալ գողորմի:
Հիւք. ՍՄ, ձեռ. 9821, էջ 107բ:

ԾԶ «Տապանագիր».

Ո՛վ քաղցրահողմ մահ բնական,
Որ ընտրելոյն ես տենչական,
Բաղձանք սրտի որդւոց մարդկան,
Ունայնութիւն ունայնութեան:
Աստի կենաց բարիք համայն,
Բանականաց չեն բաւական,
Աւաղ անցուկ այս ամենայն,
Հոգւոց բարիք միայն մնան:
Հիւք. ՍՄ, ձեռ. 9821, էջ 108ա:

ԾԷ «Տապանագիր ի վերայ Յարութիւն ամիրայի Պեզ-
ճեան».

Հարսն մաքուր եմ ես
Ծագման հօրն լուսոյ,
Արկեալ զինեւ բեհեզ՝
Պարգես Հոգւոյն Սրբոյ,
Երկին⁴⁷⁰ յերկրի ցուցայ
Պճնեալ ի զարդ շքեղ⁴⁷¹,
Յիս միշտ որպէս փեսայ
Ծէմէ արփին անեղ: //
Ունիմ անթիւ ծնունդ,
Ծնեալ ժառանգ փառաց,
Որոց ջանքէմ սնունդ,
Հաց եւ բաժակ կենաց,
Բայց մեծ հրդեհ ելեալ
Ամօք յառաջ ի վեր,

Այս սուրբ տաճար կիզեալ
Եղեւ իսպառ աւեր:
Տեսուչն որդւոց իմոց
Տէր Կարապետ արհի,
Նստեալ ի լաց ի կոծ,
Ողբայր որպէս այրի,
Բայց սիրտ նորին տխուր,
Ուրախ եղեւ շուտով,
Յորժամ փեսայն հօգր
Այց ինձ արար գթով:
Յարոյց յորդոց իմոց
Չվեհ Յարութիւն Պէզճեան,
Իշխան խոհեմ եւ փորձ
Պարձանք ազգին⁴⁷² Հայկեան:
Արփի պայծառ ցուցաւ,
Տրտմեալ սրտից բազմաց,
Բարիք նորա անբաւ,
Չոր նա գաղտնի գործեաց:
Ասէ՛ Մի ինչ հոգար,
Այնպէս շքեղ շինի,
Մինչ զի ասես՝ Սուրբ հայր,
Այրիլն եղեւ բարի:
Նա ետ նպաստ առատ,
Շինել զայս սուրբ փարախ,
Որով եհաս յաւարտ
Չքնաղ, քան զոր էր նախ:
Չանօթ, զգեստ նորոգ
Յաւեալ յոսկի, յարծաթ,
Կազմեաց բազում տրովք
Ի զարդ ի գեղ զուարթ:
Խաչկալ պատկեր շքեղ,
Սկիհ եւ խաչ, բուրվառ,
Քշոց եւ ջահ, կանթեղ,
Վակաս եւ թագ պայծառ:
Շուրջառ, բազպան, ուրար,
Շապիկ ազնիւ ի տես,
Եւ այլ գործած ճարտար,
Մպաս եւ զարդ պէսպէս:
Շինեաց յիւրոց արդեանց
Երրեակ դայրոց ուսման,
Որոց հասոյթ կարգեաց
Կալ միշտ հաստատ համայն:
Չգանձ աստի կենաց
Փոխեաց յերկնից կամար,
Մնալ ի կեանս անանց,
Հոգւոյն իրում պաշար:
Ոչ են միայն այսչափ
Գործքն բարեաց վեհիս,
Այլ են անցեալ ըստ չափ,
Չոր նա արար յաստիս: //
Ուստի ես մայր բարի,
Իրաւ վարկայ այժմիկ,
Հանգչիլ յիմում ծոցի,

470 ՍՄ 9820-ում՝ երկնից:

471 ՍՄ 9820-ում՝ զքեզ փիւ. շքեղ:

472 ՍՄ 9820-ում՝ ազգիս:

Մարմնոյ որդոյս այսմիկ:
 Հապա որ այց առնէք
 Շիրմի առն մեծի,
 Չայս քաջ⁴⁷³ ի միտ առնէք,
 Չոր ձեզ անձայն խօսի:
 Թաղիլ յայս սուրբ տեղիս,
 Այո, չէի արժան,
 Սակայն գտենչ սրտիս
 Ելից անմահ արքայն:
 Դիտմունք իմոց մտաց
 Յառնել զայսչափ բարիս,
 Չէին ըստ⁴⁷⁴ իմ փառաց,
 Այլ առ օգուտ ազգիս:
 Խնդրեմ ի ձեզք միայն,
 Վասն իմ առ տէր մաղթել,
 Մեղաց իմոց համայն
 Քաղցր գթով ներել:
 Արդիւնք ամբիժ գառին
 Որ աստ ձօնի նուեր,
 Տեսլեամք փառաց վերին
 Լիցի եւ ինձ հրաւեր:
 Աղօթք, որ միշտ մատչին,
 Քաւիչ մարդկան մեղաց,
 Հանցին մասն եւ բաժին,
 Հոգւոյս⁴⁷⁵ եւ իմ նախնեաց:
 Մերունդ իմոյ տոհմին
 Եւ իւր բարի համբաւ,
 Մինչ ի գալուստ Փրկչին
 Կայցէ⁴⁷⁶ փառօք բազմաւ:
 Հիւսք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 108ա: ՄՄ 9820, էջ 71ա-72ա:

ԾԸ «Տապանագիր».
 Արձանագիր Չաքարիա վեհապետի ի Ղուրու
 Չէշմէ, ՌՄԽԸ (1799).
 Մեծ վարդապետս այս մեր զգօն գերահռչակ եւ
 զգաստ,
 Ծնեալ յերկրէն Կաղզուանայ, ութսնամեայ հան-
 գեաւ աստ,
 Ի Փոքրուզեանց համեստ զարմէ մաքրասնունդ
 բարերաստ,
 Դեռ մանկութեան սուրբ հաւատով բնաւորեալ
 ճոխիմաստ:
 Ըզսերտ հաւատն ուղղադաւան ետես ի սա
 Սուրբ Հոգին,
 Կոչեաց ի Սուրբ Էջմիածին՝ լուսակառոյց նոր
 յԱդին,
 Արար զսա անդ միաբան վեհապետիցն առ ոտին,
 Եւ փայլեցոյց գերափառօք զեա արուսեակ ա-
 մաւօախն: //
 Սրբոյ գահոյս ժիր գործակալ միշտ ուր ուրէք
 յաջողակ,

473 ՄՄ 9820-ում՝ Բարսեղ փիս Չայս քաջ:
 474 ՄՄ 9820-ում՝ վասն փխ ըստ:
 475 ՄՄ 9820-ում՝ հոգւոյ:
 476 ՄՄ 9820-ում՝ կացցէ:

Գեղեցկադէմ ահագնաձայն եպիսկոպոս շնոր-
 հունակ,
 Էր բնախօս աստուածաբան եկեալ Պօլսոյս
 նուիրակ,
 Լուսատրչիս դաւանութեամբ ուղիղ մտօք դաս-
 տիարակ:
 Ի գործ կրկնակ նուիրակութեան բարութք ծա-
 նեան բարեկարգ,
 Չաքարիա արհիապանծս եղին Պօլսոյս պատ-
 րիարգ,
 Հռչակեցաւ յոյժ ազգասէր եւ բարերախտ գեր-
 յարգի,
 Շինեալ զոմանս եկեղեցիս եւ հիւանդաց երկուս յարկ:
 Յոյժ ճոխացոյց շատ դպրատունս յորս հաստա-
 տեաց վարժապետ,
 Հասոյց գեթնեակ եպիսկոպոս եւ չորեսին վար-
 դապետ,
 Չանայր զուսումն ճոխեւ ազգիս նախնի սրբոց
 յար հանգէտ,
 Պահեաց հանգիստ զազգ մեր տէրով քսան եւ
 վեց կեցեալ դետ:
 Ձէտ սուրբ Սահակ գփայտ վշտաց հոգս հայոց
 բարձեալ յուս,
 Յահէն պետիս բոլոր հերձուածք բերանափակ
 տային խոյս,
 Ազոմամբ հոգւոյն գիտաց զիր մահ, խնդրեաց
 բաղիլ շիրմիս կոյս,
 Ակն ունելով սուրբ աղօթից տամբ ողորմիս շնոր-
 հալոյս:
 Հիւսք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 109ա:

ԾԹ «Տապանագիր».
 Ի նագելին Նեմզար՝ դուստր Միքայէլ ամիրայի
 Քիշմիշեանց, կողակից Կարապետ աղայի՝ քե-
 ռորդոյ Յարութիւն ամիրայի Պեզճեան.
 Մի պանծացի ծիրանածին բոռ վեհաշուն,
 Եւ մի շքեղ դեռաբուսից փառք զաղփաղփումն,
 Հիպոկրատեայ անմահասցին վճիռք համբուն,
 Անմահ գործել զազգ երկրածնաց այլ չեն մարթուն:
 Թող Ասկղեպիոս աստուածացի գերթ գերարուն,
 Այլ չիք տեսօղ բիւրապիսի ախտից մարմնոյն,
 Թող բարդեցի բազմամբեր փարթամութիւն,
 Այլ ոչ լիցին զուզակշիռ փրկանք մարդոյն: //
 Ձի այն չքնաղ բոսորագեղ բոյս վեհափառ,
 Արփիափայլ իբրեւ լուսին զուարճանայր,
 Չորձքն ոսկեյեռ գոհարքն ի վառ նաժիշտքն ի պար,
 Նայ ոչ ինչ գոյր ի ցանկալեաց, որոց տենչայր:
 Եւ զի՞նչ ապա մինչ Հիմնեայ ջահ լուսավառ,
 Յերրորդ յիւր շող յառազաստին փայլէր պայծառ,
 Դառնահամբոյր ամոք միգամած յամայրոյ անխառ,
 Նսեմացոյց զնագելոյն լուսոյն դամպար,
 Ինն եւ տասն ամաց⁴⁷⁷:
 Հիւսք. ՄՄ, ձեռ. 9821, էջ 109բ:

477 [Ինն եւ տասն ամաց-ը գրված է այլ ձեռագրով]:

Կ «Տապանագիր».

Հեռացաւ անդարձ սիրողն ընկերին,
 Հեռացաւ ի բաց քաջ առաքինին,
 Հանճարեղ եւ ճիր յիրքս դժուարին,
 Ձատագով, հզօր գրկեալ տկարին:
 Յաքտը տոյժ եւ մահ յօժար կամովին,
 Յօգուտ իւր ազգին արհեստատրին,
 Ի բանս աներկիւղ ի մեծ դիւանին,
 Կորին առիւծու ըստ իւր ծնողին:
 Առ բազում վշտաց կանխեալ օրհասին,
 Ննջէ ի յիսուն եւ եօթըն ամին,
 Ըզքեզ ունի յոյս Յիսուս միաձին,
 Հանգչի ի վշտաց ի յարկըն վերին:
 Հիւնք. ՍՄ, ձեռ. 9820, էջ 70բ:

ԿԱ «Տապանագիր».

Այս է հանգիստ իւր տապանի,
 Առըն մեծի բարերջանկի,
 Թէոդորոս սրբազանի,
 Սրբոյ գահիս պատրիարգի:
 Էր նահանգաւ Տարօնացի,
 Բնիկ գիւղէն Խորենացի,
 Լի աւուրքք օր ծերութեան,
 Հանգեաւ առ տէր բարի մահուամբ:
 Թուին հայոց յաբեթական
 Ռժ քառ յորելեան (1761),
 Դեկտեմբերի կոյսն ընդ ինքեան:
 Հիւնք. ՍՄ, ձեռ. 9820, էջ 76ա:

ԿԲ «Տապանագիր».

Այս է տապան հանգստեան Գանձակեցի սրբա-
 գան Կարապետ պատրիարգի սրբոյ սրտոյս Երու-
 սաղէմի, որ փոխեցաւ յանանց կեանս ի թուին ՌժԷ
 (1568): Որք հանդիպիք, տուք գողորմութիւն:
 Հիւնք. ՍՄ, ձեռ. 9820, էջ 76ա:

ԿԳ «Տապանագիր».

Ի թուին Փրկչին մերոյ ՌՉԾԱ (1751):
 Բազմաց իրաց զփորձ առի ըստ մտաց,
 Ըստ իմ կարի ճաշակեցի նուրբ իմաց,
 Որդիս արդնոյ, որ արդ ննջեմ խոր քնաց,
 Որ ձայն հաւուս յարուցանէ ակն ի բաց:
 Տեառն Յօհաննու մեծ բաբունոյն դպրատան,
 Որդւոց նորին դաստիարակ քրտնաջան,
 Չինչ եւ առի ի սուրբ վեհին աննըման,
 Չայն ծախեցի ի կիրք որդւոցն ի յուսման:
 Ամէն ուսմամբ առանց վերջնոյ վախճանի,
 Իբրու մրդեղ շքնչմամբ հողմոյ անցանի,
 Միայն հաւատն եւ բարի գործն ընդունի,
 Են գոյգ ճրրագ վերնոյ ուղղոյ արժանի:
 Խրդճուկ Գասպար մեծ Ամուճայ կոչեցեալ,
 Մերաստացի որդի Արդնոյ անուանեալ,
 Ի համայնիցդ ոյք հանդիպիք գթացեալ,
 Խնդրեմ ասել լիցի յէէն ողորմեալ:
 Ի թուին հայոց ՌՄ (1751), մայիսի մէկին:
 Հիւնք. ՍՄ, ձեռ. 9820, էջ 75բ:

ԿԴ «Տապանագիր».

Նսեմայարկ դիրս ըստորին
 Ունի յաւանդ զգանձ գովելին,
 Չմարտը մարմին զբազմերջանկին
 Աստուածատուր վարդապետին:
 Նստեալ ի գահն Յակոբոսին,
 Ըստ մարմնոյ եղբօր մերոյ Փրկչին,
 Մեծ պատրիարգ յաջորդ նրմին,
 Յերուսաղէմ սուրբ քաղաքին:
 Հայրապետաց սրբոց կարգին,
 Փայլէր վարուք գեր քան զնոսին,
 Էր անձանձիր ի քարոզին,
 Աստուածաբան քաջ բաբունին:
 Արդ փոխեցաւ առ ցանկալին,
 Չուեաց յաստեացս յոյն վերին, //
 Լըցեալ շրջման ամ էր հազարին,
 Հարիւր քսան յարաբարդին:
 Հիւնք. ՍՄ, ձեռ. 9820, էջ 76ա-բ:

ԿԵ «Տապանագիր».

Վիմօք Փրկչին յարթուն անունս անձկացեալ,
 Չպակասութիւն վշտաց նորին ներ անձնեալ,
 Չուք հարիւրակ քսակ պարտուց վճարեալ,
 Սուրբ Յակոբայ սիւն ամրութեան կառուցեալ:
 Վեհ աշակերտ մեծ վարժողին Վարդանայ,
 Հրեշտակական վարուք ճգնեալ անխնայ,
 Որօքեավար քաղաքավար յարակայ,
 Յօրէնս էին միշտ ակն ի բաց աներկբայ:
 Ութսուն ամօք միշտ կուսութեամբ պարապեալ,
 Մարմնոյն հանգիստ խուն մի երբէք ոչ տուեալ,
 Յասպարիզի մարտեն յաղթօղ ներ գտեալ,
 Գնաց առնուլ զանեղձ պըսակ պատրաստեալ:
 Նընջէ մարմնով Գրիգորիսսն այն արթուն,
 Հոգովն հսկէ առ միշտ բարին որ անհուն,
 Որում եւ գործքըն պըսակէ զիր անուն,
 Չի հաւատով եւ սուրբ գործովն էր տըքուն:
 Յիշեալ լիցի միշտ ի բարին բարեբարոյ մեծ
 մահտեսին,
 Շինօղ շիրմի մերոյ վեհին, որ Սեղրոստորոս երե-
 ւանին:
 ՌճԳԸ (1749):
 ՌՄԺ (1761) դեկտեմբերի Է (7), Թէոդորոս:
 Հիւնք. ՍՄ, ձեռ. 9820, էջ 75ա:

ԿԶ «Տապանագիր».

Ահա տեսարան դառն աղետի,
 Ահա դամբարան ողբոց արժանի,
 Մոյն Նազիք տուտու դուստր նազելի,
 Որ էր անդրանիկ զաւակ Յակոբ աղայի,
 Վեշտասան ամեայ եղեւ կին բարի,
 Յարգի Տիւպէնտճի պարոն Գէորգի:
 Հիւնք. ՍՄ, ձեռ. 10097, էջ 53բ:

ԿԷ «Տապանագիր».

Աստ հանգչի պարծանօք Աբիկեան Աղասի Չէ-
 լէպին.

Սուգ առեալ ելաց տունն Արիկեան,
 Ընդ կորուստ անգիտ սիրելոյն գետ, քան
 Այն, որ երբեմն կայր ի խրախճան,
 Հրճուանօք բերկրեալ զաւուրս համայն:
 Ուր արդ դիտեսցի նոյն խնդութեան ճայն,
 Ուր այլ գերազանց մասունք լիութեան,
 Տեղի ետուն սոքայ ամենեքեան,
 Փոխեալ ի կոծումն ողբոց հեծութեան:
 Չի մերժեաց յանկարծ բունն զաւազան,
 Յոր յեցեալք էին զարմից երախսան,
 Որբոց եւ այրեաց հոգածու պաշտպան,
 Կարօտեալ անձանց հզօր օգնական:
 Յաստեացս փոխեալ դիմեաց ի խորան,
 Սրբոց երջանկաց պարուց յիջեան,
 Ի քառասուն ամ դիպելով վախճան,
 Լի արդեամբք ճրից գովեստից պատկան:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 68ա:

ԿԸ «Տապանագիր».
 Մարիամիկինն է.
 Չի է հրաման արարչական,
 Կոչէ, հրախրէ ի հարսնարան,
 Ոչ խնայէ ի տիս մանկական,
 Գերէ, կողոպտէ զամենայն,
 Մարիամ անբիծ աղանին,
 Փոխեալ աստի եղեմ վերին,
 Բարի զարմէ զաւակ անզին,
 Եթող ծնողացն կսկիծ դառնագին:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 55ա:

ԿԹ «Դամբարան».
 Ի մեծաշուք Սողովմէ տիկին՝ դուստր Մինասեան եւ կողակից վսեմափառ Գրիգոր ամիրայի՝ արքունի ճարտարապետի.
 Ի զարմէ վեհից ի վեր ընճուղեալ ծնունդ գեղասպանմ,
 Ըստ ամբարձուղէ՛ն նոճույ պերճացեալ յորդոց եւ բռանց,
 Անդուստ ի վերուստ գգուեցաւ փառօք ի գիրկ գրգանաց,
 Եւ զուարճացաւ իբրու վարդենի ի ծոց ծաղկոցաց,
 Խայտայր հրճուանօք ի մէջ լայնանիստ ոսկեզօծ կառաց,
 Ճախրէր սրընթաց նաւակն ի խաղաղ ծով ծիրանագգեաց,
 Այլ գիարդ ունայն եւ վաղանցուկ են փառք երկրաւորաց,
 Նա ոչ ինչ ընդհատ ի սին սաղարթից ի գարնան ծաղկանց,
 Չի սա, որ ճեմէր ի մէջ լոյսարծարծ շինից ցանկալեաց,
 Պարառեալ յընտիր բազմահոյլ խմբէ իւրոց նաժշտաց,
 Այժմ խրթնացեալ ի շքեղաշուք բարեզարդութեանց:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 66բ:

Հ «Տապանագիր».
 Մահկանացու վիճակ մարդկան,
 Անդարձ վճիռ է տիրական,
 Բայց այր բարի եւ պատուական,
 Մնայ անմահ եւ յետ մահուան,
 Ազուլեցի Յարութիւն իշխան:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 54ա:

ՀԱ «Տապանագիր».
 Արձանական քնարան ի դեռափթիթն Մարիամ՝ դուստր ազնուագարմ Կարապետ աղայի որդոյ՝ վսեմափառ Գրիգոր ամիրայի՝ արքունի ճարտարապետի.
 Շքեղ դու ընտիր գեղ բոսորաբուղիս,
 Նորափթիթ ծաղիկ ի յընձիւղ կակուղ,
 Ի դրախտ Ադինայ փայլեցար կանուխ,
 Ի ծագել բարձանց լոյս ճաճանշաւուխ:
 Ի բաց հերքեցեր զփառս զազփադիւմուն,
 Ընդգրկեալ զկեանս զանեղծ եւ մնայուն,
 Չի ըստ պատգամաց անսուտ բերանս
 Այդպիսիք մտցեն խորան յերկնարուն:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 55ա:

ՀԲ «Տապանագիր».
 Որ լեզու, որ բան բաւական լիցի,
 Պատմել զցան իմ անհանդուրժելի,
 Ես՝ Միմս տուտու՝ դուստր մեծարգի,
 Ո՛վ անգութ աշխարհ, նետ քո թիւնալի
 Խոցեցեր ի մահ զանձն իմ եղկելի,
 Քաջ առաքինեաց պատկեր իսկական,
 Բարեաց ընտրութեան ճոխ հանդիսարան:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 54ա:

ՀԳ «Տապանագիր».
 Պօլսեցի քաջ դիտին Յօհաննէս արին,
 Չաքարեայ վեհին հոգեծին որդին,
 Քաջ աստուածաբան վսեմ ատենին,
 Չեղեւ մեզ յագիլ քառասուն տարին:
 Կալով նպատակ վշտաց զանազան,
 Տասներեզ ամ պատրիարգութեան,
 Երբէք չըստացեալ օր հանգստութեան,
 Խոհեմ եւ խելօք ճոխ իմաստութեան:
 Բարձրացոյց զազգս մեր յաջս տէրութեան,
 Ուստի ետ արքայ խիլայ յարգութեան,
 Չէր երբէք եղեալ դարուցս այժմեան,
 Յետ հրաժարման պատրիարգութեան:
 Չորս ամ ապրեալ է առ սուրբ վախճան,
 Ի թիւ վաթսունի կենացն լրրման,
 Մլացաւ ի մէնջ սուրբ հարցն կայան:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 53բ:

ՀԴ «Տապանագիր».
 Արձանական
 Ի վսեմափառ եւ յաւերժայիշատակ Գրիգոր ամիրայ արքունի ճարտարապետ.
 Ուր մշտագուարթ աստղ լուսասփիւռ,

Տոհմին թորգոմեան գեղեցիկ նշոյլ,
 Փառազուն Հայկեան յորոց պանծային,
 Ուր քաղցրածաւալ իբրոյ զեմիատայն:
 Գետ յորդահոսան ծաղկազարդ պճնել
 ՉԱրամեան հովտաց տունկ պանդխտական,
 Ուր այն պանծալի շքեղ զաղափար ազգասիրու-
 քեան,

Չոր է բազմազան յաւերժ յիշատակք լիցին գո-
 վաբան:

Ուր ճարտարարուեստ նախապատի պետ՝ շի-
 նուածոց կերտման,

Որով բիր ազգի չքնաղ ապարանք ի վեր բարձ-
 րացան,

Ուր բարեհամբոյր վսեմաբարոյ ճոռոմ պերճաբան,
 Մեծապանծ փառօք գգուեալ տենչալի արքայից
 համայն:

Ահա պերճացեալ ըստ բիրաբեղան բուսոց բա-
 րութեան,

Չաւուրք ծերութեան դառնայ վերստին յիւր
 տարր նախնական:

Ի հասակի վաթսուն եւ հինգ ամաց, յամի տեառն
 1831 եւ ի յամսեան նոյեմբերի 15, օրն կիրակի, սուլ-
 դան Մահմուտին 30 տարի խալիֆայութիւն զկնի
 Մինաս խալիֆային, էր որդի Բարեբոցի Սարայի մե-
 րամէթճի Պալը խալիֆային:

Հիմք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 66ա:

ՀԵ «Տապանագիր».

Վարպետինն է, յամի տեառն 1831 նոյեմբերի
 ԺԵ (15), օրն կիրակե՛.

Քաջ առաքինեաց պատկեր իսկական,
 Բարեաց ընտրութեան ճոխ ժողովարան,
 Ահա աղետի դառն տեսարան,
 Ողբոց արժանի ահա դամբարան,
 Գրիգոր ամիրա իշխանապետի,
 Պօլսեցի քաջ ճարտարապետի,
 Էր որդի Բարեբոցի պարոն Խալիֆայի,
 Անս տեսուն ի գործ տէրութեան
 Չըստացաւ երբէք օր հանգստութեան,
 Կալով նպատակ վշտաց զանազան,
 Բարձրացոյց զազգս մեր յաջս տէրութեան,
 Ուստի ետ արքայ նշան յարգութեան,
 Չէ երբէք եղեալ դարուցս այժմեան,
 Նման սմին յարգի յաջս պետութեան:

Որբոց եւ այրեաց էր խնամատար,
 Օտարասէր, բարեսէր եւ խաղաղարար,
 Սովոր էր ամենեցուն բարի առնել,
 Անցատրօք զանանց բարին զընել,
 Ի թի վաթսուն եւ հնգի կենացն լրման.

Փոխեցաւ ի մէնջ սրբոցն կայան:
 Հիմք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 55բ:

ՀԶ «Տուտոյ խաթունին տապանագիրն է».

Յամի տեառն 1832 ապրիլի տասն, Չատկի ա-
 նաջին օրն.

Քաջատոհմիկ ազնի ժիր կին,
 Որ էր դուստր Մինաս խալիֆային,
 Եւ կենակից Գրիգոր ճարտարապետին,
 Նա էր հայր որբին եւ ապաւեն տնանկին,
 Գործեաց բարեաց բերօղ յանձին,
 Մէր աստուծոյ եւ սէր աղքատին,
 Բորբոքէր միշտ յիւրում սրբտին,
 Անցատրօք զանանց բարին,
 Գնոց էառ իւր գանձ անգին,
 Ի յիսուն ամ հասակին,
 Եղաւ մարմնով ի յայս շիրմին,
 Թողեալ գորդիս ըզհնգեակին,
 Ի սուգ եւ լաց անհնարին,
 Ի քէն հայցեմք Հօր միածնին,
 Լուսաւորեա գեղցի տրին:
 Հիմք. ՄՄ, ձեռ. 10097, էջ 5:

ՀԱՌԻՃԱՅ ՎԱՆՔ⁴⁷⁸

12ա. Տեսրակ արձանագրութեանց սրբոյ վա-
 նիցն Հառիճոյ ի 1842 ամի եւ նոյեմբեր 13⁴⁷⁹:

Ա «Ի վերայ արտագին հիւսիսային որմոյ սրբոյ տաճա-
 րին».

Շնորհիւ եւ ողորմութեամբ մարդասիրին աստու-
 ծոյ ես՝ Չաքարէ Մանդատորթախուցէս, ամիրապա-
 սալար Հայոց եւ Վրաց, որդի մեծի Սարգսի, զան-
 ձագին արարի զհռչակաւոր սուրբ ուխտս Հառիճա-
 յի յիւր բնական հայրենատիրացն յաղագս կենդա-
 նութեան տեառն իմոյ բարեպաշտ Թամար թագու-
 հո եւ փրկութեան ինձ եւ հարազատ եղբօր իմոյ՝
 Իւանէի եւ զաւակաց մերոց՝ Շահնշահի եւ Աւագին
 եւ ծնողաց մերոց: Շինեցի ի սմայ ամրոց եւ ԳԿաթո-
 դիկէս բազում ծախիւք եւ զարդարեցի ամենայն
 սպասիւք եւ սրբութեամբ: Եւ զիմ գեղն, որ իւր մերձ
 ի սուրբ ուխտս զՄոկորոն, ընծայեցի Սուրբ Աս-
 տուածածնինս բոլոր ամէն հաղահատովն եւ սարովն
 եւ ջրովն, գոր բնական լեալ է: Եւ ետու ջաղաց մի
 Գետիկ, որ Գիւաղաց կոչի, ջաղաց մի յԱնի Գլիճո-
 րին եւ պարտէզ մի ի Ծաղկոցածորին, այգի մի յԵ-
 րեւան եւ այգի մի ի Թալին եւ զառաջին սահմանքն,
 որ բուն լեալ էր, հաստատեցի ի սահմանախաչէ ի
 Հառիճայ գէտն կոռնարգով, զըբերովն, Յամաք-
 ձորով, Ճինարին հարովն, Գոմցեց ձորովն, Ատե-
 նաղբիւրով, հին Հառիճայովն եւ եղի սահման զայս,
 որ յաւազ խորանն պատարագել գՔրիստոս յիմ յա-
 նուն հան[ա]յազ: Արդ, որք հաստատուն պահեն
 զյիշատակս մեր, օրիւրն յաստուծոյ եւ յամենայն
 սրբոց: Իսկ որք հակառակին եւ հանել ջանան,

478 [Հառիճայ վանքի բոլոր արձանագրությունները նույն ձեռագրից են՝ ՄՄ, 6517-ից: Ուստի դրանց նյութը բերում ենք նույն-
 նությամբ]:

479 [Հմմտ. Գագիկ Հառիճեցի, Հառիճ, Երեւան, 2002 թ.: Ե՛վ ձե-
 նագրում, և՛ տպագրում առկա արձանագրություններում
 նշված են նաև տպագրի աղբյուրը և կարևոր տարբերություն-
 ները]:

փոքր ինչ կամ մեծ, զանեծս Կայենի եւ զՅուդայի ժառանկեացել եւ կրկին նզովեսցի յաստուծոյ: Թէ որ բռնութեամբ եւ ուժով տանի, ՅԺԸ [318] հայրապետացն եւ յամենայն սրբոց եղիցի նզովեալ, ամէն: Գրեցաւ կտակս հաստատ ի թուիս ՈԾ [1201]: // (12բ)

Բ «Ի ճակատ սրբոյ տաճարին».

Շնորհիւն աստուծոյ եւ՝ Չաքարէ ամիրսպասաւար, շինեցի գԿաթուղիկէ⁴⁸⁰:

Գ «Ներքոյ սորա».

Ի թուին ՈԿԳ [1214], կաման աստուծոյ մեք՝ Հառիճեցիք՝ հայր Պետրոս եւ այլ միաբան եղբարքս, հաստատեցաք յաւիտեանց կտակ անջնջելի մինչ ի գալուստն Քրիստոսի եւ եղաք սահման անխափան: Եթէ հայր որ փոխի առ Քրիստոս գիշեր պաշտօն եւ Գ [3] քառասունք եւ թէ երէց կամ կուսակրօն արեղայ, Գ [3] քառասուն ասպաշխարողի, Բ [2] ի մարդն օր ժամ հօր եւ ամենեղբարց, որք հաստատ պահեն, օրհնին ի Քրիստոս, որք հակառակին, դատին ի յաստուծոյ⁴⁸¹:

Դ «Կից սորա յաջակողմն».

Կաման աստուծոյ եւ՝ Տուտիկս, մեծ յուսով միաբանեցայ ի սուրբ ուխտս եւ ըստ իմ կարողութեանս ետու ընծայք Սրբոյ Աստուածածնիս: Հայր Յովհաննէս⁴⁸² եւ միաբանքս հաստատեցին վկայութեամբ տէր Համազասպայ ի տանին Վարդավառին զամենայն եկեղեցիքս յիմ անուն պատարագել զՔրիստոս: Ով խափանէ, իմ մեղացն տէր է, կատարիչք օրհնեալ եղիցին, ամէն⁴⁸³:

Ե «Ներքոյ սորա».

Կաման աստուծոյ եւ յաշխարհակալութեան Եղանայ դան Ղազանին, եւ՝ Խողխութլու⁴⁸⁴, որդի Չաղանին, եւ իմ որդիս՝ Պաշէս, եւ իմ խաթունս՝ Խութլու, միաբանեցաք ի Սուրբ Աստուածածնինս եւ զմեր բաժին զանձով շինած ձիթեհանգ տուաք եկեղեցոս, լոյս լուսով լինի ո՛չ իմ որդու, ո՛չ իմ աղբօր, ո՛չ իմ ազգի մարդոյ դասի չկայ: Ով դասի, արնէ յաստուծոյ եւ ի փեղամպարացն նալաթ է⁴⁸⁵, կատարիչքն օրհնին յաստուծոյ, ի թ[ու]ին] ՉՉԳ [1334]:

Չ «Փոքր ինչ հեռի ի սոցանէ, // (13ա) յաջակողմնան անկեան».

Ի ՈՀ [1221]:

Ես՝ Վաչէ, որդի Սարգսի, եւ մայրն իմ Մամախաթուն տուաք Բ [2] այգի Սուրբ Աստուածածնիս ի Փարսի եւ ի Տաճատագեղ, մեծ յուսով եւ միջնոր-

480 [Տպ. էջ 20-21]:

481 [Տպ. էջ 34]:

482 [Տպ. Յանաննէս]:

483 [Տպ. էջ 34-35]:

484 [Տպ եւ լուրու փիլ խողխութլու]:

485 [Տպ. չիք նալաթ է]:

դութեամբ Գրիգոր վարդապետի եւ ի սուրբ եղբարց հաստատի կաման աստուծոյ: Ընկալաք եւ զայլ արդիւնս եւ սահմանեցաք զԾարգարդարն՝ Վաջէի, եւ գՂազարու տօնն՝ Մամախաթունին, ամէն եկեղեցիքս անխափան: Եթէ որ խափանէ⁴⁸⁶, պարտական է մեղացն⁴⁸⁷:

Է «Ի ներքոյ սորա».

Յանուն աստուծոյ եւ՝ Ասլանս, միաբանեցայ Սուրբ Աստուածածնիս եւ շինեցի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց զմարաքն:

«Սոյն որմոյ ձախակողմնան անկեան».

Աստուածասէր եւ արդիւնաւոր պատրոնն Հիջուպ Վարիամ շինեաց զվայելուջ ժամատունս եւ երբեր զմիս ջուրս յիշատակ հոգո իւրո եւ զուսակաց իւրոց եւ ամուսնոյ իւրոյ՝ Թամարին, եւ տէր Յովհաննէս. միաբանքս ի խնդրոյ դատերն իւրոյ՝ Խաթունին, հաստատեցին ի տօնի Թէոթոս քազատրին զմիայն եկեղեցիքս անուն Թամարին պատարագել զՔրիստոս անխափան: Կատարիչքն օրհնին յաստուծոյ, թվ. //⁴⁸⁸

Ը «Ի մէջ գաւթին, ի վերայ հարաւային որմոյ».

Կաման աստուծոյ եւ՝ Մխիթար[ս], զնեցի յԵրեւան գԵւագրին որդոյն այգին յարդեանց իմոց եւ ետու ի Հառիճայ, եւ տէր Յօհաննէս եւ միաբանքս սահմանեցին ի տարին Գ [3] օր պատարագ. Ա [1] յորս յանուն եւ Բ [2] օրն ինձ առնեն անխափան. կատարիչքն օրհնին յաստուծոյ: Որք խափանեն, դատին ի Քրիստոս: Խաչգիւտի օրն առնեն զժամն: // (13բ)

Թ «Ներքոյ սորա».

Ի թուին ՈՀԳ [1224]:

Ես՝ Գրիգոր, սնուցած որդի մեծին Սարգսի, դատերն Նրջիսի, տուի Աւետարան զուգօր ի սուրբ եկեղեցին որորմութեամբ տօնին իմո, եւ հաստատեցին ի տարին Գ [3] օր պատարագ. Բ [2] օր ինձ եւ Ա [1]՝ Բանուշահին:

Ժ «Ներքոյ սորա».

Ի թուիս ՈՉԳ [13]:

Ես՝ Արսէն, սնուցած պարոն Նը[ր]ջըսին, ընծայեաց արդիւնք ի սուրբ ուխտս. Բ [2] օր պատարագ ինձ եւ Ա [1] Խոշուշին. կատարին գլիշատակս մեր:

ԺԱ «Ի մէջ գաւթին հիսխաային որմոյ».

Կաման աստուծոյ եւ՝ Մանասար, եւ Պաղտասարս՝ որդիք Խորասարին, ի յառաջնորդութեան հօր՝ Համազասպայ, ընծայեցաք ի սուրբ ուխտս զմեր հայրենի դրամագին այգին, որ ի Նորաշէն ի կարդ: Ով հակառակ կայ կոմ խրսսի մերոյ կամ

486 [Այս բառը գրված է տողամիջում այլ ձեռագրով]:

487 [Տպ. չիք]:

488 [Թիվը գրված չէ]:

յօտարաց, նզովս անցէ ի տեսնէ Յիսուս: Եւ հայրս եւ միաբանքս սահմանեցին, որ յետ Աստուածածնին Ժ [10] օր պատարագ. Բ [2]՝ Խուպասարին, Բ [2]-ն՝ Կիմայթին, Բ [2]-ն՝ Յովհաննէսին, Դ [4]՝ Սանասարին: Ով գլխատակս խափանէ, դատի ի Քրիստոսէ, ամէն: Հաստատեցաւ կտակս ի կասսա:

ԺԲ «Ի ներքոյ սորա».

Ի թուիս ՈՉԴ [12]:

Ես՝ Տիրատորս, մեղու[ց]եալ ծառայ Քրիստոսի, ի քրտանց իմոց գնեցի գեղեցեցեցիս ցայգոյ չորիցն մինն եւ ետու սուրբ ուխտս, եւ հայր Համագասպս սահմանեաց, որ տարին Անդրէի առաքելոյն Գ [3] օր պատարագ յառնեն. ով խափանէ, դատի ի տեսնէ:

ԺԳ «Ներքոյ սորա».

Ես՝ Միմէռնս, յարդիւնք ետու ի Սուրբ Աստուածածինս, եւ հայր Յօհաննէս եւ հաստատեցաք Բ [2] օր պատարագ ի տօնին ի սուրբ Անտոնի, Ա [1] Միմէռնիս եւ Ա [1] Գրիգորոյ: Կատարիչքն օրհնեալ եղիցին: // (14ա)

ԺԴ «Ի տաճարն ի ճակատն յաջակողմեան խորանին».

Ես՝ Արդեւան, ծառայ Քրիստոսի, եւ ամուսին իմ Նուրսի մեծ յուսով ստացաք զվարագոյրս ընծայ սուրբ եկեղեցոյս, եւ սպասաւորքս սուրբ ուխտիս սահմանեցին մեզ յամենայն ամի Դ [4] օր պատարագ, Բ [2] օր ինձ եւ Բ [2]՝ Նուրսքէ ի տօնի Համարածմանն անխափան. կատարիչքն օրհնեալ եղիցին, ամէն: Վերջ:

ԺԵ «Ի ճակատ հին եկեղեցոյն, զոր յանուն սրբոյն Գրիգորի կառուցեալ է».

Ես՝ Մարգիս Ծոնս, շինեցի զեկեղեցիս եւ ի քրտանց իմ ետու այլ ընծայ ի սուրբ ուխտս, եւ հայր Համագասպս սահմանեաց, որ ի Մարգսի եւ ի Բագոսի տօնին Բ [2] օր պատարագէն զՔրիստոս յիմ անուն. ով խափանէ, դատի ի տեսնէ:

ԺԶ «Ի վերայ արտաքին որմոյ ի կողմն արեւելեան հարաւոյ».

Ես՝ Շատաղէկ, միաբանեցայ սուրբ ուխտիս, եւ հայր Համագասպս եւ այլ եղբարքս հաստատեցին, որ ի մահու իմ զիմ միաբանութիւնն առնեն անպատճառ, ով լինի:

ԺԷ «Մերձ ի սա».

Ես՝ Գրիգոր որդի Քոլայի, միաբանեցայ ի սուրբ ուխտս. ուր մեռանիմ, զիմ հարկն կատարեն անպատճառ ով լինի:

ԺԸ «Կից սորա».

Ես՝ Գրիգոր, առաջնորդ սուրբ ուխտիս Հառիճայի, շինեցի զտեղի սնընդեան իմոյ ի Ծ [100] - ամենա կործանմանէն եւ կարգեցի ի սա արտս ընտ-

րեալս եւ խրատեալս օրհնօքն աստուծոյ եւ հաստատեցի կապակցութեամբ եղբարց. եթէ որ առաջնորդաց ի յնծայից եկեղեցոյս խորէ եւ զվաստակս բազմաց եւ զտուրս // (14բ) հոգոց իւրն համարի որչափ աստուած օրհնած է, այնչափ նզոված է, որ կաշառօք հայր մտէ, կրկին նզովի:

ԺԹ «Ներքոյ սորա».

Կամաւն աստուծոյ մեք՝ հառիճեցիքս՝ հայր Պետրոսս եւ այլ եղբարքս, սահմանեցաք ի տօնի Տապանակի իմ ի մատուռն պատարագել զՔրիստոս յանուն Գրիգորոյ փոխանակ արդեանց իւրոց: Որք կատարեն, օրհնեալ եղիցին, եւ որք ոչ, նզովս ժառանգեցեն ի Քրիստոսէ:

Թ[ուիւն] ՈԽԱ [1192]:

Ի «Ի ներքոյ սորա».

Ի թուին ՈԽԵ [1196] եւ յառաջնորդութեան հօր Պետրոսի, կամաւն աստուծոյ ես՝ Աստուածատոր, ետու զիմ հայրենի այգիս, որ յԱրուճի վերին թաղ զԽաջկանց այգին եւ զընծանն ետու ի սուրբ ուխտս Հառիճայս ի Սուրբ Գրիգորս եւ Սուրբ Աստուածածինս. եւ յառաջնորդք սուրբ ուխտիս խոստացան ինձ ի տարոջն Բ [2] օր ժամ. Ա [1] օրն իմ հօր Շիկին եւ Ա [1] իմ մօրն Վարդիմէ: Եթէ որ զլանայ եւ չառնեն ի տօնի սրբոյն Սարգսի, նզովեսցի յաստուծոյ. եւ որք կատարեն, օրհնին յաստուծոյ:

ԻԱ «Կից սորա».

Ի ՈԽԵ [1196] թուականիս:

Ես՝ Գրիգոր վարդապետս, որդի Տուտայ, ետու զՍուրբ Նշանս լուսոյ կրկին պահարանով երիս մասն զզբրավականս հոգոյ իմոյ ի Սուրբ Աստուածածինս Հառիճայի պարտական են ինձ զմիաբանութեան Գ [3] քառասունս եւ Չատկին Դրագալուցին Ա [1] ժամ արար որչափ ուխտս ի հաստատութեան է. եւ որ հանէ զսայ ի սուրբ ուխտս, զինչ եւ իցէ պատճառաւոր, նզովեալ է յաստուծոյ եւ ամենայն սրբոց, ամեն: Տուա ի ձեռն հօր Պետրոսի. որք բնակէք ի սուրբ տեղիս եւ կարդայք զգիրս Պետրոսի, եւ հոգոյ եւ մարմնոյ ծնողաց իւր// (15ա) ոց եւ եղբարց թողութիւն մեղաց խնդրեցէք ի Քրիստոսէ անղաչեմ:

ԻԲ «Ի հին եկեղեցին ճախակողմեան դարանին ի վերնատան ի վերայ աջակողմեան որմոյ».

Ի թ[ուիւն] ՈԾ [1201], կամաւն աստուծոյ ես՝ Ափտիկին, միաբանեցայ սուրբ ուխտիս, ետու զմարգագետինն է սուրբս, որ ի Կոշ. առքս հաստատեցին տարին Դ [4] օր ժամ. Բ [2]՝ իմ Տիրոյնուստակիս, ի Ա [1]՝ ինձ, Ա [1]՝ Գոհարին, ի տօնի Յովհաննու. եթէ չառնեն, ՅԺԸ [318] նզովես:

ԻԳ Մերձ ի յԱրդիկ գիւղն, ի կողմն արեւմտեան կառուցեալ կայ ամրաշէն գմբեթայարկ եւ վայելուչ եկեղեցի մի փոքրիկ յանուն սրբոյն Ստեփաննոսի,

յորում գրեալ կային արձանագրութիւնքս այսոքիկ: Ի կողմն արեւմտեան ի վերայ խարսխաց Կաթողիկէի արտագին որմոյ ի յահեակ կողմեան. թ[ուիւն] ՈՒՆ [1191]:

Կամսան աստուծոյ ես՝ տէր Բարսեղ, որ գնեցի զվանգս եւ ազատեցի յանօրինաց եւ ետու զցիցքն վանից եւ զջորն, որ իւր սէրի հնոց լեալ յիշատակին ձ[եզ] եւ բարեխօս առ Քրիստոս: Եթէ որ զյիշատակս մեր խափանեսցէ, նզովի յաստուծոյ եւ յայս սրբոցս:

ԻԳ «Ի վեր քան գաս ի վերայ որմոյ Կաթողիկէի».

ՈԿ [1211], կամսան աստուծոյ ես՝ Բարսեղս, ետու զիմ յայգին զմասնն իւր եւ զընծանն ի Սուրբ Ստեփաննոսիս, եւ սպասաւորք սորա պատարագ ի փառս աստուած առնեն:

ԻԵ «Ի կողմն հիւսիսային, ի վերայ արտաքին որմոյ սեղան-տոյն».

ՈԿԵ [1216], կամօք բարերարին աստուծոյ այս մեր արձան անջնջելի եւ յիշատակ մշտնջենաւոր տէր Գրիգորոյ արհի եպիսկոպոսի մայրաքաղաքիս // (15բ) Անույ, նահանգիս Շիրակա, ժառանգորդի սեփեկան մերոյ աթոռոյս, որ ետու նուէր յիմ հօրեղ-բօրն՝ յաստուածապատիւ տեսառն Բարսղի հալալ արդիւնս. մեք արացեալ սուրբ յուխտս Սլմբատ զնորին զանձագին գեղս մերձ ի յԱրդք, որ կոչի ա-նուն Հայրանց թաղի, ընծայեցի զնա Սուրբ Ստեփաննոսի հայրենիքն մինչ ի կատարածի յաւիտե-նիս յաղագս յիշատակի մերոյ եւ յարեւշատութիւն եղբօր իմոյ՝ Ղար[ի]քին եւ հոգետր տեսառն Բարսղի ստացողի սոցա եւ ծնողաց մերոց եւ եղի ուծի //489 վերայ սպասաւորաց սորա ի տարին վեց օր պա-տարագ փոխարէնս. Բ [2] իմ հօր՝ հատն Ա[պ]ու-ղամրի, Բ [2] իմ մօրս՝ Մահմլըքին անխափան կա-տար եւ մինչ ի գալուստն Քրիստոսի, եւ մի որ յիշ-խեսցէ հակառակի եւ զյիշատակս մեր խանել: Իսկ եթէ որ յանդգնի եւ զայս գեղս յայս վանիցս հանել կամենայ, հանցէ զնա աստուած ի կենացն ան-վախճանից հոգով եւ մարմնով: Իսկ որք հաստա-տուն պահեն զգրեալս մեր, օրհնութիւնն աստուծոյ եղիցի ի հոգի եւ ի մարմին սոցա, ամէն: Ջերջանիկ հայր զԱռաքեալն եւ զՏանատուր է զարդիւնարար տանս գտորք. էն յիշեցէք ի Քրիստոս Չիրգէսանս, ամէն:

ԻԶ «Մերձ ի սայ, երեսն դէպ յարեւելս».

Կամսան աստուծոյ ես՝ տէր Գրիգոր, որդի Ապու-ղամրի Անոյ եպիսկոպոսի, տվի //490 ղոք եւ գտորե-նոյ (°) զերիցութիւնն պատախս (°) հայրենեացն եւ նոցա տարին Ա [1] օր պատարագ ինձ. հաստա-

489 [Թերթի եզրին վերանորոգման ժամանակ թուրք է փակցվել, որի պատճառով ամեն տողում 3-4 տառ դարձել է անվերձա-նելի]:

490 [Երկու տառ ջնջված է]:

տուն պահողքն օրհնին յաստուծոյ եւ ի մէնջ: Եթէ որ հանել ջանայ կամ ի նախանձու //491 բանու-թեամբ Կայեն//ին եւ զՅուդայի առցէ, ՅԺԸ [318]-իցն նզովեալ եղիցի եւ մեր մեղացն պարտական լիցի:

ԻԷ «Ի վերայ արտաքին արեւելեան ահեակ կողման որմոյ սուրբ եկեղեցոյն».

Շնորհիւն աստուծոյ ես՝ Միմէոն Ծուպուլիս որ-դիս, որ ետու զիմ յայգին, որ մամա եւ յԱւետեացն է. զիմ բաժինն Լմպատայ Սուրբ Ստեփաննոսի եւ բարեխօսին առ Քրիստոս:

Արդ, եթէ որ հակառակ կայ այս բանիս, Քրիս-տոս աստուած նզովեալ իւր մահն եւ զիւր կեանքն. եթէ որ հակառակաբար ջնջել ջանայ գաս, ջնջեսցի եւ ինքն յաւիտենից կենացն:

Հիւթ. ՄՄ 6517, էջ 12ա-16ա:

ՄՇՈՅ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Ի թվին հայոց ՌՄԽԳ (1795)-ին,
Ի հայրապետութեանն տեսառն Ղուկաս կաթողի-կոսին,

Ամենայն հայոց Սրբոյ Էջմիածնի,
Եւ ի տիրապետութեանն երկրին
Քաչ Մուշեղայ՝ Սուրատ փաշա[յ]ին,
Եւ ի առաջնորդութեամբ սրբոյ մենաստանիս,
Որ եւ Ղազարու վանք վերածայնի,
Տեսառն տէր Յովհաննէս Յավրանեան քաչ հռե-տորի,

Եւ ի միաբանութեանն մերոյս ժամանակի
Վանցի Խաչատուր վարդապետի,
Որ անուշաձայն երգօվն էր լի,
Եւ Կիրակոս տէր շուշտակի,
Ի բնիկ գեղջէ՛ Ներքի Վանցի,
Եւ տէր Ղազար վարդապետի,
Որ էր երկրան Մոկացի,
Եւ տէր Գրիգոր Բուզանդացին՝
Տկար գոյով նա ի ընդ գրչին,
Հուսկ ամենից փծուն գրչիս,
Տէր Յարութիւն Մոնոզոնիս,
Որ եմ երկրան Տարոնոյ,
Ի բնիկ գեղջենն յԱրաշոյ,
Ի դառն եւ ի նեղ ժամանակին,
Որ եմք գերի այլոց ձեռին:
Եղեւ անկումն պարսպին
Այս շնորհալի սրբոյ ոխդին,
Յարեւելից կուսէ նորին,
Մինչ ի հարաւ փոքու մտին:
Իսկ տեսողացն հիացեալ,
Յոյով տեղոյն որ էր փլեալ,
Եւ սուրբ ուղղիս զինչս ոչ ունէր,
Որ վերստին ըզնա կերտէր,
Բայց մեզ թողեալ զպետս մարմնոյ,
Եւ հոգալով զայս գործ հոգւոյ,

491 [Տե՛ս առաջին ծանոթագրութիւնը]:

Իսկ ապենհագ տերն բարի,
 Ետ մեր պետին սիրտ խիստ արի,
 Ի ձեռն առեալ զանկեալ տեղին,
 Որ էր պարիսպն այն առաջին,
 Յանկ եւ կատար եհան նմին,
 Եւ վա[յ]ելուջ քան զառաջինն,
 Ոչ թէ միայն զանկեալ տեղին,
 Այլեւ բազում շինված կրկին,
 Երեզ տասան խուց վերստին,
 Ձեռակերտեալ ձեռամբ նորու,
 Եւ գեղեցիկ բուռջ մի նորոյ,
 Ոչ որ տեսեալ անոր գոլոյ,
 Գ [3] թալու նոր ի նորոյ,
 Ներգոյ խծիցն սահմանելոյ,
 Անբան շնջոց տեղի գոլոյ,
 Չորքոտանեացն բնակելոյ,
 Յետ մեր անցմանն այսմ կենի,
 Չի յիշատակ լիցի բարի,
 Որք հանդիպիք այսմ սրբեսցի,
 Յիշման առնէք զմեզ աղօթի:
 Հիմբ. ՄՄ 2748, էջ 9բ:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆ

«Պատճեն ոտանատրի՝ քանդակելոյ յարծաթափայլ մարմնեայ արձան դպրատանն կառուցելոյ ի Նոր-Նախիջեւանի, արդեամբ գերապայծառ իշխան աղայ Յօհանջանի Ջուղայեցոյ, որ այժմ ի Հնդկիս, ի Սուրաբ է բնակեալ»:

Յօրինուած պայծառ՝ յարկիս նորասբանչ,
 Արամեանց ծագեալ՝ ջինջ արփոյ ճաճանչ,
 Ուշիմ Յօհանջան իշխան քաջալանչ,
 Բամին Գէրաբեան՝ պարծանք իսկաքանչ:
 Վեհափառ դպրոց՝ գիտնոց ի կաճառ,
 Հաւատոյ ամբոց շնորհաց վաճառ,
 Սուլեալ Հայկազանց՝ հրաւիրման ճառ,
 Դասուց որք մանկանց՝ դայեակ անաչառ:
 Եկ յայս իսրախոյս՝ Աքանազեան փունջ,
 Երջանկիս բաշխոյս՝ ձօճեալ համաշունչ,
 Փողեա ի հռչակ՝ հրճուանօք աննինջ,
 Տենչալի վիճակ երախտեացս անջինջ:
 Հիմբ. ՄՄ, ձեռ. 5373, էջ 91բ:

ՍԵՔԱՍՏԻԱ

Ա «Սուրբ Նշանի վանից ի վերայ գմբեթի գիրն է»:
 Փառաց տաճար աստուածային,
 Երկրորդ⁴⁹² դրախտ կենաց փայտին,
 Որ է պատկեր երկնից վերին,
 Եւ եռանձեանքն կայանին:
 Ի ծննդենէ մարմնով⁴⁹³ Փրկչին,
 Երեք հարիւր եւ հազարին,
 Յութ եւ յիսուն սկսեալ ամին (1609),
 Կանգնեալ յանուն Սուրբ Նշանին,
 Սատարութեամբ իւր ծառային,
 Յովհաննիսի կրօնատրին,

Եւ հարազատ եղբարց նորին,
 Եւ ըստ հոգւոյ որդւոյ բնախն⁴⁹⁴:
 Հիմբ. ՄՄ, ձեռ. 1720, էջ 428բ: 2160, էջ 2ա:

Բ «Տապանագիր Կարապետ արքեպիսկոպոսի, որ հանգեալ ի տէր ի 1842»:

Չիա՞րդ շուտ փոխի կենցաղոյս շրջան,
 Չկեանս եւ զփառս ծածկեալ ի մրթան, //
 Հոյք առաքինեաց աստի ոչ գերծան,
 Թողին մատնացոյց զհրեանց դամբարան:
 Զաղաք Սեբաստեան պանծայ առ յապայն,
 Գտեալ հայրենիք վեհիս ծննդեան,
 Կարապետ ըսբուն ընտիր խոհական,
 Վարուք եւ բարուք համեղ քաղցրաբան:
 Ի մանուկ տիոց ուխտիս Սուրբ Նշան,
 Բազմարդիւն եւ ժիր, պարկեշտ միաբան,
 Յօհաննէս արիւոյն միշտ անգուգական,
 Փոխանորդ խոհեմ եղբայր միական:
 Հետ նմին եկաց յամս երկրտասան,
 Արի առաջնորդ ուխտիս սրբութեան,
 Կոչեցաւ տէրամբ ի կարգ սրբազան,
 Հովեաց բարեպէս զվիճակս համայն:
 Աւաղ հանդիպմանս մինչ էաք ըստ մանկան,
 Ի սուրբ ի գգուանս հօր մեր անման,
 Բազմարդիւն կենացն ընկալաւ զվախճան,
 Յեօթանասուննհինգ ամաց աւուրցն լըրման:
 Հոգւով վերացաւ յերկնային խորան,
 Մարմնով ի գաւիթս ետու յայս տապան:
 Հիմբ. ՄՄ, ձեռ. 10185, էջ 256ա:

ՎԵՆԵՏԻԿ

«Պատճեն ոտանատրի՝ քանդակելոյ ի կափարիչն դամբարանի Մխիթարայ»⁴⁹⁵:

Զնար քերոք⁴⁹⁶ հոգետաւիդ,
 Ներ կուռ մատին աստուածաճիդ,
 Ազդեալ Սեփաստ մարզէն խաւիդ,
 Բակերտ արքայ լուսաշաւիդ,
 Զատակ մարմնոյ կայտառ յուղիդ,
 Անճառ անհաս խորոց բաւիդ,
 Դամպարք⁴⁹⁷ շնորհաց գեր շառաւիդ,
 Յայթիչ⁴⁹⁸ լուսոյ շըլաց շաւիդ,
 Բախճան գիտնոց՝ իմաստ աննինջ,
 Ազդու ուսաւ ինքնին անջինջ⁴⁹⁹,
 Խմբից ուսոյց բիւրոց առ ինչ,
 Օճան հոգւոց մտաց շոինչ:
 Սոփերս գրեաց յուխտէ ոչինչ,
 Աքանազեան տոհմիս սատրինչ,
 Սայթաք չարին գոռոց կրոինչ,
 Տարաւ անբաւ իրբեւ գերինչ,

494 [1720-ում գրիչը շարունակում է. «Եւ զի զմեղաւոր Յօհաննէս երեցս գրիչս յիշեցէք»]:

495 [10185-ում՝ «Տապան Մխիթարայ Բարբուսապետի. 1749 ապրիլ 27»]:

496 [9903-ում եւ 10185-ում՝ «քերուք»]:

497 [9903-ում՝ դամբարք]:

498 [9903-ում՝ ցայտիչ]:

499 [10185-ում՝ «աննինջ»]:

492 [1720-ում՝ յերկրի]:

493 [1720-ում՝ Մարիամայ]:

Որով հաստեաց կարգ հոնաշունչ
 Յիսեսալ տէրամբ իբր ոսկեփունջ,
 Ակամբ կատոյց դարաց մըրմունջ, //
 Ծաղիկ վարուց⁵⁰⁰ քարոզ անշունչ,
 Արփուն⁵⁰¹ մարզէ մըրտիցն ի քունջ⁵⁰²,
 Յըղկեալ դարաստ տընկեաց ի յունջ,
 Իւրայօրէն նախ վանըս ջունջ,
 Նիւթեաց նարօտ կարգիս ի փունջ⁵⁰³ :
 Հազագ հովուիս ախտից ցրրօն,
 Ոխորտ հնչէր մեզ կից կըրրօն,
 Գոհար մըրտաց խոնարի սիզնօն,
 Էիծեալ ոգոց գեր լիբանօն,
 Ողոր յախտին գաղթեր պաշտօն,
 Յասպիսն հայոց արժանըն ի տօն,
 Նուագ ոսկի ընծայ ի ձօն:

Հիմք. ՄՄ, ձեռ. 8216, էջ 262բ-263ա: 9245, էջ 47բ-48ա: ՄՄ, 9903, էջ 2ա-բ: ՄՄ, 10185, էջ ք-216ա:

ՏՐԻԵ՞Ս

[Տապանագիր Յարութիւն Բասենցու].
 Տէրունեան կոչմանն եղեալ զուգակիր,
 Յարութիւն անուն մեծ խորհրդակիր,
 Ծնունդ Բասենոյ, ռաբուն անպատիր,
 Սուրբ Էջմիածնի այցելու ընտիր:
 Մեծ անուն արդեամբք բանիւք շնորհակիր,
 Յիմաստս տառից խուօզող անձանձիր,
 Մերժեալ զազգայնոց զշուք յոգնադիր,
 Դիմէ մենակեաց յԵւրոպեան խնդիր:
 Այլ յառաջեցին փառք վայելչադիր,
 Ինքնակալք կրկին նմին պատուադիր,
 Սարիամ Թերեզա ոշխոյն գահընտիր,
 Եւ երկրորդն Յովսէփ՝ որդին բարձրնտիր:
 Երկեակ ութ ամօք ի Թրեստ յարկակիր,
 Ազգին եւ տեղոյս վեհ արձանագիր,
 Չոր եւ մահ առիթ քուն աստուածադիր,
 Հարիւր ամենի ամփոփեաց ի դիր:
 Այս քեզ հրաշագան վայր ներհակակիր,
 Մահ եւ Յարութիւն ի մի լծակիր:
 Յամի տեառն 1796, ի մարտի 14:

Հիմք. ՄՄ, ձեռ. 9245, էջ 46բ: Կաթողիկոսական դիվան, քոթ. 6, վավ. 47գ:

ԽԱԹՐԱՎԱՆՔ

Այս է հանգիստ եւ շիրիմ վեհիմաստ եւ արդիւնական վարդապետացն Գրիգորի եւ տէր Եղիայի՝ առաջնորդ սուրբ ուխտիս. ով մտանէք ընդ խորանս, յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ զձեզ, նաեւ զԳրիգոր եպիսկոպոսն յիշեցէք ի տէր⁵⁰⁴ :

Հիմք. ՄՄ 7821, էջ 7ա:

500 [10185-ում՝ «վարաց»]:
 501 [9903-ում եւ 10185-ում՝ «արփոյն»]:
 502 [9903-ում՝ փունջ]:
 503 [Այս տողն ունի միայն 9903-ը]:
 504 Հեղինակի աշխատանքում սույն արձանագրութիւնը տեղադրված էր «Լայրն անհայտ» ենթավերնագրի ներքո, սակայն այն, մեզ ծանոթ լինելով, դուրս բերեցինք մշակ խմբից և ներկայացրինք բուն հնավայրի անվան ներքո (խմբ.):

ՎԱՅՐՆ ԱՆՅԱՅՏ

Ա
 Այս է տապան դիր հանգրստի,
 Եւ իւր անունն էր Էսայի,
 Որ էր տեղեալ Ըստամպօյցի,
 Եւ տիրացու հեզահոզի,
 Էր աշակերտ տեառն Եփրեմի,
 Էտրնէի առաջնորդի,
 Մանուկ տիօք հող մըրտանի,
 Որ փոխեցաւ յոյսն ամենի,
 Հազար հարիւր թուականի,
 Եռտուն եւ ութ աւելորդի (1689),
 Իսկ ի յամսեանն հոկտեմբերի,
 Էին ատուրքք վեշտասանի,
 Որք պատահիք յայսմ շիրմի,
 Ատողք լիջիք Հայր մեղայ մի:
 Հիմք. ՄՄ, ձեռ. 1495, էջ 183բ:

Բ
 Այս է տապան սրբազանի,
 Աստուածաբան վարդապետի,
 Տեառն Յովհաննու գիտնականի,
 Հեզահոզոյ մեր ուսուցչի,
 Որ փոխեցաւ ի թվոյն Հայկի
 Հազար հարիւր քսան եւ եօթնի (1678):
 Հիմք. ՄՄ, ձեռ. 745, էջ 193բ:

Գ
 Երկեակ քառեակ թիւ հարիւրի,
 Հընգից յիսնից տասն ըզկընի,
 Այլ եւ չորս ամ յարաբարդի (1615),
 Դըժնեա եւ դառն յեղանակի⁵⁰⁵,
 Ի պարփակեալ ժամանակի,
 Եւ ի լըրման ի սոյն օրի,
 Ի մուտ տրէի հայոց ամսի,
 Յեօթն եւ ի տասն ի յունվարի,
 Մեծ վարդապետն հայկազնի
 Բասիլիոս Ադրակեցի,
 Հանգեալ մարմնով ի տապանի,
 Ի դուռն սուրբ Յովաննիսի,
 Ով պատահողք այսրմ տառի,
 Եւ փափագողք նորին շիրմի,
 Ի յարարչէն ամենայնի,
 Պարգետողէն մեզ զբարի,
 Խընդրեմ ի ձեռնք ես եղկելի,
 Մաղթել եւ ձեզ ընդ իմ բանի,
 Նորին հայցմամբ անդառնալի,
 Ձխաղաղութիւն տալ ի յերկրի:
 Հիմք. ՄՄ, ձեռ. 737, էջ 181ա: ՄՄ, 2077, էջ 2բ:

Դ «Լազարեան խոջա Աղազարի խաչվեմ».
 Այս է տապան Մանուկի որդի խօջայ Աղազարին: Թիւն Ռ-ՃԾ (1701), համիրայ (ամսոյ) 23:
 Հիմք. ՄՄ, ձեռ. 4515, էջ 591:

505 [2077-ում՝ ժամանակի]:

Ե «Օրինակ տապանագրի».
 Փոխումն սուրբ հայրապետիս,
 Կաթողիկոս տէր Ներսէսիս (Ռ-Ղ),
 Իսկ նորոգումն գերեզմանիս (ՌՄՂ)
 Արդեամբ ազնիւ Յարութիւնի,
 Խրոխըրիկեան մրգածախի,
 Օրինակ յիշատակարանի սուրբ տաճարիս,
 Շնորհիւ եռանձնեայ էն միասնականի,
 Նորոգեցաւ տաճարս Սրբոյն Սարգսի,
 Որ ընդ ժամանակաւ քաջ մերոյ դիտի,
 Կարապետ սրբազան եպիսկոպոսի,
 Շրջապատ պարսպօր հիմամբ հաստատի,
 Յոգնաջան եռանդեամբք իշխանաց մեծի,

Իսկ արդեամբ բազմաշխատ Սեբաստիան մօ-
 տի,
 Հազար երեք հարիւր իննսուն թուի:
 Հիմք. ՄՄ, ձեռ. 10185, էջ 215ա:

Օգտագործված ձեռագրեր
 737, 745, 1495, 1720, 2160, 2748, 4515, 5373,
 6273, 6332, 7820, 7821, 8216, 9027, 9245, 9903,
 10185:

Օգտագործված գրականություն
Գագիկ Հառիճեցի, Հառիճ, Երեւան, 2002:

ՀԱՅՐԵՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Հայկ Աճեմեան

Ճամբորդական յուշեր, տպաւորութիւններ, ուսումնասիրութիւններ, արձանագրութիւններ, ուօթեր, և այլն, և այլն Արևմտեան Ատրպատական նահանգի Ուրմի (Բրզայէ), Սալմաստ (Շահփուր), Խոյ և Մակու գավառներում և Թավրիզ քաղաքում 6 յուլիս 1958-13 նոյեմբեր 1959 (130 օր)¹:

ԽՈՍՐՈՎԱ ԳԻՒՂ

13 օգոստոս 1959 թ.

Ս. Սարգիս հայոց եկեղեցու տեղը հաւանաբար 300 տարուայ կը լինի: Հայտնի չէ, թէ քանիեորդ նորոգութիւն է՝ 1832 Մ. 2-ի արձանագրութեան համաձայն.

Շնորհի տեսան մերոյ Յի. Քի. եւ արդեամբ պարոն Սկրտիչ Մօվիեանի համատանոյ. շինեցաւ Սր. Սարքիս եկեղեցիս հայոց, ի թվին 1832. Մ. 2:

Սրա աջակողմը.

Սոյն եկեղեցին վերանորոգեց պ. Միքայէլ Սահակեանը՝ ի յիշատակ իր ծնողների պ. Գաբրիէլ Սահակեանի հսկողութեամբ, 19 մայիսի 1955 թ., Խոսրովա:

Եկեղեցոյ դռան ճակատի քարի արձանագրութիւնը.

Յիշատակ է զանգս եւ զանգատուն Դալիսար Յունանեան, 1900 յնսի 22:

Եկեղեցոյ հարաւակողմի պատի տակ կան գերեզմանաքարեր.

Այս է տապան Շիրին Օհանէսեան, 1887 ամի օկոստոս 28 :

Ի դամբան միի Սարքիս Մուսէսեան, ծնեալ 1837 թ.-1897:

Այս է տապան Աբրահամ Սահակեան Դիլանջեանց, ծն. 1892. էսպանվեց հայերի ծէքով 1917 ապրիլի 7:

Այս է տապան տիրացու Առաքելին Օհանեան, 1870 յունիսի ԻԲ:

Այս է տապան Յովսէփ Իսախանեանց, նհատակվեցաւ 1917 սեկտեմբեր 4:

Այս է տապան միսի Իսախան Մարտիրոսով, 1851 մարտի 20:

Եկեղեցոյ արևմտեան կողմի պատի աջակողմը կան չորս տապանաքարեր, որոնց տակ հանգչող քահանանաներից միայն տէր Աստուածատուրի քարի վրայ փորագրուած է.

Այս է տապան տէր Ասրատուր Պետրոսեան, 1893 յուլիս 1-ին:

ՀԱՖԹՎԱՆ ԳԻՒՂ

16-17 օգոստոս 1959 թ.

Ս. Գեորգ եկեղեցոյ արևմտակողմի պատի դռան վերևի և աջ ու ձախ կողմերի արձանագրութիւնները.

Շնորհօք բարերարին եւ արդեամբ եւ ողորմուր Սբ հոգն շինեց. եկեղեցիս Սբ Գեորգայ հոյ փրկուե Պարսամա եպկսին եւ պարոն Մէլիք Ալէքսանին եւ Փիլոսին եւ առհասարակ քից եւ ամ ժողովրդն արանց եւ կանց, ծերց եւ տղոց, ի հայրպետի են Փիլպի եւ մերյ արհեպեն Յովնէս վրդպտ եւ Եսայի Ա վրդպտ ի թգրուե փոքր Շահպասին, թվ. ՌճԱ (1652):

Խաչս կանգնեցո հոգոյ փրկութեն Մէլիք Ալէքսանին արեամբն ներկեալ քրիստոնէին անմեղ սպաննօ ձեռամբ Սաֆի Դուլի խանին, ՌճԹ թվին (1660):

Փոքր մարմար քարի վրայ՝ դռան ճակատին.

Վերստին նորոգեցաւ

Դուռն Սբ Գեորգա

Չեռամբ Ֆռանկին,

Միսի կապտին ...

(Թուական ջնջուած)

Ս. Գեորգ եկեղեցոյ հիւսիսակողմի պատի տակ կան 30-ի մօտ տապանաքարեր, որոնցից մի քանիսի արձանագրութիւններն են.

Տապանիս ննջէ Դաիթ Խանամիրեան, վանեցի,

¹ Վաստակաշատ հայրենագետ վանեցի Հայկ Աճեմեանը (1898-1965 թթ.) սույն աշխատութիւնը հեղինակել է 1958-1959 թթ. Իրանի հայաստանյան մի քանի գավառներում (Խոյ, Սալմաստ) և Ատրպատականում կատարած շրջագայութեան ընթացքում: Նրա մահից հետո ձեռագիրը փոխանցվել է ճարտարապետ Արմեն Հախնազարյանին (վախճ. 2009 թ.): 2000-ական թթ. կեսերին մի կարճ ժամանակ գտնվում էր մեր տրամադրության տակ: Ծանոթանալով ձեռագրում առկա նյութերի հայրենագիտական մեծ արժեքին՝ այն ամբողջությամբ մուտքագրվեց մի օր հրատարակելու հույսով: Ի նշան երախտագիտական այն խորին զգացման, որ տաժում ենք հեղինակի՝ հայրենաբարձ մտավորական Հայկ Աճեմեանի հիշատակի և վաստակի առջև, «Վարձք»-ի ներկա համարով իրականացնում ենք գրեթէ մեկ տասնամյակ փայփայած մեր նպատակը (խմբ. կողմից):

իսկ ան. *Օհանէս Զանքանեան, ամի 1897 20 ապրիլ:*

Սրա կողքին թաղուած է Լորթօ՝ Յարութին Համբարձումին Վանեցին, վախճ. 1927 մարտ 27-ին:

Այս է տապան Իսրայէլ սրբազան արքեպիսկոպոսին՝ | առաջնորդ Սր. Առաքելոյ վանից Բարթուղիմէոսին, | օծեալ ձեռամբ Եփրեմ կթղկոսին, | ծնունդն Կոստանտինուպոլսեցին, | կատարում| Սր. Գեվորգայ եկեղեցին, | թվին Ռ-ՄՁԴ (1835)-ին:

Ըստ երևոյթին, սրան սպանել են Հաֆթվանի եկեղեցու բախում:

Այս է տպան Մեսրոպ վարդապետ Փափագեանի, որ նահատկեցաւ 17 ապրիլ 1891 ամի:

17 օգոստոս 1959 թ.

Հաֆթվանի հայոց գերեզմանատան տապանաքարերի արձանագրութիւնները.

Այս է տապան Մէլիք Վարդանին, որդի էր Մէլիք Յակոբին և էր հայր Մէլիք Օրդու խանին, երիտասարդ յասակաւ վճարեաց ի կանս իւր և փոխեցաւ առ Քս, թվին Ռ-ՃՁ (1631):

Այս է տապան Մէլիք Յկոբի որդի Մէլիք Մղփանոսին:

Այս է տապան Շապարուն Մէլիքեանին, որդի էր Մէլիք Վարդանին և էր թոռ միի Ահարոնին Մուսէսին և իւր կողակից Նուպարին երիտասարդ հասակի, թիվն Ռ-ՄԱ (1752):

Այս է տապան պարոն Էվազին՝ որդի Մէլիք Ալէքսանին և եղբայր Մէլիք Յակոբին, որ երիտասարդ հասակաւ վճարեաց գկեանս իւր և փոխեցաւ առ Քս, թվին Ռ-ՃԼ (1681)

Այս է տապան Ահարոնի Պողոսեան, 1876:

Այս է տապանն Ալվերդի որդի Օյանէսին եւ իրան կողակից Ռումին, Ռ-ՄԿԳին (1814):

Այս է տապան Ահարնի որդի մհտի Սարգսին, որ փոխեցաւ առ Քս, հայոց թվին Ռ-Ճ (1651):

Անորէն Սարգիս չիք տէր Օհանեան, մատնեաց անմեղիս պարսրկաց մատեան, եղին ի բանտի թոռով ութամտեան, զուր ենթարկեցին ծածուկ սպանման, միի Թովմասենց Գեորգիս Սահակեան, 2. 1. 1887:

ՔԷՕՆՆԱՇԱՀԱՐ

18 օգոստոս 1959 թ.

Կառքով ճանապարհուեցի Շահվուրդից դէպի Քէօհնաշահար, որ մօտ 12 քիլոմէթր հեռու է և Մալմաստի լեռնային գիւղերից մէկն է: Նախքան վերջին պատերազմը գիւղում ապրում էին 25 տուն հայեր, որոնք 1946-ին հեռացան: Մէկ մասը գնաց Թաւրիզ և Թեհրան, մէկ մասն էլ ներգաղթեց Հայաստան: Այժմ այս գիւղում ո՛չ մի տուն հայ չկայ: Մի-

այն այստեղ կարմիր պանիր պատրաստող յայտնի վարպետ և մասնագէտ Ներսէս Բարայեանն է ապրում և կառավարում է պանրագործարանը:

Գիւղի սառնորակ աղբիւրի ջուրը խմելուց յետոյ կառքը քշել են տալիս դէպի հայոց եկեղեցին, որ հիմնայատակ քանդել և քարերը տարել են, իսկ եկեղեցոյ բակն ու շրջապատի այգին էլ ուղղել և բանջարանոցի են վերածել: Շրջում են այս ամառուքեան մէջ և կոտրած սրտով նստում են կառքը՝ շարունակելով ճանապարհը դէպի հայոց հիմաուրց գերեզմանատունը և Ս. Յովհաննէս մատուռը, որ դարձեալ քանդել և քարերը տարել են:

Ս. Յովհաննէս մատուռի բլուրը բարձրանում են շուտ դժուարութեամբ, հեալով և շնչապառ: Ծխելու արդիւնքն է այս: Մնում է մօտ 900 տարուայ սև գերեզմանաքարը: Ապա իջնում են բլուրի ստորոտը և շրջում հայոց գերեզմանատանը, որ աւելի քան հազար տարուան հնութիւն ունի: Նոր և սրբատաշ գերեզմանաքարերը բոլորն էլ տարել են: Թողել են միայն անխաչ և անարձանագիր քարերը, որոնց հնութիւնը հասնում է 700-1000 տարուայ: Այս հին գերեզմանաքարերը 325 հատ աչքից անցկացրի: Քարերի վրայ անունները մաշուած են, մեծ մասամբ դժուարութեամբ արտագրեցի միայն թուականները:

Երեք-չորս հարիւր տարիների գերեզմանաքարերի վրայ ընդհանրապէս արձանագրուած է. «Խաչս քարեխօս է առ աստուած վասն հոգոյն» այսինչ է, կամ «Խաչս յիշատակ է» այսինչին, «Տէր աստուած Յիսուս Քրիստոս, յիշեա զհոգիս ծառայի քո» (անուն), «Տր ամ Յս Քս, յշեա զհոգիս ծռչի քո» (մեծ մասը համառօտուած են և ունեն պատիւ նշանը):

Այս կոպիտ, անտաշ և մեծ քարերը դիտմամբ էին դնում գերեզմանների վրայ, որպէսզի չգողանային, չվերցնէին, գերեզմանը չաղծէին և այլն: Մեծն Շահ Աբասի թագաւորութիւնից յետոյ է, որ սկսում են խաչազարդ և քանդակազարդ տապանաքարեր դրուել գերեզմանների վրայ, և արձանագրութիւններ են երևում: Նման գերեզմանաքարերով շատ հարուստ էր մանաւանդ Մալմաստի Մաւրա գիւղի հայոց գերեզմանատունը, որի քարերը 1930 թուից յետոյ տարան և զօրանոցներ շինեցին:

Քէօհնաշահար գիւղի հայոց գերեզմանատան տապանաքարերից հաւաքել և արտագրել են հետևալ հնագոյն թուականներն ու համեմատաբար նոր արձանագրութիւնները:

Թուականները միշտ գրուած են այսպէս՝ թվն., թվին:

Հինգ ժամ տևեց իմ աշխատանքն այս գիւղի հայոց գերեզմանատնում: Արևի տակ, մենակ և տաժանելի ջանքերով արտագրեցի թուականներն ու արձանագրութիւնները, այսպէս.

Թվ. ՇԼ (1081):

Թվ. ՉԺԱ (1162):

Թվ. ՇԽԲ (1093):

Խչս քարխս է առ ամ | Մէլք Մուրտի որդի Մէլք / Բաղալին, թվ. ՈԼԳ (1184):

Տր ամ Յս Զս, յշեա զհզիս / տր Խչտր նհտկ վրդպտին, թիվն ՉԼԲ (1283):

Տր ամ Յս Զս, յշեա զհզիս / տր Յովհնէս վրդպտին, որ / նհտկցաւ ձեռնք ազգին / նետողաց, թվ. ՉԼԲ (1283):

Խչս բարխս է տիրցու / Մարտրսին, թվ. ՉԽԱ (1292):

Թվ. ՊԾԳ (1404):

Թվ. ՋԻԳ (1474):

Թվ. ՋԾԹ (1505):

Թվ. ՋՀԹ (1530):

Թվ. Ռ (1551):

Թվ. Ռ-ԼԸ (1589):

Թվ. Ռ-Ծ (1601):

Թվ. Ռ-Հ (1621):

Թվ. Ռ-Ղ (1641):

Յշտկ է սր խչս անորդի / Խաւճա Մարտիրոսին, թվ. Ռ-Ղ (1641):

Թվ. Ռ-Ճ (1651):

Խչս բրխս է առ ամ / Մելիք Թաթնոսին, որ չարչր մահնք նհտկ եղն ձեռնք Սաֆի Ղուլի խանին, թվ. Ռ-ՃԱ (1652):

Խչս բարխս է առ Զս Մելք Գուրղանի որդի Մելք Սաֆարին, որ կեն զրու եղն ձեռնք Սաֆի Ղուլի խանին, թվ. Ռ-ՃԹ (1660):

Խչս բրխս է առ Զս / վսն խճա Վարդնին, որ կեն զրու եղն ձեռնք / անրինց, թվ. Ռ-ՃԺԱ (1662):

Թվ. Ռ-Մ (1751):

Թվ. Ռ-ՄԺ (1761):

Յշտկ է սր խչս Մելիք Նզրին, / որ է որդի տեր Չարքին, / յար մեծի ուրբթին / աւանդեց զհոգն, / թվ. Ռ-ՄԺ (1761):

Խչս բրխս է առ ամ / Ղոնդաղսազ Գուլամբին, / որ գլխտցաւ ձեռնք քրդաց, / թվ. Ռ-ՄԾԳ (1804):

Խչս բրխս է առ ամ վսն հզոյն Ռսկանի որդի Մուրատին, որ փոխեցաւ առ ամ, թվ. (1818):

Կեանք կենացս է ծաղկի նման, եկայք և տեսէք զայս մահարձան, ես՝ Մարտիրոս որդի միի Օհանէսեան, ճարտար և խոհեմ արհեստիւ ամենայն, մահն անողորմ խլած զթելն իմ նոյն ժաման, ան երեկ օրեր պատրաստ կան յաւիտեան, ծնեալ 1838, ննջեաց 1863:

Հանգստանալու համար գնացի Ներսէս Բաբայեանի մօտ, որ հաճոյքով էր պատմում, թէ ինչպէս 1931-ի յունուարին Թարսիզում՝ իր խանութում ասում էր սալմաստեցի աշուղ Ղուլ Յարութիւնի երգերը, և ես գրի էի առնում՝ հայ աշուղների մասին դասախօսելու համար: Ծերացել է այս պատուական հայր, որ սրտաբաց կերպով հիւրասիրեց ինձ թարմ հաց ու մածուղով և կարմիր պանիրով: Ափսոսանքով յիշեցիմք երիտասարդ տարիները:

2 Խաչատուր և Յովհաննէս վարդապետները նահատակել են միասին 1283-ին (ծնթ. հեղինակի):

—Բարեկա՛ն,— ասաց նա,— առողջութիւնս վատ է մի օր կանգնած կամ նստած տեղս գնալու եմ էն աշխարհը:

Ժամը 2-ին ճանապարհուեցի դէպի Սաւրա գիւղը և իջայ իմ երբեմնի աշակերտ դարադաղցի Յակոբի ծիրանի չիրի գործարանը:

ՍԱԻՐԱ ԳԻՒՂ

19 օգոստոս 1959 թ.

Ահագին տարածութեամբ պտղատու ծառերով այգիներ, խիտ ծառնոցներ, մարգագետիններ, խտնոցներ, վարելահողեր, բոստաններ, առատաջուր առուներ հայէն Սաւրա գիւղը զարդարում են:

Ամբողջովին հայապատկան այս գիւղում այժմ չկայ և ոչ մի տուն հայ: Հայոց թաղերն ու տները աներակ և հողակույտերի վերածուած են: Հայոց եկեղեցին կործանուած է, մնում են երկու կիսակործան խորաններ: Եկեղեցոյ բակումն է գտնուում Բաֆֆիի «Խաչագողի հիշատակարան» գրքի հերոս Մուրադի գերեզմանաքարը, որ նկարել և նմանահանութիւնն էլ կատարել են 1930-ի յունիսին:

Այս գերեզմանաքարը այժմ ծածկուած է մանր քարերով, որպէս զի չը նկատեն ու չը տանեն: Եկեղեցու դռան աջակողմումն է տէր Յարութիւն քահանայի գերեզմանը (տես տապանագիրը):

Չուտ հայաբնակ շէն ու հարուստ Սաւրա գիւղում այժմ ոչ մի տուն հայ չկայ: Այնտեղ ապրում է դարադաղցի Յակոբը և զբաղում է ծիրանի չիր պատրաստելու գործով 25 տարիներից ի վեր:

Սաւրա գիւղի հայերը, մանաւանդ վերջին պատերազմից և ռուսների գալուց յետոյ իրենց հողերն ու այգիները շատ չնչին արժէքներով ծախեցին թուրքերին: Հայոց գերեզմանատան հսկայական մեծութեամբ հազարատոը քանդակազարդ քարեր 1934-35 թուերին զինուորական իշխանութիւնը տարաւ, և Շահփուրում զօրանոցներ սարքեցին:

Սաւրա գիւղի հայոց աներակ և ամալի թաղերում և գերեզմանատանը մնացի 5 ժամ, արևի տակ և մխացող սրտով արտագրեցի այս տապանագրերը և հանեցի երկու գերեզմանաքարերի նկարը՝ իսկական մեծութեամբ:

Այս է տարան տէր Յարութիւնին, որ առ ամ փոխեցաւ 1862:

Տր ամ Յս Զս, / ողորմի կանաչ Խաթունին:

Թվ. Ռ-ԻԲ (1573):

Խչս յշտկ է Թարղանին, թվ. Ռ-ՃԻԸ (1679):

Խչս բրխս է առ ամ ի փրկութեն հզն Առասմեն, որ է որդի Յովանսին, թվ. Ռ-ՃԻԱ (1672):

Յշտկ է խչս Առաքի որդի Մելիք Աղամիրին, թվ. Ռ-ՃԲ (1603):

Խչս յշտկ է Գուլոյի որդի Միրզային, թվ. Ռ-ՃԶ (1607):

Տր ամ Յս Զս, ողորմեա Սարոխանի որդի Ամիրխանին, թվ. Ռ-ՄԼԱ (1782):

Թվ. ՊԽԹ (1400):
Բազմք նհտկ եղին ձեռնք ազգին նիտող:

Սարա գիւղում՝ առուի վրայ, իբր կամուրջ
ձգուած տապանաքար.

Խչս յշտկ է Մովսէսին, թվ. ՌՄՁ (1757):
Յիշատակ է սր. խչս մահտեսի Օրտուին, թվ.
ՌՄԼԸ (1789)-ին:

Յիշտկ է սր. խաչս Մարտիրոսին, թվ. ՌՃՀՁ
(1727):

Հայոց գերեզմանատան հիւսիսակողմի այգում՝
առուի վրայ ձգուած գերեզմանաքարը.

Ի ժամանկս Ախտախանին,
Կտորցին քրիստոնէին,
Բազմ ազգնք գերեցին,
Բազմ տղայք թլպտեցին,
Ով մը Յս՝ հաս օգնութիւն,
Ազգիս հայց տը փրկութիւն, թվ. ՌՄԼԹ (1790):

Այս տապանաքարը հաւանօրէն ձգուած է եղել
մի համայնական գերեզմանի վրայ, ուր թաղուել են
բազմաթիւ նահատակներ:

Յորժմ կարմիր գդակն, իսկ բազմք ի քրիստոնէից
նհտկ եղն. թվ. ՉԼ (1281):

Յիշտկ է սր խչս, Խաչիկի որդի Առաքելին, թվ.
ՌՃԽԱ (1692):

Յ է սր խաչս Էվազին, ուր մայր Խոռոմին, թվ.
ՌՄԼԵ (1786):

Յիշ է սր խաչ Մարքարտին, թվ. ՌՄԻԸ (1779):

Քարերի վրայի հին թուականներ.

Թվ. ՆՂ (1041):

Թվ. ՇԽ (1091):

Թվ. ՉԼԱ (1282):

Թվ. ՌԵ (1556):

ՓԱՅԱԶՈՒԿ

21 օգոստոս 1959 թ.

Փայաջուկի Ս. Գեորգ եկեղեցու հարաւակողմը՝
մարմար քարի վրայ.

Այս է տապան տը Առաքելին, որ հանգուցեալ
կա ի սր եկեղեցին, ով որ հանտիպէք այս տապա-
նին, լի բերանով դուք զողորմին (անթուական):

Ի դամբարանիս ննջէ Իսահակ արքեպս. Սաղու-
նեն՝ երախտատը առաջնորդ Ատրպտկնի Հայկա-
զեն, 1857 ամի մարտի 24-ին:

Ի դամբարանիս ննջէ Գրիգոր արքեպկս Մուշե-
ղեան՝ վիճակատը առաջնորդ Ատրպնի, որ հնգեալ
որմի 1882 նոյ. 17:

Ի դամբարանիս ննջէ խաչակիր աւագ քինյ տէր
Աբրահամ Ստեփանեան, որ հանգեալ 1874 օգոս-
տոս 21:

Փայաջուկի հանգստարան
Խչս յիշտկ է Մարտիրոսին, թվ. ՌՃԹ (1660):

Այս է տապան Մեյք Յլքի որդի Մեյք Կրպտին, որ
նհտկցւ ձեռնք Սաֆի Ղուլի խանին, թվ. ՌՃԹ (1660):

Տը ած Յս Քս, ողորմեա | Մեյք Նազարին, որ
չրչը | մահնք նհտկ եղէ ձեռնք | Սաֆի Ղուլի խանին,
| թվ. ՌՃԹ (1660):

Խչս քրխաւս առ ած Մեյք Մանասէրին, որ նհտկ
ձեռնք Սաֆի Ղուլի խանին, թվ. ՌՃԹ (1660):

Խչս յշտկ է Աղամիրի | որդի Գուլամիրին, որ կեն
զրու | եղէ ձեռնք անրինաց, | թվ. ՌՃԹ (1660):

Ողորմեա | Մեյք Նազարի որդի | Մեյք Յլքին, թվ.
ՌՃԺԱ (1662):

Ի տպնի այսմ հնգչի | մարմին Մեյք Գուլչինի, |
թվ. ՌՃԽԱ (1692):

Խչս քրխս է Քսի ծոյ տէր Յլքին, թվ. ՌՃԽՁ
(1697):

Խչս յշտկ է տը Թադէոս քինին, որ է որդի տը
Բրորմս քինին, թվ. ՌՄ (1751):

Խչս քրխս է առ ած վսն հոզն Հախնգրին, որ է
որդի Վրդազրին, թվ. ՌՄԻ (1771):

Այս է տապանս լուսահոզի Մարգիս Օհանեան
Բուտային, ի ժամանակ որ եղէ մեծ շարժ ի քա-
ղաքն Խօյա ամառ (անթուական)³:

Այս է տապան է Վազին, թվին ՌՄԿԹ (1810):

Յշտկ է տապան Բուտաղի որդի Օհանին ի
1827-ին:

Այս է տապան միի Նազարի որդի Յակոբին
1832:

Այս է տապան միի Նազարին, 1832:

Այս է տապան Բոտաղ Օհանեան, 1871:

Այս է տապան հանգստեան Յովհաննէս Բէկի
Բուտաղի, | երիտասարդ ազնուական, | ողորմի մի
տալ մեծարժան, 1873:

Այս է տապան Խոռոսի որդի Գրիգորին, 1876
ամի նոյ. 2-ին:

Ես՝ Եղիազար վարդապետ, վշտակից | էի ա-
ռաջնորդ Բարդուղիմեայ վանից | ի ժամանակս մեծ
պատերազմին ռուսաց կայսեր ընդ օսմանցուի, եղէ
տարագիր աստ ի Սալմաստ, ցաւօք հեծութեամբք
փոխեցա առ ած: Ոհ, մնաց անկատար փափագս
ըզյանացս վասն վանիցս և ազգիս խղճեց, | ամի
տուն 1878 | օգոստոս 28-ի Փայաջուկ, 1290⁴:

Աստ հանգչի Ջերեան՝ մայր Բաֆֆիի, ծնեալ
1819 թ., վախճանեալ 1904 թ. հոկտեմբեր 28-ին:

Աստ հանգչին ոսկերք Ջիրբայէլեան Բուտա-
ղեանցի, ծն. 1873, վխճ. 1904 հոկտ. 4:

Ազնիւ բարերար Տանոմիր Արամեան, երիտա-

3 Թերևս խոսքը վերաբերում է 1779 թ. երկրաշարժին, որից, ի
թիվս այլ քաղաքների և զավառների (Թավրիզ, Գումա, Թա-
սու, Սալմաստ, Ուրմի, Վան), մեծապես տուժել էր նաև Խոյը
(տես Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ
146: Մանր ժամանակագրություններ, հ. Ա, Երևան, 1951, էջ
380; հ. Բ, Երևան, 1956, էջ 494) (ծնթ. խմբ.):

4 Պարսկերեն թվականն է (ծնթ. հեղինակի):

սարդ հասակի հասնել ի մահուան, Խոտան Մանասէրեան գովիլի իշխան, թողնել ի սուգ սիրտ մեր ամենայն, ամ 1887 յուլիսի 9-ին:

ՍԱՌՆԱ ԳԻՒՂ

23 օգոստոս 1959 թ.

Գերեզմանատուն

Այս է տապան հանկուցեալ աշդ Հարութիւնին, որ եղև մասնակից Քէշիշ Օղլի Էվագ, | ՌՍԼԵ (1786):

Մյուս կողմում.

Կալ Սալմասլու Ղուլ Յարութիւն Եազլան կլոր Բաշան | Գուջին Վարգէշ էլլամանջան եսփշմա ազրր տաշան.

Խաչապատկեր է նկարված: Այս խաչանիշը փորագրուած է թուրքերէն տողերի ներքևի մասում:

Խշս բարեխս է | առ ան վսն փրկութ. | միի Շայգալիին, | թվ. ՌՄՁ (1757):

Յշտկ է խաչս Կիրակոսի որդի մահի Ներսեսին, թվ. ՌՄԺԳ (1765) դեկտ. ԻԸ-ին:

Յիշատակ է սբ. խաչս Մէլիք Ներսի որդի Խոտավերդի աղային, | թվ. ՌԲԾԻ (1771) օգոստ. 4-ին:

Այս է տապան լուսահուգի Կիլնագարին | Գրիգորեան, | ՌՄՀԵ (1826)-ին:

ՍԱՀԼԱՄ

23 օգոստոս 1959 թ.

Այս գիւղի մօտերքում մի ուխտատեղի կայ Վարդանանք անունով: Ամէն տարի Վարդանանց տօնին Մահլամի հայ գիւղացիները զնում են այդ ուխտատեղը, ուր ի յիշատակ Վարդանանց՝ քահանան կատարում է հոգեհանգիստ, մատաղ են մորթում, խունկ ծխում, ուտում, խմում, ուրախանում, ապրում և վերադառնում են գիւղ:

ԽՈՅ ՔԱՂԱՔ

27 օգոստոս 1959 թ.

Հայոց եկեղեցին զնացի ընկերակցութեամբ թարիզեցի պարոններ Մարգար Թորգոմեանի, Վահան Մարգսեանի:

Սբ. Մարգիս հայոց եկեղեցոյ սիւների վրայի արձանագրութիւնները.

Սբ. խաչս բրխս է մրդցի Թաթոսի որդի Յարթունին, թվ. ՌԾԺ (1661):

Սբ. խաչս բրխոս Մինասի որդի Պտրոսին մրաղցի, թվ. ՌԾԼԲ (1683):

Սբ. խշս բարխս Մարգսի որդի Ղուկասին, թվ. ՌԾԾ (1701):

Սբ. խաչս յշտկ է Քիթիին, թ. ՌՄ (1751):

Եկեղեցու դռան կողքի քարերը.

Թվ. ՌԾԸ (1659), | խշս յիշտկ է Ռսկանին, Մահկին:

Այս է տապան Ածատրի որդի Աղամիր, թվ. ՌԾԼ (1681):

Այս է տապան Յկորի որդի Պետրոսին, թվ. ՌԾԼԱ (1682):

Եկեղեցոյ հիւսիսային դռան կողքի քարը.

Այս է տապան Ուստա Իբարին, թվ. ՌԾԻԱ (1672):

ՄԷՅՂԱՎԱՐ ԳԻՒՂ

28 օգոստոս 1959 թ.

Խոյ քաղաքից 4 քիլոմէթր հեռաւորութեան վրայ է գտնուում ընդարձակ հողամասերով, բոստաններով, այգիներով, ծառնոցներով, մարգագետիններով և ջրառատ Մէյղավար գիւղը, որ Համաշխարհային առաջին պատերազմից առաջ զուտ հայաբնակ էր՝ ունենալով մօտ 100 տուն բնակիչ, մի հասարակ ու խղճուկ փոքր եկեղեցի և երկյարկանի դպրոցական շէնք:

ՄԱԿՈՒԻ ԳԱԻԱՌԻ ԴԷՊԵՐՐԸ. 1914-1918

Նազլու Յակոբեան-Թաղէնուեան, 85 տարեկան: Սալախանէ գիւղում ծնուած: Պատմեց, և ես գրի առի 1959 թուի նոյեմբեր 10-ին՝ երեքշաբթի գիշեր: Հ.Ա.

Մակու քաղաքումն էինք 1914-ի ամռանը, երբ ծագեց պատերազմը: Ռուսները, երբ մտան Ատրպատական և յառաջացան դէպի Բայազէդ ու Վան, մենք ապահով ապրում էինք: Մակուն 1914-ի դեկտեմբերին ապահով էր: Մենք չգաղթեցինք: Ռուսական նահանջը 1915-ի ամառը՝ յուլիս ամսին սկսուեց: Մենք էլ գաղթեցինք Խոյ, Ջուլֆա, ապա անցանք Արարատեան դաշտը ու բնակուեցինք Իգդիրում: Ապրում էինք Ղամարլու, ապա անցանք Մակու և հաստատուեցինք Սբ. Թաղէնու առաքելոյ վանքում 1917-ի աշնան: Թէ՛ վանքի գիւղացիները և թէ՛ վանքը տնտեսապէս շատ լաւ վիճակ ունէին: Վանքի գիւղում ապրում էին մօտ 30 տուն հայեր՝ մօտ երկու հարիւր անձ:

Ռուսները 1917-ի դեկտեմբերին և 1918-ի յունուարին ամբողջովին հեռացան Արտազի գաւառից:

Վանքից մինչև Քիշմիշ թափա գիւղը մօտ 60 քիլոմէթր ճանապարհ է: Այստեղ ապրում էին մօտ 40 տուն հայեր՝ 250 անձ: Մակու քաղաքում ապրում էին 70 տուն հայեր՝ 400 անձով:

Տաճկական բանակները 1918-ի ապրիլ ամսից արդէն իսկ մտան Ատրպատականի սահմանները:

Վանքում ապաստանած էր Վանքի գիւղի ժողովուրդը, որը հերոսաբար դիմադրեց տաճիկներին և Մակուի շրջանի քիւրտ ու թուրք յարձակուող խուժանին:

Տաճիկները, երբ տեսան, թէ դրսից յարձակուումներով չի կարելի մտնել պարիսպներից ներս, մի գիշեր՝ դիմադրութիւնից 15 օր յետոյ, պարսպի բուրգի տակ ռումբ դրին, պայթեցրին, պատը փուլ եկավ: Այդ ժամանակ ներսի կռուողներից մի խումբ անմի-

ջապէս յաջողեց փլած մասից կրակելով դուրս գալ և իջնել ձորը, ապա բարձրանալ մատուռների սարը և օգտուելով գիշերային խաւարից՝ արագութեամբ բռնեց անորոշ և արիւնոտ ճանապարհները:

Տաճիկ զինուորները և թուրք խուժանը թափուեցին վանքի բակը: Գեղեցիկ ու երիտասարդ կանանց և աղջիկներին ջոկեցին, տարան, իսկ ծերունիներին, կանանց, հիւանդ և վիրատու մարդկանց էլ կոտորեցին:

Հայերն անմեղ և անմեղաբար զոհուեցին: Պաշարը՝ հաց, իւղ, պանիր, ձու, կորկոտ, ամեն ինչ առատ էր եղել: Շատ նեղուած էին միայն ջրից: Վանահօր սենեակին մօտիկ պարսպի մէջ մի ծակ տեղ կար, որտեղից գոռուութեամբ իջնում էին ձորը և գետից ջուր վերցնում: Այս գործում հայերին շատ օգնում էր Ջէյնալ անունով մի թուրք, որ թշնամիներից գաղտնի հայերին ջուր էր հասցնում:

Վանքի գիւղի հայութիւնը կոտորուելուց, ազատուելուց կամ գերի տարուելուց յետոյ տաճիկներն ու թուրքերը թափուեցին վանքը: Այնտեղ մնացին մի խումբ թշուառ, անտէր պառաւներ և անչափահաս երեխաներ: Սրանց հետն էր նաև Անօ անունով աչքը կույր մի կին, որին սաստիկ ծեծեցին, մտրակեցին և պահանջում էին, որ ցոյց տար վանքի և գիւղացիների ապրանքների պահուած տեղը: Գմբէթի կողքին էր այդ պահարանը, որ բացին, հանեցին ու տարան վանքի սրբազան անոթներն ու սպասները, հանդերձեղէնը, ինչպէս նաև Ս. Թաղեոս առաքեալի արծաթակերտ, ոսկի ջրած աջը՝ մասունքով հանդերձ:

Անօն գիւղի եկեղեցու երեցփոխ Արշակի կինն էր: Թուրքերը սպանեցին Արշակին, որի աղջկան էլ գերի տարան և իսլամացրին:

Քիչմիշ թափա գիւղի հայերը մեծ մասամբ կոտորուեցին: Ազատուեցին միայն նրանք, որոնց պաշտպանեցին ու թաքցրին: Սրանց միջից ոմանք (թէ՛ տղաներ և թէ՛ աղջիկները) թուրքացան և անուսնացան թուրքերի հետ:

Հերթը հասաւ Մակուի հայերին: Ոմանք ասում են սարդար Իգբալ Սայթան էր, իսկ ոմանք էլ ասում են, թէ տաճկական զօրահրամանատար Ալի Էհսան փաշայի հրամանովն էր, որ Մակուի հայերին կոտորեցին թուրքերը, քիւրդերն ու տաճիկները:

Մակուի տեղական խաներից Մուստաֆա փաշա անունով մի բարի և մարդասէր մարդ էր, որ 16 տուն հայերին տարաւ, լցրեց իր ընդարձակ բնակարանի բակում և պահեց երկու ամիս, մինչև տաճիկները քաշուեցին: Եթէ ճիշտ է, որ Մակու քաղաքի հայերին սարդարը կոտորել տուեց, կոտորածը կազմակերպողը եղել է Բէկլարբէկ անունով սարդարին ենթակայ ստորադաս արիւնարբու մի խան:

Վանքի տաճարի ետևի բլուրի վրայ է գտնուում գերեզմանոցը, ուր թաղուած են 16 հայ կամաւորներ, որոնք 1914-ի աշնանը երեսուներկու հոգով

վանքի պաշտպանութեան և գիւղացիներին փրկելու գործով մնացել էին: Մակայն մեծ քանակութեամբ տաճիկ զինուորները և տեղական թուրքերը 1914-ի դեկտեմբերին պաշարեցին վանքը: Հայ կամաւորները ներսում հերոսական դիմադրութեամբ յետ քշեցին տաճիկներին 16 հոգի նահատակ տալուց յետոյ, երբ արդէն իրենց գնդակներն էլ սպառուել էին: Ներսում մնացած 16 հոգին, գիշերային խաւարից օգտուելով, պարիսպը ծակում և բլուրների վրայից յառաջանալով հասնում է թուրքական մի գիւղ, որի քեաղխուղան նրանց խօսք է տալիս, որ կը պաշտպանի, սակայն խոստումը չի յարգում:

Անբուն, յոգնած, ցրտահար և քաղցած 16 կամաւորները, երբ հանգստանում էին, յանկարծ զինուած թուրք խուժանը ներս է թափում և տեղնուտեղ կոտորում:

Այժմ, երբ այդ դէպքերի վրայից անցել են անելի քան 40 երկար ու ձիգ տարիներ, եթէ Մակու շրջանի քրդական և թուրքական գիւղերում ուշադիր և մանրամասն քննութիւն կատարուի, պիտի յայտնուեն թուրքացած կանայք և տղամարդիկ, որոնք այժմ արդէն 45, 50, 60 տարեկան են: Յիշում են իրենց ծնողներին, ասում են, որ հայ ենք, բայց հայութիւնից ոչինչ չի մնացել նրանց մէջ:

Վանքի վանահայրերի մէջ միշտ պիտի յիշուի Պեղրոս վարդապետ Ղազարեանը: Ամբողջ 34 տարի վանահայր եղաւ և կեանքի գնով պաշտպանեց վանքի վարքն ու տնտեսութիւնը: Մակուի սարդարը ընդհանրապէս բռնակալ և կեղեքիչ մարդ էր: Նա վարդապետի բողոքներն ու դժգոհութիւնները յաճախ հաշուի էր առնում:

Եւ վերջապէս սհա երկու համաշխարհային: Երկրորդ պատերազմը, երբ վերջացաւ դաշնակիցների յաղթանակով, և Սփիւռքի հայութեան ներգաղթը սկսուեց դէպի Հայաստան, վանքի, Վանքի գիւղի և Մակու քաղաքի մէջ ապրող բոլոր հայերը արագութեամբ տեղափոխուեցին Հայաստան:

Պետրոս վարդապետը գրեթէ երկու տարի մեծակ ապրեց վանքում, մինչև որ հիւանդացաւ, եկաւ Թաւրիզ, տարան ամերիկեան հիւանդանոց: Այնտեղ էլ վախճանուեց 1948-ի դեկտեմբեր 31-ին և թաղուեց հայոց գերեզմանատան հարաւակողմի պատի տակ: Գերեզմանաքարը դեղնաուուն և երկար մի քար է արձանագրութեամբ:

ՄԱՀԱԶԱՆ ԳԻՒՂ

28 օգոստոս 1959 թ.

Եկեղեցու սեան վրայ փորում.

Ես՝ մեղաւոր անարժան և անպիտան փժմոն և եղկելի մեղապարտ տիրացու Ավաքս, որ եմ սպմաստեցի կողմն Փայաջուկ, որ եղա Արտագէս վրդպտին Խոյայ, զնացի երկիրն Մալմաստ բողոք տանել, հարք և եղբարք խնդրեմ ձեզանէ, որ մտանէք մեր եկեղեցին, միաբերան խնդրեմ սուրբ սրտի տէր ած և բանն ուղիղ է, ով հարք և եղբարք, Ռ՝ՁԾԵ (1736):

Սեդանի կամարը ծածկած է եղել որմնանկարներով յայտնի են և՛ «Աստուածածնի աւետումը», և՛ «Քրիստոսի թաղումը»: Ապա 4 աւետարանիչների որմնանկարները, որոնցից յայտնի են 3 նկարներ, ինչպէս նաև «12 առաքեալները»: Կան նաև ուրիշ յարդարանքներ, որոնք գունատր են:

Աւագան քանդուած է, սեղանը և վեմքարը քանդուած են, եկեղեցին կոպիտ քարերով սաւլայատակ է եղել:

Չորս սիւնների վրայ բարձրանում է համաչափ գմբեթը, որի ներսում դրեալ որմնանկարներ կան:

Հարաւ, հիւսիսից ամեն կողմում ունի 3 լուսամուտ:

Սեդանի լուսամուտը խաչաձև փորուած քար է: Սիւնների վրայ կան հիշատակութիւններ՝ 1620, 1635, 1637, 1692 հայերէն մեխերի ծայրերով:

Կամարները պարսկական են: Աջակողմումն է մկրտութեան աւագանը: Պատերի վրայ կան թախչաներ:

Եկեղեցին ունի նաև կամարազարդ գաւիթ: Մայր դռան աջակողմում կայ զոյգ քանդակազարդ խաչքար (փոքրատեր)՝ հետևեալ արձանագրութեամբ.

Սբ. խչս յշտկ է տր Սարգսն և կողկցն, թվ. ՌՃԵ (1656):

Եկեղեցու մայր դռան զլխատր արձանագրութիւնը.

Կամօքն այ եւ.....ցի | եկղցս ի ժամանակի ՍԲ ԱՆ | Դոյնտոր Սարթիսի Դուլի խանին հաքիմութի Աղու Ուզպչին ի հյրպտութ. հայոց տն տր Յկովբա առջնորդութի տր Միքաէլին ... շակցու Շամբեցի տր Խչտրն, աշկերտ է տն Յկի շնցու ձոմբ գիւղս քինաի եւ ժղվրդ, թվ. ՌՃԻ (1671) | մարտ Գ:

ՊԳԼ (1443) Գ (3) մ(ա)րդի:

Տր Յս, տր Յարութ:

Եկեղեցոյ գաւթում կան մօտ 10 հատ մեծ գերեզմանաքարեր, որոնք անարձանագիր են: Մէկի վրայ հազիւ նշմարուած է ՌՃԱ (1652) թուականը:

Գերեզմանատունը գտնուած է եկեղեցու արևելեան պատի դիմաց՝ մի բաւական ընդարձակ տաքածութեան վրայ, ուր կան հարիւրատր հին անարձանագիր և անխազ քարեր, որոնք շուրջ 1000 տարուայ հնութիւն ունեն: Կայ միայն մի խոյ գերեզմանաքար, որի վրայ կարդացուած է.

Տր Առքել, թվ. Ռ (1551):

ԹԱԻՐԻՉ

13 սեպտեմբեր 1959 թ., Ս. Խաչի տօնին

Մարալան թաղամասի Ս. Աստուածածին մատու.

Հանգիստ.

Տիկին Գոհար՝ ամուսին Ստեփան Արզումանեան սալմաստեցոյ, վախճ. 18 մարտ 1911 թ. 86 ամ հասակ:

Թամար տիկին Գուլգատեանց՝ դուստր խանին Վահրամեանց, ի ծնանիլ՝ մարդ յաշխարհ ծնայ ինքնին, առ աստուած վախճ. 21 ամեայ ի 15 հոկտեմբեր 1881:

10 նոյեմբեր 1959 թ.

Թարիզի հայոց գերեզմանատուն

Մելիք-Թանգեանի յուշարձանի հարաւակողմի գրութիւնը.

Աստ հանգչի սիւնեցի Տ. Ներսէս արքեպ. | Մելիք-Թանգեան, | արիւնտ օրերի ազգանւէր առաջնորդ եւ պաշտպան Հայոց Ատրպատականի, | 1866-1948:

Յուշարձանի հիւսիսակողմի գրութիւնը.

Հովիւ քաջ գանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց:

Կառուցեց և նիւրեց արձանագործ Ի(շխան) Նարբանտեան:

Ս. Շողակաթ եկեղեցու արձանագրութիւնը (իւ գրածն է Հ. Ա.).

Կառուցաւ Ս. Շողակաթ եկեղեցիս ի յիշատակ տիկ. Շողակաթ Մանուչարեանի արդեսամբ որդոյ նորայ՝ Սիմոնի ի ժամանակս առաջնորդեն հայոց տէր Ներսէս արքեպ. Մելիք-Թանգեանի, | 28 յուլիս 1940-ի թոյն, հայոց ՌՅՁ թ.:

Բազմամեայ վանահայր (1914-1948) Սբ. Թադէի վանքի: Այս հասարակ և անբովանդակ արձանագրութեամբ մարմար քարը դրուած է նրա շիրմի վրայ Ս. Շողակաթ եկեղեցոյ հարաւային պատի տակ.

Տապան Պետրոս վարդապ. Ղազարեան, | ծն. 1893 մայիս 10, | վախ. 1948 դեկտ. 31:

Վաղամեռիկ սիրուն մանկիկ՝ Արմէն Աճեմեան, | ծն. 10 յունուար 1936, | վխճ. 22 յուլիս 1937⁶:

Հանգիստ Շողակաթ Մանուչարեանի, ծն. 29 մարտ 1871, Հին Նախիիջևան, վխճ. 23 փետր 1939, Թարիզ:

Աշխարհի մէջ ի՞նչ կայ յաւետ, Զան անմոռաց յիշատակ, Կանցնին դարեր, մարդիկ անհետ, Անմահ կը մնա յիշատակ⁷:

Տապան | ատամնարոյժ | Սկրտում Սահակեանի, | ծն. 1878 յուն. 12, | վխճ. 1918 հոկտ. 21:

5 Մերոյ Թաղիատեանի կնոջ՝ Թանգ խաթունի տապանաքարի արձանագրութեան այս երկու տողերը արտագրել են նոյնի տապանաքարից, որ ուրեմն 1881-ին դեռ մնացել էր մայր եկեղեցու բակում՝ Թարիզ և ապա տարել (ծնթ. հեղինակի):

6 Չուական գերեզմանաքարը (ծնթ. հեղինակի):

7 Այս տապանագիրը ինքս եմ գրել (ծնթ. հեղինակի):

Հայաստանի Հանրապետության գնդապետ Ա. Ա. Կորովկով, / 1863-1927:
(Միս երեսը քարի՝ ուսերեն)

Գասպար Յակոբեան, 1884-1932:

Մելքոն Յակոբեան, 1889-1954:

Տապան Արմենակ Աֆթանդիլեանի, / ծն. 24 յուլ. 1885, / վխճ. 11 յունիս 1941:

Տապան / Գալուստ խան Աղազարեանի, / վխճ. 20 մայիս 1938:

Հանգիստ Միհրան Գրիգորեանի Տուրուբերանի Հարք գաւառից, / ծն. 1883, վխճ. 16 սեպտ. 1936, Թարիզ:

Տէր Մեսրոպ Աւետիսեան, / մակեցի, / վխճ. 31 մայիս 1936:

Վարդան Աղաբէկեան, / ծն. 1893, / վխճ. 1938:

Բժ. Ռուբէն Տէր Ստեփանեան, խարբերողի, / ծն. 1887 նոյեմբ. 11, / վխճ. 1937 յունիս 5:

Մարտին Շաթիրեան, / տարագիր, / ծն. 18 փետր. 1867, / վխճ. 10 օգոստ. 1940:

Սամսոն (Հ.Յ.Գ. զինանշան) Թաղէսեան, ծնունդ 1870, Ագուլիս, / վխճ. 1 մարտ 1945, Թարիզ:

Ազգային և յեղափոխական բազմաշխատ գործիչ / Հայրապետ (Հ.Յ.Գ. զինանշան) Պանիրեան, / ծն. 1879, Վան, / վխճ. 1947, Թարիզ:

Վարդան Թումանեան, / ծն. 15.7.1868, / վխճ. 28.4.1939:

Կատարինէ Ղազարեան⁸, ծն. 1862, / վխճ. 1945 յունուար 4, / Թարիզ:

Թարիզի հայոց Ս. Սարգիս եկեղեցոյ բակում.

Այսբան արին թէ ներեն ձեզ մեր որդիք, թող ողջ աշխարհի հային կարողա նախտինք, 1896:

Ջալալ-Սկրտիչ Ջալալբէկին, 23 տարեկան:

Շէկո-Արշակ Բարսամին, 27 տարիքն:

Տապան Աւագ Սարգսեանի, / ծն. 1870, / նահատակուած 1915 2 յունուար:

Տապան / Պետրոս խան Մելիք Անդրէասեանի, / ծնունդ 1879 դեկտ. 26ին, / վաղճան. 1912 յունվ. 7-ին⁹:

Արտաշէս Պահլավունի, / ծնված Իզդիրում 1873 թ. / վախճան. Թարիզ, 1922 թ.:

Հ.Յ.Գաշնակցութեան յուշարձանը. զինանշան.

Սկրտիչ Ջալալբէկեան	1896
Արշակ Բարսամեան	1896
Միսակ Մանչօեան	1909
Արտեմ Ռազմիկ	1908
Նիկոլ Գանձակեցի	1908
Մարտիրոս Չարուխչեան	1909
Կարօ Արտամետցի	1909
Սէթօ Հացիկցի	1909
Գէորգ Կիրակոսեան	1909
Պետրոս Մ. Անդրէասեան	1912
Ստեփան Տ. Սկրտչեան	1917

Ս. Սարգիս եկեղեցոյ շինութեան արձանագրութիւնը.

Շինեցաւ Ս. Սարգիս եկեղեցիս ի 5 մարտի 1845 ամի, և ի թուին հայոց ՌՄՂԲ, ի հայրապետուն տեսոն Ներսիսի Ե-ի, աշխատութեամբ Ջաքարեա աւագ քահանայի Տէր Ջաքարեանց, արդեամբ բարեպաշտ հայազգի ժողովրդականաց:

Թամարեան դպրոցի դռան ճակատի արձանագրութիւնը.

Կառուցաւ տպրոցս արդեամբ աղա Գրիգոր Թումանեանի՝ ի յիշատակ իւր հոր՝ Ջաքարէի, մօր՝ Ջաւահիրի, վաղամեռիկ քրոջ՝ Թամարի, և կոչեցաւ Թամարեան դպրոց, 1895:

Տապան տր Յակովբ աւագ քահանայի Տէր Կարապետեան մուժմբարցոյ, վախճանեալ 79 ամաց հասակի և 47 ամեայ քահանայուն իւրում, 11 յունիս 1890 ամի:

Ի յիշատակ վաղամեռիկ ուսանող Բարգէն Ստեփանեանի, ծն. 10 հոկտ. 1920-վախճ. ... ապրիլ 1940, կառուցաւ զանգակատուն արդեամբ հօրն իւրոյ՝ Սմբատ Ստեփանեանի:

Ս. Սարգիս եկեղեցոյ հիւսիսակողմի դռան արձանագրերը.

Բարգուշատցի միդսի Պետրոսեան և իւր կողակից Դնիեա Յասրաթեան շինեց զդռոսս այս յիշտկ. Վան եկեղեցոյս Սբն Սարգսի, որում օգնական լիցի յուն, թ. 1821 ապրիլ ամսեանն:

Յ Ն Թ Հ / տր ած Յս.Քս, / թվն. ՌՄՀ (1821) ապրիլի Ա:

⁸ Բաֆֆիի քույրն է սա (ծնթ. հեղինակի):

⁹ Կախումած (ծնթ. հեղինակի):

ԹԵՀՐԱՆ

17 դեկտեմբեր 1959 թ.

Թեհրանի հայոց Ս. Թադէոս-Բարդուղիմէոս եկեղեցոյ ներսի և բակի տապանաքարերի արձանագրութիւնները և այլ յիշատակութիւններ.

Սեղանի իւղաներկ մեծադիր նկարը (1x1.50 մէթր չափսով) ներկայացնում է Աստուածածնին՝ Յիսուսը գրկին, գահի վրայ նստած: Աջ կողմում կանգնել է Թադէոս առաքեալը՝ Յիսուսի գլխի նկարը՝ թաշկինակի վրայ ձեռքում բռնած, իսկ ձախ կողմում Բարդուղիմէոս առաքեալը կանգնել է Աստուածածնի նկարը ձեռքին: Աստուածածնի գլխի վերևը երկու թևատարած հրեշտակները թագ են բռնել, սրանց վերևը Սուրբ հոգին աղանակերպ իջնում է, իսկ հայր Աստուածը՝ ամպերի մէջ: Շրջանակը շատ զեղեցիկ է, ճաշակատուր և զեղարուեստական մի գործ:

Սեղանն ունի երեք աստիճաններ վեմքարի վրայ: Սեղանաքենը կոկիկ է և զեղեցիկ շինուած:

Ենթադրում են, որ նկարել է պալատական նկարիչ Յակոբ խան Յովմաթանեանը՝ Նադաշ Բաշին:

Սեղանի «Սբ. Աստուածածին» իւղանկարի ներքևում կայ վեց տողանի հետևեալ յիշատակագրութիւնը.

Հրաշակերտ այս սբ. եկեղեցի վաղուց հիմնեցել ի նախնեաց անտի ի մէջ այլազգեաց ի Պարսկաստանի՝ Դեհրան կոչեցեալ ի նոյն քաղաքի, անուամբ կառուցիչ՝ սրբորոյն Թադէի՝ է բարեխօս միշտ հայոցըս ազգի. ետուան զպատկերս տէրուանականի՝ յանուն սբ. Ածածնայ յւզ սեղանի: Սարրաֆեան տոհմ է Կրպետ յարզի՝ այրըն բարեպաշտ ազնիւ սիրելի. եւ խրպաղցի Ներսեսեան յոչի, Պետրոս անուն ազնուագարմի: Սորա երկոքին մի շունչ մի հոգի՝ վառեալ սբ. հոգով լըցին զեղծ սրտի՝ անջինջ հայելի ի մերազնէի, որ կացեալ արձան ի սբ. տաճարի՝ յոր միշտ հանապազ առաջի նորեն՝ կատարի պաշտօն ի տես ամենի, հանցէ տէր բաժին իւրոյ անցելոց՝ արևշատութիւն յիւրեանըս կենի, հազար ութ հարիւր թիւ փրկչականի քառասուն և ինն (1849), ի վեց յունիսի, գլիշատակ սոցին յարատևեացի՝ մինչև ի գալլատեան տոն Յսի:

Եկեղեցու պատից կախուած է 34 x 27 չափսով Աստուածածնի հայատիպ և հնագոյն իւղաներկ նկարը՝ նեղ սև շրջանակի մէջ: Չորս անկիւնում՝ հրեշտակներ թևաւոր: Նկարի ներքևում երկաթագիր արձանագրութիւն է՝ մէկ տող.

Յիշատակ է Միսնիս դի Թաթէոսի: Եսի: Սարրի եւ Նադաշի (անթուական):

Այս նկարը նուէր է.

Յիշատակ 1959 թին Արուսեակ և Թադէոս Թադէոսեանից Սուրբ Թադէոսին առաքեալ եկեղեցուն:

Թեհրանի հայոց Ս. Թադէոս-Բարդուղիմէոս եկեղեցոյ բակի տապանաքարերի արձանագրութիւնները.

Ի 11 նոյեմբեր 1854,

Ի հասակի 18 ամսոց 18 օրեայ,

Արքայութե արժանիս,

Թոյլ տուք մանկանց գալ առ իս

Հոգովդ Աննա Պետրոսեան,

Յացախեցոյ Ներսեսեան,

Երթ տէր զքեզ հրաւիրէ:

Յաղաներում օթեան,

Թող աստ մարմինդ հանգիցէ,

Ելք քոյ զքո ծնողաց սիրտս ի կսկիծ

Ետ համակ այլ քեզ լեցի,

Պարձանաց խաղաղութիւն յիշատակ:

(Մարմար քար ծաղկաքանդակ շրջանակով)

Sacred

To the memory of Rosina Regina

the daughter of R:W:Stevens Eso

H.B.M. Consul, at Tehran.

Մարմար կոտրած քար.

Այս է տապան պարագի Մվէլի որդի Ուսօփին, որ փոխեցաւ առ 18 ... դեկտ ...:

Մարմար քար, քարի վրայ հիւսնի գործիքներ են քանդակուած.

Այս է տապան տէր Խաչատրի որդի քաջահմուտ արհեստաւոր շնորհօք լի Գրիգորի, որ փոխեցաւ աստի յերկինս թվին 1832 սեպտեմբերի 17-ին:

Տապան Սկրտում Ամիրեան դավրիժեցի: Վաշեքն աշխարհին և վիշտքն ի նմին քաղի զաղօտ լոս կենաց ի անյոյս, որ աստ ի յերկրի անժառանգ կեցի յուսամ անդինին ի ժառանգել զերկին: 1831 ամի յուլիս 7:

Աստ հանգչի ինգլիս Չալի Սահաբ, յամի տեառն 1833ին նախայ 3-ին (յուլիս 3):

Տապան հանգուցեալ Արգար Կարապետեանի, հանգեալ ի տէր 1857 յուլիս 5:

Ի տապանիս ամփոփի մարմին ծաղկափթիթ մանկան Մարգարտի Խաչիկեան, ի 1852 ի 2 յուլիս:

Այս է տապան Մարգարտի Խօղաղատեան, որ հանգեալ ի մէր 1833 օգոստ. 2-ին:

Այս է տապան Խօղաղատ Գալստանի դուստր Անարին, որ հանգեալ ի մէր ի մի ամ հասակի եւ ի 1848 մաիս 1-ին:

Տապան հանգուցեալ Մատթեոս Ներսէսեան, ծնեալ 1825 մայիս 4, վախճանեալ 1875 մարտ 17:

Այս է տապան մահտեսի Պօղոսի որդի Թադէոսին, որ փոխեցաւ աշխարհ վերին ի թվին 1846 նոյեմբեր ամսի 1-ին:

Աստ հանգչի Մելիք Շահնազար Օրբէլեան, հանգեալ 1855 ապրիլ 30:

Ի հանգստեան աստ ամփոփի զդի պարոն Շահնազար Մարգարի՝ վաճառական ոմն ի նոր ջողայեցի, մահուան, ցաօք, պանդուխտ եղեալ, փոխեցաւ ի դասս փրկչին յամի տեառն 1846 ի ամսեան յուլիսի 21:

Տապան ի տէր հանգուցեալ լուսիկի Առաքելի միտսի Յակոբին Մասումեանց դարաբաղցոյ, որ ի 1846, ի 22 յուլիսի:

Ի նետ սաստկագին դուռն օրհասին, որ մխտալն ի ժանտ, կալիր մարպասին(°), հարեալ ուժգնապէս բրզան(°) իմ անձին, անկաւ ի տապաստ ի հող ռիւբագին:

Մաշին իմ ոսկերք երիտասարդական յայս տապան մթին, ի վեր անձնական կարօտ և փափակ գթոյ մայրական եւ զուրկ ի տեսոյ եղբայր պատուական:

Չեղէ ես ժաման յԱրցախ հայկական ի ցանկալին իմ, յերկիր հայրական զրկեալ հառաչմամբ յոգոյ կենսական: Իջի աստ ի հող, սեւ պանդխտա-

կան:

Մադթեմ, անցաւորք, ընդ իմ ...րն հայցելով ինձ մուտ ի յերկնից խորան, յիշեսջիք, ի հող է մեր հանգարան, իսկ տուն աշխարհիս հոգոց մեր դարան:

Տապան վաղամեռիկ Գարուստ Պապայեանց դավրիժեցոյ, անգիտակցաբար մահաբեր զնդակին, 14 փետրվար 1904ին ի հասակի 27 ամաց, ի Թէհրան:

Виктору Ивановичу Макарову
сконч. 3 фев. 1864.

Արձան նորապսակ Թեկղեայ
Ղուկասեան, ծնաւ..., հանգեալ 1878 8 օգոստ.:

Տապան մեծարելի Մարտիրոսի Մովսիսեան համադանցոյ, ի 40 ամաց հասակի հանգեալ յ2 յուլիսի 1864:

Տապան տիկին Սարրայի Դաւիթխանեան արքունի բժշկապետին, որ հանգեալ ի 26 օգոս. 1893:

Եւ որդւոյն Սարթիկի Սողոմոն խանի,
Արքունական երկրաչափին, որ 53 ամաց հասակի զրաւեցաւ ի կենաց էր 10 հոկտ. 1895:

Կաւալէր նշանաւ ասպետութիւն մեծ բժիշկ ...
թագաւորական:

ԱՂՋԱԳՈՒՆԵՅՑԻՆԵՐԻ ՍԱՀԵՐԹԸ

Հովհաննես Գյուլյան

Պատմությունը գրի է առել մորական պապս՝ Հովհաննես Գյուլյանը՝ նկարագրելով իրենց գյուղի՝ Աղջագունեյի տեղահանությունների ժամանակ իր և հարազատների անցած մահերը: Հեղինակն անդրադարձել է նաև հայտնի հայրուկապետ Հովհաննես Մինասյանի (Մինասողի) և հոր՝ Համբարձում Գյուլյանի (Գյոզբակ) կյանքի հերոսական դրվագներին¹:

Նունե Գրիգորյան

Հովհ. Գյուլյանը ծնվել է 1874 թ. մայիսի 1-ին Աղջագունեյում²: Անհոգ մանկություն է ունեցել՝ շրջապատված լինելով Վարդինե մոր, Համբարձում հոր ու Սարգիս պապի ջերմությամբ: Չնայած անհոգությանը՝ մանուկ հասակից զգացել է հոր կյանքին սպառնացող վտանգը, ականատեսը եղել թուրքերի կողմից հայ գյուղացիներին մշտապես հասցված հալածանքներին: Այնուհետև հաջորդել են դարձողական տարիները: Հաճախել է գյուղի դպրոցը, սակայն սովորել չի սիրել ու հիմնավոր կրթություն չի ստացել՝ ի տարբերություն եղբոր՝ Հարությունի, որն ուսման տարիներին աչքի է ընկել բարձր առաջադիմությամբ: Ամերիկայում բարձրագույն կրթություն ստանալով՝ վերադարձել է ծննդավայր և դարձել տարածաշրջանի լավագույն փաստաբանը: Հովհաննեսը պատանի հասակից աշխատել է թուրքների դաշտերում, քանի որ այն ընտանիքի գլխավոր եկամտի աղբյուրն էր:

1914 թ. քսան տարեկանում ամուսնանում է Իսկուհու հետ և ընտանիք կազմում: Սակայն երջանկությունը կարճ է լինում. սկսվում է Առաջին աշխարհամարտը: Եկեղեցու պատին փակցված հրամանագրով տասնյոթից յոթանասուն տարեկան տղամարդիկ ութ օրում պետք է ներկայանան զինկոմիսարիատ: Չներկայացողներին սպառնում է զինվորական դատարանը: 1914 թ. սեպտեմբերին մխտարի (տանուտեր) գլխավորությամբ գյուղի տղաները գնում են Չարշամբա և ներկայանում զինկոմիսարիատ: Հովհաննեսի եղբոր դասընկերը՝ Հուսեյն էֆենդին, մեկ ամսով հետաձգում է աղջա-

գունեյցիների ծառայությունը: Մեկ ամիս անց մխտարը տղաների հետ կրկին ներկայանում է զինկոմիսարիատ:

Հրաժեշտ տալու համար բնակիչներն ուղեկցում են նրանց մինչև գյուղի ծայրը: Որդուն ողջագուրվելիս Հովհաննեսի մայրն արտասովորվա՛ստում է.

–Երանի՛ Հուսեյն էֆենդին մի ամիս էլ ժամանակ տար:

Չարշամբայից տղաներն ուղևորվում են Սեբաստիա: Ճանապարհին Հովհաննեսը մոր՝ հատուկ նպատակով տված հարյուր դուրուշը բաժանում է հաշմանդամներին ու մուրացկաններին: Կավճայում կանգ են առնում հանգստանալու համար: Հովհաննեսի համար անակնկալ է լինում, երբ այստեղ առաջին անգամ տեսնում է լավաշը: Ծովափնյա գյուղերում ու քաղաքներում թոնիրներ չկային, ու հացն էլ թային էր: Գետի վրա կառուցված ջրաղացների ու ֆաբրիկաների տերերը հայերն են, որոնք սիրով հյուրընկալում են հայ զորակոչիկներին:

Առավոտյան շարունակում են ճանապարհը և երկու օր Երշիլ ըրմախի (Կանաչ առու) հունով շարժվելով առաջ՝ հասնում են Ամասիա, այնուհետև Թոքթաթ, Ջիլե և Սեբաստիա: Մեկ ամիս զինպատրաստվելով՝ գնում են ռազմաճակատ՝ Մարիդամիշ: Ճանապարհը ձգվում է հայկական գյուղերի և քաղաքների միջով: Այդ գյուղերից մեկն էլ Կովտունն է՝ Սեբաստացի Մուրադի ծննդավայրը: Սվազն անցնելով՝ հասնում են Երզնկա, որտեղ էլ ստուգելով նրանց զինպատրաստվածությունը՝ նշանակում են Մարիդամիշի ռազմական իններորդ բրիգադում ծառայելու: Մարիդամիշ գնալու համար պետք է անցնեն Էրզրումով: Եթե մինչև Էրզրումում լինելը Հովհաննեսը որևէ դժվարության չէր հանդիպել ու մահվան վտանգ չէր զգացել, ապա այստեղ սարսափազդու տեսարաններին ականատես լինելով՝ կանխագգում է հայերին սպառնացող վտանգը: Շուրջբոլորը դաժան տեսարաններ են՝ ոմբակոծությունից փլված պատեր, ավերված տներ: Չյունը, սարսափելի ցուրտն ու ձնախառը փոթորիկը խոչընդոտում են առաջխաղացմանը: Նրանց հաջողվում է գիշերել թուրքական գյուղում: Վեց հոգին մուտրվել է ճանապարհին, իսկ քսանն անհուսալի վիճակում են, որոնց ստիպված թողնում են գյուղում ու ճանապարհը շարունակում դեպի Բասեն: Այստեղ էլ նրանց ամասունի պես լցնում են խանի մեջ ու դուռը փակում: Ո՛չ պառկել է հնարավոր, ո՛չ կանգնել: Շատերը սառած վիճակից ի գորու չեն խոսել:

1 Պատմության մեջ դեպքերի և հատուկ անունների հետ կապված հնարավոր անճշտությունների համար հայցում են ընթերցողի ներողամտությունը, քանզի նյութը քաղել են դժվարընթեռնելի հուշագրությունից՝ աշխատելով զերծ մնալ սեփական մեկնաբանություններից:

2 Աղջագունեյ գյուղը գտնվում է գավառանիստ Չարշամբա քաղաքից 12,3 կմ հարավ-արևմուտք: Չի անվանափոխվել:

1914 թ. դեկտեմբերի 23-ին վերջապես հասնում են Փլալատի և նշանակվում իններորդ բրիգադում: Էրզրումից ճանապարհ ընկնելիս հինգ հարյուր հոգի էին, սակայն երկու հարյուրն են տեղ հասնում: Մինչ այդ պահը աղջագունեյցիները միասին էին: Այստեղ նրանց ցրում են տարբեր թափուրներ (գորամաս): Հովհաննեսը, Գալուստը, Հուսեինը նույն գորամասում են: Ջինվորների վիճակն ահավոր է. ուտելու ոչինչ չունեն, ձիերի թրիքներից գարու հատիկներն են հանում ու դրանցով սնվում:

Սարիղամիշը, որ գտնվում է Բարաթովի փոքրաքանակ ուժերի պաշտպանության ներքո և հերոսաբար դիմադրում է, 1914 թ. դեկտեմբերի 24-ի առավոտյան գերմանացիների հրամանով չորս կողմից ռմբակոծվելով ու պաշարվելով՝ հանձնվում է: Թուրքերը գրավում են Սարիղամիշը և գերված երկու հարյուր ռուս զինվորներին սպանում մինչև Էրզրում հասցնելը:

Սարիղամիշի հայկական գյուղերի վիճակը սուսկալի է: Հովհաննեսը սրտի ցավով տեսնում է, թե ինչպես ձմռան սառնամանիքից կույ չեկած ծերերը, կանայք, տասնհինգ տարեկան պատանիները, իրենց սննդի վերջին պաշարները շալակած, պարտադրված հանձնում են թուրք ասկյարներին: Դա Էնվեր փաշայի հրամանն է. «Ինձ գյուղացի հարկավոր չէ, ինձ գորք է պետք»: Երբ Հովհաննեսն ընկերոջ հետ մտնում է մոտակա տներից մեկը, ակնատես է լինում զարհուրելի տեսարանի. տան բոլոր անդամները մահացած են, ու քաղող չկա: Ողջ մնացած ծերունին խնդրում է, որ սատկած ձիերն ու ավանակներն իրենց տան, գոնե դրանով սնվեն:

Չանցած երեք օր՝ Սարիղամիշը պաշարվում է թուրք դաշախների կողմից: Գերմանացի և թուրք գորահրամանատարներն անհանգստանում են ու խուճապի մատնված հրամաններ արձակում: Այդ պահին անսպասելիորեն անտառից դուրս եկած ռուսական զորքը, կատաղորեն կոտորելով դաշախներին, առաջ է շարժվում: Թուրքական բանակի զինվորներն անկանոն փախուստի են դիմում: Հովհաննեսի թուրք ընկերները խորհուրդ են տալիս.

—Դու հայ ես, ռուսները քեզ չեն սպանի:

Սակայն Հովհաննեսը մտածում է, որ ավելի լավ է թուրք ընկերների հետ փախչի, մինչև ռուսներին հասկացնի իր ով լինելը, գուցե սպանվի: Ռուսների հետապնդումից փրկվելու համար ձեռք ձեռքի տված իրենց նետում են ձորը: Չյունների մեջ թավալվելով՝ հայտնվում են ձորի խորքում:

Մութ գիշերն ու սառնամանիքը սարսափ են ազդում: Քնել չեն կարող. կսառչեն: Մի կերպ լուսացնում են ու ճամփա ընկնում: Ճանապարհը լիքն է վիրավորներով ու փախչող զինվորներով: Թուրքական գյուղում նոր տեղավորված՝ լուր են առնում, որ ռուսական բանակն առաջ է շարժվում: Կրկին փախուստի են դիմում ու 1915 թ. հունվարի 12-ին հաս-

նում Քեթեք: Գյուղացիներին խնդրում են, որ իրենց ներս առնեն, սակայն ռուսների առաջխաղացումից վախեցած՝ թուրք գյուղացիներն իրենք էլ են պատարաստվում փախչելու:

Հովհաննեսը, ողջ մնացած թուրք զինվորների հետ փախչելով, հասնում է Էրզրում և ներկայանում զինկոմիսարիատ: Նրանց վկայականներ են տալիս և ուղարկում արձակուրդ: Մինչև Սամսուն հասնելը բազմիցս ենթարկվում են դաշախների հարձակմանը և փրկվում իրենց մոտ եղած գենքի շնորհիվ: Գյուղի զինկոմում գենքերը վերցնելով՝ ուղարկում են տուն:

Սարիղամիշից մինչև տուն Հովհաննեսը քայլել էր քսանութ օր, շատ հոգնած էր, ուրքի վրա չէր կարողանում կանգնել: Մայրը լացակումած ու կարոտագին գրկախառնվում է որդուն: Հովհաննեսի բացակայության ժամանակ ծնվել էր նրա առաջնեկը, որին անվանել էին Սարգիս պապի անունով: Տղան արդեն մեկ ամսական էր:

Հինգ օր հետո կրկին կանչում են բոլորին՝ Չարշամբա գնալու և կենտրոնական զինկոմիսարիատ ներկայանալու համար: Ի գարմանս տղաների՝ ռազմաճակատ ուղարկում են ոչ թե Սամսունի, այլ Թերմեի ուղղությամբ: Երեք օրում մինչև Թերմեից կհասնեին Նիքսար, հազար երկու հարյուր հոգուց ութ հարյուրն են մնում: Թուրքերից շատերը գերադասում են փախչել ու դաշախ դառնալ, քան սպանվել ռուսների կողմից: Մարտի 22-ին տեղավորվում են հայաբնակ Փուրք գյուղում, որտեղ զինավարժություններ անցնելով՝ մեկնելու են Քեթեք՝ ռուսների դեմ կռվելու: Թուրք զինվորականներին Սամսունի թութումով կաշառելով՝ գյուղի տղաներով կարողանում են մնալ միևնույն ջոկատում: Փուրքում հայ գյուղացիները սիրով ընդունում են տղաներին իրենց հարկի տակ ու կերակրում: Մեկ շաբաթ անց՝ գյուղի մխտաբը հանձնարարություն է ստանում, որ կանայք ցորեն տանեն Երզնկա: Երկու հարյուր կանանցից յուրաքանչյուրը, մեկ փթանոց ցորենի պարկ շալակած, ճանապարհ է ընկնում և ութ օր հետո վերադառնում:

Գյուղում սուսկալի է հայերի վիճակը: Թուրքերը տարեց տղամարդկանց դաժանորեն ծեծում են, անասելի կտտանքների ենթարկում, բանտարկում, սոված-ծարավ թողնում, որ հանձնեն իրենց գենքերը: Բայց գենք չունեն, ինչպես հանձնեն: Մի քանի հրացանից ու ատրճանակից բացի՝ գյուղացիների տներում ոչինչ չեն հայտնաբերում: Կանայք Հովհաննեսի մոտ լալիս են, զանգատվում, թե ինչ պետք է լինի իրենց դրությունը, ոչինչ չեն թողել, ամեն ինչ տարել են, էլ ինչ են ուզում: Հովհաննեսը փորձում է մխիթարել նրանց: Երբ թուրք զինվորներին հարցնում են, թե նրանց գյուղերում էլ է նույնը կատարվում, պատասխանում են՝ ոչ:

Չատիկին՝ ուշ երեկոյան, քրիստոնյա բոլոր զինվորներին զինաթափում են: Այդ գիշերն աներևա-

կայելի երկար է թվում: Մարափը պատել է բոլորին. ուր որ է կգան՝ իրենց սպանելու:

Լույսը բացվելուն պես նրանց տանում են հարյուրապետի մոտ: Թուրքին հատուկ շինծու և շողոքոք ժպիտով, կեղծ խոսքերով փորձում է հավատացնել, որ պատրաստ է հայերի հետ պատերազմի դաշտ գնալ, բայց թափուրի հրամանատարը, հաշվի առնելով հայերի ճանապարհաշինարարական հմտությունները (քանի որ մեկ հայի շինած ճանապարհը տասը թուրք չի կարող շինել), ստիպված է հավաքել զենքերը և նրանց ուղարկել Մուշեհեր: Տարբեր կողմերից բերած հայերին կենտրոնացնում են մի տեղ, որպեսզի Սանսար Թեփեսի ուղարկեն: Բոլորն էլ շատ լավ գիտեն, որ այնտեղ գնացողն այլևս չի վերադառնա: Պետք է մի բան մտածել: Մարգիսը և հույն Լևթերն իրենց մոտ եղած թուրքունով սիրաշահում են սեկիետ մաղմուրին և նրա շնորհիվ էլ աշխատելու են ուղարկվում հիվանդանոց՝ մահացածներին թաղելու համար: Համաճարակային հիվանդություններին սահման չկա: Չեն հասկանում՝ ժանտա՞խտ է, թե՞ տիֆ: Կենդանի մնալն անհուսալի է: Մի օր աղբյուրի մոտ լվացվելիս Հովհաննեսը զգում է, որ ինքն էլ է վարակված: Սակայն հույն Լևթերի պատրաստած դեղամիջոցներով ապաքինվում է և ինն օրից գիտակցության գալիս: Կազդուրվելու համար ընկերներին է պարտական: Չավուշը, իմանալով հիվանդությունը թաքցնելու մասին, բարկանում է և Հովհաննեսին տեղափոխում հիվանդանոց: Ամեն օր այցելում են ընկերները: Նա հետաքրքրվում է եղբորն ուղարկած հեռագրով ու զարմանում, որ ոչ մի նորություն չկա: Եղբորը լավ է ճանաչում, նա պատասխանը չէր ուշացնի:

Երեք օր հետո հերթապահը մտնում է հիվանդասենյակ ու կարդում Հովհաննեսի անուն-ազգանունը: Երբ աչքերը բաց է անում, տեսնում է Սամսունի բանտապետ Օսման էֆենդուն: Նա, բժիշկների հետ խորհրդակցելով, որոշում է նրան ու ընկերներին երեք ամսով արձակուրդ ուղարկել: Օսման էֆենդին ու Հովհաննեսի եղբայրը մտերիմներ են: Հարությունը տարեկան պարտադիր նրան թուրքում ու մի կարմիր կով էր նվիրում:

Սանիտարները բժիշկների թելադրանքով Հովհաննեսին իջեցնում են հիվանդանոցի բակ ու մտեցնում ծառի տակ: Այդտեղ էլ հանդիպում է համազյուղացի հույն Յորիկային ու նրա կրտսեր որդուն: Նրանք էլ են արձակուրդ ստացել: Սակայն ահավոր վիճակում են. կարծես կենդանի դիակներ լինեն, հաստատ ողջ-առողջ տեղ չեն հասնի: Ի՞նչ բարեկիրք անձնավորություն էր, ի՞նչ օրն է ընկել: Երկու օր առաջ էլ քենակալին էր նույն վիճակում տեսել, գումար տվել, որ ճանապարհ ընկնի, սակայն նա էլ ողջ տեղ չէր հասնի:

Օսման էֆենդուց վկայականները վերցնելով՝ ճանապարհ են ընկնում Կերասուն: Էֆենդին զգու-

շացնում է, որ ծախսերն ինքը հոգացել է և Սամսուն կնոջը՝ Նեջիե հանըմին հեռագրել է, որ նրանց դիմավորի: Ձիերը փոխելու համար ճանապարհին կանգ են առնում Հավուզի խանում: Առավոտյան պանդոկի բակում տեսնում են տասնյակ դիակներ: Պանդոկատերը պատմում է, որ ամեն օր նույն վիճակն է: Եթե այստեղ չմահանան, միևնույն է, նրանցից միայն տասը տոկոսն է տեղ հասնում: Դիմացի հողե բլուրները նրանց գերեզմաններն են՝ առանձնացված գյուղի գերեզմանատնից:

Հաջորդ կանգառը Շապին Գարահիսարն է: Տեղահանությունների և կոտորածների ժամանակ հարյուր հիսուն երիտասարդ վեց ամիս ինքնապաշտպանվել է բերդում: Այնուհետև ճարահատյալ հանձնվելու պայմանով նրանք իջել են բերդից ու հենց տեղում կրակ բացել թուրքերի վրա: Մի մասը զոհվել է, իսկ մյուս մասին հաջողվել է սարերով փախչել, սահմանն անցնել և բնակություն հաստատել Աջարիայում:

Չորս օր Կերասուն քաղաքում հանգստանալուց հետո մտնում են նավակներ ու ճանապարհ ընկնում Սամսուն: Իյնե քաղաքում թեիզին փոխարինում է մեկ ուրիշը: Սա էլ է ճանապարհածախս պահանջում: Տղաները զարմացած միմյանց են նայում. չէ՞ որ այն վճարված է: Ձեռքը գենքին տանելով՝ սպառնում է, որ եթե գումարը չտան, նրանց ծով կնետեն: Վտանգ զգալով՝ իրենց վերջին հարյուր հիսուն դուրուշը նրան են տալիս: Սամսունում ափ իջնելիս ժանդարմները ստուգում են նրանց փաստաթղթերը և պարզելով, որ առողջ են, ուզում են տանել զինկոմիսարիատ: Ազատվելու համար թուրքունի վերջին փշուրներն էլ նրանց են տալիս ու գնում Օսման էֆենդու տուն: Օսմանի կինը դիմավորում է և Հովհաննեսին հայտնում է, որ ամուսնու հեռագրի մասին տեղեկացրել է եղբորը: Հաջորդ օրը՝ առավոտյան, Հարությունն ընկերների հետ հյուրընկալության համար շնորհակալություն է հայտնում Նեջիե հանըմին և ճանապարհ ընկնում դեպի գյուղ:

Հարազատներն ու բարեկամները գյուղից դուրս անհամբեր սպասում են իրենց որդիների վերադարձին: Նրանց մեջ են Վարդիեն մայրիկն ու քույրերը: Դեռ ձիուց չիջած՝ չորս կողմից շրջապատում են ու հարցուփորձ անում իրենց հարազատներից: Սակայն Հովհաննեսը շատ հոգնած էր, մայրն ու եղբայրը խնդրում են հանգիստ թողնել, հետո կզրուցեն: Հաջորդ առավոտյան նրան տեսության են գալիս ոչ միայն գյուղացիները, այլև հարակից գյուղերի բնակիչները: Յուրաքանչյուրն ուզում է որևէ լուր իմանալ իր որդու մասին: Ի՞նչ կարող էր ասել Հովհաննեսը: Դիշտ է, հանգստացնում է, հուսադրում, բայց հո լավ գիտի, որ նրանցից ոմանք արդեն մահացել էին, իսկ մյուսները՝ կարեվեր հիվանդ, ու երբեք ողջ տուն չեն հասնի: Եթե ընկերները չլինեին, հատկապես Լևթերը, ինքն էլ ճանապարհին անթաղ ընկած կլիներ:

Ապաքինվելուց հետո Հովհաննեսը շրջում է եկեղեցու մոտ գտնվող իրենց արտերում: Պատահաբար եղբայրն էլ է գալիս ու նրան տեսնելով՝ բարկանում է, որ տանից դուրս է եկել: Բավական է՝ թուրք ժանդարմները նրան տեսնեն առողջացած, անմիջապես ետ կկանչեն, մինչդեռ ինքն ուզում է նրա արձակուրդի ժամկետը երկարացնել: Հետո ի՞նչ իմաստ ունի մշակների աշխատանքին հետևել, երբ աշխարհն է խառնված, ու հարց է, այս ամենն իրենցը կլինի՞, թե՞ ոչ:

Մի օր էլ, երբ Հովհաննեսն աներոդրու մոտից այգիների միջով տուն է վերադառնում, տան մոտ կանգնած ժանդարմները, նկատելով նրան, տանում են հաջի Քամիլի տուն: Եղբայրը հապշտապ գնում է եղբոր հետևից ու հաջի Քամիլի միջոցով ժանդարմներին դարձյալ կաշառելով՝ Հովհաննեսին տուն է տանում: Նրա որդին արդեն ուր ամսական էր:

1915 թ. մայիսի 2-ին թուրքական կառավարության կողմից հայերին սպառնացող կոտորածի մասին աղջագունեցիներին տեղյակ են պահում հարևան թուրքերը: Չարշամբայում բանտարկել են հայ ազդեցիկ ու նշանավոր անձանց: Այդ գիշեր գյուղի երիտասարդ աղջիկներն ու տղաները զինված բարձրանում են սարերը, մնում են միայն տարեցները: Հաջորդ օրը՝ մայիսի 3-ին, հայ բանտարկյալներին ազատ են թողնում՝ պատճառաբանելով, որ կոտորածները Վանում, Բիթլիսում ու Մուշում են լինելու: Գյուղի տարեցներն ուղիղ ամիսուկես փորձում են համոզել սարերում ապաստանած երիտասարդներին գյուղ վերադառնալ: Նրանք դիմադրում են, քանի որ չեն հավատում թուրքական կառավարության կեղծ խոստումներին: Առաջին անգամ չէ, որ թուրքերը հայերի գլխի տակ փափուկ բարձ են դնում ու հետո իրենց մտադրություններն իրականացնում:

Տարածաշրջանի գյուղացիների մի մասին հավաքում են Չարշամբայում ու պարտադրում կրոնափոխ լինել: Նրանց թվում է, թե կեղծ հավատափոխվելով՝ կարողանում են թուրքերին խաբել: Հայերի կողմից հարգված ազգությամբ չերքեզ հաջի Չեքիլի քայն քայնի է թուրքերի՝ հայերին բնաջնջելու մտադրությունը: Նա Գյուլյան ընտանիքի լավ բարեկամն է և շատ է ուզում որևէ բանով օգնել: Քանի որ Սամսունի կուսակալն էլ է չերքեզ, նա հույս ունի, որ երկուսով կարող են մի ելք գտնել: Մի օր էլ գալիս է գյուղ ու հայտնում հայերի տեղահանության մասին: Ինքն ու կուսակալը որոշել են, որ աղջագունեցիներին իր գյուղում տեղավորեն: Մակայն կուսակալը հեռագիր է ստանում, որտեղ ասվում է՝ բավական է հայերից վերցրած կաշառքներով նրանց հովանավորի, ժամանակն է տեղահանելու: Հաջի Չեքիլը կուսակալի մոտ է լինում, հեռագիրն անձամբ է

կարդում: Մայիսի 2-ից մինչև հունիսի 7-ը կարողանում են հետաձգել տեղահանությունը: Այլևս ոչինչ հնարավոր չէր անել:

Հեռագիրը ստանալուն պես թուրք ժանդարմները շրջապատում են Աղջագունեյը: Գյուլյանների ընտանիքն էլ մյուսների նման պարտադրված թողնում է տունը՝ վերցնելով ճանապարհի համար անհրաժեշտ իրերը՝ երկու արաբա, մեկ ձի: Քանի որ Տրապիզոնը գրավված էր ռուսների կողմից, այնտեղի թուրք բնակչությունը գաղթել էր Աղջագունեյ: Դեռ բակից դուրս չեկած՝ Հովհաննեսը տեսնում է, որ թուրքերն իրենց տանը տիրելու համար վիճում են ու միմյանց սպանում: Այն տան, որ Մարգիս պապն ու Համբարձում հայրը հանապազօրյա դառը քրտինքով էին քարը քարին դրել: Ի՞նչ է սա, ծա՞ղր, թե՞ ճակատագրի դառը հեզնանք: Հետագայում Հովհաննեսը կիմանա, որ գաղթական թուրքերը վիճաբանության արդյունքում տունը հրդեհում են, որ ոչ մեկին այն չպատկանի:

Տեղահանված հայերին հավաքում են գյուղի կամրջի մոտ: Բոլոր երիտասարդ տղամարդկանց ռազմաճակատ են ուղարկել: Նրանց մեջ հինգ տղուս կազմող երիտասարդները ճանապարհին մտածում են փախուստի մասին, բայց կանանց, երեխաներին ու ծերերին չեն կարող լքել: Միանգամայն ճիշտ է Հովհաննեսը, որ մեղադրում է գյուղի տարեցներին՝ այս անգամ ևս թուրքական կառավարությանը հավատալու և խաբվելու, երիտասարդներին սարերից հետ կանչելու համար: Չէ՞ որ իրենք զինված բարձրացել էին սարերը՝ թուրքերից պաշտպանվելու և նրանց դեմ պայքարելու համար: Նույնիսկ դեկավար էին ընտրել Քեհոլիլի (Քեհյան) Հակոբին, որը խելքով ու քաջությամբ ոչնչով չէր զիջում Հովհաննես Սինասյանին (Սինասողի): Հակառակ դեպքում լավ էր հերոսաբար պայքարել ու զենքը ձեռքին գոհվել, քան անասունի պես մորթվել թուրքական յաթաղանից:

Երբ քարավանն անցնում է հաջի Չեքիլի գյուղով, նրա եղբայրն ու որդին տանից դուրս են գալիս ու ժանդարմներին կանխատեսված հրավիրում իրենց մոտ՝ հանգստանալու, որպեսզի Գյուլյանների ընտանիքն էլ կարողանա բակում պատսպարվել: Չեքիլի բեյի տղաները գաղտնի մոտենում են Հովհաննեսին ու Հարությունին, զգուշացնում, որ բեռները դանդաղ բարձեն, մինչև իրենց հայրը Սամսունից վերադառնա և ոստիկաններին դուրս անի տանից, իսկ բեյի եղբայրն էլ Հարությունին առաջարկում է թաքնվել իրենց տանը, մինչև մի հնար կգտնեն: Հարությունը հրաժարվում է, որովհետև հարազատներին չի կարող թողնել: Նա միանում է հայրենակիցների՝ դեպի անհայտություն քայլող քարավանին:

Հաջի Չեքիլին երկար են սպասում, բայց նա ուշանում է: Կանայք աղոթում են, որ բեյը շուտ վերադառնա: Որքան էլ նրա ընտանիքը ժամանակ շա-

հելու նպատակով հյուրասիրությունը ձգձգում է, միևնույն է, որևէ բան անել չի ստացվում: Ժամադարմները ստիպում են, որ ճանապարհ ընկնեն Մերքեզ, այնուհետև Չարշամբա: Այնտեղից տարբեր կողմերից տեղահանված հայերին խումբ-խումբ ուղարկում են անհայտ ուղղություններով:

Ուշացած հայտնվում է հաջի Ջեքիրը և բարեկամներին տեսնելով՝ հուզմունքից արտասվում է և ասում.

–Ես թեմճիտ (աղոթք) չեղած պետք է գայի: Իմ տանը կարող էի ձեզ թաքցնել, բայց հիմա անգոր եմ:

Ինչ էլ լինի, քիչ բան չի արել, ամիսուկես չարշարվել է, կյանքը վտանգել, որի համար Հովհաննեսի ընտանիքը երախտապարտ է: Նա էլի կարող էր փրկել շատերին, եթե ապերախտ թուրք բեկերը, որ ժամանակին վայելում էին հայերի հյուրասիրությունն ու հովանավորությունը, մատնագիր չուղարկեին: Թալեաթ փաշայից հեռագիր են ստանում, որ բավական է հայերից կաշառվեն, քսանչորս ժամվա ընթացքում բողոքին քշել արտարավայր: Ջեքիր բեկն ու կուսակալն այլևս անգոր էին որևէ բան անելու:

Շարժվելու հերթը հասնում է այն քարավանին, որի մեջ Հովհաննեսն է ընտանիքի և ազգականների հետ: Երիտասարդ տղամարդկանց՝ որպես զինվորների, առանձնացնում են: Նրանց մեջ են Հովհաննեսը և եղբայրը՝ Հարությունը: Կանայք, երեխաներն ու ծերերը մնում են անպաշտպան: Կանանց վիճակը ծանրանում է, եզները սայլերին լծելու գործն էլ է մնում նրանց փխրուն ուսերին:

Ժամդարմները տղամարդկանց լցնում են զինանոց և փակում: Հարությունը և էլի չորս հոգի, որոնք սիպիլի (բանակից ազատման հրաման) թղթեր ունեին, դիմում են զինկոմիսարիատ, թե էլ ինչի համար են դրանք, եթե պետք է հաշվի չառնեն ու իրենց զինվորագրեն: Խոստանում են ճշտել, և մեկ ժամ հետո Սամսունից պատասխան է գալիս, որ թուրք ունեցողները զինվորներից առանձնանան ու միանան քարավանին: Հարությունն ու Հովհաննեսը գրկախառնվում են, հրաժեշտ տալիս՝ գիտակցելով, որ դա իրենց վերջին հանդիպումն է. այլևս երբեք չեն տեսնի մեկմեկու: Եղբայրը նախապես գումար էր տվել Հովհաննեսին, որ ազատվելու դեպքում միառժամանակ կարողանա գոյատևել: Այնուհետև քույրերն են փորձում մոտենալ: Սակայն ժամադարմը մոտեցող քրոջը՝ Մարիամին, վայրենաբար այնպես է հրում, որ մոր գրկից երեխաներն ընկնում են աջուձախ: Ի՞նչ անել Հովհաննեսը, մոտենալ, քրոջն օգնել չէր կարող ու հուզմունքը զսպելով՝ հույս է տալիս նրան.

–Մանիկ ջան, քույրս, մի՛ մոտեցիր, տեսնում ես՝ սրանք զագան են: Այս անգամ բանակից ամուսնուդ՝ Էստեբանին, հետս կբերեն, միայն դու լաց մի՛ լինի:

Դեռ խոսքը չավարտած՝ ժամդարմներն անասունների պես քշում են մարդկանց քարավանը: Այն

հեռանում է և աստիճանաբար փոքրանալով՝ անհետանում: Հարազատներին Հովհաննեսը տեսնում էր վերջին անգամ:

Մնացողներին էլ մեկ այլ փորձություն է սպասվում: Նրանց պարտադրում են հավատափոխ լինել: Արտաքուստ ցույց են տալիս, որ թուրքացած են, բայց իրենց ներսում ամեն օր հայերենով են աղոթում: Մերքեզից երկու հազար երկու հարյուր տղամարդկանց տեղափոխում են Չարշամբա, այնտեղից էլ Սամսուն: Գանապարհին թուրքերը հավատացնում են, որ պատերազմից հետո նրանց կուղարկեն իրենց ընտանիքների մոտ՝ արտարավայր:

Տեղահանված հայերի քարավանները, չորս կողմից շրջապատված թուրք ժամդարմներով, կանգ են առնում Սամսունի մերձակայքում: Գանապարհին մի երիտասարդ կին գույզ տղա է ունեցել: Հովհաննեսի ականջներին են հասնում տարեց կնոջ աղեկտուր ու սրտաճմլիկ խոսքերը.

–Ղանչղներ, տանը մի երեխա չէիք բերում, ճանապարհին գույզ եք ունենում: Հիմա մեզ տղա հարկավոր չէ, տարեք, զցեք ծովը, դեռ ձեր երեխաներին էլ եք զցելու:

Այս սարսափազդու տեսարանները դեռ Սամսունի մերձակայքում են, իսկ առջևում... առջևում դեպի գեհեն տանող ճանապարհն է:

Ռուսական բանակը ոմբակոծում է Սամսունը: Հրդեհվում են նավթի բազան և պետական այլ շինություններ: Դրանից թուրքերն ավելի են կատաղում ու զագանաբար հարձակվում հայերի վրա և ծաղրելով ասում. «Ձեր քեռին գալիս է ձեզ օգնության»: Հայերի թշնամին, Թուրքիայից բացի, մեծ տերություններն են՝ Գերմանիան, Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան: Ռուսների ոմբակոծությունից Սամսունում մարդ չի մնացել, բոլորը փախել են: Քաղաքից վերև մի հունական գյուղ կա: Մինչև դրան հասնելը դաշտերում տարբեր կողմերից եկած հայերի քարավաններ են կուտակված: Հովհաննեսն և Ջեքիրը կանգ է առնում նրանցից հիսուն մետր հեռավորության վրա: Թուրքերը նոր ուժերի են սպասում, որ հայերին տեղաշարժեն: Այդտեղ Հովհաննեսը հանդիպում է Գարեջեմյան Նշան աղային: Նա հավաքված հայերին նորից հիշեցնում է իր՝ Հովհաննես Մինասյանի հուղարկավորության ժամանակ արտասանած խոսքերը. «Մինասյանին սպանելով՝ ողջ հայության վրա ձեռք բարձրացրին: Եթե նա հիմա կենդանի լիներ, ինքնապաշտպանություն կկազմակերպեր ու բազում հայերի մահվան ճանկերից կփրկեր, հիմա բոլորս էլ ողջակիզվելու ենք»:

Երեկոյան՝ ժամը իննին, թուրքերի նոր ուժերը տեղ են հասնում: Հովհաննեսն իր ընկերների հետ որոշում է փախչել: Կան՝ ճանապարհին կբռնվեն, կան՝ կսպանվեն: Իսկ եթե կարողանան հասնել իրենց գյուղ ու պահած զենքերը գտնեն, կկարողա-

ման ինքնապաշտպանվելով գոյատևել: Գիշերը՝ ժամը երկուսին, համազրույթացիներով փախչում են: Ողջ-առողջ տեղ հասնելու դեպքում նպատակն իրագործած կլինեն: Սակայն դեռ գյուղ չհասած՝ բռնվում են: Բոլոր մխտարները տեղեկացված էին փախուստի մասին: Տեղ հասնելու համար ընդամենը թուրքական մի գյուղ պետք է շրջանցեին: Այդտեղ էլ շրջապատման մեջ են ընկնում և թուրք գյուղացիների միջամտությամբ հանձնվում ժանդարներին: Մի մասը հրազենից զոհվում է, իսկ գերեվածներին տանում են Մերքեզ ու հանձնում չեթեմերին (ավազակ), որոնք էլ գազանաբար կտտանքների են ենթարկում Հովհաննեսին և ընկերներին: Նրանցից թափոք են կազմում ու անասունի պես առաջ քշում: Երբ թուրք ռախիկանները նստում են հանգստանալու, իրենց զենքերը լկտիաբար հայերի վրա են ստուգում՝ սպանելով չորս-հինգ հոգու: Այդպես մինչև Սամսուն հասնելը զվարճանալու համար երեսունից քառասուն դիակներ են փռում: Սամսունն անցնելուց հետո ով հետ է մնում, նրան զցում են ձիու սմբակների տակ, հետո ատրճանակով հարվածում գլխին ու այդպես անթաղ թողնում ճանապարհին: Ով համարձակություն ունենա և ապի, որ հոգնած է, հանգստանալ կամ ջուր խմել է ուզում, արժանանում է նույն ճակատագրին: Հանգստի ժամին ժանդարները պարտադրում են, որ հայերը երկու հազար դուրուշ տան: Իսկ ճանապարհին այնպես արագ են քշում ուժասպառությամբ հազիվհազ ոտքի վրա մնացողներին, որ շատերը չեն կարողանում արագ շարժվել ու ատրճանակների հարվածներից դաժանաբար սպանվում են: Իրենցից առաջ անցած քարավաններից հետ մնացածները կիզիչ արևից ուշագնաց ընկած են ճանապարհի եզրերին: Ջուր են խնդրում: Ավա՞ղ, օգնել չեն կարող: Մոսկալին այն է, որ երեխաները՝ ողջ թե մեռած, ընկած են իրենց սպանված մայրերի վրա, իսկ նրանց գլխավերևում գիշակեր ագռավներն են պտտվում:

Հովհաննեսը քարավանի մեջտեղով է քայլում, որպեսզի իրեն էլ չսպանեն: Տանը եղբայրը բոլոր հարազատներին ափիռն էր տվել, որ հարկ եղած դեպքում խմեն ու հանգիստ մեռնեն, քան անարգանքների և խոշտանգումների զոհ դառնան: Կյանքը թանկ է: Անկոտրում կամքի շնորհիվ բազում զրկանքներ ու դժվարություններ հաղթահարելով՝ Հովհաննեսը, միևնույն է, ափիռնը չի խմում:

Չնայած տարբեր քարավաններում լինելուն՝ եղբայրները հաղորդակցվում էին: Հարությունը, երբեմն թուրք ժանդարներին կաշառելով, կարողանում էր գաղթի ճանապարհից եղբորը լուրեր հայտնել: Դրանցից վերջինը գուժում էր քրոջ՝ Իսկուհու դաժան մահը: Հյուսիսում Իսկուհին ուշաթափվում է՝ չկարողանալով ճանապարհը շարունակել:

Անագորույն ժանդարները թույլ չեն տալիս օգնել նրան ու հարազատների աչքի առաջ գազանա-

բար սվինահարում են: «Քույրս մահացավ աչքիս առաջ, ու ես անգոր էի որևէ բան անելու», - գրում էր եղբայրը: Եվ այլևս ոչ մի լուր ընտանիքից...

Վերջապես հինգ օրից հասնում են Ամասիա: Երկու հազար չորս հարյուրից հարյուր վաթսուներկուսն են մնացել: Նրանց լցնում են մզկիթի մեջ ու բոլորին մեկ առ մեկ ստուգում: Մեկ բաժակ ջուրը հինգ դուրուշով են վաճառում, իսկ մի կտոր հացը՝ մեկ մեջիտիեով: Գիշերը բոլորին բանտ են տեղափոխում: Մի փոքր սենյակ է, որտեղ անմարդկային պայմաններ են: Հարյուր վաթսուհինգ հոգի իրար վրա է լցված: Հատակի վրա գտնվողների վիճակը ստակալի է: Չեն տեղավորվում. մեկը հատակին է նստում, մյուսը՝ նրա ուտերին: Մինչև լուսանալն անընդմեջ տեղերը փոխում են: Հովհաննեսը երկու համազրույթացիների հետ, որոնցից մեկը գյուղի բժիշկն է, իսկ մյուսը՝ մխտարը՝ Հովհաննեսի մոր հորեղբորորդին, լուսամուտագոգին համեմատաբար հարմար է տեղավորված: Նրանց ուտերին նստող չկա: Ոչ մեկին թույլ չեն տալիս դուրս գալ՝ պետքարան գնալու համար: Կեղտի և մեզի հոտից խելագարվել կարելի է: Մզկիթում նրանց դաժանաբար ծեծի ենթարկեցին, որի պատճառով երկուսը բանտում մահացան: Մնացածներն էլ սոված ու ծարավ ճանապարհը վազելով են անցել, դիմադրելու ուժ չունեն:

Հուսեին էֆենդին գործի բերումով այդտեղ է գտնվում ու տեսնում է, որ համազրույթացիներին էլ են բանտ բերել: Վատ է զգում, որովհետև գիտի, որ երեկոյան՝ ժամը 10-ին, նրանց տանելու են սպանելու: Բանտին մոտենալ հնարավոր չէ: Հարյուր մեկ տարով դատված մի թուրք բանտարկյալ խանութ է բացել ու հայերին պարտադրում է, որ իր մոտից սնունդ գնեն: Միևնույն է, նրանց սպանելու են, գուժարն ինչների՞ն է պետք: Հուսեին էֆենդին շատ է խնդրում, որ այդ արնախումը թույլ տա Հովհաննեսին տեսնելու և հրաժեշտ տալու: Ստանում է թույլտվություն, բայց հուզմունքից խոսել չի կարողանում: Հուսահատված Հովհաննեսը հաշտված է ճակատագրի հետ: Եթե հարազատները զոհվել են, իրենք էլ թող նույն բախտին արժանանան:

Լույսը բացվելուն պես սարսափը պատում է բոլորին: Գիտեն, որ շուտով գալու են իրենց հետևից: Հուսեին էֆենդին նորից է գալիս ու մի շնչով հայտնում.

—Աչքե՛րդ լույս, գիշերը ես չեմ քնել, աղոթք էինք անում: Իմ աղոթքն աստված լսեց, որ դուք ազատվեք: Այսօր Գուրբան բայրամի է, որի շնորհիվ սպանվելու ենթակա բոլոր հայերն ազատվում են:

Հուսեինը խորհուրդ է տալիս, որ ներկա վիճակի վերաբերյալ խնդրանքով դիմեն Ամասիայի կուսակալին: Նրա գնալուց հետո մխտարը տղաներին հայտնում է ներում շնորհելու մասին ու խնդրում է կուսակալի մոտ գնալու համար տասը ոսկի հավաքել: Ոսկյա դրամները, որ կոճակների փոխարեն

հագուստների վրա էին կարել՝ չեթեմների ձեռքը չընկնելու համար, հանում են ու տալիս նրան: Բանտապետին տասը ոսկով կաշառելով՝ նա հանդիպում է կուսակալին, որն էլ ստորագրում է դիմումը ու հանձնարարում, որ բանտարկյալ հայերի վիճակը բարելավեն:

Միտարը վերադառնում է և ընկերներին պատմում ընդունելության մասին: Չանցած տասնհինգ րոպե՝ ոստիկանը գալիս է և տասը հոգու դուրս կանչում: Բոլորը վախեցած իրար են նայում, չեն ուզում դուրս գալ. մտածում են՝ սպանելու համար են կանչում: Քանի որ Հովհաննեսը բանակում ծառայել է, գիտի, որ եթե երեք րոպե հետո ինքնակամ դուրս չգան, ներս կմտնեն և ուժ գործադրելով՝ կհանեն: Հովհաննեսը քեռուն՝ մխտարին, ասում է.

–Ես առաջինը դուրս կգամ, ու թող ինձ սպանեն:

Նրանից հետո տասն էլ դուրս են գալիս բակ ու շարվում: Պարզվում է՝ տանում են հացատուն, որ իրենց համար հացի պարկեր շալակած բերեն: Հետո տանում են բաղնիք, հայերից թալանված հագուստներ տալիս ու պատվիրում հին շորերը վառել: Երբ ոստիկանի ուղեկցությամբ վերադառնում են, զարմացած տեսնում են, որ երեք սենյակ մաքրած, մահացածների դիակները հանված, իրենց է տրամադրված: Մնացած տղաներն էլ լողացած, հագուստները փոխած, նստած են հատակին: Մխտարը բոլորին հաց է բաժանում, որն ուտում են անասելի ախորժակով:

Մոտավորապես 1915 թ. հուլիսի 2-ին բանտախցից նրանց տանում են՝ շինարարության վրա աշխատելու: Վարպետները հայ արհեստավորներ են, որոնց չեն սպանել իրենց մասնագիտության համար: Հետո նրանց տեղափոխում են Ամասիա՝ տասնութ հազար սպանված հայերի տները դատարկելու: Սրտաճնյիկ տեսարան է: Պարզ երևում է, որ մեկին քնած տեղից են հանել, մյուսին՝ աշխատելու պահին, իսկ երրորդին՝ սեղանի մոտ նստած հաց ուտելիս: Հուզմունքը զսպելով՝ աշխատում են, հայերի հարմարավետ տներից նրանց ունեցվածքը հանելով՝ եկեղեցու բակն են լցնում: Աստված գիտի, թե թուրք ժանդարմներն ի՞նչ հարստություն են դիզում հայերի հաշվին: Երեկոյան՝ ընդմիջման ժամանակ, եկեղեցու դռան մոտ բոլորին պարտադիր ստուգում են, ուտելու համար հաց ու մի կտոր տհալ են տալիս: Աշխատանքի համար տեղից տեղ են տանում: Նոր վայրում տեղավորվում են Ամասիա տանող ճանապարհին՝ այգիների մեջ գտնվող անտեր մնացած մի հայի տանը, որն էլ նորոգելու են: Վարչությունից գալիս են ստուգման և աշխատանքից գոհ են մնում: Հովհաննեսը լսում է, թե ինչպես է մեկը մյուսի ականջին կամացուկ շշնջում. «Մեր կառավարությունը շատ վատ բան արեց, մարդ էլ իր դռան կթու կովին մորթի, ուտի»: Այստեղ ծանոթանում են Համտի բեկի հետ: Ընդմիջմանն օգնում են նրան, միրզը հավաքում ու տեղավորում: Նա էլ վարձի փոխարեն չորս

քոթո միրզ է տալիս, որ վաճառեն ու դրանով ապրեն:

Ամեն օր նոր գաղթականներ են անցնում ճանապարհով: Տեսնելով Հովհաննեսին ու ընկերներին աշխատելիս՝ զարմանում են, թե ինչպես են նրանց աշխատանք տվել: Եշմարտությունը չեն ասում, որ Ղուրբան բայրամի շնորհիվ են ազատվել: Հուսադրում են, որ նրանց էլ մի ուրիշ տեղ կաշխատեցնեն: Մի օր՝ առավոտյան, լացի ձայն են լսում: Մտնում են այգի, փնտրում են ու երկու տարեկան հայ երեխա են գտնում: Ծնողներն են գցել այդտեղ, որ գոնե փրկվի: Վերցնում են նրան ու գիշերը պահում իրենց մոտ: Առավոտյան երեխային տանում են Ամասիա և տալիս ծանոթ հույնի:

Համտի բեյը հովանավորում է տղաներին: Զգուշացնում է, որ փորձանքի դեպքում իրեն տեղեկացնեն: Ընկերներից մեկը հանցանք է գործում: Տղաները գնում են Ամասիա, սրճարանում գտնում Համտի բեյին, պատմում կատարվածի մասին: Բեյը խոստանում է, որ ընկերոջը կազատի: Սրճարանում՝ սեղանի մոտ, նստած մուվթին հարցնում է Համտի բեյին.

–Սրանք ի՞նչ ազգ են:

–Հայ են,–պատասխանում է Համտի բեյը:

Այս խոսքերը լսելիս սրճարանում գտնվողները շրջվում են, զարմացած հայացքներ փոխանակում: Նրանք անխոս հարցնում են. «Ինչու հիմա հա՞յ գոյություն ունի»:

Երեկոյան բեկը բռնված ընկերոջը բերում է տուն: Այդտեղից հինգ հոգով կարողանում են փախչել Սամսուն, իսկ երկուսին՝ Ատմաջյան Հովհաննեսին ու Մումջյան Մեդրակին, հաջողվում է նավով անցնել Ռուսաստան: Դա, իրոք, հաջողություն էր: Հրաման է գալիս, որ Ամասիայից վաթսուն հոգի գնա Վեզիլ քերրի: Եկած ճանապարհով հետ են գնում: Դանապարհի երկու կողմը սևացած դիակներով է ծածկված: Վեզիլ քերրիում քաղաքագլխի հրամանով յուրաքանչյուր գյուղի մխտար, երեքից չորս հոգի ընտրելով, տանում է իր գյուղ: Մնում են Հովհաննեսը, նրա քեռին, բժիշկը: Նրանց էլ ոստիկանը օգոստոսի 8-ին տանում է Տանուշի գյուղ՝ հաջի Բեքիր աղայի տուն: Կալատեղից գալով ու ոստիկանից իմանալով, որ քաղաքագլուխն է ուղարկել, նրանց պահում է իր տանը:

Աշնանը կալի շրջանն ավարտվում է, և հաջի Բեքիրը գնում է յալա: Քաղաքագլուխը նրանց տեղավորում է Սիվրի Հովհաննեսի տանը, որը շատ շքեղ է: Թուրք հարևաններից իմանում են, որ նա մասնագիտությամբ նվագող է եղել, բոլոր մեծ միջոցառումներին նվագել է:

Գյուղում մնացած ընկերներն էլ են գալիս քաղաք: Բեիզը նրանց իր մոտ աշխատեցնելու է տանում: Հայերի այլուրի պահեստները գնել է, ուզում է այլուրը ֆաբրիկա ուղարկել: Հովհաննեսն ընկերների հետ գնում է պահեստ: Բեիզը, հարյուր բեռը պատրաստ տեսնելով, ուրախանում է և խնդրում,

որ նրանք ֆարքիկայում աղացած ցորենի պարկերը հաշվեն ու տեղավորեն, հետո տանեն Սամսուն: Աշխատանքի դիմաց վարձատրվում են: Այլուրի ֆարքիկայի անունը հայտնի է, բայց տերը չկա: Շիրինյան Նշանին է պատկանել այրաղացը: Թուրք Օսման էֆենդին այն վարձակալել է: Նա ասում է, որ Նշան էֆենդու կինը մահմեդականություն է ընդունել և ազատվել: Օսման էֆենդուց փոխհատուցում է պահանջել, սա էլ հարյուր բանկանոտ է ուղարկել: Դի՞շտ է ասում, թե՞ ոչ, պարզ չէ, բայց որ Նշան էֆենդին մեծ կարողության տեր է եղել, ակնհայտ է: Եռահարկ այրաղացի դիմաց երկու հարյուր հեկտարանոց դաշտ է, շերամի արտադրության համար քսան հեկտար տարածության վրա թթենիներ են, իսկ ֆերմայում հարյուր հիսուն կով կա:

Հայերին իր մոտ տեղափոխելու խնդրանքով Թեքեբեյ գյուղի մխտարը դիմում է քաղաքապետին: Նա դեմ չէ, եթե հայերը համաձայն են: Վաթսուն հայերից քառասունը գյուղում են, իսկ քսանը՝ քաղաքում: Հենց գյուղում ապրող հայերն են խնդրել մխտարին, որ իրենց միավորի ընկերների հետ: Հովհաննեսը հաստատվում է Թեքեբեյ գյուղում, որի բնակիչները չերքեզներ են: Տեղավորվում է Նուրին Չաուշի, իսկ քեռին՝ Գարբեջ բեկի տանը: Աները՝ Շանքերի բեյը, երբեմն գալիս է փեսայի տուն, ձին հանձնում քեռու հսկողությանը: «Քեռիս ով էր, ով դարձավ», - մտածում է Հովհաննեսը, ուզում է օգնել քեռուն, բայց չերքեզը թույլ չի տալիս:

Տեղի գյուղացիները հայերին առաջարկում են կրոնափոխ լինել, ամուսնանալ իրենց աղջիկների հետ ու տանտերեր դառնալ, միևնույն է, նրանց ընտանիքներից հույս չկա: Իհարկե, հրաժարվում են և արգելում առհասարակ այդ թեմայով խոսել:

Քեռու տանտիրոջ աղջիկը՝ Չեքիան, Հովհաննեսին տուն է հրավիրում և սիրո խոստովանություն անում, դժգոհում նրա անտարբերությունից: Հանուն սիրո մի գաղտնիք է բացահայտում. Սամսունում հայերը պայքարում են թուրքերի դեմ, չեն հանձնվում, վերջին փամփուշտն իրենց համար են պահել: Չեքիան խոստանում է զենք ու ձիեր տրամադրել, և նրանք գիշերով կհասնեն Սամսուն: Երեկոյան Հովհաննեսն ընկերներին հայտնում է Չեքիայի առաջարկի մասին, և այն հավանության է արժանանում:

Թեքեբեյ գյուղում մահանում է Փոլադյան Հակոբը: Նրան հուղարկավորում են, տերտերը կարգ է կատարում: Վերջինս Հովհաննեսի կնոջ՝ Իսկուհու հորեղբորորդին է: Ամուսնացած էր, բայց երեխաներ չունեց, ուրիշի տղային ու աղջկան էր պահում: Գաղթի ճանապարհին նրանք էլ զոհ դարձան մյուսների պես:

Իրենց խմբից հինգ հոգի փախել է: Նրանց մասին ոչինչ չգիտեն: Գյուղում իջևանած քարավանատերերից մեկը տերտերին պատմում է, որ նրանց

ընկերներից Շեկ Հովհաննեսին ու Հարությունին տեսել են Սամսունում: Երբ հարցրել են՝ ինչպես են նրանք վերադարձել, իսկ մյուսները՝ ոչ, պատասխանել են, որ գնացել են զինկոմիսարիատ՝ իմանալու, թե որքան պետք է մնան գյուղում: Ասել են՝ եթե Սամսուն գնալ են ուզում, հիմա էլ կարող են ուղարկել: Քարավանատիրոջ միջոցով խորհուրդ են տվել, որ մյուսներն էլ այդ քայլին դիմեն: Տերտերը նույնությամբ պատմում է: Նրան հավատում են, բայց, ավա՜ղ, խաբվում են:

Աշնանը՝ նոյեմբերին, ներկայանում են զինկոմիսարիատ ու գրանցվում: Խոստանում են ընդառաջել, սակայն նույն օրը նրանց ուղարկում են Կավլա՝ կենտրոնական մայրուղու վրա աշխատելու: Գիշերն անվերջանալի է: Չգիտեն՝ իրենց ինչ է սպասվում: Լույսը բացվելուն պես շարք կանգնեցնելով ուղարկում են ոչ թե Սամսուն, այլ Սեբաստիա: Ծանապարիք դաժան է և մռայլ: Յրտաշունչ ձմեռը մոտ է: Հոգնածությունից, քաղցից ու ցրտից չեն կարողանում ոտքի վրա կանգնած մնալ: Այնպիսի անասելի վիճակում են, որ մխտարն ու բժիշկը մահվան մասին են երագում: Ծանապարհին անասունների հետ զիշերում են միևնույն խանում: Նույնիսկ դրանից են շատ գոհ: Դիշտ է, սառը գետնին են պռոկած, բայց դրսի սառնամանիքից լավ է: Իրենց մեղքով ավելի վատ վիճակում հայտնվեցին: Ծանապարիք շարունակվում է Ամասիա, Թոքատ, Սեբաստիա: Վերջին կանգառը Քոչեսարն է: Հաջորդ օրը տանում են Ավրեն գյուղ: Խստաշունչ ձմեռ է՝ դեկտեմբեր ամիսը: Այդ ցրտին պետք է աշխատեն ճանապարհի շինարարության վրա: Եթե կարողանան սահմանված չափով քարերը կոտրել ու մանրացնել, այդ օրը մահից կփրկվեն: Հայկական գերեզմանատան շիրմաքարերն են, որ ուժասպառ եղած հայերին պարտադրում են բերել սայլերով ու մանրաքարեր դարձնել ճանապարհի կառուցման համար: Շատերը չեն դիմանում ցրտին ու սովին: Հացը չի բավականացնում:

Այն թափուրում, որտեղ Հովհաննեսն է, հայեր են, միայն հարյուրապետն ու հազարապետն են թուրք: Նրանք հայ տղաներ են որդեգրել, անունները փոխել, թուրք աղջիկների հետ ամուսնացրել: Այդ տղաները Հովհաննեսին շատ են օգնում: Պահեստապետի հետ խոսում են, սա էլ հայերի օրապահիկը կես թայինով ավելացնում է: Նա էլ հայ է: Տղաներից մեկը՝ Մալյան Ռուբենը, հետագայում Ամերիկայից գաղթում է Հայաստան:

Տարածքով անցնում է Կարմիր գետի վտակը, որից ճանապարհի մի հատվածը փլուզվել է: Հրաման են ստանում՝ ով մտնի ջրի մեջ աշխատելու, օրական մեկ թային ավել կստանա: Հիսուն հոգուց երեքը՝ Հովհաննեսը, Մելքոնը և Հակոբն են համարձակվում սառնամանիքին մտնել ջրի մեջ ու աշխատել: Փլված պատները թալանված ու անտեր մնացած հայերի տների քարերով են նորոգում: Սար-

ասփելի ցուրտ է, բայց քսան տարեկան Հովհաննեսը չի զգում: Նա երիտասարդ է, դիմադրում է, իսկ մխտաբը, բժիշկն ու տերտերն այլևս անկարող են դիմանալ: Նրանց տեսնելով՝ խղճահարվում է: Քեռին հիվանդ է, չի կարողանում շարժվել: Տերտերի հետ տանում են Քոչեսարի հիվանդանոց, որի աշխատողները հայ կանայք են: 1915 թ. մայիսի 2-ից մինչև 1916 թ. փետրվարի 10-ը նրանք մնացել են Քոչեսարի մոտ գտնվող գյուղում, հետո գերվել են, ու կանանց բերել են՝ հիվանդանոցում աշխատելու: Քեռին մահանում է: Տերտերը Հովհաննեսին ոչինչ չի ասում. գիտի՝ նրա հետ շատ էր կապված ու խոր վիշտ է ապրելու: Հիվանդանոց գնալուց առաջ մխտաբը խնդրում է, որ Հովհաննեսը վերցնի իր մոտ եղած տասներեք ոսկին: Հրաժարվում է:

Քեռու մահվան մասին Հեքմեթ բեյից է լսում: Նա ակնարկում է, որ ոսկին տերտերի մոտ է: Բայց Հովհաննեսի աչքին ոչ մի ոսկի չի երևում: Նա կորցրել է ողջ մնացած միակ հարազատին՝ քեռուն: Կորած ընտանիքն է երևում աչքին ու առաջին անգամ այլևս չկարողանալով իրեն զսպել՝ արտասվում է և առանց հարյուրապետի հրամանի ուշակորույս նստում: Այդտեղ Ամերիկայի բարեգործական ընկերությունը ողջ մնացած հայերից յուրաքանչյուրին ամսական երկու ոսկի է բաժանում: Քսան հույներից կազմված խումբ են տրամադրում Հովհաննեսին՝ Տուգասարի հայկական գյուղերի շուրջը լորն աճած յոնջաները (առվույտ) քաղելու: 1916 թ. հուլիս ամիսն է: Գյուղի անունը Տուգ է, որ թուրքերեն նշանակում է աղ: Այդտեղ կան աղի հանքեր: Տղաներով որոշում են, որ սարերից աղ հավաքեն, էժան գնով վաճառեն այդտեղով անցնող քարավանատերերին: Այդպես էլ անում են, օրվա գումարը վաստակում: Տուգը հայկական մեծ գյուղ է եղել: Դպրոցի մոտով անցնելիս Հովհաննեսը լսում է, որ երկու կին իրար հետ հայերեն են խոսում: Հետաքրքրվում է, պարզվում է, որ հայեր են: Մաղարայում նրանց բռնել են, տղամարդկանց թափուր են տարել՝ աշխատելու, իսկ կանանց՝ որպես մայրապետեր, բերել են դպրոց՝ երեք հարյուր թուրքացրած անչափահաս հայ երեխաներին խնամելու: Հովհաննեսն այս մասին լսել էր, բայց չէր տեսել: Էնվեր փաշայի հրամանն իրականանում է, որ հայ երեխաներին չկոտորեն, այլ թուրքացնեն:

Վերադառնում են Քոչեսար: Հույները Հովհաննեսին առաջարկում են փախչել: Առարկում է, քանի որ սարերում թուրք դաշախներ են, նրանցից ազատվել չի լինի: Հույները դիմադրում են: Չնայած Հովհաննեսը նրանց չի վստահում, բայց ճարահատյալ համաձայնում է: Ի՞նչ կարող է անել. ինքը մեռնակ է, նրանք՝ շատ: Հույները Սամսունի գյուղերից են, խոստանում են Հովհաննեսին թաքցնել: Սակայն նրա նպատակը ոչ թե Սամսուն հասնելն է, այլ Սամսունի սարերում մարտնչող հայերին միանալը: Գիշերով ճանապարհ են ընկնում: Կողմնացույց չունեն,

նրանց ուղեցույցն ասողներն են: Չբռնվելու համար ցերեկով չեն կարող գնալ: Երբ հարմար տեղ են գտնում և ուզում են ձորի մեջ թաքնվել, սարերի կողմից նրանց վրա են հարձակվում թուրք դաշախները, որոնք փախել են բանակից ու թաքնվել սարերում: Բոլորին թալանում են, ոչ մեկի մոտ հաց ու հագուստ չեն թողնում: Հարցուփորձ անելով և իմանալով, որ հույներ են, ազատ են արձակում: Եթե կարողանան ճանապարհը շարունակել ու հասնել Ամասիա, գոնե այդ դեպքում Հովհաննեսին կհաջողվի գնալ Թերեքե՝ չերքեզների գյուղ: Բայց դա անհնար է, որովհետև սարերում թուրք դաշախներն են, իսկ ճանապարհին՝ թուրք ժանդարմները, որոնք առանց փաստաթղթի ոչ մեկի թույլ չեն տալիս անցնել: Ցերեկները թաքնվում են, քաղցը հագեցնելու համար արտերից գաղտնի գարու հատիկներ են հավաքում, ուտում, մի մասն էլ լցնում են գրպանները: Չորս գիշեր ճանապարհն անցնում են մեծ դժվարություններով ու հասնում Թոքաթ: Քաղաք տանող ճանապարհը ծանրաբեռնված է գնացող-եկողով: Բոլորը կիսամերկ են: Սովից չմեռնելու համար վաճառել են իրենց հագուստները: Հովհաննեսը մտադրվում է թիկունքից միանալ նրանց ու մտնել Թոքաթ, բայց այդ մասին վախենում է հայտնել հույներին: Բարեբախտաբար, նրանցից երեքն էլ ուժ չունենալու պատճառով հրաժարվում են ճանապարհը շարունակելուց և առաջարկում են միանալ Թոքաթ գնացողներին: Եթե նրանք հիվանդ են, իրենք էլ են հիվանդ: Թոքաթում բժշկական հանձնաժողովը կստուգի և հիվանդանոց կպառնկեցնի: Գիշերով դուրս են գալիս ու առավոտյան խառնվում են հիվանդներին: Հովհաննեսը ստամոքսի խանգարումով է տառապում: Տանում են հիվանդանոց: Բժիշկը՝ Նշան էֆենդին, որ նույնպես Չարշամբայից է, ճանաչում է Հովհաննեսին, բայց ցույց չի տալիս, որ ծանոթներ են: Բուժում է նշանակում, ու Հովհաննեսը երեք օրից ապաքինվում է: Տեսնելով նրան ոտքի վրա՝ հանձնարարում են մահացածներին հիվանդանոցից դուրս տանել: Բժիշկն արգելում է, քանի որ հիվանդը միայն հաց ու ջուր կարող է բաժանել: Առավոտյան բժիշկը կրկին գալիս է՝ հիվանդներին ստուգելու և Հովհաննեսին ուղարկում առաջին հիվանդանոց: Նա միայնակ յոթ գունարտակի հիվանդներին է բուժում: Բժիշկների կարիք ունեն, դրա համար էլ նրան չեն սպանել: Հաջորդ օրը հիվանդանոցում նրան տեսնելիս Հովհաննեսը հարցնում է՝ իրեն այստեղ տեղափոխեց, որ թափու՞ր ուղարկի: Բժիշկը հասկացնում է, որ դա իր գործն է: Տասնհինգ օրից դուրս է գրվում ու գնում թափուր: Որոշում է մնալ Ամասիայում՝ ընկերների մոտ: Ամասիայից նրանց հանում են ու խառնում այդտեղով անցնող հայերի քարավանին:

Քարավանն անցնում է անապատով: Հարմար պահ ընտրելով՝ փախչում են ու տասնութ օր գիշերցերեկ թափառելով՝ միանում Սեբաստիա գնացողներին:

Յավում են, բայց այստեղից պապիս գրի առած պատմությունը չի շարունակվում: Մահվան պատճառով անավարտ է մնացել, ուստի այն կրթացնեն Հովհաննեսի որդիներից ու դուստրերից լսած կցկտուր տեղեկություններով:

Իր դանթեականի ընթացքում Հովհաննեսը բազմիցս ազատվում է թուրքի ճիրաններից: Նույնիսկ ասկյարների կրակոցներից վիրավորված Հովհաննեսը, դիակների կույտի տակ մահացած ձևացնելով, ողջ է մնում: Փրկվում է նաև՝ ձևականդերն ասկյար դառնալով: Թուրքերը չեն կասկածել նրա հայ լինելուն, քանի որ մաքուր թուրքերենով է խոսել: Գիշերներն ասկյարներից հեռու է քնել, որ երազի մեջ հնչած հայերեն բառերը նրանք չլսեն: Այդ ժամանակ Հնդկաստանից Թուրքիա ժամանած գնացքի (չեն կարող ասել, թե ինչ գնացք է եղել) ուղևորներից մեկը՝ մի հայ բժիշկ, պատահաբար լսելով Հովհաննեսի և ընկերների՝ թաքուն հայերեն խոսակցությունը, նրանց ու էլի հարյուր հայերի թաքցնում է գնացքում: Հետդարձի ճանապարհին հնդիկները հայերին իջեցնում են Ալեքսանդրապոլի կայարանում: Հովհաննեսն Արևելյան Հայաստանում է, նա փրկված է, բայց նույնիսկ ուրախանալ չի կարող. ընտանիքից (18 հոգի) միայն ինքն է ողջ մնացել: Ալեքսանդրապոլի գիմնազիայում ապաստանած գաղթականների մեջ պատահաբար տեսնում է քրոջ ամուսնուն՝ Ֆերդինանդ Մանուկյանին:

Գերդաստանից միայն երկուսն են մնացել: Եղբայրանում են, և ոչ ոք չի կասկածել, որ նրանք արյունակից չեն:

1918 թ. Հովհաննեսն ամուսնանում է Վարսենիկ Հակոբյանի հետ, պսակադրվում է Գյումրիի Սուրբ Նշան եկեղեցում ու երկրորդ անգամ ընտանիք կազմում: Սակայն թուրքերը թատերաբեմ են դարձնում Արևելյան Հայաստանը՝ Շիրակը, Լոռին, Մարդարապատը, որտեղ տեղի ունեցած ճակատամարտում անձնուրաց մասնակցում է նաև Հովհաննես Գյուլյանը: Շիրակ աշխարհում նույն ոճիրն է ու կողոպուտը: Աշոցքի գյուղացիները թաքնվում են քարայրում: Վարսենիկը, որ Բոզոխուշից է (այժմ՝ Մուսայելյան գյուղ), հարազատների հետ նույնպես քարայրում է: Ամուսինը՝ Հովհաննեսը, բացակայում է: Քարայրում սկսվում են Վարսենիկի երկունքի ցավերը, և արու զավակ է ծնվում: Երեխայի լացը խանգարում է, այն կարող է մատնել թաքստոցում գտնվողներին: Վարսենիկը ստիպված ճակատագրական որոշում է կայացնում: Հրաժարվում է նորածնից՝ փրկելով հարյուրավոր հայերի: Երեխային քարայրից դուրս տանելով՝ դնում են թփերի տակ: Դեպքից մի օր հետո հայտնվում է Հովհաննեսը, որ գաղտնի ուղիներով կարողացել է մոտենալ թաքստոցին: Դուրս գալով քարայրից՝ տեղափոխվում են ավելի ապահով վայր՝ քայլելով ոտքերի տակ ընկնող դիակների և

արյան լճակների վրայով: Առաջնեկից հետո երկար տարիներ նրանք երեխա չեն ունենում: Վարսենիկը մտածում է, որ ինքը մեղք է գործել, ու Աստված պատժում է իրեն: Ինչպե՞ս կարող էր Աստված պատժել. չէ՞ որ նա հարյուրավորների կյանք էր փրկել, ու հետագայում մեկի փոխարեն նրան չորս զավակ է պարզում:

1919 թ. թուրքական բանակը կրկին սպառնալիք է դառնում Շիրակի բնակչության համար: Կնոջ հորդորով Հովհաննեսն ընկերների հետ հեռանում է գյուղից: Թուրք ասկյարները կարող էին ճանաչել նրան: Իր զինակիցներով Բոզոխուշ է մտնում գորավար Անդրանիկը և թուրքական բանակի ոտնձգություններին չենթարկվելու համար առաջարկում է գյուղացիներին իր հետ հեռանալ: Տղամարդիկ հրաժարվում են: Ջորավարն իր հետ տանում է կանանց ու երեխաներին: Աշոցքի դժվարանցանելի կածանները հաղթահարելով՝ հասնում են Ջալալօղլի (Ստեփանավան), այնտեղից էլ շարժվում դեպի Ղարաքիլիսա (Վանաձոր): Առավոտյան, երբ արթնանում են, տեսնում են, որ գորավարն ընկերների հետ հեռացել է: Որոշում են գյուղ վերադառնալ: Դանապարհին հանդիպում են թուրքական զորքին: Տարեցներն աղուհացով ընդառաջ են գնում: Թուրք հրամանատարը թույլ է տալիս, որ ճանապարհը շարունակեն:

Կես տարվա թափառումներից հետո Հովհաննեսը վերադառնում է: Ընկերներն անցել էին Վրաստան՝ այնտեղից Ամերիկա մեկնելու համար: Չէր միացել նրանց: Մի անգամ արդեն ընտանիքը կորցրել էր, երկրորդ անգամ նրանից զրկվել չէր ուզում: Կնոջը գտնում է ծանր վիճակում: Տարածաշրջանում տիֆի համաճարակ էր, այն չէր շրջանցել Վարսենիկին: Սակայն նա երիտասարդ էր ու կարողանում է հաղթահարել հիվանդությունը:

1926 թ. Հովհաննեսն ու Ֆերդինանդը՝ եղբայրը, մշտական բնակության համար մեկնում են Աբխազիա: Հովհաննեսի երկու հորեղբայրները՝ Հակոբն ու Հարությունը, 19-րդ դարավերջին տեղափոխվել էին Սուխումի: Գնացքում նրանք կանանց խոստովանում են հարազատ եղբայրներ չլինելու փաստը՝ վստահ լինելով, որ Աբխազիայում՝ հարազատների միջավայրում, կբացահայտվեր գաղտնիքը: Հորեղբայրներից միայն Հարությունն էր ողջ: Երբ Վարսենիկը լվացվելու համար ջուր է լցնում նրա ձեռքերին, դենքը պարզում է երկինք ու ասում.

–Փա՛ռքդ շատ, Աստվա՛ծ, չմեռա, տեսա՛՛ եղբորս հարսը ձեռքերիս ջուր է լցնում:

Անհայտ պատճառներով չեն մնում Աբխազիայում ու վերադառնում են Լենինական:

1941 թ. սեպտեմբերին Լենինականի կայարանում ավագ որդուն՝ Մկրտչին, ռազմաճակատ ճանապարհելիս խնդրում է, որ իր փոխարեն թուրքերից վրեժ լուծի: Որդին խոստանում է: Ապրելով վաստակաշատ կյանք՝ հիշողությունը կորցրած

Սկրտիչը, մանկան պես հուզվելով, միշտ ցավով հիշում էր, որ հորը տված խոստումը չէր կատարել. հնարավորություն չէր եղել թուրքերից վրեժ լուծելու:

Գյուլյան Հովհաննեսը, վերագտած հայրենիքում խոր արմատներ գցելով, մահկանացուն կնքեց 1972 թ. հունվարի 29-ին՝ շրջապատված զավակներով ու թոռներով: Մահացավ՝ կորցրած երկրի և հարազատների կարոտը սրտում: Հոգին ավանդելուց առաջ նրա վերջին խոսքն էր.

–Իսկուհի՛, հոգնած եմ, սեղան դիր:

Իսկուհին նրա առաջին կինն էր, որ մնացել էր գաղթի ճանապարհին...

Մեծ եղեռնին Գյուլյան ընտանիքից գոհվել են Հովհաննես Գյուլյանի մայրը՝ Վարդիհենն, կինը՝ Իսկուհի, որդին՝ Սարգիսը, եղբայրը՝ Հարությունը, կինը՝ Հռիփսիմեն, որդին՝ Համբարձումը, եղբոր դուստրերը՝ Վարդիհենն և Ազնիվը, քույրը՝ Մարիամը, նրա ամուսինը՝ Էստեբանը, որդին ու դուստրը, քույրը՝ Իսկուհին, նրա երկու զավակները, քույրը՝ Ալմաստը, նրա ամուսինը և զավակը:



Հովհաննես Գյուլյան

ՄՐԵՆԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ

Սամվել Կարապետյան

Մրենի տաճարը, բացի Է դարից ավանդված մեծարժեք շինարարական արձանագրությունից, բավականաչափ հարուստ է նաև հետազայի՝ ինչպես Հայաստանի Բագրատունյաց թագավորության, այնպես էլ ավելի ուշ ժամանակներին (մասնավորապես՝ ԺԳ դարի երկրորդ կեսի) վերաբերող վիճագրերով¹:

Անդրադառնալով հատկապես Մրենի՝ Բագրատունյաց շրջանից պահպանված վիճագրերին, հարկ է արձանագրել, որ հայագիտությանը ցարդ հայտնի էր 7 վիճագիր: Գրանցից մեկն ավանդվել է Սմբատ շահնշահի (977-990 թթ.), 3-ը՝ Գագիկ Ա-ի (990-1020 թթ.), երկուսը՝ Հովհաննես-Սմբատի (1020-1041 թթ.) և մեկը՝ Գագիկ Բ-ի (1041-1045 թթ.), գահակալության շրջանից:

Բոլոր 7 վիճագրերն էլ (4-ը փորագիր են, իսկ 3-ը ներկագիր) հրատարակության են պատրաստվել Հ. Օրբելու ջանքերով դեռևս 1917 թ. (լույս է տեսել միայն 1974 թ.), սակայն առանց օժանդակ նյութերի²:

Շնորհիվ վաստակաշատ արվեստաբան Պատրիկ Տոնապետյանի՝ 2013 թ. կատարած լուսանկարների ներկայումս հնարավորություն ունենք վերոնշյալ երեք արձանագրությունները ներկայացնել լուսանկարներով և գրչանկարով:

Ներկագիր արձանագրությունները գտնվում են եկեղեցու ներսում՝ արևմտյան որմին (մուտքից հյուսիս) և նույն որմին կից հյուսիսակողմյան որմնասյան՝ ավաղի շերտով պատված արևելահայաց երեսին և, ըստ իրենց բովանդակության, տնտեսական մշանակության արքայական հրամանագրեր են, որոնցից մեկն արձակել է Սմբատ շահնշահը, իսկ երկուսը՝ Հովհաննես շահնշահը³:

Եվ այսպես, առաջինը 10 տողով արձանագրված և գրեթե ամբողջությամբ պահպանված (որմից պոկված ավաղի հետ անհետացել են միայն վերջին երկու տողերի վերջնահատվածները) Սմբատ շահնշահի (977-990 թթ.) հրամանագիրն է, որով թագավորը կանոնավորել և հարթել է Մրենի՝ Անիի և Բագարանի հետ ունեցած տնտեսական վեճերը.

Յանուն ա(ստուծո) այս իմ հրամանք են Սմբատա | շահանշահի. ազատեալ են զՄրենոյ զոչ/խարի հասն վասն իմ արեոյս եւ իմ մեղացն թ/ողութեան, որ չկա ոչինչ աղման Բագր(ա)նէ, զի | ոչ Անոյ ի վերա Մրենոյ վասն ոչխարի, եթե | ոք ընդդիմանա հրամանաց իմոց, յիմոց | կամ այլ ոք ով իցէ՝ պարտական եղիցի սպանման արեանն Զ(րիստոս)ի եւ իմ մեղացս եւ իմ ամեն/այն ազգի մեղաց տէր է. ՅԺԸ (319) [հայրապետ]ացն նզովեալ եղիցի եւ դատ[ող նորա տէր է]:

Սույն հրամանագրի տակ՝ նույնպես ավաղի շերտի վրա, առկա է Բագրատունի Հովհաննես-Սմբատ թագավորի (1020-1041 թթ.) կիսատեղծ հրամանագիրը՝ արձանագրված ավելի խոշոր տառաչափերով: Առնվազն 8 տողանի (այդչափ է պահպանվել) նույնպես ներկագիր այս արձանագրության հատկապես վերջնամասը, ցավոք, անվերադարձ կորստի է մատնվել: Գրանով հանդերձ՝ հստակ է, որ թագավորը հաստատել է, ըստ էության, նույն խնդրին վերաբերող իր նախորդների հրամանագրերը.

Եւ ես՝ Յովաննէս շ[ահանշա]ի, հաստատեալ եմ զիմ հար/անցն հրամանքս, որ չկարէ | ոք ի Մրենոյ ոչխարէ ոչինչ/ հակառուլ, եթե ոք ը/նդդի/մ]անա իմ հարանց[ն հրաման/աց] ... իմ պարտա[կան] ... | ...:


Ներկագիր երրորդ հրամանագիրը, որ գտնվում է ոչ թե որմնասյան, այլ բուն որմի ավաղին, մեզ է հասել էլ առավել վնասված վիճակում: Նրանից պահպանվել են միայն 8 տողերի հատվածական մնացորդները: Սրանով հանդերձ՝ ընթեռնելի հատվածների շնորհիվ բացահայտվում է, որ այս հրա-

¹ Տե՛ս **Օրբելի Ի.**, Надписи Мрена, «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Երևան, 1974, էջ 33-43: Նաև՝ մեր՝ «Մրենը և նրա հուշարձանները», «Վարձր», 2012, № 7, էջ 31-63:

² **Օրբելի Ի.**, նշվ. հոդվ., էջ 41:

³ Ճիշտ է, Գագիկ Ա-ի (990-1020 թթ.) ավագ որդին՝ Հովհաննեսը (1020-1041 թթ.), հայտնի է եղել նաև Հովհաննես-Սմբատ անվամբ, սակայն չենք կարծում, որ երեք արձանագրություններից երկուսում նույն թագավորը կարող էր հիշվել առաջին, իսկ մեկում՝ երկրորդ անվամբ: Ելնելով սրանից՝ Սմբատ շահնշահի ներկագիր արձանագրությունը վերագրում ենք Գագիկ Ա-ի հորը՝ Սմբատ Բ Տիեզերակալին (977-990 թթ.): Այս ենթադրության օգտին է խոսում նաև արձանագրությունների տեղադրությունը, քանի որ ակնհայտորեն սկզբում արձանագրվել է Սմբատ շահնշահի հրամանագիրը, ապա նրա տակ և ձախ

կողմում՝ մյուս երկուսը: Այսինքն՝ առկա է նաև արձանագրությունների ստեղծման հաջորդականության հանգամանքը:



Սմբատ շահնշահի հրամանագրերը (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 2013 թ.)




մանագրով ևս Հովհաննես-Սմբատ թագավորը (1020-1041 թթ.) տնտեսական խնդիրներ է կարգավորել: Առաջինին տառաչափերով ավելի մոտ և դարձյալ սև ներկով իրականացված արձանագրությունից ընթերցվում է հետևյալը.

[Այս] իմ հրամանք են Յովաննիսի | ...[ազա]տել են զՄր/[ենոյ] ... [գոյխարի հա]յն եւ չափն ե/[ւ... վասն] իմ արեոյս եւ վ/[ասն եւ իմ ազգի մ]եղաց թողութեան | եւ թե յետ իմոյ ելանելոյ յաշխա[[րհես] այլ ոք ընդդիմ[անայ յիմո]ց յա]տարաց եւ...⁴:

Ամփոփելով նշենք, որ հիմքերի միատունավոր քանդումների հետևանքով ծայրահեղ քայքայվածության հասցված Մրենի տաճարը վերջին տարիներին էական կորուստներ է կրել (հարավային որմը գրեթե ամբողջությամբ փլուզվեց 2006-2007 թթ.) և միայն երջանիկ պատահականությամբ դեռևս կանգուն է արևմտյան որմի այն հատվածը, որի վրա էլ գտնվում են ներկազիր արձանագրությունները:

⁴ Թվում է, թե արձանագրության 3-րդ տողի՝ «չափն եւ...» հասարակ անունը կարող է նաև ինչ-որ տեղանվան սկզբնամաս լինել («զԱվինե|...»):




Հովհաննես-Սմբատ շահնշահի հրամանագրերը (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 2013 թ.)




Մրենի տաճարի արևմտյան ճակատի այն հատվածը, որտեղ սվաղի շերտի վրա պահպանվել են արքայական երեք մերկագիր արձանագրությունները (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 2013 թ.)

ՀՃՈՒ ՀԻՄՆԱԴԻՄՍԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 2015 թ. ընթացքում հիմնադրամը լույս է ընծայել հետևյալ գրքերը

ՀՃՈՒ ԱՄՆ մասնաճյուղի՝ ի դեմս Հայ լեռնագնացների և Հայ հեծանվորդական ընկերակցությունների, Հայ լեռնագնացական միության և Հայ «Ռ-այտորդ» շարժանիվի ակումբի ներդրած համատեղ ջանքերի շնորհիվ լույս տեսավ «Հայաստանի պատմություն» 36-հատորյա գրքաշարի անդրանիկ համարը՝ նվիրված Հայոց ձոր գավառին (հեղինակ՝ Մամվել Կարապետյան):



Նյութական մշակույթի հայրենի հիշատակների հանրայնացման գործում նշանակալի ավանդ ներդրած պ. Վարդան Հարությունյանի հովանավորությամբ, ի շարս դեռևս 2014 թ. հրատարակված «Կոտայք գյուղի պատմական հուշարձանները», «Կապուտան գյուղի պատմական հուշարձանները», «Ակունք և Կաթնաղբյուր գյուղերի պատմական հուշարձանները», «Նորգյուղ և Մայակովսկի գյուղերի պատմական հուշարձանները» և «Զառ և Սևաբերդ գյուղերի պատմական հուշարձանները» գրքույկների, այս տարի ստեղծվեց և հրատարակվեց նաև «Առինջ գյուղի պատմական հուշարձանները» գրքույկը (հեղինակ՝ Մամվել Կարապետյան):



ՀՀ քաղաքաշինության և մշակույթի նախարարությունների, «Մոնարխ» ընկերության և «Հայաստան» հիմնադրամի համատեղ հովանավորությամբ ստեղծվեց և հրատարակվեց «Եղեռն՝ եղեռնից հետո» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) աշխատությունը (հեղինակ՝ Մամվել Կարապետյան):



ՀՃՈՒ ԱՄՆ մասնաճյուղի և անանուն բարերարի (ի հիշատակ Ադրինե Մարտիրոսյանի) համատեղ հովանավորությամբ լույս տեսավ «Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ.» գիրքը (հեղինակ՝ Մամվել Այվազյան):

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտություն ենք հայտնում Բոստոնի Հայկական մշակութային հիմնադրամի տնօրեն դր. Արա Ղազարյանին՝ երբեմն նույնիսկ հայաստանյան գրադարաններում դժվար գտանելի մեծաքանակ հայագիտական գրականություն (գրքեր, հանդեսներ և այլն) ՀՃՈՒ հիմնադրամի գրադարանին նվիրելու համար:

Երախտագիտություն ենք հայտնում Հայաստանի հանրապետական կուսակցության փոխնախագահ Մուշեղ Լալայանին՝ ՀՃՈՒ գրադարանին շարունակաբար հայագիտական և հայրենագիտական գրականություն նվիրելու համար:

Երախտագիտություն ենք հայտնում Փարաջանովի քանգարանի տնօրեն արվեստաբան Զավեն Սարգսյանին՝ լուսանկարների անձնական արխիվի թվային կրկնօրինակն ամբողջությամբ ՀՃՈՒ հիմնադրամին նվիրելու համար:

**ՏՓՂԻՍԱԳԵՏ ՍԱՐԳԻՍ ԴԱՐՉԻՆՅԱՆ.
ԱՌԱՆՅ ԹԱՆԿԱԳԻՆ ՈՒ ՆՎԻՐՅԱԼ ԸՆԿԵՐՈՋ**

2013 թ. հոկտեմբերին կյանքից անժամանակ հեռացավ ողջ էությանը պատմության հայրենի հիշատակների ուսումնասիրությանը նվիրված անխնայ հետազոտող Սարգիս Դարչինյանը՝ որպես պարտք ու պատգամ մեզ թողնելով իր՝ եզակիորեն հարուստ նյութերի դիվան-հավաքածուն: Ներկայումս այն գտնվում է դեռևս տևական աշխատանք պահանջող մշակման փուլում, հույսով և հավատով, որ մի օր այդ ամենը հանրության դատին ներկայացվի ծավալուն աշխատությունների տեսքով:



Սարգիս Դարչինյանն Անանուրի Սբ. Աստվածածին եկեղեցու մկրտարանի առջև (լուս.՝ Ս. Կարապետյանի, 16.04.2012 թ.)

**ՓԱՌՔ ՎԱՍՏԱԿԻԴ ԵՎ
ՀԱՎԵՐԺ ՀԻՇԱՏԱԿ**

Սարգիս Դարչինյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնադրամի աշխատակիցների հետ Խոջիվանքի պանթեոնում. վայր, որտեղ ընդամենը ամիսներ անց պիտի ամփոփվեր նաև ինքը (լուս.՝ 07.05.2013 թ.)

ԵՂԵՆՆԻ
ԵՂԵՆՆԻՅ ՇԵՏՈ

ГЕНОЦИД
ПОСЛЕ ГЕНОЦИДА

ANOTHER GENOCIDE
AFTER THE GENOCIDE



ՀԱՅՈՒՆ ԶՈՐ



ՀՃՈՒՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՆԱԽ ԳՆԱԿՆԵՐՈՒՄ-ԳԵՏՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՆԻՑՆԵՐԻ ԳՆԱԿՆԵՐՈՒՄ

ՅԵՆՈՒՆԵՐ

17

ԳԱԳԻ ՎԱՆԶԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ
1997-2011 ԹԹ.

ՆԱԽՈՒՆ ԵՄԿԱՅՆՆԵՐ



ԱՌԻՆՔ
ԳՅՈՒԴԻ
ԴԱՏԱՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐԹՅԱՆՆԵՐԸ



ՄԱՐԿԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ

ՄԱՐԿԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ

ՄԱՐԿԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ



ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ



ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ

ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐԿԱԿՆԵՐԻ

